

ՉԻՊՈՆԻՆՈՅԻ ԱՐԿԱԾՆԵՐԸ

Զաննի Ռոդարի



Չիպուլինոյի արկածները
Ջաննի Ռոդարի



Գլուխ առաջին

Որտեղ Չիպուլոնեն տրորում է իշխան Լիմոնի ոտքը

Չիպուլինիոն Չիպուլոնեի տղան էր: Նա յոթ եղբայր ուներ՝ Չիպուլետտոն, Չիպուլոտտոն, Չիպիլոչ-Չիպուլու-չչան, և այսպես մինչև վերջ, ամենահարմար անուն սոխի ընտանիքի համար: Պետք է ուղղակի ասել, որ նրանք լավ մարդիկ էին, միայն թե կյանքում բախտները չէր բանում: Ինչ կարող ես անել, որտեղ սոխ կա, այնտեղ էլ արցունք:

Չիպուլոնեն, նրա կինն ու տղաները ապրում էին փայտե խրճիթում, որ սածիլի արկղից մի քիչ էր մեծ:

Երբ պատահմամբ այդ կողմերը որևէ հարուստ էր ընկնում, քիթը տհաճությամբ կնճռոտում էր ու մռթմռթում. «Թյու, ինչ սոխի հոտ է փչում» և հրամայում էր կառապանին, որ կառքն արագ քշի:

Մի անգամ քաղաքի ծայրամասը որոշեց այցելել երկրի տերն ու տիրակալը, իշխան Լիմոնը: Պալատականները խիստ անհանգստացան: Սոխի հոտը հանկարծ չկաչի՞ նորին մեծության քթին:

— Ինչ կասի իշխանը, եթե հանկարծ այդ աղքատության հոտն առնի:

— Կարելի է աղքատների վրա օձանելիք ցանել, — առաջարկեց Ավագ Սենեկապետը:

Ամմիջապես մի խումբ Լիմոնուկ-զինվորներ ուղարկեցին ծայրամաս, որպեսզի օձանելիք ցանեն նրանց վրա, ումից սոխի հոտ էր գալիս: Այս անգամ զինվորները իրենց թնդանոթներն ու սրերը թողեցին զորանոցներում և շալակներն առան սրսկելու հարմարանք ունեցող հսկայական տակառներ: Տակառների մեջ լցված էին ծաղկի օձանելիք, մանուշակի հյութ և նույնիսկ ամենալավ տեսակի վարդաջուր:

Հրամանատարը Չիպուլոնեին, նրա որդիներին և բոլոր հարազատներին հրամայեց տնակներից դուրս գալ: Չինվորները

Նրանց շարք կանգնեցրին և բոլորի վրա ոտից-գլուխ օդեկոլոն շաղ տվին: Այդ հոտավետ անձրևից Չիպուլինոն խիստ հարբուխ կապավ: Նա սկսեց ուժեղ փռշտալ և չլսեց հեռվից հնչող շեփորի ձայնը:

Այդ իշխան Լիմոնն էր, որ ծայրամաս ժամանեց Լիմոնների, Լիմոնուկների և Լիմոնիկների շքախմբով:

Իշխան Լիմոնը ոտից գլուխ դեղին էր հագել, և նրա դեղին գլխարկի վրա զնգզնգում էր մի ոսկե զանգակ: Պալատական Լիմոնների զանգակներն արծաթից էին, զինվոր Լիմոնուկներինը՝ բրոնզից: Այդ բոլոր զանգակներն էլ անընդհատ զնգզնգում էին, այնպես որ հրաշալի երաժշտություն էր ստացվում: Ունկնդրելու համար հավաքվել էր ամբողջ փողոցը: Մարդիկ կարծում էին, թե թափառաշրջիկ նվագախումբ է եկել:

Չիպուլոնեն և Չիպուլինոն առաջին շարքում էին: Յետևում կանգնածները հենվել էին նրանց վրա, և անընդհատ հրում էին ու ոտքերով խփում: Վերջապես խեղճ ծերուկ Չիպուլոնեն այլևս չկարողացավ համբերել և գոռաց.

— Ետ, ետ գնացեք...

Իշխան Լիմոնն ականջները սրեց.

— Այս ինչ բան է:

Նա իր կարճ, ծուռտիկ ոտները հպարտությամբ առաջ գցելով, մոտեցավ Չիպուլոնեին և խստությամբ նայեց ծերուկին:

— Ինչո՞ւ ես գոռում «ետ գնացեք»: Իմ հավատարիմ հպատակներն այնպես են ուզում ինձ տեսնել, որ նետվում են առաջ. իսկ դա քեզ դուր չի՞ գալիս, հմ:

— Ձերդ մեծություն, ինձ թվում է, թե այս մարդը սարսափելի խռովարար է, — իշխանի ականջին շշնջաց Ավագ սենեկապետը, — նրան հարկավոր է հատուկ հսկողության տակ առնել:

Լիմոնուկ-զինվորներից մեկն անմիջապես Չիպուլոնեի վրա ուղղեց հեռադիտակը, որ գործ էր անում խռովարարներին հսկելիս: Ամեն մի Լիմոնուկի մոտ այդպիսի հեռադիտակ կար:

Չիպուլոնեն վախից մեռելի գույն ստացավ:

— Ձերդ մեծություն, — շշնջաց նա, — ախր նրանք ինձ ոտնատակ կտան:

— Եվ շատ էլ լավ կանեն, — որոտաց իշխան Լիմոնը: — Այդպես էլ քեզ պետք է:

Այստեղ Ավագ Սենեկապետը ամբոխին դիմեց այսպիսի ճառով.

— Մեր սիրելի հպատակներ, — ասաց նա, — Նորին մեծությունը շնորհակալություն է հայտնում ձեզ հավատարմության համար և այն եռանդուն աքացիների համար, որով դուք հյուրասիրում եք իրար: Ավելի թափով հրեցեք իրար, ինչքան ուժ ունեք, սեղմեցեք:

— Բայց նրանք ձեզ էլ կարող են ցած գցել, — փորձեց հակաճառել Չիպուլինոն:

Անմիջապես մի ուրիշ Լիմոնուկ հեռադիտակն ուղղեց տղայի վրա, և Չիպուլինոն տեսավ, որ ավելի լավ է թաքնվի ամբոխի մեջ:

Սկզբում հետևի շարքերը այնքան էլ ուժեղ չէին հրում առաջիններին, բայց Ավագ Սենեկապետն այնպես կատաղի նայեց չջանացողներին, որ ի վերջո ամբոխն ավելոճվեց, ինչպես ջուրը տաշտակի մեջ: Ծերուկ Չիպուլինոն ճնշմանը չդիմանալով, գլուխկոնձի տվեց և պատահամաբ տրորեց իշխան Լիմոնի ոտքը: Նորին մեծությունը, որի ոտքերին բավականաչափ կոշտուկներ կային, առանց պալատական աստղագետի օգնության, երկնքի բոլոր աստղերը տեսավ: Տասը Լիմոնուկ-գինվոր ամեն կողմից նետվեցին դժբախտ Չիպուլինոնի վրա և ձեռքերին երկաթե ձեռնակապեր անցկացրին:

— Չիպուլի՛նո, Չիպուլի՛նո, որդի՛ս, — շփոթված շուրջը նայելով ձայն եր տալիս ծերուկը, երբ գինվորները թևերից բռնած տանում էին նրան:

Չիպուլինոն այդ րոպեին շատ հեռու էր դեպքի վայրից և մտքովն էլ չէր անցնում, թե ինչ է կատարվում, բայց բերանբացները, որ քարշ էին գալիս մոտերքում, արդեն ամեն ինչ գիտեին և, ինչպես լինում է նման դեպքերում, Նույնիսկ ավելի շատ գիտեին, քան իրոք եղել էր:

— Լավ է, որ նրան ժամանակին բռնեցին, — ասում էին պարապ շաղակրատները:

— Մի դրան տեսեք, ուզում էր դաշույնով խփի Նորին մեծությանը:

— Այդպես չէ՛, չարագործի գրպանում գնդացիր է եղել:

— Գնդացի՞ր, գրպանո՞ւմ: Չի կարող պատահել:

— Իսկ դուք, ի՞նչ է, կրակոցներ չե՞ք լսում:

Իրականում դրանք բոլորովին էլ կրակոցներ չէին, այլ իշխան Լիմոնի պատվին կազմակերպված տոնական հրավառության ճարճատյուններ: Բայց մարդիկ այնպես սարսափահար եղան, որ գլխապատառ փախան այս ու այն կողմ:

Չիպուլինոն ուզում էր ճշալ, այդ բոլոր մարդկանց ասել, որ իր հոր գրպանում ոչ թե գնդացի է եղել, այլ սիգարի մի փոքրիկ մնացորդ, բայց մտածեց որ միևնույն է, բերանբացների ձայնը չի կարող կտրել և խոհեմաբար լռեց:

— Խեղճ Չիպուլինո, նրան հանկարծ այնպես թվաց, որ վատ է տեսնում. այդ նրանից էր, որ աչքերին արցունքի մեծ կաթիլներ հայտնվեցին:

— Ե՛տ դարձե՞ք, հիմարներ, — նրանց վրա գոռաց Չիպուլինոն և ատամները սեղմեց, որ լաց չլինի:

Արցունքները վախեցան, ետ-ետ գնացին և այլևս չերևացին:

* * *

Կարճ ասած, ծերունի Չիպուլինեին դատապարտեցին ցմահ բանտարկության. և ոչ միայն ցմահ, այլև մահից հետո էլ շատ-շատ տարիների բանտարկության, քանի որ իշխան Լիմոնի բանտերին կից գերեզմանոցներ կային:

Չիպուլինոն տեսակցություն հաջողեցրեց և հանդիպելով ծերունի հորը, պինդ գրկեց նրան:

— Իմ խեղճ հայրիկ, քեզ գողերի և ավազակների հետ, որպես ոճրագործի, զնդան են նստեցրել:

— Ի՞նչ ես ասում, ի՞նչ ես ասում, որդյակ, — քնքշորեն ընդհատեց նրան հայրը, — ախր բանտերը լեփ-լեցուն են ազնիվ մարդկանցով:

— Իսկ ինչի՞ համար են նրանք նստած, ի՞նչ վատ բան են արել:

— Ոչ մի բան, որդիս: Ա՛յ, դրա համար էլ նրանց նստեցրել են: Կարգին մարդիկ իշխան Լիմոնի սրտովը չեն:

Չհպուլինոն մտածմունքի մեջ ընկավ:

— Ուրեմն բանտ ընկնելը մեծ պատիվ է: Բանտերը կառուցվել են նրանց համար, ովքեր գողություն են անում և մարդ սպանում, բայց իշխան Լիմոնի մոտ ամեն ինչ հակառակն է արված, գողերն ու մարդասպանները նրա պալատում են, իսկ բանտերում ազնիվ մարդիկ են նստած:

— Ես էլ եմ ուզում ազնիվ մարդ լինել, — հայտարարեց Չհպուլինոն, — բայց բանտ ընկնել չեմ ուզում: Մի քիչ համբերիր, ես կվերադառնամ և բոլորիդ կազատեմ:

Ճերուկը ժպտաց:

— Դու քեզ վրա շատ ես վստահ, դա այնքան էլ հեշտ գործ չէ:

— Ա՛յ, կտեսնես, ես իմ ասածը կանեմ:

Այդ ժամանակ պահակախմբից ինչ-որ Լիմոնուկ եկավ և հայտարարեց, որ տեսակցությունն ավարտված է:

— Չհպուլինո, — հրաժեշտ տալիս ասաց հայրը, — հիմա արդեն դու մեծ ես և կարող ես գլուխդ պահել: Մորդ և եղբայրներիդ մասին կհոգա քեռի Չհպուլան, իսկ դու գնա աշխարհ տես, խելք ու խրատ սովորիր:

— Ինչպե՞ս սովորեմ: Գրքեր չունեմ, և փող էլ չունեմ, որ գնեմ:

— Բան չկա, կյանքը կսովորեցնի: Միայն թե աչքերդ լայն բաց արա, աշխատիր բոլոր տեսակի խաբեբաներին ու խարդախներին լավ ուսումնասիրել, հատկապես նրանց, ովքեր իշխանություն ունեն:

— Իսկ հետո՞, հետո՞ ինչ անեմ:

— Ժամանակը որ գա, ինքդ կհասկանաս, թե ինչ անես:

— Դե, պրծեք, հերիք է բլբլաք, — գոռաց Լիմոնուկը: Իսկ դու, քրջոտ, եթե չես ուզում, որ բանտ ընկնես, այստեղից հեռացիր:

Չհպուլինոն Լիմոնուկին կպատասխաներ մի ծաղրական երգով, բայց մտածեց, որ քանի դեռ կարգին գործ չի սկսել, չարժե բանտ ընկնել:

Նա պինդ համբուրեց հորն ու դուրս վազեց:

Հաջորդ օրը նա մորն ու յոթ եղբայրներին հանձնեց բարի քեռու Չհպուլոյի խնամքին, որին բախտը մի քիչ ավելի էր ժպտացել

կյանքում, քան մյուս բարեկամներին: Սա ինչ-որ տեղ ծառայում էր որպես դռնապան:

Քեռուն, մորն ու եղբայրներին հրաժեշտ տալով, Չիպուլինոն իր ունեցած-չունեցածը մի կապոց արեց, կախեց ձեռնափայտի ծայրին և, ուսին դնելով, ճամփա ընկավ: Գնաց ուր աչքը կկտրեր, բայց երևի ճիշտ ճանապարհ էր ընտրել:

Մի քանի ժամից հետո նա հասավ մի փոքրիկ գյուղ, այնքան փոքրիկ, որ ոչ ոք նույնիսկ չէր փորձել որևէ սյան կամ առաջին տան վրա այդ գյուղի անունը գրել: Ասեմք այդ առաջին տունն էլ ոչ թե տուն էր, այլ ինչ-որ փոքրիկ շնաբուն, որ կարող էր միայն բակային փոքրիկ շանը պետք գալ: Պատուհանի մոտ մի շիկամորուս ծերունի նստած, նայում էր դուրս և կարծես ինչ-որ բանով մտահոգված էր:

Գլուխ երկրորդ

Ինչպես Չիպուլինոն ստիպեց կավալեր Պոմիդորին լաց լինել առաջին անգամ

— Տեսնե՞ք, — բզով ծոծրակը քորելով ասում էր վարպետ խաղողը, — վեց անգամ յոթ՝ քառասուններկու... Իննը հանած... Մի խոսքով, ընդամենը դու տասնյոթ աղյուս ունես:

— Իսկ ի՞նչ ես կարծում, հերի՞ք է տան համար:

— Իմ կարծիքով՝ ոչ:

Իսկ ի՞նչ անեմ:

Այդ արդեն քո գործն է: Տան համար հերիք չի անի՝ դու էլ աղյուսից նստարան շինիր:

— Ինչի՞ն է պետք: Այգում ինչքան ասես նստարան կա: Իսկ երբ նրանք զբաղեցրած լինեն, ես կարող եմ նույնիսկ կանգնել:

Վարպետ խաղողը բզով քորեց նախ աջ ականջի հետևը, հետո՝ ձախ ու սուս ու փուս գնաց իր արհեստանոցը:

Իսկ քավոր Դդումը մտածեց, մտածեց, վերջը որոշեց ավելի շատ աշխատել և քիչ ուտել: Այդպես էլ արեց: Արդեն նրան հաջողվում էր

տարեկան երեք-չորս աղյուս գնել:

Նա նիհարեց, դարձավ լուցկու հատ, բայց աղյուսների կույտը քանի գնում ավելանում էր:

Մարդիկ ասում էին.

«Մի նայեք քավոր Դդումին, կարելի է կարծել, թե նա աղյուսը սեփական փորից է դուրս քաշում: Ամեն անգամ, երբ աղյուս է ձեռք բերում, մի կիլոգրամ պակասում է»:

Այսպես անցնում էր տարին տարու հետևից: Վերջապես հասավ այն օրը, երբ քավոր Դդումը զգաց, որ ծերանում է և այլևս չի կարող աշխատել: Նա նորից գնաց վարպետ Խաղողի մոտ:

— Արի իմ աղյուսները մեկ էլ հաշվիր, — ասաց նա:

Վարպետ Խաղողը բիզը վերցրեց, դուրս եկավ արհեստանոցից, նայեց աղյուսի կույտին ու ասաց.

— Վեց անգամ յոթ՝ քառասուներկու... Իննը հանած... մի խոսքով, ընդամենը հարյուր տասնութ աղյուս ունես:

— Յերիք կանի՞ տան համար:

— Իմ կարծիքով՝ ոչ:

— Իսկ ի՞նչ անեմ:

— Չգիտեմ ի՞նչ ասեմ քեզ... Յավաբուն շինիր:

— Ախր ոչ մի հավ չունեմ:

— Ուրեմն կատու կապրի այնտեղ: Գիտե՞ս, կատուն շատ օգտակար գազան է, մկներ է բռնում:

Դե, այդ ճիշտ է, բայց կատու էլ չունեմ: Ճիշտը որ ասեմ, դեռ մկներ էլ չկան: Որտեղի՞ց լինեն և ո՞ւմն են պետք:

— Իսկ ի՞նչ ես ուզում ինձանից, — բզով կատաղորեն ծոծրակը քորելով փնչաց վարպետ Խաղողը: — Յարյուր տասնութը՝ դա հարյուր տասնութ է, ոչ ավել, ոչ պակաս, ճիշտ է:

— Դու ավելի լավ գիտես, թվաբանությունն ես սովորել:

Քավոր Դդումը մի երկու անգամ հառաչեց, բայց տեսնելով, որ դրանից աղյուսները չեն ավելանում, որոշեց առանց ավելորդ խոսքի կառուցումն սկսել:

— Ես աղյուսից մի փոքրի՛կ-փոքրի՛կ տուն կշինեմ, — աշխատելով մտածում էր Լա: — Ինձ պալատ պետք չէ, ես այնքան էլ մեծ չեմ: Իսկ եթե աղյուսը հերիք չանի, թղթով կշարունակեմ:

Քավոր Դդումը դանդաղ և զգուշորեն էր աշխատում, վախենալով, թե իր թանկարժեք աղյուսները շուտ կվերջանան: Նա այնքան զգուշությամբ էր մի աղյուսը դնում մյուսի վրա, կարծես դրանք ապակուց լինեին:

Դե Լա լավ գիտեր, թե ամեն մի աղյուսն ինչ գնով է ձեռք բերել:

— Ա՛յ, այս մեկը, — աղյուսներից մեկը վերցնելով և շոյելով, ինչպես կատվիկին են շոյում, ասաց Լա, — հենց այն աղյուսն է, որ ես ձեռք բերեցի տասը տարի առաջ ծնունդի օրին, այն փողերով, որ հավաքել էի՝ տոնին հավ գնելու համար: Ոչի՛նչ, հավի միս ես կճաշակեմ, երբ շինարարությունն ավարտեմ, իսկ առայժմ առանց դրա էլ յուր կգնամ:

Ամեն մի աղյուսը դնելիս Լա խոր հառաչում էր: Չնայած դրան, երբ աղյուսները վերջացան, Լա դեռ հառաչանքի մեծ պաշար ուներ, իսկ տնակն աղավախտան նման փոքրիկ ստացվեց:

«Եթե աղավախ լինեի, — մտածում էր խեղճ Դդումը, — սա շատ հարմար կլիներ ինձ համար»:

Եվ ահա տնակը լիովին պատրաստ է: Քավոր Դդումը փորձեց ներս մտնել, բայց ծունկը խփեց առաստաղին, և քիչ մնաց ամբողջ շինությունը փուլ գար:

«Ծերացել եմ և անճոռնիացել, հարկավոր է ավելի զգույշ լինել»:

Նա ծունկի իջավ դռան մոտ և փնջալով չորեքթաթ ներս մտավ: Բայց այստեղ նոր դժվարություններ եղան. առանց կտուրը քանդելու հնարավոր չէր ոտքի կանգնել, հատակին չէր կարելի պառկել, քանի որ հատակը շատ կարճ էր, իսկ կողքից կողք դառնալ հնարավոր չէր նեղության պատճառով: Բայց կարևորն այն էր, թե ինչպես վարվի ոտների հետ: Եթե տուն ես մտել, պիտի ոտներդ էլ ներս տանես, թե չէ անձրևի տակ հո չե՞ս թողնի:

«Տեսում եմ, — մտածեց քավոր Դդումը, — որ ես այս տանը պետք է Նստած ապրեմ»:

Այդպես էլ արեց: Նա զգուշորեն շունչ առնելով Նստեց հատակին, պատուհանից երևացող նրա դեմքն ամենամռայլ

հուսահատությունն էր արտահայտում:

— Հը, ինչպէս ես քեզ զգում, հարևան, — գլուխն իր արհեստանոցի պատուհանից դուրս հանելով, հետաքրքրվեց վարպետ Խաղողը:

— Շնորհակալ եմ, վատ չեմ... — հառաչելով պատասխանեց քավոր Դդումը:

— Իսկ ուսերիդ մոտ նեղվածք չէ՞:

— Ո՛չ, ո՛չ: Ախր ես տունը հենց իմ չափսին եմ շինել:

Վարպետ Խաղողը, ինչպես միշտ. ծոծրակը քորեց և ինչ-որ անհասկանալի բան փնթփնթաց: Իսկ այդ ժամանակ քավոր Դդումի տունը տեսնելու համար բոլոր կողմերից մարդիկ էին գալիս: Երեխաների մի ամբողջ բազմություն հավաքվեց: Տղաներից ամենափոքրը թռավ կտուրը, պարելով սկսեց երգել:

Ծեր Դդումի ձեռքը աջ
Խոհանոցի մեջ է, տէս.

Պատշգամբումն է դրված
Նրա ձախ ձեռքը կարծես,
Իսկ մեծ քիթը, տես, ահա,
Սնդուկի մեջ է պահած:

— Չգրկյ՛, տղա, — աղերսեց քավոր Դդումը: — Այդպես տունս կքանդես, ախր տունս ջահել է դեռ, բոլորովին նոր է, մի օրական էլ չկա:

Որպեսզի երեխաների սիրտը շահի, նա հանեց մի բուռ կարմիր ու կանաչ մոմպաս, որ ով գիտի երբվանից էին ընկած գրպանում, և բաժանեց երեխաներին: Նրանք ուրախ ճղճղոցով խլեցին մոնպասները և իրար մեջ բաժանելիս էլ մի լավ կռվեցին:

Այդ օրվանից քավոր Դդումը երբ մի քանի սուլոյո փող էր ճարում, կոնֆետ էր առնում և երեխաների համար դնում լուսամուտի գոգը, ոնց որ ծտերի համար հացի փշրանք են դնում: Այդպես էլ երեխաները նրա հետ բարեկամացան:

Երբեմն Դդումը տղաներին թույլ էր տալիս հերթով մտնել տնակը, իսկ ինքը դրսից ուշադիր հետևում էր, որ երեխաները մի փորձանք չբերեն:

* * *

Ահա՛ հենց այս բոլորի մասին էլ քավոր Դիու՛մը պատմում էր Չիպուլինոյին, երբ գյուղի ծայրին փոշու թանձր ամպ բարձրացավ: Անմիջապես, կարծես խոսքները մեկ արած, բոլոր պատուհանները, դռներն ու դարբասները սկսեցին ճռռոցով ու շրխկոցով փակվել: Վարպետ Խաղողի կինն էլ շտապեց իրենց պարտեզի դուռը փակել:

Մարդիկ փակվեցին իրենց տներում, ոնց որ փոթորկից առաջ են անում: Նույնիսկ հավերը, կատուներն ու շները սկսեցին իրենց համար թաքնվելու տեղ փնտրել:

Չիպուլինոն դեռ գլխի չէր ընկել, թե ի՛նչ է կատարվում, երբ փոշու ամպը ճայթյունով ու դղրդյունով անցավ գյուղի միջով և կանգ առավ հենց քավոր Դիու՛մի տան առաջ:

Փոշու ամպի միջից հայտնվեց մի կառք, որին լծված էին չորս ձի: Ծիշտն ասած, դրանք այնքան էլ ձիեր չէին, այլ վարունգներ, քանի որ այն երկրում, որտեղ տեղի է ունենում այս ամենը, բոլոր մարդիկ և անասունները ազգակից էին որևէ մրգի կամ բանջարեղենի:

Փքվելով ու փնչալով կառքից դուրս եկավ ամբողջովին կանաչ հագած մի գեր մարդ, թվում էր, թե նրա կարմիր, փափուկ ուռած այտերը ուր որ է հասած պոմիդորի նման կպայթեն:

Դա հենց ասպետ Պոմիդորն էր, հարուստ կալվածատիրուհիներ, կոմսուհի Բալերի կառավարիչն ու տնտեսը: Չիպուլինոն իսկույն գլխի ընկավ, որ այդ տիպից ոչ մի լավ բան չի կարելի սպասել, եթե նրան դեռ չտեսած բոլորը փախչում են, և ավելի լավ համարեց մի կողմ քաշվել:

Սկզբում ասպետ Պոմիդորը ոչ ոքի վատ բան չարեց: Նա միայն նայում էր քավոր Դիու՛մին: Երկար ու սևեռուն նայում էր նա և չարագուշակ ձևով գլուխը շարժելով լռում:

Իսկ խեղճ քավոր Դիու՛մն այդ բոպեին պատրաստ էր իր տնակի հետ գետնի տակն անցնել: Քրտինքն առվակի նման հոսում էր նրա ճակատից և լցվում բերանը:

Քավոր Դիումը սիրտ չէր անում նույնիսկ ձեռքը բարձրացնել, որպեսզի դեմքը սրբի, և այդպես էլ հնազանդորեն կուլ էր տալիս քրտինքի աղի ու դառը կաթիլները:

Վերջապես նա աչքերը փակեց և սկսեց մտածել այսպես. «ո՛չ մի սինյոր Պոմիդոր էլ այստեղ չկա, ես նստած եմ տնակի մեջ և լողում եմ ինչպես ծովայինը նավով Խաղաղ օվկիանոսումն է լողում: Շուրջս ջուր է, կապրկյտ-կապրկյտ, խաղանդ-խաղանդ... Ինչքան մեղմ է օրորվում իմ նավակը»:

Իհարկե, շուրջը ոչ մի ծով էլ չկար, բայց քավոր Դիումի տնակն իսկապես օրորվում էր մեկ աջ, մեկ ծախ: Այդ նրանից էր որ ասպետ Պոմիդորը մի ձեռքով բռնել էր կտրի մի ծայրից, երկրորդով՝ մյուս ծայրից և ինչքան ուժ ուներ, տնակը թափ էր տալիս. կտուրն այնպես երերաց, որ խնամքով դարսված կղմինդրներն սկսեցին այս ու այն կողմ թափվել:

Երբ սինյոր Պոմիդորը այնպես կատաղորեն մռնչաց, որ հարևան տների դռներն ու լուսամուտներն ավելի ամուր փակվեցին, իսկ ովքեր բանալին մի անգամ էին պտտեցրել, շտապեցին երկրորդ անգամ էլ պտտեցնել, քավոր Դիումն աչքերն ականա բացեց:

— Չարագործ, — գոռում էր սինյոր Պոմիդորը, — ավազանկ, գոհ, խռովարար, ապստամբ: Դու այս պալատը կառուցել ես մի հողի վրա, որ պատկանում է կոմսուհի Բալերին: Դու քո կյանքի վերջին օրերն անգործությամբ ես ուզում անցկացնել և ուզում ես ոտնահարել երկու խեղճ, զառամյալ այրի սինյորաների, երկու լրիվ որբերի իրավունքները: Ես հիմա քեզ ցույց կտամ:

— Ձերդ ողորմածություն, — աղերսեց քավոր Դիումը, — հավատացնում եմ ձեզ, որ ես թույլատվություն ունեի տուն կառուցելու համար: Ինձ այդ իրավունքը ժամանակին սինյոր կոմս Բալն է տվել:

— Կոմս Բալը մեռել է երեսուն տարի առաջ, խաղաղություն նրա ոսկորներին: — Իսկ հիմա հողը պատկանում է միանգամայն կենդանի կոմսուհիներին: Դրա համար էլ առանց ավելորդ խոսակցության դուրս կորիր այստեղից: Մնացածը քեզ փաստաբանը կբացատրի:

— ... Չե՛յ, Սիստեռիկ, որտե՞ղ եք դուք, շուտ արեք:

Սինյոր Կանաչ Սիսեռիկը, գյուղական փաստաբանը, ըստ երևույթին պատրաստ սպասում էր, քանի որ անմիջապես, ինչպես սիսեռը պաճի միջից, չգիտես որտեղից դուրս եկավ: Ամեն անգամ, երբ Պոմիդորը հայտնվում էր գյուղում, նա կանչում էր այդ ճարտար մարդուն, որպեսզի սա իր կարգադրությունները օրենքի համապատասխան հողվածներով հաստատեր:

— Ես այստեղ եմ, ձերդ ողորմածություն, պատրաստ եմ... Խոնարհվելով և վախից ամբողջովին կանաչած՝ բլբլաց սինյոր Սիսեռիկը:

Բայց նա այնքան փոքրիկ էր և այնքան արագաշարժ, որ նրա բարևը ոչ ոք չէր ճանաչում: Վախենալով, թե կարող է այնքան էլ քաղաքավարի չերևալ, նա վեր թռավ և ոտքերը օդում թափահարեց:

— Եյ, ի՞նչ է ձեր անունը, այս անբան Դոմինին ասեք, որ թագավորության օրենքների համաձայն նա պարտավոր է անմիջապես հեռանալ այստեղից: Եվ բացատրեցեք այստեղի բոլոր բնակիչներին, որ կոմսուհի Բալերը մտադիր են այս շնաբևույժ տեղավորել իրենց ամենակատաղած շանը: Այդ շունը կոմսի կավվածքները պետք է պաշտպանի չարաճճի տղաներից, որոնք վերջերս սկսել են իրենց չափազանց վատ պահել:

— Այո՛, այո՛, իսկապես որ շատ վատ... այսինքն... — վախից ավելի կանաչելով փնթփնթում էր Սիսեռիկը: — Այսինքն՝ ոչ իսկապես վատ:

— Այդ ի՞նչ է՝ «իսկապես» կամ «ոչ իսկապես»: Փաստաբան էք դուք թե ոչ:

— Օ՛, այո, ձերդ ողորմածություն, ես մասնագետ եմ քաղաքացիական, քրեական, ինչպես նաև կանոնական իրավունքների: Վերջացրել եմ Սալամանկի համալսարանը: Դիպլոմ և կոչում ունեմ:

— Դե եթե դիպլոմ և կոչում ունեք, ուրեմն դուք կհաստատեք, որ ես իրավացի եմ: Իսկ հետո արդեն կարող եք գնալ ձեր գործին:

— Այո, այո, սինյոր ասպետ, ինչպես որ դուք ցանկանում եք... Եվ սինյոր փաստաբանն այլևս չսպասեց, որ իրեն երկրորդ անգամ ինդրեն, մկան պոչի նման արագ և աննկատելի մի կողմ քաշվեց:

— Յը, լսեցիր ինչ ասաց փաստաբանը, — քավոր Դոմինիս դիմելով՝ հարցրեց Պոմիդորը:

— Բայց նա ոչինչ էլ չասաց, — լսվեց ինչ-որ մեկի ձայնը:

— Ինչպէս, դու համարձակվում ես դեռ ինձ հետ վիճել, թշվառական:

— Ձերդ ողորմածություն, ես իսկի բերանս էլ չեմ բացել... — թոթովեց քավոր Դոմինը:

— Բա ի՞նչ էր, որ դու չէիր: Եվ ասպետ Պոմիդորը սպառնագին շուրջը նայեց:

— Խաբեբա՛, խարդա՛խ, — նորից լսվեց նույն ձայնը:

— Այդ ի՞նչ է խոսում, ի՞նչ: Երևի քավթառ վարպետ Խաղողն է այդ, — որոշեց ասպետ Պոմիդորն ու, մոտենալով կոշկակարի արհեստանոցին, մահակով խփեց դռանն ու մռնչաց. — Վարպետ Խաղող, ես շատ լավ գիտեմ, որ ձեր արհեստանոցում իմ և կոմսուհի Բալերի դեմ հաճախ հանդուգն ու խռովարարական խոսքեր են ասվում: Դուք ոչ մի հարգանք չեք տածում դեպի այդ զառամյալ, մեծատոհմ սիւնյորա այրիները, որոնք բուլորովին որբ են: Բայց սպասեք, ձեր հերթն էլ կգա, կտեսնեք, թե ի՞նչ է վերջում ծիծաղելու:

— Զո հերթն ավելի շուտ կգա, սիւնյոր Պոմիդոր: Օ՛խ, շուտով դու կտրաքես, անպայման՝ կտրաքես:

Այդ խոսքերն արտասանողը ուրիշ մեկը չէր, այլ Չիպուլինոն: Ձեռքերը գրպանները դրած, նա այնքան հանգիստ ու վստահ էր մոտենում ահեղ ասպետ Պոմիդորին, որ սրա մտքովն էլ չանցավ, թե ճշմարտությունն իր աչքերի մեջ համարձակվում է ասել այդ խղճուկ տղան, այդ փոքրիկ թափառաշրջիկը:

— Իսկ դու՞ որտեղից հայտնվեցիր, ինչո՞ւ աշխատանքի չես:

Ես դեռ չեմ աշխատում, ես միայն սովորում եմ, — պատասխանեց Չիպուլինոն:

— Իսկ ի՞նչ ես ուսումնասիրում, որտե՞ղ են գրքերդ:

— Ես ուսումնասիրում եմ սրիկաներին, ձերդ ողորմածություն: Յենց հիմա նրանցից մեկը կանգնած է իմ դեմ, և ես երբեք հարմար առիթը բաց չեմ թողնի, որպեսզի ինչպես հարկն է ուսումնասիրեմ նրան:

— Ա՛խ, դու ուսումնասիրում ես սրիկաներին: Այդ շատ հետաքրքիր է: Ասենք, գյուղում բոլորն էլ սրիկաներ են: Եթե դու նոր սրիկա ես գտել, ցույց տուր ինձ:

— Չաճույթով, ձերդ ողորմածություն, — խորամանկորեն աչքը ճտելով պատասխանեց Չիպուլինոն:

Այստեղ նա ձեռքը տարավ ձախ գրպանն ու հանեց մի փոքրիկ հայելի, որով նա սովորաբար խաղում էր արևի ճառագայթների հետ: Բոլորովին մոտենալով սինյոր Պոմիդորին, Չիպուլինոն հայելին բռնեց նրա քթի մոտ ու ասաց.

— Ահա նա, այդ սրիկան, ձերդ ողորմածություն: Եթե ցանկանում եք, ուշադիր նայեք սրան: Ճանաչում եք:

Ասպետ Պոմիդորը չկարողացավ իրեն զսպել և մի աչքով նայեց հայելու մեջ:

Չայտնի չէ, թե այնտեղ ինչ տեսնելու հույս ուներ, բայց իհարկե, տեսավ իր կրակի նման կարմիր, փոքրիկ ու չար աչքերով, դրամարկդի բացվածքի նման լայն բերանով կերպարանքը:

Այստեղ էլ սինյոր Պոմիդորը հասկացավ, որ Չիպուլինոն ուղղակի ձեռ է առնում իրեն: Այ թե կատաղեց: Ամբողջովին շառագունած, երկու ձեռքով բռնեց Չիպուլինոյի մազերից:

— Օ՛յ-օ՛յ-օ՛յ, — չկորցնելով իրեն հատուկ կենսուրախությունը, ճչաց Չիպուլինոն, — ա՛խ, ինչքան ուժեղ է այդ սրիկան, որին դուք տեսաք իմ հայելու մեջ: Չավատացնում եմ ձեզ, նա մեն-մենակ մի ամբողջ ավազակախումբ արժի:

— Ես քեզ ցույց կտամ, խաբեբա՛... գոռաց ասպետ Պոմիդորն ու այնպես ուժգին ձիգ տվեց Չիպուլինոյի մազերից, որ մի ամբողջ փունջ պոկվեց ու մնաց նրա ձեռքում:

Բայց այստեղ տեղի ունեցավ այն, ինչ պիտի լիներ: Պոկելով Չիպուլինոյի սոխե մազերը, ահեղ ասպետ Պոմիդորն հանկարծ աչքերում և քթի մեջ սուր ծակծկոց զգաց: Մեկ-երկու անգամ նա փռշտաց, իսկ հետո արցունքը նրա աչքերից դուրս ցայտեց շատրվանի նման: Արցունքի շիթերը, առվակներն ու գետերը այնքան առատ էին հոսում նրա այտերով, որ ամբողջ փողոցը թրջեցին, կարծես դռնապանն էր ռետինե խողովակով ջրել:

«Այսպիսի բան ինձ հետ դեռևս չէր եղել», — մտածում էր վախեցած սիւնյոր Պոմիդորը:

Եվ իսկապես, նա այնքան անսիրտ և դաժան մարդ էր (եթե միայն Պոմիդորին կարելի է մարդ համարել), որ երբեք լաց չէր լինում, և քանի որ նա միաժամանակ հարուստ մարդ էր, երբեք չէր պատահել, որ սոխ մաքրած լիներ: Այնինչ տեղի ունեցածը այնքան վախեցրեց ասպետին, որ նա թռավ կառքի մեջ, մտրակեց ձիերն ու սլացավ: Զիչ հետո ետ դարձավ ու գոռաց:

— Էյ, Դդում, նայիր, հայ, ես քեզ զգուշացրի... Իսկ դու, ստոր լակոտ, քրջոտի մեկը, դու ինձ թանկ կվճարես այս արցունքների համար:

Զիպուլինոն ծիծաղից թուլացավ, իսկ քավոր Դդումը միայն ճակատի քրտինքը սրբեց:

Բացի սիւնյոր Սիսեռիկի տանից, մնացած բոլոր տների դռներն ու պատուհանները սկսեցին կամաց-կամաց բացվել, վարպետ Խաղողը լայն բաց արեց իր պարտեզի վանդակադուռը և, բզով կատաղորեն քորելով ծոծրակը, դուրս թռավ փողոց:

— Երդվում եմ աշխարհի բոլոր մոմած թելերով, — բացականչեց նա, — վերջապես գտնվեց մի տղա, որ ստիպեց ասպետ Պոմիդորին լաց լինել... Որտեղի՞ց հայտնվեցիր, տղա:

Եվ Զիպուլինոն վարպետ Խաղողին ու նրա հարևաններին պատմեց իր ամբողջ պատմությունը, որ դուք արդեն գիտեք:

Գլուխ երրորդ

Որտեղ պատմվում է պրոֆեսոր Տանձի, Սոխ Պրասի և Չապարոտնուկի մասին

Այդ օրվանից Զիպուլինոն սկսեց աշխատել վարպետ Խաղողի արհեստանոցում և շուտով կոշկակարության մեջ մեծ հաջողությունների հասավ: Թել էր մոմում, կրունկներ էր խփում, ներբաններ դնում, պատվիրատուների ոտքերի չափսն էր առնում և այս բոլորի հետ շարունակում էր կատակել:

Վարպետ Խաղողը գոհ էր տղայից, և արհեստանոցի գործերը հիանալի էին գնում ոչ միայն նրա համար, որ երկուսն էլ եռանդով էին աշխատում, այլև այն պատճառով, որ շատերը արհեստանոց էին գալիս տեսնելու այն համարձակ տղային, որ ասպետ Պոմիդորին ստիպել էր լաց լինել:

Կարճ ժամանակում Չիպուլինոն շատ ծանոթներ ձեռք բերեց:

Առաջինը եղավ երաժշտության ուսուցիչ, պրոֆեսոր Տանձը՝ ջութակը թևի տակ: Նրա հետևից ներս թափանցեց ճանճերի ու բոռերի մի ամբողջ ամպ, որովհետև պրոֆեսոր Տանձի ջութակը սարքված էր հոտավետ, հյութեղ կիսատ տանձից, իսկ ճանճերը, հայտնի բան է, ամեն տեսակ քաղցրեղենի սիրահար են:

Շատ հաճախ, երբ պրոֆեսոր տանձը համերգ էր տալիս, ունկնդիրները դահլիճից բացականչում էին.

— Պրոֆեսոր, ուշադրություն դարձրե՛ք, ձեր ջութակի վրա մի մեծ ճանճ է նստած, դրա համար էլ եղանակը սխալ է ստացվում:

Այստեղ պրոֆեսորը նվագն ընդհատում էր և այլևս չէր վերականգնում այնքան ժամանակ, քանի նրան չէր հաջողվում կնտնոցով վերջ տալ ճանճին:

Իսկ երբեմն նրա ջութակի մեջ էր սողոսկում որևէ որդ և այնտեղ երկար, ծուռ ու մուռ միջանցքներ էր փորում, գործիքը դրանից փչանում էր, և պրոֆեսորն ստիպված նորն էր ձեռք բերում, որպեսզի նվագելիս եղանակը սխալ դուրս չգա:

Պրոֆեսոր Տանձից անմիջապես հետո գալիս էր պարտիզպան Սոխ Պրասը: Նա ճակատին թափվող խիտ մազափունջ ուներ և երկար, շատ երկար բեղեր:

— Այս բեղերի պատճառով, — գանգատվում էր Սոխ Պրասը Չիպուլինոյին, — ես քիչ տհաճությունների մեջ չեմ ընկնում: Երբ կինս սպիտակեղեն է փռում չորացնելու, ինձ նստեցնում է պատշգամբում, բեղերս կապում մեխերից և նրանց վրա կախում իր սավանները, շապիկներն ու գուլպաները: Իսկ ես ստիպված նստում եմ արևի տակ այնքան ժամանակ, քանի դեռ սպիտակեղենը չի չորացել: Այ, տեսնո՞ւմ ես, ինչ հետքեր են մնացել իմ բեղերին:

Իրոք, Սոխ Պրասի բեղերի վրա փայտե բռնիչների հետքեր կային:

Մի անգամ արհեստանոց եկավ Յազարոտնուկի ընտանիքը՝ հայրն ու երկու որդիները: Որդիները ոչ մի բանի չէին կարողանում հանգիստ կանգնել տեղում:

— Նրանք միշտ այդպես անհանգիստ են, — հարցրեց Չիպուլինոն:

— Ինչ եք ասում, — հառաչեց Յազարոտնուկ հայրը, հիմա դեռ հրեշտակի նման հանգիստ են, այ, դուք մի տեսնեիք, թե ինչ են անում, երբ կինս լողացնում է նրանց: Մինչև նա կլվանա սրանց առաջին հարյուր ոտները, նրանք կեղտոտում են հետևի ոտները, լվանում է հետևիները՝ առաջիները նորից սև են ձյութի նման: Նա անվերջ տանջվում է սրանց ձեռքին և ամեն անգամ մի ամբողջ արկղ օճառ է փչացնում:

Վարպետ Խաղողը ծոծրակը քորեց և հարցրեց.

— Յ՛ր, ձեր ճուտիկերի չափսն առնե՞մ թե չէ:

— Ինչ եք ասում, աստված ձեզ հետ, մի՞թե ես կարող եմ այդքան կոշիկ պատվիրել: Ես ստիպված պիտի ամբողջ կյանքում աշխատեմ, որպեսզի հազար զույգ կոշիկի գին կարողանամ վճարել:

— Ճիշտ է, — համաձայնեց վարպետ Խաղողը, — ասե՛նք իմ արհեստանոցում այդքան կաշի չի էլ ճարվի:

— Դե դուք նայե՛ք, թե կոշիկներից ո՞րն է ավելի շատ մաշված. գոնե մի քանի զույգ կփոխենք:

Քանի դեռ վարպետ Խաղողն ու Չիպուլինոն տղաների ներքբաներն էին ստուգում, Յազարոտնուկն ու Յազարաթաթիկը աշխատում էին մի կերպ հանգիստ կանգնել, բայց այդ նրանց այնքան էլ չէր հաջողվում:

— Ահա, — ասաց կոշկակարը, — այս պատիկի համար հարկավոր է փոխել առաջին երկու և երեք հարյուրերորդ զույգերը:

— Ո՛չ, երեք հարյուրերորդը դեռ կարող է պետք գալ, — շտապելով հակաճառեց հայր Յազարոտնուկը, — կրունկները խփե՛ք, հերիք է:

— Իսկ մյուս տղան պիտի աջ կողմից տասը կոշիկ իրար հետևից փոխի:

— Ինչքան եմ սրանց ասել, որ ոտքերով չփորփրեն գետինը: Է՛, միթե սրանք գիտեն քայլել: Վազվզում են, մի ոտքի վրա պարում, թռչկոտում: Եվ ի՛նչ է ստացվում, վերջ ի վերջո՝ բոլոր աջ կոշիկները ձախերից շուտ մաշվեցին: Ահա՛, միշտ այսպես նեղություն ենք քաշում մենք՝ հազարոտնուկներս:

Վարպետ Խաղողը միայն ձեռքը թափ տվեց.

— Է՛իս, բոլոր երեխաներն էլ մեկ են: Երկու ոտք ունեն թե հազար, փաստորեն միևնույն է: Նրանք նույնիսկ ընդունակ են մի ոտքի վրա հազար գույգ կոշիկ մաշել:

Վերջապես Հազարոտնուկի ընտանիքը դոփդոփելով հեռացավ: Հազարոտնուկն ու Հազարաթաթիկը այնպես սլացան, կարծես կառք նստած լինեին: Հայր Հազարոտնուկը չէր կարող այդքան արագ շարժվել, նա մի քիչ կաղում էր, բոլորովին քիչ, ընդամենը հարյուր տասնութ ոտքով:

Գլուխ չորրորդ

Թե ինչպես Չիպոլինոն խաբեց Մաստինո շանը, որը շատ ծարավ էր

Իսկ ի՛նչ եղավ քավոր Դդումի տունը:

Մի բոլորովին էլ ոչ գեղեցիկ օր չորս վարունգ լծած իր կառքով եկավ ասպետ Պոմիդորը: Այս անգամ նրան մի տասնյակ Լիմոնուկներ էին ուղեկցում: Առանց երկար-բարակ խոսելու սրանք քավոր Դդումին դուրս արեցին տանից, իսկ նրա տեղը Մաստինո անունով մի ահագին տնպահ շուն դրեցին:

— Ահա, — սպառնազին շուրջը նայելով, հայտարարեց Պոմիդորը, — հիմա ձեր բոլոր լակոտները կտվորեն ինձ հարգել և առաջին հերթին՝ այն եկվոր գջլոտը, որին վարպետ Խաղողը վերցրել է իր մոտ:

— Ճիշտ է, ճիշտ է, — խուլ հաչեց Մաստինոն:

— Ինչ վերաբերում է հիմար ծերուկ Դդումին, — շարունակեց սինյոր Պոմիդորը, — նա այսուհետև կտվորի իմ հրամաններին

ենթարկվել: Իսկ եթե շատ է ուզում ծածկի տակ ապրել, ապա նրա համար միշտ էլ մի հարմար տեղ կճարվի բանտում: Այնտեղ բոլորի համար էլ տեղ կլինի:

— Ճիշտ է, ճիշտ է, — նորից հաստատեց Մաստինոն:

Վարպետ Խաղողն ու Չիպուլինոն արհեստանոցի շեմքին կանգնած՝ ամեն ինչ տեսնում ու լսում էին, բայց ծերուկին ոչնչով չէին կարող օգնել:

Քավոր Դդումը տխուր նստել էր մի կոճղի և մորուքի մագերն էր փետում: Ամեն անգամ քաշելիս ձեռքին մի փունջ մագ էր մտնում: Վերջ ի վերջո նա որոշեց թողնել այդ զբաղմունքը, որ անմորուք չմնա, սկսեց կամաց-կամաց հառաչել: Ախր դուք հիշում եք, քավոր Դդումը հառաչանքի մեծ պաշար ուներ:

Վերջապես սինյոր Պոմիդորը մտավ իր կառքը: Մաստինոն կանգնեց առջևի թաթերին և իր տիրոջը պոչով պատիվ տվեց:

— Տես, հա՛, կպահպանես, — հրամայեց ասպետ Պոմիդորը, մտրակեց Վարունգներին, և կառքը փոշու ամպ բարձրացնելով, առաջ սլացավ:

Ամառային հրաշալի շոգ օր էր: Տիրոջ գնալուց հետո Մաստինոն շոգից լեզուն դուրս գցած, պոչը հովհարի նման թափ տալով, մի քիչ զբոսնեց տնակի առաջ: Բայց ոչինչ չէր օգնում: Շունը շոգից ուժասպառ եղավ: «Յիմա վատ չէր լինի, որ մի բաժակ սառը ջուր խմեի», — մտածում էր նա:

Շուրջը նայեց, տեսի մի հարմար երեխա չկա՞, որ ուղարկի մոտակա պանդոկը՝ գարեջուր բերելու, բայց փողոցում թարսի պես ոչ ոք չկար: Ճիշտ է, կոշկակարի արհեստանոցում բաց դռնից երևում էր Չիպուլինոն, որը եռանդով թել էր մոմում, բայց նրանից սոխի այնքան կծու հոտ էր փչում, որ Մաստինոն սիրտ չէր անում նրան կանչել:

Սակայն Չիպուլինոն ինքը նկատեց, որ շունը շոգից նվաղում է:

«Ես Չիպուլինոն չլինեմ, եթե դրա գլխին մի օյին չբերեմ», — մտածեց նա:

Իսկ շոգը քանի գնում ուժեղանում էր, որովհետև արևն ավելի էր բարձրանում: Խեղճ Մաստինոն այնպես խմել էր ուզում:

«Ինչ եմ կերել ես այսօր, — փորձեց հիշել նա, — գուցե սոււպը շատ աղի էր, բերանիս մեջ ոնց որ կրակ լինի լցրած, իսկ լեզուս այնպես է ծանրացել, կարծես վրան մի քսան ֆունտ ձյուր է կպել»:

Այստեղ Չիպուլինոն գլուխը դռնից դուրս հանեց:

— Էյ, էյ, — թույլ ձայնով կանչեց Մաստինոն:

— Դուք ի՞նձ եք կանչում, սինյոր:

— Ձեզ, պատանյակ, ձեզ: Գնացե՛ք ինձ համար մի շիշ սառը լիմոնադ բերե՛ք, ինդրում եմ:

— Ա՛խ, ես մեծ ուրախությամբ կգնայի, սինյոր Մաստինո, բայց իմ տերը հենց նոր կարկատելու տվեց այս կոշիկը, և ես ոչ մի կերպ չեմ կարող բացակայել: Շատ ափսոսում եմ:

Եվ Չիպուլինոն առանց ավելորդ խոսակցության, վերադարձավ իր արհեստանոցը:

— Ծո՛ւյլ, անբաղաբավարի՛, — մռթմռթաց շունը, անիծելով շղթան, որ խանգարում էր պանդոկ գնալուն:

Մի քիչ հետո Չիպուլինոն նորից երևաց:

— Սինյորինո, — համարյա թե լալով ասաց Մաստինոն, — գուցե դուք ինձ մի բաժակ հասարակ ջուր բերե՛ք:

— Ես մեծ հաճույքով կբերեի, — ասաց Չիպուլինոն, — բայց հենց նոր տերս հրամայեց սինյոր սրբազանի տուֆլու կրունկները նորգել:

Ճիշտն ասած, Չիպուլինոն ամբողջ հոգով խղճում էր ծարավից տանջվող շանը, բայց նրան դուր չէր գալիս այն արհեստը, որով զբաղվում էր Մաստինոն, բացի այդ ուզում էր մի անգամ էլ դաս տալ սինյոր Պոմիդորին:

Մոտ ժամը երեքին արևն այնպես սկսեց այրել, որ փողոցում նույնիսկ քարերը քրտնեցին: Մաստինոն շոգից ու ծարավից քիչ մնաց կատաղեր:

Վերջապես Չիպուլինոն վեր կացավ իր նստարանից, մի շիշ ջուր լցրեց և մեջը ավելացրեց այն սպիտակ դեղափոշուց, որ անբնության դեմ ընդունում էր վարպետ Խաղողի կինը:

Նա մատով փակեց շշի բերանը, մոտեցրեց շրթունքներին, ցույց տալով, թե խմում է:

— Ա՛խ, — փորը շոյելով ասաց նա, — ի՛նչ հրաշալի սառը ջուր է:

Մաստինոյի թուփը հոսեց, այնպես որ մի պահ նա նույնիսկ իրեն լավ զգաց:

— Սիկյոր Չիպոլինո, իսկ այդ ջուրը մաքրո՞ւր է:

— Իհարկե, արցունքի պես զուլալ է:

— Իսկ մեջը բացիլներ չկա՞ն:

— Ի՛նչ եք ասում, այս ջուրը մաքրել և քամել են երկու նշանավոր պրոֆեսոր, որոնք միկրոբերը թողել են իրենց, իսկ ջուրը ինձ տվել, որովհետև ես կարկատել եմ նրանց տուֆլիները:

Եվ Չիպոլինոն նորից շիշը բերանին մոտեցնելով, ցույց տվեց, թե խմում է:

— Սիկյոր Չիպոլինո, — զարմացած հարցրեց Մաստինոն, — այդ ինչպե՞ս է ձեզ մոտ ստացվում, որ շիշը միշտ լիքն է մնում:

— Բանն այն է, — պատասխանեց Չիպոլինոն, — որ այս շիշը իմ ողորմածիկ պապի նվերն է: Սա կախարդական շիշ է և երբեք չի դատարկվում:

— Իսկ դուք ինձ չե՞ք թողնի, որ մի քիչ խմեմ, գոնե մի կում: Մի կում միայն:

— Մի կո՞ւմ: Խմեք ինչքան ուզում եք, — պատասխանեց Չիպոլինոն, — ես ձեզ ասացի, որ իմ շիշը երբեք չի դատարկվում:

Կարո՞ղ եք պատկերացնել, թե ինչքան ուրախացավ Մաստինոն: Նա անընդհատ շնորհակալություն էր հայտնում Չիպոլինոյին, լիզում էր նրա ոտները և պոչը շարժում: Նույնիսկ իր տիրուհիների, կոմսուհիների Բալերի հետ նա երբեք այդպես չէր վերաբերվել:

Չիպոլինոն ջուրը մեկնեց Մաստինոյին: Սա շիշը իւլեց տղայի ձեռքից և ազահորեն ամբողջ ջուրը մի կում արեց: Դատարկ շշին նայելով, նա զարմացավ.

— Ինչպե՞ս, արդեն վերջացավ: Իսկ դուք ինձ ասում էիք, թե շի...

Այդպես էլ նա չկարողացավ վերջացնել, ընկավ ու քնեց:

Չհպուլիսն շղթան հանեց, շանը շալակեց և տարավ այն ամրոցի մոտ, որտեղ ապրում էին կոմսուհի Բալերն ու ասպետ Պոմիդորը: Ետ դառնալով, նա տեսավ, որ քավոր Դդումը արդեն նորից տիրացել է իր տնակին: Ծերուկի դեմքը և պատուհանից դուրս ընկած քրքրված մորուքը աննկարագրելի ուրախություն էին արտահայտում:

«Խեղճ շուն, — մտածում էր Չհպուլիսն, դեպի ամրոց գնալով, դու ինձ ներիր, խնդրում եմ, բայց ես պարտավոր էի այդպես վարվել: Միայն հայտնի չէ, երբ քնից զարթնես, ինչպե՞ս շնորհակալ կլինես իմ տված թարմ ջրի համար»:

Ամրոցի դարբասները բաց էին: Չհպուլիսն շանը դրեց այգու խոտերի վրա, քնքշորեն շոյեց նրան և ասաց.

— Ասպետ Պոմիդորին ինձնից բարև արա. երկու կոմսուհիներին էլ:

Մաստիսն պատասխանեց երանելի մռլտոցով: Նա երագում տեսնում էր, թե իբր լողանում է լեռնային լճում, հաճելի, սառը ջրում: Լողանալով՝ նա խմում է սրտի ուզածի չափ և ինքն էլ աստիճանաբար ջուր է դառնում. նրա պոչը ջուր է դարձել, ջուր էին դարձել ականջներն ու չորս թաթերը՝ թեթև ու երկար շատրվանի շիթերի պես:

— Հանգիստ քնիր, — ավելացրեց Չհպուլիսն և վերադարձավ գյուղ:

Գլուխ հինգերորդ

Քավոր Հավամրգին դռների վրա գողերի համար զանգակ է կախում

Վերադառնալով գյուղ, Չհպուլիսն տեսավ, որ Դդումի տնակի մոտ շատ մարդիկ են հավաքվել: Նրանք տազնապահար ու կիսաձայն խոսում էին իրար հետ: Երևում էր, որ կարգին վախեցած են:

— Տեսես էլի՞ որևէ բան կանի ասպետ Պոմիդորը, — տխուր ու մտահոգ հարցրեց պրոֆեսոր Տանձը:

— Ես կարծում եմ, որ այս պատմությունը վատ կվերջանա: Ինչ ուզում ես արա, նրանք են այստեղ տերն ու տիրակալը, դրա համար էլ ինչ սրտներն ուզում է, անում են, — ասում էր սանամեր Դդումը:

Սոխ Պրասի կինն անմիջապես համաձայնեց նրան և, ամուսնու բեղերը սանձի պես բռնելով, ճչաց.

— Հապա մի տուն գնանք, քանի դեռ մի վատ բան չի պատահել:

Նույնիսկ վարպետ խաղողը տազնապած օրորում էր գլուխը:

— Ասպետ Պոմիդորն արդեն երկրորդ անգամն է հիմար վիճակի մեջ ընկնում: Նա անպայման կուզենա վրեժ լուծել: Միայն քավոր Դդումը չէր անհանգստանում: Նրա գրպանում էլի կոնֆետ կար և նա բոլոր ներկա երեխաներին ուրախ դեպքի առթիվ հյուրասիրեց:

Չիպուլինոն մի կոնֆետ վերցրեց, և բերանը դնելով, սկսեց մտածել:

— Ես էլ եմ կարծում, որ Պոմիդորը հեշտությամբ չի գիջի, — ասաց նա:

— Բայց այդ դեպքում... վախեցած ճչաց Դդումը:

Ուրախ ժպիտը նրա դեմքից իսկույն չքացավ, կարծես արեգակը մտավ ամպերի տակ:

— Ես կարծում եմ, մեզ միայն մի բան է մնում՝ տունը թաքցնել:

— Ինչպե՞ս թե՛ թաքցնել:

— Շատ հասարակ: Եթե սա պալատ լիներ, մեզ, իհարկե, չէր հաջողվի թաքցնել: Բայց ախր տունն այնքան փոքր է, որ կարելի կլինի ձորձահավաքի սայլակով տանել:

Ձորձահավաքի տղան՝ Լոբիկը, վազեց տուն և իսկույն, սայլակը քարշ տալով, վերադարձավ:

— Դուք ուզում եք տնակը բարձել սայլակի վրա՞, — անհանգստացած հարցրեց քավոր Դդումը:

Նա վախենում էր, թե իր թանկագին տնակը հանկարծ քարուքանդ կլինի:

— Մի՛ անհանգստացիր, տնակիդ ոչինչ չի լինի, — ծիծաղեց Չիպուլինոն:

— Իսկ ո՞ր տանենք, — նորից հարցրեց քավոր Դդումը:

Նա վախենում էր, թե իր թանկագին տնակը հանկարծ քարուքանդ կլինի:

— Առայժմ կարելի է տանել իմ նկուղը, — առաջարկեց վարպետ Խաղողը, — իսկ հետո՝ կտեսնենք:

— Իսկ եթե սինյոր Պոմիդորը որևէ կերպ իմանա՞:

Այստեղ բոլորը միանգամից նայեցին փաստաբան Սիսեռիկին, որ կարծես պատահաբար անցնում էր այդտեղով և այնպես էր ցույց տալիս, թե անցնողը բոլորովին էլ ինքը չէր:

Փաստաբանը կարմրեց, բարևեց ու սկսեց երդվել.

— Ասպետ Պոմիդորն ինձանից ոչինչ չի իմանա, ես խաբարբզիկ չեմ, ես ազնիվ փաստաբան եմ:

— Նկուղում տնակը կխոնավանա և կարող է փուլ գալ, — երկչոտ հակաճառեց քավոր Դդումը: — Իսկ ինչո՞ւ չպահենք անտառում:

— Իսկ այնտեղ ո՞վ կհսկի տնակը, — հարցրեց Չիպուլինոն:

— Անտառումն է ապրում իմ ծանոթը, քավոր Յավամրգին, — ասաց պրոֆեսոր Տանձը, — կարելի է տնակը նրան վստահել: Իսկ հետ կտեսնենք, թե ի՞նչ անենք:

Այդպես էլ որոշեցին:

Մի քանի րոպեում տնակը դրեցին սայլակի վրա: Քավոր Դդումը հառաչելով հրաժեշտ տվեց տնակին և գնաց իր թոռնիկի, սանիկ Դդմիկի մոտ, որ այս բոլոր հուզումներից հետո մի փոքր հանգստանա:

Իսկ Չիպուլինոն, Լոբիկն ու Տանձը տնակն անտառ տարան: Տանելն այնքան էլ դժվար չէր, քանի որ տնակը ավելի ծանր չէր քան թռչնավանդակը:

Քավոր Յավամրգին ապրում էր անցյալ տարվա շագանակի հաստ և փշոտ կեղևի մեջ: Դա շատ նեղ բնակարան էր, բայց քավոր Յավամրգին իր ամբողջ ունեցվածքով, որ բաղկացած էր մրկրատի մի կեսից, ժանգոտած ածելուց, ասեղ ու թելից և պանրի մի կտորից, բավական հարմար էր տեղավորվել:

Երբ քավոր Յավամրգին լսեց, թե ի՞նչ են իրենից խնդրում, նա սկզբում սարսափելի անհանգստացավ:

— Ապրել այդքան մեծ տանը, ոչ, ես երբեք չեմ համաձայնի: Դա անհնարին է: Ես մեն-մենակ ի՞նչ պիտի անեմ այդ հսկայական դատարկ պալատում: Ես ինձ լավ եմ զգում իմ շագանակի կեղևում: Գիտե՞ք հին առածը: Ասում են՝ սեփական տանը պատերն էլ են մարդու օգնում:

Սակայն, երբ քավոր Յավամրգին իմացավ, որ անհրաժեշտ է օգնել քավոր Դդումին, անմիջապես համաձայնեց:

— Ես միշտ խղճացել եմ ծերուկին: Մի անգամ ես նրան զգուշացրի, որ վզի մոտ որդ է սողում: Ախր դրանով, կարելի է ասել, կործանումից փրկեցի:

Տեսկը դրեցին մի մեծ կաղնու տակ: Զիպուլինոն, Լորիկը և Տանձը քավոր Յավամրգին օգնեցին, որ սա իր ամբողջ հարստությունը նոր տուն տեղափոխի և, խոստանալով շուտով վերադառնալ, հրաժեշտ տվեցին:

Մենակ մնալով, քավոր Յավամրգին լրջորեն անհանգստացավ: Յանկարծ ու գողերը հարձակվեն:

«Յիմա, երբ իմ տունն այսքան մեծ է, պարզ է, որ ինձ կուզենան թալանել: Ո՞վ գիտի, կարող է քնած տեղս ինձ նույնիսկ սպանեն, ենթադրելով, թե մոտս գանձ կա»:

Նա մտածեց, մտածեց և որոշեց դռան վրա մի զանգակ կախել, իսկ մեջը դնել տպագիր տառերով գրված այս գրությունը.

«Խոնարհաբար խնդրում ենք սինյոր գողերին, որ այս զանգակը զնգացնեն: Նրանց իսկույն կթողնեն ներս, և սինյոր գողերը իրենց սեփական աչքերով կտեսնեն, որ տանը գողանալու ոչինչ չկա»:

Գրությունը գրելով, նա հանգստացավ, և երբ մթնեց, հանգիստ պառկեց քնելու:

Կես-գիշերին նա արթնացավ զանգի ձայնից:

— Ո՞վ է, — հարցրեց քավոր Յավամրգին, պատուհանից գլուխը հանելով:

— Գողեր են, — պատասխանեց մի կոպիտ ձայն:

— Գալիս եմ, գալիս, միայն, խնդրում եմ, սպասք խալաթս հագնեմ, — ասաց քավոր Յավամրգին:

Նա խալաթը հագավ, դուռը բաց արեց և գողերին խնդրեց, որ ամբողջ տունը խուզարկեն: Գողերը երկու հսկայական, բարձրահասակ, սևամորուս տղաներ էին: Նրանք հերթով, զգուշորեն, որպեսզի ուռույցքներ չստանան, գլուխները ներս մտցրին և շուտով համոզվեցին, որ տանելու բան չկա:

— Տեսնո՞ւմ եք, սինյորներ, համոզվեցի՞ք, — ուրախացած ասաց քավոր Չավամբգին, ձեռքերը շփելով:

— Չըմ... այո... մռթմռթացին հիասթափված գողերը:

— Չավատացե՞ք, ինձ համար տհա՞ծ է ձեզ դատարկ ձեռքով ճամփու դնելը, — շարունակեց քավոր Չավամբգին, — չե՞մ կարող ձեզ որևէ օգուտ տալ: Սափրվել չե՞ի՞ք ուզենա, ես այստեղ ածելի ունեմ. ճիշտ է, հին է, իմ ապու պապից մնացած ժառանգությունն է, բայց թվում է, մի կերպ կսափրի:

Գողերը համաձայնեցին: Նրանք ժանգոտած ածելիով մի կերպ սափրվեցին և, մի քանի անգամ տանտիրոջը շնորհակալություն հայտնելով, գնացին: Մի խոսքով՝ նրանք կարգին տղաներ դուրս եկան:

Ով գիտի, թե ինչո՞ւ էին նրանք այդքան վատ արհեստ ընտրել:

Քավոր Չավամբգին նորից անկողին մտավ և քնեց:

Ժամը երկուսին նրան արթնացրեց երկրորդ զանգահարությունը: Էլի երկու գող էին եկել:

— Ներս մտե՞ք, — ասաց քավոր Չավամբգին, — միայն հասկանալի է՝ հերթով, թե չէ տունը կքանդվի:

Այս գողերը մորուք չունեին, բայց նրանցից մեկը բաճկոնի վրա կոճակներ չուներ:

Ոչ մի կոճակ: Քավոր Չավամբգին նրան նվիրեց ասեղն ու թելը և խորհուրդ տվեց զբոսանքի ժամանակ ոտքերի տակ ավելի ուշադիր նայել:

— Գիտե՞ք ինչ, ճանապարհի վրա միշտ շատ կոճակներ են թափված լինում, — բացատրեց նա գողին:

Այս գողերն էլ գնացին իրենց գործին:

Մի խոսքով, քավոր Չավամբգուն ամեն գիշեր արթնացնում էին գողերը, որոնք զանգակը զնգացնում էին, ներս էին մտնում, նայում

և ետ գնում, չնայած առանց ավարի, բայց շատ գոհ, որ ծանոթացան այս բարի ու քաղաքավարի փոքրիկ տանտիրոջ հետ:

Այսպիսով, ինչպես տեսաք, քավոր Դոմի տնակը լավ հսկողության տակ էր: Այժմ եկեք բաժանվենք նրանից և տեսնենք, թե ի՞նչ է կատարվում մյուս տեղերում:

Գլուխ վեցերորդ

Որտեղ պատմվում է այն մասին, թե ինչքան գլխացավանք ու տհաճություն պատճառեցին կոմսուհիներին նրանց ազգականները՝ բարոն Նարինջն ու հերցոգ Մանդարինը

Հիմա մեզ անհրաժեշտ է մտնել կոմսուհիներ Բալերի ամրոցը, որոնք, ինչպես երևի հասկացել եք, ամբողջ գյուղի՝ տների, հողի և նույնիսկ զանգակատնով եկեղեցու տերն ու տնօրենն էին:

Այն օրը, երբ Չիպուլինոն քավոր Դոմի տունը տեղափոխեց անտառ, ամրոցում արտակարգ աշխուժություն էր տիրում. ամրոցի տների մոտ էին եկել նրանց ազգականները:

Ազգականները երկուսն էին՝ բարոն Նարինջը և հերցոգ Մանդարինը: Բարոն Նարինջը սինյորա կոմսուհի Ավագի հանգուցյալ ամուսնու հորեղբոր տղան էր: Իսկ հերցոգ Մանդարինը սինյորա կոմսուհի Կրոսերի հանգուցյալ ամուսնու հորեղբոր տղան էր: Բարոն Նարինջը արտակարգ մեծ փոր ուներ: Ի միջի այլոց, զարմանալու ոչինչ չկա այստեղ, նա բացի ուտելուց ուրիշ ոչինչ չէր անում, և միայն քնելիս էին նրա ծնոտները մի երկու ժամ հանգստանում:

Երբ դեռ բարոն Նարինջը ջահել էր, քնում էր երեկոյից մինչև առավոտ, որպեսզի կարողանար ամբողջ օրվա կերածը մարսել: Բայց հետո նա ասաց.

«Քնել՝ այդ նշանակում է ժամանակ կորցնել, չէ՞ր երբ քնում եմ, ոչինչ չեմ կարողանում ուտել»:

Դրա համար էլ նա որոշեց սնվել նաև գիշերը, մարսողության համար օրվա մեջ թողնելով միայն մեկ-երկու ժամ: Որպեսզի

հագեցնեն բարոն Նարնջի քաղցը, նրա բազմաթիվ հողերից, որ տարածված էին ամբողջ մարզում, ամեն օր բազմազան ուտելիքներով բարձած մեծաթիվ քարավաններ էին ուղևորվում նրա մոտ:

Խեղճ գյուղացիները չգիտեին, թե էլ ի՞նչ ուղարկեն նրան: Նա խժռում էր ձվեր, հավեր, խոզեր, այծեր, կովեր, ճագարներ, մրգեր, բանջարեղեն, հաց, պաքսիմատ, գաթա... Երկու ծառա զբաղված էին Նարնջի բերանը դնելով այն բոլորը, որ բերվում էր նրա համար: Երբ սրանք հոգնում էին, նրանց փոխարինում էին ուրիշ երկուսը:

Վերջ ի վերջո գյուղացիները նրա մոտ մարդ ուղարկեցին, որ ասի, թե այլևս ուտելու ոչինչ չի մնացել: Ամբողջ անասունը կերված է, ամբողջ մրգեղենը ծառերից պոկված:

— Այդ դեպքում ծառերը ուղարկեք ինձ, — հրամայեց Նարինջը:

Գյուղացիները ծառերն ուղարկեցին, և նա, տերևներն ու արմատները ձիթապտղի յուղի մեջ թաթախելով և վրանները աղ լցնելով, ծառերն էլ խժռեց:

Երբ բոլոր պտղատու ծառերը կերավ վերջացրեց, բարոնը սկսեց իր հողերը վաճառել և ստացած փողերով ուտելիք գնել: Ամբողջ կալվածքը վաճառելուց հետո, նամակ գրեց սինյորա կոմսուհի Ավագին, թույլտվություն խնդրեց նրա մոտ հյուր գնալու:

Ճիշտն ասած, սինյորա կոմսուհի Կրտսերն այնքան էլ գոհ չէր:

— Բարոնը մեր ամբողջ կարողությունը կուտի: Նա մեր ամբողջ մի ափսե մակարոնի նման կուլ կտա:

Սինյորա կոմսուհի Ավագը լաց եղավ:

— Դու չես ուզում իմ հարազատներին ընդունել: Ա՛խ, դու երբեք չես սիրել իմ խեղճ հաստափոր բարոնին:

— Լավ, ասաց կոմսուհի կրտսերը, — կանչիր քո բարոնին, բայց ես էլ կկանչեմ հերցոգ Մանդարինին, իմ խեղճ հանգուցյալ ամուսնու հորեղբոր տղային:

— Խնդրեմ, արհամարհանքով պատասխանեց Ավագը, դե նա հավի ճտից էլ քիչ կուտի: Քո խեղճ ամուսնու (աստված հոգին լուսավորի) ազգականներն այնքան մանր ու նիհար են, որ գետնի վրա չեն երևում: Իսկ իմ խեղճ հանգուցյալ ամուսնու (աստված

հոգին (լուսավորի) ազգականները ոնց որ ջոկածուրիկ լինեն՝ բարձր են, հաստ ու նշանավոր:

Եվ իսկապես, բարոն Նարինջը շատ նշանավոր անձնավորություն էր. նա մի կիլոմետրի վրա էլ սարի չափ էր երևում: Ստիպված նրա համար ծառա վարձեցին, որպեսզի նրա մեծ փորը տեղափոխի: Ինքը բարոնն ի վիճակի չէր քարշ տալու իր հսկայական փորը:

Պոմիդորը մարդ ուղարկեց ձորձահավաք Լոբուն կանչելու, որ սա իր սայլակով գա ամրոցը: Բայց Լոբին սայլակը չգտավ. ինչպես գիտեք, սայլակը վերցրել էր նրա տղան՝ Լոբիկը: Դրա համար էլ նա քարշ տալով բերեց մի ձեռնասայլակ, որով սովորաբար որմնադիրները կիր են տեղափոխում:

Սինյոր Պոմիդորը բարոն Նարնջին օգնեց փորը ձեռնասայլակին դնելիս և գոռաց.

— Դե, գնացինք...

Լոբին ինչքան ուժ ուներ սկսեց քաշել հին, ջարդված ձեռնասայլակը. բայց ոչ մի սանտիմետր էլ չկարողացավ տեղից շարժել՝ բարոնը հենց նոր էր կուշտ նախաճաշել:

Երկու ծառա էլ կանչեցին: Նրանց օգնությամբ բարոնին վերջապես հաջողվեց այգու ծառուղիներում մի փոքր զբոսնել: Ձեռնասայլակի անիվը երբեմն ելնում էր ամենաբարձր և սուր քարերին, և ցնցումներն այնպես էին ազդում խեղճ բարոնի փորի վրա, որ ճակատը սառը քրտինքով ծածկվեց:

— Չգրկշ եղեք, այստեղ քարեր կան, — ձայն էր տալիս նա:

Լոբին ու ծառաներն սկսեցին զգուշորեն անցնել բոլոր քարերի կողքից, որպեսզի սրանք անիվի տակ չընկնեն: Բայց այդ պատճառով էլ հենց ձեռնասայլակը փոսի մեջ ընկավ:

— Յե՛յ, բերանբացներ, ի սեր աստծո, էլ փոսերը չընկնեք, — աղաղակեց բարոնը:

Սակայն, չնայած ցնցումներին ու ցավերին, նա չէր ընդհատում իր սիրած զբաղմունքը և ճանապարհին եռանդով կրծում էր տապակած մի հնդկահավ, որ սինյորա կոմսուհի Ավագն էր պատրաստել նրա համար:

Յերցոգ Մանդարինը նույնպես տանտիրուհիներին և ծառաներին քիչ գլխացավանք չէր պատճառում: Սինյորա կոմսուհի Կրտսերի աղախինը, խեղճ Մորին, առավոտից իրիկուն Մանդարինի շապիկներն էր արդուկում: Երբ նա բերում էր արդուկած սպիտակեղենը, հերցոգը դժգոհ տեսք էր ընդունում, փնջում էր, հեծկլտում, իսկ հետո բարձրանում պահարանի վրա և ամբողջ տնով մեկ ճչում:

— Օգնեցե՛ք, մեռնում եմ:

Գլխապատառ վազում գալիս էր սինյորա կոմսուհի Կրտսերը իրար հետևից Մանդարինին էր նվիրում իր հանգուցյալ ամուսնու մետաքսե շապիկները:

Յերցոգն զգուշորեն իջնում էր պահարանից և սկսում շապիկները փորձել:

Մի քիչ հետո նրա սենյակից դարձյալ գոռգոռոց էր լսվում:

— Օ՛, երկինք, ես մեռնում եմ:

Սինյորա կոմսուհի Կրտսերը սիրտը բռնելով նորից սլանում էր նրա մոտ:

— Իմ թանկագին Մանդարին, ի՞նչ պատահեց:

Յայելու կատարից Յերցոգը ճչում էր:

— Օ՛, ես կորցրել եմ օձիքիս ամենալավ կոճակը և չեմ ուզում այլևս ապրել: Սա այնքան ծանր կորուստ է ինձ համար:

Որպեսզի հանգստացնի հերցոգին, կոմսուհի Կրտսերը վերջ ի վերջո իր հանգուցյալ ամուսնու օձիքի բոլոր կոճակները նվիրեց նրան, իսկ այդ բոլոր կոճակները ոսկուց, արծաթից և թանկագին քարերից էին:

Մի խոսքով, դեռ արևը մայր չէր մտել, իսկ սինյորա կոմսուհի Կրտսերն արդեն ոչ մի թանկարժեք իր չունեց, իսկ հերցոգ Մանդարինը մի ամբողջ ճամպրուկ նվերներ էր ստացել և ինքնագոհ ձեռքերն էր շփում:

Երկու ազգականների անսահման ազահուլթյունը լրջորեն անհանգստացնում ու հուզում էր կոմսուհիներին, և նրանք իրենց զայրույթը թափում էին խեղճ Բալուկի վրա, որը կոմսուհիների ազգականն էր ու ո՛չ հայր ուներ, ո՛չ մայր:

— Ձրիակէր, — գոռում էր նրա վրա սինյորա կոմսուհի Ավագը,
— անմիջապես գնա խնդիրներդ լուծի:

— Բայց ես արդէն բոլորը լուծել եմ:

— Նորերը լուծիր, — խստորեն կարգադրում էր սինյորա կոմսուհի Կրտսերը:

Բալուկը հնազանդորեն գնում էր նոր խնդիրներ լուծելու: Յուրաքանչյուր օր նա այնքան խնդիրներ էր լուծում, որ մի քանի տետրակ էր գրոտում, և շաբաթվա մեջ տետրակների մի ամբողջ կույտ էր գոյանում:

Ազգականների գալստյան օրը կոմսուհիները անընդհատ հարձակվում էին Բալուկի վրա:

— Ծուլլ, ի՞նչ ես այստեղ քարշ գալիս:

— Ես ուզում էի այգում մի քիչ զբոսնել:

— Այգում զբոսնում է բարոն Նարինջը. այստեղ քեզ նման անգործների տեղը չէ: Անմիջապես գնա դասերդ սովորի:

— Բայց ես արդէն դասերս սովորել եմ:

— Վաղվա դասերդ սովորիր:

Միշտ հնազանդ Բալուկը վաղվա դասերն էլ էր պատրաստում: Յուրաքանչյուր օր նա այնքան դասեր էր պատրաստում, որ արդէն անգիր էր արել իր բոլոր դասագրքերը և կարդացել էր ամբողջ գրադարանի բոլոր գրքերը: Բայց կոմսուհիները հենց որ Բալուկի ձեռքին գիրք էին տեսնում, ավելի էին բարկանում:

Անմիջապես գիրքը դիր տեղը, հանդուգն, թե չէ կպատռես:

Բայց ինչպէ՞ս պիտի դասերս առանց գրքի սովորեմ:

Անգիր սովորիր:

Բալուկը գնում էր իր սենյակը և սկսում էր սովորել ու սովորել, այս անգամ արդէն, հասկանալի է, առանց գրքի: Անդադար սովորելուց նրա գլուխն սկսում էր ցավել, և կոմսուհիները նորից էին վրան գոռոռում:

— Դու միշտ հիվանդանում ես, որովհետև անընդհատ մտածում ես: Զիչ մտածիր, դեղերի վրա քիչ ծախս կանենք:

Մի խոսքով, Բալուկը ինչ էլ որ աներ, կոմսուհիները դժգոհ էին մնում:

Բալուկը չգիտեր, թե ինչպես մի քայլ անի, որ հանդիմանություն չստանա: Նա իրեն սարսափելի դժբախտ էր զգում:

Ամբողջ ամրոցում նա միայն մի բարեկամ ուներ, դա աղախին Մորին էր: Նա խղճում էր այդ փոքրիկ, խեղճ տղային, որն ակնոց էր կրում, և որին ոչ ոք չէր սիրում: Մորին Բալուկի հետ սիրալիր էր, և երեկոները, քնելուց առաջ թաթուն, միշտ մի համեղ բան էր բերում նրան:

Բայց այսօր բարոն Նարինջը բոլոր համեղ բաները կերել էր:

Չերցոզ Մանդարինն էլ էր քաղցրեղեն ուզում: Նա անձեռոցիկը զգեց հատակին, բարձրացավ բուֆետի վրա և վայնասուն բարձրացրեց.

— Բռնեցե՛ք ինձ, թե չէ ես ինձ ցած կգցեմ:

Սակայն այս անգամ նրան ոչ մի վայնասուն էլ չօգնեց. բարոնը միանգամայն հանգիստ կերավ-պրծավ քաղցրեղենը և բոլորովին էլ ուշադրություն չդարձրեց Մանդարինի վրա:

Սինյորա կոմսուհի Կրտսերը ծնկի եկավ բուֆետի առաջ և արցունքն աչքերում աղաչեց իր թանկագին աղգականին, որ ծաղիկ հասակում չմեռնի:

Իհարկե, հարկավոր էր որևէ նվեր խոստանալ, որ Մանդարինը ցած իջներ, բայց կոմսուհին արդեն ոչինչ չուներ:

Վերջապես հերցոզ Մանդարինը հասկացավ, որ ոչինչ չի կարող ստանալ, և երկար համոզելուց հետո որոշեց ցած իջնել ասպետ Պոմփոդրի օգնությամբ, որը հուզմունքից ու գոռից ամբողջովին քրտնել էր:

Չենց այդ րոպեին էլ սինյոր Պոմփոդրին լուր բերեցին քավոր Դդումի տնակի խորհրդավոր անհայտացման մասին:

Ասպետը երկար չմտածեց, նա անմիջապես բողոք ուղարկեց իշխան Լիմոնին և ինդրեց մի երկու տասնյակ Լիմոնուկ ուղարկել գյուղ:

* * *

Լիմնուկները գյուղ հասան հաջորդ օրը և տեղնուտեղը գյուղում կարգ ու կանոն հաստատեցին. շրջեցին բոլոր տները և ով պատահեց՝ ձերբակալեցին:

Առաջին բանտարկվածներից էր վարպետ Խաղողը: Կոշկակարը բիզը հետը վերցրեց, որ ազատ ժամանակ ծոծրակը քորի, և հետևեց ոստիկաններին: Բայց Լիմնուկները նրա բիզը խլեցին:

— Դու հետդ զենք վերցնելու իրավունք չունես, — ասացին նրանք վարպետ Խաղողին:

— Իսկ ինչո՞վ ծոծրակս քորեմ:

— Հենց որ քորվել ուզենաս, ասա մեր պետերից մեկն ու մեկին: Տես թե մենք այն ժամանակ քո գլուխը ոնց կքորենք:

Եվ Լիմնուկն իր սրածայր թրով խուտուտ տվեց կաշկակարի ծոծրակը:

Պրոֆեսոր Տանձին էլ ձերբակալեցին: Սա խնդրեց, որ թույլ տան հետը վերցնի ջուրթակն ու մի մոմ:

— Մոմն ի՞նչ ես անում:

— Կինս ասում է, թե ամրոցի նկուղում շատ մուրթն է, իսկ ես պիտի նոտաներ սովորեմ:

Մի խոսքով, գյուղի բոլոր բնակիչները ձերբակալվեցին: Փրկվեցին միայն սինյոր Սիսեռիկը, որովհետև նա փաստաբան էր, և սոխ Պրասը, որին պարզապես չգտան:

Իսկ սոխ Պրասը չէր էլ թաքնվել: Նա հանգիստ նստած էր իր պատշգամբում: Նրա բեղերը ձգված էին պարանի փոխարեն և դրանց վրա սպիտակեղեն էր փռված: Սավանները, շապիկներն ու գուլպաները տեսնելով, Լիմնուկները անցան նրա մոտով և այդպես էլ չնկատեցին տան տիրոջը:

Քավոր Դդումը գնում էր Լիմնուկների հետևից և իր սովորության համաձայն խոր հոգոց հանում:

— Ինչո՞ւ ես այդքան հառաչում, — խստորեն հարցրեց Սպան:

— Ինչպե՞ս չհառաչեմ: Ամբողջ կյանքում աշխատել եմ և միայն հառաչանքներ եմ հավաքել: Օրական մի հառաչանք... Հիմա մի քանի հազար հառաչանք ունեմ կուտակած: Պետք է, որ մի կերպ նրանց օգտագործեմ:

Կանանցից ձերբակալեցին միայն սանամեր Դոնմին, և քանի որ սա հրաժարվեց բանտ գնալ, խփելով գցեցին ցած, և նա այդպես մինչև ամրոց գլորվեց: Դե նա այնքան կլոր էր, որ...

Բայց ինչքան էլ Լիմոնուկները խորամանկ էին, էլի նրանց չհաջողվեց Չիպուլինոյին ձերբակալել, չնայած որ նա մի Բողկ անունով աղջկա հետ նստած էր ցանկապատին և կամակոր հայացքով նայում էր ոստիկաններին:

Ցանկապատի մոտով անցնելիս Լիմոնուկները նույնիսկ նրան ու Բողկին հարցրին, թե մոտերքում չէ՞ն տեսել մի վտանգավոր խռովարարի Չիպուլինո անունով:

— Տեսել ենք, տեսել, — ճղճղացին նրանք, — նա քիչ առաջ թաքնվեց ձեր սպայի եռանկյունի գլխարկի տակ:

Եվ բարձր ծիծաղելով, երեխաները հեռու փախան:

Նույն օրը Չիպուլինոն ու Բողկը գնացին ամրոցի կողմը հետախուզության: Չիպուլինոն որոշեց ինչ գնով էլ լինի գերիներին ազատել, իսկ Բողկը, հասկանալի է, խոստացավ ամեն ինչում օգնել նրան:

Գլուխ յոթերորդ

Որտեղ Բալուկը ուշադրություն չի դարձնում սինյոր Մադդանուսի հայտարարություններին

Կոմսուհիներ Բալերի ամրոցը բլրի գագաթին էր: Ամրոցը շրջապատված էր մի հսկայական այգով: Այգու դռան մոտ հայտարարություն էր կախված, որի մի երեսին գրված էր «Մուտքը արգելված է», իսկ մյուս երեսին՝ «Ելքը արգելված է»:

Հայտարարության առաջին երեսը գյուղացի երեխաների համար էր, որպեսզի նրանք երկաթե ցանկապատը չանցնեին: Իսկ հակառակ կողմը Բալուկի համար էր նախատեսված, որպեսզի նա հանկարծ դուրս չգա և գնա գյուղացի երեխաների մոտ:

Բալուկը մեն-մենակ շրջում էր այգում: Նա զգուշորեն քայլում էր ուղիղ ծառուղով և անընդհատ մտածում էր այն մասին, թե ինչպե՞ս անի, որ հանկարծ ոտքը չդնի ծաղկաթմբի վրա և տրորի

ծաղիկները: Նրա դաստիարակը, սինյոր Մադդանոսը, ամբողջ այգով մեկ հայտարարություններ էր կախել, որոնցում ասվում էր, թե Բալուկին ի՛նչ է թույլատրվում և ի՛նչ է արգելվում:

Այսպես, ոսկե ձկնիկների ավազանի մոտ կախված էր՝

«Բալուկին արգելվում է ձեռքերը մտցնել ջրի մեջ» — մակագրությունը:

Այստեղ ուրիշ հայտարարություն էլ կար.

«Ձկների հետ արգելվում է խոսել»:

Ճաղկաթմբի մեջտեղում շողշողում էր այսպիսի մի մակագրություն՝

«Արգելվում է ծաղիկներին ձեռք տալ: Խախտողը կմնա առանց քաղցրավենիքի»:

Նույնիսկ այսպիսի զգուշացում կար.

«Նա, ով խոտը կտրորի, պարտավոր է երկու հազար անգամ գրել հետևյալ բառերը՝ «Ես անդաստիարակ տղա եմ»:

Այս բոլոր մակագրությունները հնարել էր սինյոր Մադդանոսը՝ Բալուկի տնային ուսուցիչը և դաստիարակը:

Մի անգամ տղան իր բարձրագարմ հորաքույրներին խնդրեց, որ իրեն թույլ տան հաճախելու գյուղական դպրոցը այն երեխաների հետ, որոնք ուրախ-ուրախ վազվզում էին ամրոցի մոտով և դրոշակների պես թափահարում իրենց պայուսակները: Բայց սինյորա կոմսուհի Ավագը սարսափահար եղավ:

— Ինչպե՞ս կարող է կոմս Բալը մի նստարանի վրա նստել ինչ-որ հասարակ գյուղացու հետ: Դա չտեսնված բան է:

Սինյորա կոմսուհի Կրտսերը հաստատեց.

— Բալերը երբեք չեն նստել դպրոցական չոր նստարանին: Այդպես չի եղել և երբեք էլ չի լինի:

Վերջ ի վերջո Բալուկի համար տնային ուսուցիչ վարձեցին սինյոր Մադդանոսին, որը շատ տարօրինակ մի հատկություն ուներ. հանկարծ հայտնվում էր չգիտես որտեղից և միշտ անհարկի: Օրինակ, եթե Բալուկը դասերը պատրաստելիս ուշադրություն է դարձնում թանաքի մեջ գրել սովորելու համար ընկած ճանճին,

անմիջապես, չգիտես որտեղից, հայտնվում է սինյոր Մադդանոսը: Նա բաց է անում իր հսկայական կարմիր և կապույտ վանդակներով պատած թաշկինակը, քիթը շրխկոցով մաքրում ու սկսում խեղճ Բալուկի գկխին ճառ կարդալ:

— Վատ կլինի այն տղաների բանը, որոնք կտրվում են իրենց պարապմունքից և նայում ճանճերին: Այստեղից էլ սկսվում են բոլոր դժբախտությունները: Մի ճանճից հետո մյուսը կգա, նրանից հետո՝ երրորդը, չորրորդը, հինգերորդը... Յետո այդ տղաներն աչքները չուում են սարդերի վրա, կատուների, մյուս բոլոր կենդանիների վրա և, իհարկե, մոռանում են դասերը: Իսկ նա, ով դասերը չի սովորում, չի կարող բարոյական տղա դառնալ: Անբարոյական տղան չի կարող բարեկիրթ մարդ դառնալ: Իսկ ոչ բարեկիրթ մարդիկ վերջ ի վերջո բանտ են ընկնում: Այսպես, Բալուկ, եթե չես ուզում կյանքդ բանտում անցկացնել, էլ ճանճի մի՛ նայիր:

Իսկ եթե Բալուկը դասերից հետո վերցնում է ալբոմը, որ մի քիչ նկար անի, տեսար էլի սինյոր Մադդանոսը հայտնվեց: Նա դանդաղ բաց է անում վանդակավոր թաշկինակն ու իր ճառն սկսում.

— Վատ կլինի այն տղաների վերջը, որոնք ժամանակ են կորցնում թուղթ մրոտելու վրա: Ի՞նչ կդառնան նրանք, երբ մեծանան: Լավագույն դեպքում կդառնան ներկարար, այն կեղտոտ, վատ հագնված աղքատներից, որոնք ամբողջ օրը պատերի նախշեր են քաշում, իսկ հետո բանտ են ընկնում, որովհետև դրան արժանի են: Բալուկ, մի՞թե դու ուզում ես բանտ ընկնել: Մտածիր, Բալուկ:

Բանտից վախենալով, Բալուկը ուղղակի չգիտեր, թե ի՞նչ գործ աներ:

Բարեբախտաբար, երբեմն պատահում էր, որ սինյոր Մադդանոսը մի քիչ քնում էր կամ հաճույքի համար խողողի օդի էր խմում: Այդպիսի բացառիկ թոպեներին Բալուկը ազատ էր լինում: Սակայն սինյոր Մադդանոսն այսպիսի դեպքերում էլ միշտ իր ներկայությունն զգացնել էր տալիս: Ամեն տեղ կախ էին տված նրա խրատական մակագրությունները: Դա նրան հնարավորություն էր տալիս մի քիչ երկար քնել: Սովերախիտ ծառի տակ հանգստանալով, նա համոզված էր, որ իր սանն իզուր տեղը ժամանակ չի կորցնում և այգում զբոսնելով յուրացնում է իր խրատները:

Բայց երբ Բալուկն անցնում էր այդ հայտարարությունների կողքով, սովորաբար ակնոցները հանում էր: Այսպիսով, նա չէր տեսնում, թե ի՞նչ է գրված տախտակների վրա, և կարող էր հանգիստ մտածել ինչի մասին ուզում էր:

Այսպես՝ Բալուկը իր մտքերով տարված շրջում էր այգում, երբ հանկարծ լսեց, թե ինչպես բարակ ձայնով մեկը կանչում է իրեն.

— Սինյոր Բալուկ, սինյոր Բալուկ:

Բալուկը շուռ եկավ և ցանկապատի մյուս կողմում տեսավ իր տարիքի մի տղայի, որ աղքատ էր հագնված և ուրախ ու խելացի դեմք ուներ: Տղայի հետևից մոտ տասը տարեկան մի աղջիկ էր գալիս: Նրա մազերը հյուսված էին և նման էին բողկի պոչի:

Բալուկը քաղաքավարի գլուխ տվեց ու ասաց.

— Բարև ձեզ, սինյորներ: Ես ձեզ հետ ծանոթ լինելու պատիվը չունեմ, բայց ձեզ հետ ծանոթանալը շատ հաճելի կլիներ ինձ համար:

— Դե էլ ինչո՞ւ մոտիկ չեք գալիս:

— Դժբախտաբար չեմ կարող. այստեղ հայտարարություն է կախված, որ ես իրավունք չունեմ գյուղացի երեխաների հետ խոսելու:

— Գյուղացի երեխաները հենց մենք ենք, որ կանք, իսկ դուք արդեն մեզ հետ խոսում եք:

— Որ այդպես է, հիմա կմոտենամ ձեզ:

Բալուկը շատ բարեկիրթ և ամաչկոտ տղա էր, բայց վճռական րոպեներին կարողանում էր գործել համարձակ, առանց տատանման: Նա քայլեց խոտերի վրայով, մոռանալով որ խոտ տրորելն արգելվում է, և ընդհուպ մոտեցավ ցանկապատի ճաղերին:

— Իմ անունը Բողկ է, — ներկայացավ աղջիկը, — իսկ սա Չիպուլինոն է:

— Շատ հաճելի է, սինյորինա: Շատ ուրախ եմ, սինյոր Չիպուլինո: Ես ձեր մասին արդեն լսել եմ:

— Իսկ ումի՞ց:

— Ասպետ Պոմիդորից:

— Այդ դեպքում, իհարկե, նա իմ մասին ոչ մի լավ բան չի ասել:

— Իհարկե ոչ: Բայց հենց դրա համար էլ ես մտածեցի, որ դուք երևի հիանալի տղա եք: Եվ տեսնում եմ, որ չեմ սխալվել:

Չիպոլինոն ժպտաց.

— Շատ հրաշալի է: Ուրեմն էլ ինչու ենք ձևականություն բանեցնում և հին պալատականների նման «դուք»-ով խոսում: Արի «դուք»-ով խոսենք:

Բալուկն իսկույն հիշեց խոհանոցի դռան մակագրությունը, որտեղ ասված էր. «Ոչ ոքի «դուք» չասել»: Այս հայտարարությունն ուսուցիչը կախել էր այն բանից հետո, երբ Բալուկին ու Մորուն տեսել էր իրար հետ մտերմորեն զրուցելիս: Չնայած դրան, Բալուկը որոշեց խախտել նաև այդ կանոնը: Նա ուրախ պատասխանեց:

— Չամաձայն եմ, խոսենք «դուք»-ով:

Բողկն անչափ գոհ էր:

— Իսկ ի՞նչ էի ես քեզ ասում, Չիպոլինո, տեսնում ես. Բալուկը հիանալի տղա է:

— Մերսի, սիկյորինա, — խոնարհվելով ասաց Բալուկը, բայց իսկույն կարմրելով ավերացրեց, — շնորհակալ եմ Բողկի:

Երեքն էլ ուրախ ծիծաղեցին: Սկզբում Բալուկը միայն բերանի անկյունով էր ծիծաղում, չմոռանալով սիկյոր Մադդանուսի խորհուրդը, որը միշտ ասում էր, թե բարեկիրթ տղաների համար բարձրաձայն ծիծաղելն անհարմար է: Բայց հետո տեսնելով, թե ինչպես էին Չիպոլինոն ու Բողկը բարձր քրքջում, նա էլ սկսեց լիաթոք ծիծաղել:

Այդքան ուրախ ու զրնգուն ծիծաղ ամրոցում դեռ չէր լսվել: Երկու ազնվաբարո կոմսուհիներն էլ այդ րոպեին պատշգամբում նստած թեյ էին խմում:

Սիկյորա կոմսուհի Ավագը լսելով ծիծաղի ձայնը, ասաց.

— Ես ինչ-որ տարօրինակ աղմուկ եմ լսում:

Սիկյորա կոմսուհի Կրտսերը գլխով համաձայնության նշան արեց:

— Ես էլ ինչ-որ ձայներ եմ լսում: Երևի անձրև է գալիս:

— Քույրիկ, համարձակվում եմ ասել, որ ոչ մի անձրև էլ չկա, — խրատական տոնով արտասանեց սինյորա կոմսուհի Ավագը:

— Չկա, ուրեմն կլինի, — վճռական հակաճառեց սինյորա կոմսուհի Կրտսերն ու նայեց երկնքին, որպեսզի այնտեղ իր ասածը հաստատող որևէ բան գտնի:

Սակայն երկինքն այնքան մաքուր էր, որ կարծես հինգ րոպե առաջ ավել ու լվացել էին: Այնտեղ ոչ մի ամպիկ չէր երևում:

— Ես կարծում եմ, որ այդ շատրվանն է աղմկում, — նորից սկսեց կոմսուհի Ավագը:

— Մեր շատրվանն աղմկել չի կարող: Ախր հայտնի է ձեզ, որ ջուր չկա այնտեղ:

— Երևի պարտիզպանը նորոգել է արդեն:

Պոմիդորը նույնպես լսեց տարօրինակ աղմուկը և հուզվեց:

«Ամրոցի ներքնատանը շատ բանտարկյալներ կան, — մտածեց նա, — հարկավոր է զգույշ լինել, թե չէ ինչ ասես կարող է պատահել»:

Նա որոշեց շրջել այգում և հանկարծ ամրոցի հետևում, որտեղից անցնում էր գյուղի ճանապարհը, հանդիպեց երեխաներին, որոնք կանգնած ուրախ զրուցում էին:

Եթե հանկարծ երկինքը ճաքեր ու այնտեղից հրեշտակները թափվեին երկրի վրա, ասպետ Պոմիդորն այդքան չէր զարմանա: Բալուկը տրորում է խոտը: Բալուկը մտերմորեն խոսում է երկու գջլոտի հետ... Դեռ այդ քիչ է՝ այդ երկու գջլոտներից մեկը նա էր, որ վերջերս ստիպեց իրեն դառն արտասուք թափել:

Ասպետ Պոմիդորը կատաղեց: Նրա դեմքն այնպես բոցկլտաց, որ մոտերքում, եթե հրշեջներ լինեին, անպայման հրդեհային տագնապ կբարձրացնեին:

— Սինյոր կոմս, — բողոքեց Պոմիդորն օտարոտի ձայնով:

Բալուկը շուռ եկավ և գունատված կպավ ճաղերին:

— Բարեկամներ, — շնչաց նա, — փախե՛ք՝ քանի ասպետ Պոմիդորը հեռու է: Ինձ որ նա ոչինչ չի համարձակվի անել, իսկ ձեր բանը բուրդ կլինի: Ցտեսությո՜ւն:

Չիպուլինոն և Բողկը ինչքան ուժ ունեին փախան, բայց երկար ժամանակ լսում էին ասպետ Պոմիդորի մոլեգին ճիչերը:

— Այս անգամ մեր արշավանքն անհաջող անցավ, — հառաչելով ասաց Բողկը:

Բայց Չիպուլինոն միայն ժպտաց.

— Իսկ իմ կարծիքով այսօր շատ հաջող օր է: Մենք մի նոր բարեկամ ունենք, և դա քիչ չէ արդեն:

Այդ նոր բարեկամը, այինքն՝ Բալուկը, մենակ մնալով սպասում էր, որ իրեն ամենադաժան ձևով անխուսափելիորեն կպատժեն և գլխին նախատինքներ կթափեն թե՛ ասպետ Պոմիդորը, թե՛ սինյոր Մադդանոսը, թե՛ սինյորա կոմսուհի Ավագը, թե՛ սինյորա կոմսուհի կրտսերը, թե՛ բարոն Նարինջն ու հերցոգ Մանդարինը:

Երկու ազգականներն էլ վաղուց արդեն գլխի էին ընկել, որ ով տանջում է Բալուկին, դրանով հաճույք է պատճառում նրա կոմսուհի հորաքույրներին և, առիթը բաց չէին թողնում, որպեսզի խայթեն անպաշտպան երեխային: Այդ բոլորին նա վաղուց էր սովոր:

Բայց այս անգամ Բալուկի կոկորդին մի գունդ էր կանգնել և նա դժվարությամբ էր արցունքները զսպում: Նրան բոլորովին չէին վախեցնում այդ ճիչերը, հանդիմանություններն ու սպառնալիքները: Իրեն ի՞նչ, թե երկու կոմսուհիները կճղճղան, թե սինյոր Մադդանոսը բարոյական ձանձրալի ճառեր կկարդա, թե քավթառ հերցոգ Մանդարինը կծաղրի: Բայց նա իրեն շատ դժբախտ էր զգում: Կյանքում առաջին անգամ նա ընկերներ գտավ, առաջին անգամ կուշտ խոսեց ու ծիծաղեց ամբողջ սրտով, և ահա նորից մենակ է... Այն պահից, երբ Չիպուլինոն ու Բողկը բլրից ցած վազեցին, նրանք Բալուկի համար հավիտյան կորան: Էլ կտեսնի՞ նրանց երբևէ: Ինչ ասես չէր տա Բալուկը, միայն թե կրկին լիներ նրանց հետ, այնտեղ, ազատության մեջ, ուր չկան հայտարարություններ ու արգելքներ, որտեղ կարելի է խոսերի մեջ վազվզել ու ծաղիկներ փնջել:

Առաջին անգամ կյանքում Բալուկը սրտում զգաց այդ տարօրինակ անտանելի ցավը, որ տանջանք է կոչվում: Այն արդեն նրա համար շատ էր և Բալուկն զգաց, որ չի կարող այդ ցավը տանել: Նա ընկավ գետնին ու սկսեց հեկեկալ:

Ասպետ Պոմփոյորը նրան բարձրացրեց, կապոցի նման դրեց թևի տակ և ծառուղով գնաց ամրոց:

Մորին աշխատում էր, ինչքան հնարավոր է, խեղճ տղային հանգստացնել, բայց ոչինչ չէր օգնում: Աղջիկն այնքան հուզվեց, որ ինքն էլ սկսեց նրա հետ լաց լինել:

— Այս րոպեին վայնասունդ թող, անպետք աղջիկ, թե չէ ես քեզ դուրս կանեմ, — սպառնաց սինյորա կոմսուհի Ավագը:

Վշտից Բալուկը նույնիսկ հիվանդացավ: Նա սկսեց այնպես դողացնել, որ մահճակալը ցնցվում էր, իսկ երբ հազում էր, ցնցվում էին պատուհանների ապակիները: Չառանցելով նա անընդհատ կանչում էր.

— Չիպուլի՛նո, Չիպուլի՛նո, Բո՛ղկ, Բո՛ղկ...

Սինյոր Պոմփոյորը հայտարարեց, երևի երեխան այն բանից է հիվանդացել, որ նրան սարսափելի վախեցրել է ամրոցի շրջակայքում թափառող մի վտանգավոր հանցագործ:

— Ես կհրամայեմ, որ վաղը նրան բանտարկեն, — ասաց նա, որպեսզի հիվանդին հանգստացնի:

— Օ՛, ո՛չ, ո՛չ, ինդրում եմ, պետք չէ, — հեկեկում էր Բալուկը: — Ավելի լավ է ինձ ձերբակալեք, նետեք ամենախորունկ նկուղը, միայն թե Չիպուլինոյին ձեռք մի տվեք: Չիպուլինոն այնքան լավ տղա է, Չիպուլինոն իմ միակ, իմ իսկական ընկերն է:

Սինյոր Մադդանոսը վախեցած մաքրեց քիթը:

— Երեխան զառանցում է: Դրությունը ծանր է, — ասաց նա:

Մարդ ուղարկեցին ամենանշանավոր բժիշկներին կանչելու:

Նախ եկավ սինյոր բժիշկ ճանճասպանը և չորացած ճանճերից պատրաստած դեղ գրեց: Բայց դեղը բոլորովին չօգնեց: Եկավ բժիշկ թխենին և հայտարարեց, թե չորացած ճանճերը շատ վտանգավոր են նման հիվանդությունների դեպքում, և շատ ավելի օգտակար է հիվանդին ճապոնական թխենու պտղի հյուսված թրջած սավանի մեջ փաթաթել:

Մի տասնյակ սավան կեղտոտեցին թխենու հյուսված մեջ, բայց Բալուկը չլավացավ:

— Իմ կարծիքով, — առաջարկեց բժիշկ Արտիճուկը, — հարկավոր է նրա կողերին արտիճուկներ դնել:

— Փշերով, — վախեցած հարցրեց Մորին:

— Անպայման, հակառակ դեպքում դեղն օգուտ չի տա:

Սկսեցին Բալուկին բուժել ուղղակի թմբից քաղած հում արտիճուկներով: Խեղճ տղան ճշում էր, ծակոցներից վեր-վեր էր թռչում, կարծես թե նրան քերթում էին:

— Տեսնում եք, տեսնում եք, — ձեռքերը շփելով ասում էր բժիշկ Արտիճուկը, — պատանի կոմսին իմ դեղն արդեն օգնում է, շարունակեցեք բուժել:

— Այդ բոլորը դատարկ բաներ են և հիմարություն, — բացականչեց նշանավոր պրոֆեսոր սինյոր Սալաթ-Սպանաղը: Այդ ի՞նչ էլն է արտիճուկներ նշանակել: Փորձեցեք հիվանդին թարմ սալաթով բուժել:

Մորին թաքուն մարդ ուղարկեց բժիշկ Շագանակին կանչելու, որն ասարում էր անտառում, մի մեծ շագանակենու տակ: Նրան աղքատների բժիշկ էին ասում, որովհետև նա հիվանդների համար քիչ դեղեր էր գրում և դեղերի արժեքն էլ վճարում էր ինքը:

Երբ բժիշկ Շագանակը մոտեցավ ամրոցի դարբասին, ծառաները նրան չէին ուզում ներս թողնել, քանի որ նա եկել էր ոչ թե կառնթով, այլ ոտքով:

— Առանց կառքի բժիշկը անպայման խաբեբա կլինի, — ասացին ծառաները և ուզում էին դռները փակել բժշկի առաջ, երբ հայտնվեց սինյոր Մաղդանոսը:

Մաղդանոսը, ինչպես արդեն գիտեք, միշտ չգիտես թե ճիշտեղից էր հայտնվում: Բայց այս անգամ նա ճիշտ ժամանակին երևաց և հրամայեց ներս թողնել բժշկին: Շագանակը ուշադիր քննեց հիվանդին, նայեց լեզուն, շոշափեց զարկերակը, ցածրաձայն մի քանի հարց տվեց Բալուկին, իսկ հետո ձեռքերը լվաց և լուրջ ու տխուր ասաց.

Ոչ մի տեղն էլ չի ցավում,
Սիրտն էլ լավ է աշխատում,
Երեխային, իմացե՛ք,
Մենակությունն է հյուժել:

— Ինչ եք ուզում ակնարկել, — կոպտորեն ընդհատեց Պոմիդորը:

— Ես չեմ ակնարկում, այլ ճշմարտությունն եմ ասում: Այս տղան ոչ մի հիվանդություն էլ չունի: Նա մեկամաղձոտ է:

— Այդ ինչ հիվանդությունն է, — հարցրեց կոմսուհի Ավագը:

Նա բուժվել շատ էր սիրում և հենց որ մի նոր հիվանդության անուն էր լսում, իսկույն իր վրա էր այդ ցավը գտնում: Դե կոմսուհին այնքան հարուստ էր, որ բժշկի և դեղերի ծախսերը նրան չէին վախեցնում:

— Դա հիվանդությունն չէ, սինյորա կոմսուհի, դա տխրություն է, թախիծ: Երեխային միջավայր է պետք, անհրաժեշտ են ընկերներ: Ինչո՞ւ դուք նրան չեք ուղարկում ուրիշ երեխաների հետ խաղալու:

— Ա՛խ, ավելի լավ էր, նա այդ բանը չասեր: Խեղճ բժշկի գլխին ամեն կողմից հանդիմանությունների և վիրավորանքների կարկուտ տեղաց:

— Շուտ կորե՞ք այստեղից, — հրամայեց սինյոր Պոմիդորը, — թե չէ ծառաներին կհրամայեմ վզակոթիդ տալով դուրս անեն:

— Ամաչեք, — վրա բերեց սինյորա կոմսուհի Կրտսերը: — Ամաչեք, որ այդպես չարաշահում եք մեր վստահությունն ու հյուրասիրությունը: Դուք խաբեբայությամբ սողոսկեցիք մեր տունը: Եթե ես ուզեմ, ինքնագլուխ և բռնի կերպով մասնավոր տներ ներխուժելու համար կարող եմ ձեզ դատի տալ: Ճիշտ չէ՞, սինյոր փաստաբան:

Եվ նա շուռ եկավ սինյոր Սիսեռիկի կողմը, որը միշտ մոտերքումն էր լինում, երբ նրա կարիքն զգացվում էր:

— Անշուշտ, սինյորա կոմսուհի: Սա քրեական շատ ծանր հանցանք է:

Եվ փաստաբանն իսկույն նշեց իր հուշատետրում.
«Կոմսուհիներից, բժիշկ Շագանակի բռնի ներխուժման գործի մասին կոնսուլտացիա տալու համար ստանալ տասը հազար լիր»:

Գլուխ ութերորդ

Թե ինչպես բժիշկ Շագանակին ամրոցից վռնդեցին

Բալուկն ամբողջ երեկո լաց եղավ: Յերցոգ Մանդարինն անընդհատ նրան ձեռ էր առնում:

— Մեր պատանի կոմսը արցունքից հալումաշ կլինի, — ասում էր նա, — Բալից միայն կորիզը կմնա:

Բարոն Նարինջը, ինչպես այդ հաճախ է լինում հաստ մարդկանց հետ, դեռևս մի փոքր գութ ուներ: Բալուկին մխիթարելու համար նա իր տորտից մի կտոր առաջարկեց սրան: Ճիշտ է, շատ փոքրիկ կտոր, մի փշուր միայն: Բայց հաշվի առնելով բարոնի ագահությունը, պետք է նրա առատաձեռնությունը գնահատել:

Իսկ երկու կոմսուհիները ոչ միայն չէին աշխատում Բալուկին մխիթարել, այլ ծիծաղում էին նրա արցունքների վրա:

— Մեր Բալուկը կարող է փչացած շատրվանին փոխարինել, — ասում էր սինյորա կոմսուհի Ավագը:

— Արցունքի շատրվան կլինի, — ասում էր սինյորա կոմսուհի Կրտսերը:

— Վաղը ես քեզ կստիպեմ, — սպառնում էր սինյոր Մադդանոսը, — երեք հազար անգամ գրել. «Ես չպետք է սեղանի վրա լաց լինեմ, քանի որ խանգարում եմ մեծահասակների մարտողությանը»:

Երբ վերջապես պարզվեց, որ Բալուկը լացը թողնելու միտք չունի, նրան ուղարկեցին քնելու:

219 — 228

Գլուխ իններորդ

Մկների գլխավոր հրամանատարն ստիպված է լինում նահանջի հրաման տալ

Դուք, իհարկե, ուզում եք իմանալ, թե ի՞նչ են անում բանտարկյալները, այսինքն՝ քավոր Դդումը, պրոֆեսոր Տանձը,

վարպետ Խաղողը, սանամեր Դդումը և գյուղի մյուս բնակիչները, որոնց ասպետ Պոմիդորը հրամայեց բանտարկել և զցել ամրոցի նկուղը:

Բարեբախտաբար պրոֆեսոր Տանձը լավ իմանալով, որ ամրոցի նկուղները մութ կլինեն և մկներով լեփ-լեցուն, իր հետ մի կիսավառ մոմ էր վերցրել: Մկներին քշելու նպատակով պրոֆեսորն սկսեց ջուրակ նվազել: Մկները լուրջ երաժշտություն չէին սիրում: Ջուրակի ականջ ծակող հնչյունները լսելով, նրանք թողեցին փախան՝ անիծելով այդ զգվելի գործիքը, որն իր ձայնով կատվի մլավոց է հիշեցնում:

Սակայն վերջապես երաժշտությունը ոչ միայն մկներին, այլև վարպետ Խաղողին սկսեց ջղայնացնել: Պրոֆեսոր Տանձը մեղամաղձոտ մարդ էր և միշտ այնքան տխուր մեղեդիներ էր նվագում, որ մարդ ուզում էր լալ: Դրա համար էլ բոլոր ձերբակալվածները խնդրեցին, որ էլ չնվագի:

Բայց դեռ նոր էր լռություն տիրել, երբ մկները, ինչպես կարելի էր սպասել, հարձակման անցան: Նրանք շարժվում էին երեք շարասյունով: Հարձակումը գլխավորում էր գլխավոր հրամանատարը, գեներալ Մուկ Երկարապոչը:

— Առաջին շարասյունը հարձակվելու է ձախ թևից և առաջին հերթին գրավելու է մոմը: Բայց վայ՛ նրան, ով փորձի ուտել: Ես ձեր գեներալն եմ և առաջինը ես պետք է իմ ատամները խրեմ այդ մոմի մեջ: Երրորդ շարասյունը կմտնի աջից և կնետվի ջուրակի վրա: Այդ ջուրակը սարքված է հյուրեղ տանձի կեսից և, ըստ երևույթին, հիանալի համ ունի: Երրորդ շարասյունը պետք է ճակատից հարձակվի և ոչնչացնի թշնամուն:

Շարասյունների հրամանատարները խնդիրը բացատրեցին շարքային մկներին: Գեներալ Մուկ-Երկարապոչը արշավեց տանկով: Ճիշտն ասած, դա տանկ չէր, այլ կավի մի խեցի, որ կապված էր տասը մկների պոչից: Փողիարները գրոհի ազդանշան տվին, և մի քանի րոպեում ճակատամարտն ավարտվեց:

Սակայն մկներին չհաջողվեց ջուրակը խժռել, քանի որ պրոֆեսորն այն պահել էր իր գլխավերևում: Բայց մոմն անհայտացավ, կարծես չէր էլ եղել, և մեր բարեկամները մնացին

մթութեան մեջ: Մի բան էլ անհայտացավ, բայց թե ինչ՝ հետո կիմանաք:

Քավոր Դիումն անհանգիստ էր.

— Ա՛խ, և այս բոլորը իմ պատճառով:

— Ինչո՞ւ քո պատճառով, — փնթփնթաց վարպետ Խաղողը:

— Եթե ես գլուխս չմտցնեի այն հիմար միտքը, թե պետք է ունենամ իմ սեփական տունը, մեզ հետ այս դժբախտությունը չէր պատահի:

— Դե հանգստացիր, ինդրում եմ, — բացականչեց սանամեր Դիումը: — Յո դո՛ւք չեք մեզ բանտ նստեցրել:

— Ես արդեն ծեր եմ, ինչի՞ս է պետք տունը... — շարունակում էր տրտջալ քավոր Դիումը: — Ես կարող էի այգում, որևէ նստարանի տակ գիշերել. այնտեղ ես ոչ ոքի չէի խանգարի: Բարեկամներ, ինդրում եմ կանչեցեք բանտապաններին, ասացեք նրան, որ ես տնակը կնվիրեմ ասպետ Պոմիդորին և կասեմ, թե որտեղ ենք այն թաքցրել:

— Դու նրանց և ոչ մի խոսք չէն ասի, — բարկացավ վարպետ Խաղողը:

Պրոֆեսոր Տանձը տխուր ծնգացրեց իր ջութակի լարերն ու շշնջաց.

— Եթե դու բանտապաններին ասես, թե որտեղ է պահված տնակը, այն ժամանակ քավոր Յավամրգին էլ կխառնես այդ գործին և...

— Սս՛ս՛, — ասաց սանամեր Դիումը: — Անուններ մի՛ տվեք, այստեղ պատերն էլ ականջներ ունեն:

Բոլորը լռեցին և սկսեցին վախեցած իրենց շուրջը նայել, բայց առանց մոմի այնքան մութն էր, որ նրանք ոչ մի կերպ չէին կարող տեսնել՝ պատերն ականջ ունե՞ն թե ոչ:

Իսկ պատերն իսկապես որ ականջ ունեին: Մի կլոր անցք կար, որից մի խողովակ գաղտնի հեռախոսի նման գնում էր ուղիղ ասպետ Պոմիդորի սենյակը և ինչ-որ խոսվում էր նկուղում, հաղորդում էր նրան: Բարեբախտաբար, այդ թուպեին սինյոր

Պոմիդորն ականջ չէր դնում, որովհետև զբաղված էր հիվանդ Բալուկով:

Լռության մեջ նորից լսվեցին շեփորի զիլ հնչունները. մկներն ուզում էին գրոհը կրկնել: Նրանք լցված էին պրոֆեսոր Տանձի ջութակը գրավելու վճռականությամբ:

Նրանց վախեցնելու նպատակով պրոֆեսորը որոշեց համերգ տալ: Նա ջութակը դրեց ծնոտի տակ, կնտնտոցը ոգևորված բարձրացրեց: Բոլորը շունչները պահած սպասեցին, բայց սպասումը բավական երկար տևեց: Վերջապես կալանավորները նորից շունչ քաշեցին, բայց գործիքն այնպես էլ ձայն չհանեց:

— Ինչ է, չի ստացվում, — հետաքրքրվեց վարպետ Խաղողը:

— Ա՛խ, մկները կերել են կնտնտոցիս կեսը, — արցունքներն աչքերում ասաց Տանձը:

Եվ իսկապես, կնտնոցն ամբողջովին կրծոտված էր, այնպես որ մնացել էր ընդամենը մի քանի սանտիմետր: Առանց կնտնոցի, ի՛նչ խոսք, նվագել չէր կարելի, իսկ մկներն արդեն մարտական ահեղ բացականչություններով անցան հարձակման:

— Ա՛խ, և այս բոլորն իմ պատճառով, հառաչում էր քավոր Դդումը:

— Ախ ու վախդ թո՛ղ և օգնիր մեզ, — ասաց վարպետ Խաղողը, եթե դու այդքան լավ կարողանում ես հառաչել ու տնօր, ապա կկարողանաս նաև մլավել:

— Մլավե՛լ, — վիրավորվեց քավոր Դդումը, — զարմանում եմ քեզ վրա, թվում է, թե լուրջ մարդ ես, բայց այսպիսի ժամանակ կատակ ես անում:

— Վարպետ Խաղողը նրան իսկի չպատասխանեց էլ, այլ այնքան վարպետորեն մլավեց, որ մկների բանակը կանգ առավ:

— Մյան՛րև, մյան՛րև, — մլավում էր կոշկակարը:

— Մյան՛րև, մյան՛րև, — լալագին կրկնում էր պրոֆեսորը, որ դեռ ողբում էր իր կնտնոցի անփառունակ վախճանը:

— Երդվում եմ իմ հանգուցյալ պապի, բոլոր նկուղների ու ամբարների թագավոր Մուկ Երրորդի հիշատակով, որ կատու են

բերել այստեղ, — բացականչեց գեներալ Մուկ-Երկարապոչը և անմիջապես արգելակեց իր տանկը:

— Գեներալ, մեզ դավաճանել են, — վայնասունը գցելով, նրա մոտ վազեց շարքերից մեկի հրամանատարը: — Իմ շարքը ընդհարվեց մինչև ատամները զինված մառանային կատուների մի ամբողջ դիվիզիայի հետ:

Բայց իրականում նրա զորքերը և ոչ մի կատվի չէին հանդիպել, նրանք միայն վախեցել էին անչափ: Իսկ, ինչպես հայտնի է, վախեցածին ամեն ինչ թվում է:

Գեներալ Մուկ-Երկարապոչը թաթով պոչը շփեց: Երբ նա մտահոգված էր լինում, միշտ թաթով շփում էր պոչը, և հաճախ շփելուց նրա մարմնի այդ մասն այնպես էր տուժել, որ զինվոր-մկները իրենց հրամանատարին թաթուն գեներալ Անպոչ էին անվանում:

— Երդվում եմ իմ հանգուցյալ նախահոր, Մուկ-Երկարապոչ Առաջինի՝ բոլոր ամբարների կայսեր հիշատակով, որ դավաճաններն իրենց խարդախության համար դեռ կհատուցեն: Իսկ հիմա նահանջի ազդանշան տվեք:

Հրամանատարներն էլ չսպասեցին, որ նա երկրորդ անգամ հրամայի: Շեփորները շեփորահարեցին ավարտ, և ամբողջ բանակը գեներալ Անպոչի գլխավորությամբ, որն անխնա մտրակում էր տանկը քաշող մկներին, անմիջապես հեռացավ:

Այսպիսով բարեկամները արհաբար ետ մղեցին թշնամու հարձակումը:

Տարած հաղթանակի համար մեկը մյուսին շնորհավորելով, նրանք հանկարծ լսեցին, որ բարակ ձայնով ինչ-որ մեկը կանչում է իրենց:

- Քավոր Դդում, քավոր Դդում:
- Այդ դճիկ էք ինձ կանչում, պրոֆեսոր:
- Ո՛չ, — ասաց Տանձը, — ես չեմ:
- Իսկ ինձ թվաց, թե ինչ-որ մեկը կանչում է:
- Սանամեր Դդում, սանամեր Դդում, — նորից լսվեց նույն ձայնը:

Սանամեր Դդումը շուռ եկավ վարպետ Խաղողի կողմը.

— Վարպետ Խաղող, այդ դ՛րև եք այդպես ծվծվում:

— Ինչ է պատահել քեզ: Ես միտք էլ չունեմ ծվծվալու: Ես միայն ծոծրակս եմ քորում, որովհետև իմ մտքում մի միտք կա, որ ինձ անընդհատ տանջում է:

— Սանամեր Դդո՛ւմ, դե պատասխանեք վերջապես, այդ էս եմ, Մորի՛ն:

— Իսկ որտե՞ղ ես դու:

— Ես ասպետ Պոմիդորի սենյակումն եմ և ձեզ հետ խոսում եմ նրա գաղտնի հեռախոսով: Դուք ինձ լս՛ում եք:

— Այո, լսում եմք:

— Ես էլ ձեզ եմ լավ լսում: Պոմիդորը շուտով կգա այստեղ: Ինձ խնդրել են, որ ձեզ բան հաղորդեմ:

— Ո՞վ է խնդրել:

— Ձեր բարեկամ Չիպուլինոն: Նա խնդրում է, որ դուք չանհանգստանաք: Հույսների դրեք նրա վրա: Նա կաշխատի ձեզ բանտից ազատել: Միայն թե սիկոր Պոմիդորին չասեք, թե Դդումի տակը որտեղ է գտնվում: Չհանձնվեք: Չիպուլինոն ամեն ինչ կհաջողացնի:

— Մենք ոչ ոքի ոչինչ չենք ասի և կսպասենք, — բոլորի փոխարեն պատասխանեց վարպետ Խաղողը: — Բայց Չիպուլինոյին ասա, որ շտապի, քանի որ այստեղ մեզ շրջապատել են մկները, և մենք չգիտենք, թե ինչքան կարող ենք դիմանալ: Դու չե՞ս կարող արդյոք լուցկի ու մոմ հասցնել մեզ: Մենք մի կիսավառ մոմ ունեինք, այն էլ մկները կերան:

— Մի քիչ սպասեք, ես հիմա կվերադառնամ:

— Իհարկե, կսպասենք, ո՛ր կարող ենք գնալ:

Մի քիչ հետո նորից լսվեց Մորու ձայնը.

— Բռնեք, ես մոմ եմ գցում:

Ինչ-որ թմկոց լսվեց, և մի բան կպավ քավոր Դդումի քթին: — Այստեղ է, այստեղ է մոմը, — ուրախ բացականչեց ծերուկը:

Փաթեթի մեջ մի ամբողջ մոմ կար և լուցկու մի չբանեցրած տուփ:

— Շնորհակալ եմք, Մորի, — ձայն տվեցին բոլորը միասին:

— Ցտեսություն, ես պետք է փախչեմ, Պոմիդորը գալիս է:

Եվ իսկապես, այդ նույն վայրկյանին սինյոր Պոմիդորը մտավ սենյակը: Մորուն իր գաղտնի հեռախոսի մոտ տեսնելով, ասպետը սարսափելի անհանգստացավ:

— Ինչ ես անում այստեղ:

— Այս թակարդն էի մաքրում:

— Ինչ թակարդ:

— Այս... Միթե սա մկան թակարդ չէ: Պոմիդորը թեթևացած շունչ քաշեց: «Փառք աստծու», — մտածեց նա, — աղախինս այնքան հիմար է, որ իմ գաղտնի հեռախոսը մկան թակարդի տեղ է ընդունում»:

Նա ուրախացավ և նույնիսկ Մորուն կոնֆետի թուղթ նվիրեց:

— Ահա, վերցրու, — մեծահոգորեն ասաց նա, — կարող ես լիզել այս թուղթը, շատ քացր է, մի տարի առաջ սրա մեջ ռոմով կոնֆետ էր փաթաթած:

Մորին խնարհվեց և ասպետին շնորհակալություն հայտնեց:

— Իմ ծառայության յոթ տարիների ընթացքում դուք արդեն երրորդ կոնֆետի թուղթն եք նվիրում ինձ, ձերդ ողորմածություն:

— Ահա, տեսնում ես, ուրեմն ես բարի տեր եմ, — հեալով ասաց Պոմիդորը, — քեզ լավ պահիր, և դու գոհ կլինես:

— Ով ազատ է՝ գոհ կլինի, — առածով պատասխանեց Մորին և մի անգամ էլ գլուխ տալով, վազեց գնաց իր գործին:

Ասպետ Պոմիդորը ձեռքերը շփում էր ու ինքն իրեն մտածում. «Ա՛յ, հիմա ես կնստեմ իմ գաղտնի հեռախոսի մոտ և կիմանամ, թե ինչի մասին են կալանավորները խոսում: Երևի շատ հետաքրքրի բաներ իմանամ: Գուցե և ինձ հաջողվի իմանալ, թե որտեղ են նրանք պահում այդ անիծյալ տնակը»:

Սակայն կալանավորները, որոնց ճիշտ ժամանակին Մորին նախազգուշացրել էր, լսելով, որ սինյոր Պոմիդորը մոտենում է գաղտնի անցքին, որոշեցին ծերուկին մի քիչ հաճույք պատճառել և սկսեցին նրան թունդ հայիոյել:

Պոմիդորը քիչ էր մնում ձայն տար՝ «ես ձեզ ցույց կտամ», բայց չուզեց իրեն մատնել: Դրա համար էլ նա, որպեսզի վիրավորական խոսքեր այլևս չլսի, ավելի լավ համարեց պառկել քնել: Քնելուց առաջ նա շորով պինդ փակեց իր հեռախոսը, որ խոսափողի փոխարեն մի սովորական գինի լցնելու ձագար ուներ:

Իսկ նկուղում վարպետ Խաղողը նոր մոմ վառեց: Բուլորը նայեցին վերև, առաստաղի անկյունում նկատելով գաղտնի հեռախոսի անցքը, մի լավ ծիծաղեցին սինյոր Պոմիդորի վրա, որը երևի ականջ դնելով կալանավորների խոսակցությանը, չարությունից պայթում էր:

Սակայն ուրախությունը բանտում երկար չտևեց: Յետախույզ Մուկը խցիկում լույս տեսնելով, իմացավ բանն ինչ է, և ժամանակ չկորցնելով սլացավ գեներալ Անպոչի մոտ գեկուցելու:

— Ձերդ գերագանցություն, — ուրախ գեկուցեց նա, — կատուները գնացել են, իսկ մարդկանց մոտ մի նոր մոմ կա:

— Ի՞նչ, մոմ:

Անպոչի թուփը շուրթերից թափվեց, և նա լպստեց բեղերը, որոնցից դեռ գալիս էր կիսավառ մոմի հոտն ու համը:

— Շեփոր փչել, — տեղն ու տեղը հրամայեց նա:

Երբ զորքերը շարվեցին, գեներալ Երկարապոչը, այսինքն՝ գեներալ Անպոչը, մի կրակոտ ճառ ասաց.

— Բաջէր, մեր նկուղը վտանգի մեջ է: Յարձկվեք թշնամու վրա և ձեռք գցեք ճարպե մոմը: Իհարկե, մոմը ես կուտեմ, բայց նախքան ուտելը թույլ կտամ, որ դուք հերթով ձեր լեզուն կպցնեք նրան: Առանց կրծողների:

Մկները հրճվանքից ծվծվացին, պոչերը բարձրացրին և նորից նետվեցին մարտի:

Բայց այս անգամ վարպետ Խաղողը մոմը դրել էր պատի փոսի մեջ, երկու աղյուսի մեջտեղը, որը հատակից բարձր էր: Իզուր էին մկները աշխատում բարձրանալ հարթ ու լպրծուն պատն ի վեր: Նրանց այդպես էլ չհաջողվեց հասնել մոմին: Ամենաճարպիկները մի քիչ կրծոտեցին պրոֆեսոր Տանձի ջուրթակը: Բայց այդ հարձակվողներն էլ ստիպված թողին հեռացան: Գեներալ Անպոչն անհաջողությունից կատաղած, որոշեց ավելի խիստ լինել: Առանց

երկար խոսելու նա իր գործը մի շարքով շարեց և հրամայեց վախկոտության և թալանի համար մահապատժի ենթարկել յուրաքանչյուր տասներորդին:

Յենց այդ գիշեր անսպասելի դեպքեր տեղի ունեցան:

Չիպուլինոն, Մորին և Բողկը հանդիպեցին այգու ցանկապատի մոտ, որպեսզի որոշեն իրենց հետագա անելիքները, և այնպես տարվեցին իրենց խոսակցությամբ, որ շուրջը ոչինչ չէին տեսնում: Նրանք չնկատեցին նաև Մաստինո շանը, որ այդ ժամանակ իր պահակային շրջագայությունն էր կատարում: Երեխաներին շունը տեսավ և կատաղած հարձակվեց նրանց վրա: Աղջիկներին նա ձեռք չտվեց, բայց Չիպուլինոյին զցեց ցած և ընկնելով նրա կրծքին՝ այնքան հաչեց, մինչև հայտնվեց սինյոր Պոմիդորը և տղային բանտարկեց:

Պատկերացրեք, թե ասպետն ինչքան գոհ էր:

— Որպեսզի ապացուցեմ իմ հատուկ վերաբերմունքը քա նկատմամբ, — ասում էր նա ծաղրելով Չիպուլինոյին, — ես քեզ մի մուժ մենախուց կզցեմ: Հասարակ բանտը արժանի չէ քեզ նման սրիկային:

— Խնդրեմ, ինչպես որ կուզեք, — առանց հուզվելու պատասխանեց Չիպուլինին:

Ուրիշ ի՞նչ կարող էր նա ասել: Գուցե կարծում էք, թե նա պետք է լաց լիներ և ներհամն խնդրեր:

Ո՛չ, Չիպուլինոն այն ազնիվ սոխի ընտանիքից էր, որն ում ուզում էք կարող էր ստիպել լաց լինել, իսկ ինքը ոչ մի դեպքում լաց չէր լինի:

Գլուխ տասներորդ

Չիպուլինոյի և խլուրդի ճանապարհորդությունը մի բանտից մյուսը

Գիշերը Չիպուլինոն արթնացավ: Նրան թվաց, թե ինչ-որ մեկը դուռը

թակում է: «Տեսնես ի՞նչ կարող է լինել, — մտածեց նա, — բայց գուցե ինձ միայն թվաց, թե թակում են»:

Նա դեռ գլխի չէր ընկել, թե ով էր իրեն արթնացնողը, երբ նորից աղմուկ լսվեց: Դա մի հավասար ու խուլ ձայն էր. կարծես թե մոտերքում ինչ-որ մեկն աշխատում էր քլունգով:

«Մեկն ու մեկը ընդհատակյա անցք է փորում», — մտածեց Չիպոլինոն, ականջը դնելով այն պատին, որտեղից ձայն էր լսվում:

Նա նոր էր արել այս եզրակացությունը, երբ հանկարծ պատից հող թափվեց, հետո պոկվեց ու ընկավ մի աղյուս, իսկ աղյուսից հետո ինչ-որ մեկը թռավ նկուղ:

— Այս ի՞նչ ընկա ես, սատանան տանի:

— Իմ խցիկը, — պատասխանեց Չիպոլինոն, — այսինքն՝ կոմսուհի Բալերի ամրոցում ամենամութ նկուղը: Ներեցեք, որ այս անիծյալ խավարի մեջ ես չեմ կարող ձեզ լավ տեսնել և, ինչպես հարկն է, բարևել ձեզ:

— Իսկ դուք ի՞նչ եք: Ներեցեք, ես սովոր եմ մթության, իսկ այստեղ շատ լույս է: Ես լույս ժամանակ ոչինչ չեմ տեսնում:

— Ահա թե ինչ, ուրեմն դուք խլուրդն եք:

— Միանգամայն ճիշտ է, — պատասխանեց խլուրդը, — ես վաղուց էի ուզում այս կողմը անցք փորել, բայց ազատ ժամանակ չէի գտնում: Ախր իմ ստորանցքները գետնի տակով տասնյակ կիլոմետրեր են ձգվում: Երբեմն ջուր է լցվում այնտեղ, դրանից էլ ես միշտ հիվանդանում եմ հարբուխով: Իսկ այդ անտանելի որդերը ուր ասես սողոսկում են և ուրիշի աշխատանքը չեն հարգում: Ա՛յ դրա համար էլ այս գործը մի շաբաթից մյուսն էի հետաձգում: Բայց այսօր առավոտ ինքս ինձ ասացի. «Սինյոր խլուրդ, եթե դուք իրոք հետաքրքրասեր եք և ուզում եք աշխարհ տեսնել, ապա ժամանակն է, որ նոր միջանցք փորեք»: Եվ ճամփա ընկա...

Բայց այստեղ Չիպոլինոն ընդհատեց սինյոր խլուրդի պատմությունն ու անհրաժեշտ համարեց ներկայանալ:

— Իմ անունը Չիպոլինոն է, որ նշանակում է «փոքրիկ սոխի գլուխ»: Ես ասպետ Պոմիդորի գերին եմ:

— Մի անհանգստացե՛ք, բացատրության կարիք չկա: Ես ձեզ հոտից անմիջապես ճանաչեցի: Ես անկեղծորեն ձեզ խղճում եմ: Դուք ստիպված եք գիշեր ցերեկ մնալ այսքան անտանելի լույս տեղում, իսկ դա իսկական պատիժ է:

— Ինձ թվում է, թե այստեղ շատ մութն է...

— Դուք կատակ եք անում, բայց ես ձեզ անսահման խղճում եմ: Այո, մարդիկ չար են: Ես այսպես եմ կարծում, եթե ուզում եք որևէ մեկին զնդան գցել, ապա թող այդ զնդանում կարգին մութ լինի, որտեղ մարդու աչքերն իսկականից կկարողանան հանգստանալ:

Չհպուլինոն գլխի ընկավ, որ բնավ միտք չունի լույսի ու մթության մասին վիճել Խլուրդի հետ, որը վարժվելով իր ստորանցքների խավարին, այդ մասին բոլորովին առանձնահատուկ կարծիք ուներ:

— Այո, ես պետք է խոստովանեմ, որ լույսն ինձ էլ է անհանգստացնում, — հառաչելով ասաց Չհպուլինոն:

— Ահա տեսնում եք: Իսկ ես ի՞նչ էի ասում:

Չհպուլինոյի խոսքերը Խլուրդին շատ հուզեցին:

— Եթե դուք ավելի փոքր լինեիք... — սկսեց նա:

— Ե՛ս, ես մի՞թե մեծ եմ: Հավատացնում եմ ձեզ, որ կարող եմ մտնել ուզածդ Խլուրդի անցքը, այսինքն՝ բույնը:

— Գուցե, գուցե, երիտասարդ: Միայն թե բարի եղեք իմ ստորանցքներին մեկ էլ անցք կամ բույն չասեք: Այսպես ուրե՛մն, գուցե ինձ հաջողվի ձեզ այստեղից դուրս բերել:

— Ես հեշտությամբ կմտնեմ այն ստորանցքը, որ դուք հենց նոր փորեցիք, — ասաց Չհպուլինոն: — Միայն խնդրում եմ, առաջ դուք գնացե՛ք, որովհետև ես կարող եմ կորչել: Լսել եմ, որ ձեր ստորանցքները շատ խառնիխուռն են:

— Հնարավոր է, — ասաց Խլուրդը, — ես ձանձրանում եմ միշտ միևնույն ճանապարհով գնալ: Ուզում եք, մի նոր ճանապարհ փորեմ:

— Իսկ դ՞ր կողմը, — վրա բերեց Չհպուլինոն:

— Է՛, որ կողմն ուզում եք, — պատասխանեց Խլուրդը, — միայն թե մի տեղ հասնենք և չընկնենք սրա նման լուսավոր տեղ, անեծք

սրան:

Չհպուլինոն միանգամից մտածեց այն գնդանի մասին, որտեղ տառապում էին Դիուսը, Խաղողը և մյուսները: Այ թե կգարմանան, եթե նա ընդհատակյա անցքով հանկարծ հասնի այնտեղ:

— Ես կարծում եմ պետք է փորել դեպի աջ, — առաջարկեց նա Խլուրդին:

— Աջ թե ձախ՝ ինձ համար մեկ է: Եթե դու այդպես ես ուզում՝ գանանք աջ:

Եվ Խլուրդը առանց երկար մտածելու, գլուխը խրեց պատի մեջ ու սկսեց այնպես արագ փորել, որ Չհպուլինոն ոտից-գլուխ հողոտվեց: Տղան մոտ քառորդ ժամ հազում ու փռչտում էր: Երբ հազն ու ղնգտոցն անցավ, նա լսեց Խլուրդի ձայնը, որն անհաբեր կանչում էր նրան.

— Այդ ի՞նչ է, երիտասարդ, — գալ՞ու եք իմ հետևից թե ոչ:

Չհպուլինոն խցկվեց Խլուրդի փորած ստորանցքը, որ բավականաչափ լայն էր, որպեսզի նա կարողանար առանց որևէ դժվարության առաջ գնալ: Խլուրդը կայծակի արագությամբ աշխատելով, արդեն մի քանի մետր փորել էր:

— Ես այստե՛ղ եմ, ես այստե՛ղ եմ, քրթմնջաց Չհպուլինոն, անընդհատ թքոտելով և պաշտպանվելով Խլուրդի թաթերի տակից դուրս թռչող հողակոշտերից, որ ընկնում էին ուղիղ նրա բերանը:

Սակայն նախքան Խլուրդի հետևից գնալը, Չհպուլինոն իր խցի պատի մեջ մի անցք բաց արեց:

«Երբ ասպետ Պոմիդորը նկատի, որ փախել եմ, — մտածեց նա, թող չիմանա, թե որ կողմն եմ փախել»:

— Ինչպե՞ս եք ձեզ զգում, — հարցրեց Խլուրդը շարունակելով աշխատանքը:

— Շնորհակալություն, հիանալի եմ զգում, — պատասխանեց Չհպուլինոն: — Այստեղ այնքան անթափանց խավար է, որ...

— Ես ախր ասում էի ձեզ, որ իսկույն ձեզ լավ կզգաք: Ուզո՞ւմ եք, մի քիչ կանգնենք:

Ի միջի այլոց, ես կգերադասեի ճանապարհը շարունակել, որովհետև շտապում եմ: Բայց գուցե ձեզ համար դժվար կլինի իմ

ստորանցքներով այսքան արագ քայլել, քանի որ սովոր չեք:

— Ո՛չ, ո՛չ, շարունակենք, — պատասխանեց Չիպուլինոն, մտածելով, որ արագ գնալով նրանք ավելի շուտ կհասնեն այն նկուղը, որտեղ գտնվում են իր բարեկամները:

— Շատ լավ: — Եվ Խլուրդն սկսեց արագ առաջ գնալ:
Չիպուլինոն հագիվ էր հասնում նրան:

— — — — —

Չիպուլինոյի փախուստից քառորդ ժամ հետո նրա խցիկի դուռը բացվեց: Մի ուրախ երգ սուլելով, գնդան մտավ սինյոր Պոմփոյորը:

Ինչպիսի՛ չարությամբ էր քաջ ասպետը սպասում այդ րոպեին: Երբ նա նկուղ էր իջնում, նրան թվաց, թե ամենաքիչը մի քանի կիլոյով թեթևացել է:

«Չիպուլինոն ձեռքս է ընկել, — ինքնագոհ մտածում էր նա: — Ես նրան կստիպեմ ամեն ինչ խոստովանել, իսկ հետո կկախեմ: Այո՛, այո՛, կկախեմ: Դրանից հետո վարպետ Խաղողին և մնացած հիմարներին բաց կթողնեմ. նրանցից արդեն վախենալու բան չունեմ: Ահա և այն խուցը, որտեղ նստած է կալանավորը: Ա՛խ, ինչքան հաճելի է մտածել այդ փոքրիկ սրիկայի մասին, որ երևի այնքան է լաց եղել, որ արցունքներն սպառել է արդեն: Նա, իհարկե, կընկնի իմ ոտներն ու ներումն կխնդրի: Կարող եմ երդվել, որ կլիզի կոշիկներս: Ի՛նչ կա որ, կթողնեմ, որ մի քիչ թավալվի ոտներիս մոտ և նույնիսկ ազատելու որոշ հույսեր կտամ, իսկ հետո կհայտնեմ վճիռս՝ «կախաղան»:

Սակայն երբ ասպետ Պոմփոյորը մեծ բանալիով բացեց խցիկի դուռը և վառեց գրպանի լապտերը, հանցագործի հետքն էլ չգտավ: Խուցը դատարկ էր, բոլորովին դատարկ:

Պոմփոյորն իր աչքերին չէր հավատում: Նրա մոտ կանգնած բանտապանները տեսան, որ նա չարությունից կարմրեց, դեղնեց, կանաչեց, կապտեց և, վերջապես, սևացավ:

— Որտե՞ղ կարող էր թաքնվել այդ տղան: Չիպուլինո, որտե՞ղ ես անպիտանի մեկը, թաքնվել ես, հմ՛:

Հարցը բավական անտեղի էր: Բայց այնուամենայնիվ, որտե՞ր կարող էր Չիպուլինոն թաքնվել, երբ նեղլիկ խցում հարթ ու մերկ պատերից, նստարանից և ջրով կժից բացի, ուրիշ ոչինչ չկար:

Ասպետ Պոմիդորը նայեց նստարանի տակ, զննեց ջրի կուժը, նայեց առաստաղին, հետախուզեց հատակի ու պատերի յուրաքանչյուր սանտիմետրը, բայց ամեն ինչ իզուր էր. գերին անհայտացել էր, կարծես գոլորշիացել:

— Ո՞վ է նրան բաց թողել, — սպառնագին հարցրեց Պոմիդորը, դիմելով Լիմոնուկներին:

— Չգիտենք, սինյոր ասպետ: Չէ՞ որ բանալին ձեզ մոտ է, — համարձակվեց հիշեցնել պահակապետը:

Պոմիդորը ծոծրակը քորեց. իսկապես, բանալին իր մոտ էր:

Որպեսզի գաղտնիքը լուծի, նա որոշեց նստել նստարանին:

Նստած ավելի հեշտ է մտածել, քան թե կանգնած: Բայց նստած էլ նա ոչինչ չկարողացավ հասկանալ:

Հանկարծ քամու հանկարծակի հոսանքը դուռը փակեց:

— Բաց արեք, տվարներ, — ճչաց Պոմիդորը:

— Ձերդ բարություն, այդ հնարավոր չէ: Լսեցի՞ք, թե ինչպես փականքը չիկաց:

Ասպետ Պոմիդորը փորձեց դուռը բանալիով բացել, բայց փականքն այնպես էր շինված, որ միայն դրսից կարելի էր բացել:

Վերջապես սինյոր Պոմիդորը համոզվեց, որ ինքը իրեն բանտ է նստեցրել և կատաղությունից քիչ մնաց պայթեր:

Նա նորից սևացավ, կապտեց, կանաչեց, կարմրեց, դեղնեց և սկսեց սպառնալ, թե անմիջապես բոլոր բանտարկյալներին կգնդակահարի, եթե նրանք երկու ժամում իրեն չազատեն:

Կարճ ասած, որպեսզի դուռը բացեին, հարկավոր էր դիմամիտով պայթեցնել այն:

Այդպես էլ արեցին: Տնցումից սինյոր Պոմիդորը գլուխկոնձի տվեց և ոտից-գլուխ թաղվեց հողի տակ, Լիմոնուկները նետվեցին ասպետին հողի տակից հանելու, և երկար չարչարվելուց հետո դուրս քաշեցին նրան, որ նոր հանած կարտոֆիլի նման ամբողջովին

հողոտվել էր: Յետո նրան տարան վեր, թափ տվեցին և սկսեցին գննել, որպեսզի տեսնեն, թե գլուխը, քիթը, ոտներն ու ձեռները հո չեն վնասվել:

Պոմիդորի գլուխն առողջ էր, բայց քիթը կարգին տուժել էր: Վնասվածքին կաչուն լաթ փակցրին, և ասպետն իսկույն անկողին մտավ: Նա անհարմար էր զգում այդ ուռույցքը քթին՝ մարդկանց երևալ:

Չիպուլինոն և Խլուրդն արդեն հեռու էին երբ լսեցին պայթյունի արձագանքը:

— Ի՞նչ կարող էր լինել այդ... — հարցրեց տղան:

— Օ՛, մի անհանգստացե՛ք, — բացատրեց Խլուրդը, — այդ երևի գինվորական պարապմունքներ են: Իշխան Լիմոնն իրեն մեծ զորավար է պատկերացնում և չի հանգստանա մինչև պատերազմ չհնարի, թեկուզ սուտ պատերազմ:

Եռանդով փորելով ստորերկրյա միջանցը, Խլուրդն անընդհատ գովում էր խավարը և վատաբանում լույսը, որը նա ամբողջ հոգով ատում էր:

— Մի անգամ, — ասաց նա, — այնպես պատահեց, որ ես մի աչքով նայեցի մոմի... Երդվում եմ, երբ իմացա, թե դա ինչ բան է, ինչքան ոտներումս ուժ կար՝ փախա:

— Իհարկե, — հառաչեց Չիպուլինոն, — որոշ մոմեր շատ պայծառ են վառվում:

— Ի՞նչ ես ասում, — պատասխանեց Խլուրդը, — այդ մոմը չէր վառվում: Բարեբախտաբար հանգած էր: Ի՞նչ կլիներ իմ բանը, եթե վառված լիներ:

Չիպուլինոն մնացել էր զարմացած. ինչպե՞ս կարող էր հանգած մոմը վնաս տալ տեսողությանը: Բայց այդ ժամանակ Խլուրդը հանկարծ կանգ առավ:

— Ես ձայներ եմ լսում, — ասաց նա:

Չիպուլինոն ականջները սրեց, նրան հեռավոր խոսակցություն հասավ, թեև չէր կարողանում ձայները որոշել:

— Լսում ե՞ք, — ասաց Խլուրդը: — Որտեղ մարդկային ձայն, այնտեղ էլ մարդ: Իսկ որտեղ մարդ կա, այնտեղ էլ լույս: Ավելի լավ է

ուրիշ կողմ գնանք:

Չիպուլինոն նորից ականջ դրեց և այս անգամ նա պարզ լսեց վարպետ Խաղողի ձայնը: Միայն թե նա չկարողացավ հասկանալ, թե ինչ է ասում կոշկակարը:

Տղան ուզում էր ամբողջ ձայնով կանչել, որպեսզի իրեն լսեին, ճանաչեին, բայց իսկույն մտածեց. «Ոչ, թող Խլուրդն առայժմ չիմանա, թե դրանք իմ բարեկամներն են: Առաջ հարկավոր է սրան համոզել, որ մինչև նկուղը անցք փորի, թե չէ կարող է համառել, և իմ բոլոր պլանները փուլ կգան»:

— Սիւյոր Խլւրդ, — զգուշորեն սկսեց Չիպուլինոն, — ես լսել եմ մի շատ, շատ մութ անաձավի մասին, որն իմ կարծիքով պետք է հենց այս կողմում լինի:

— Իմ ստորանցքից մոլթ, — բացարձակ կասկածանքով հարցրեց Խլուրդը:

— Շատ ավելի մութ, — վճռականորեն ասաց Չիպուլինոն: Երևի այդ մարդիկ, որոնց ձայները մենք լսում ենք, եկել են այդ անձավը, որպեսզի հանգիստ տան իրենց հոգևած աչքերին:

— Հըմ... — մռթմռթաց Խլուրդը, — ինչ-որ չեմ հավատում... բայց եթե շատ եք ուզում այդ անձավում լինել, թող ձեր ասածը լինի: Իհարկե, պատասխանատվությունը ձեզ վրա է ընկնում:

— Խնդրում եմ, սիւյոր Խլուրդ: Ձեզ անչափ շնորհակալ կլինեմ, — խնդրեց Չիպուլինոն: — Իսկ դուք կձանոթանաք նոր անձավին: Մարդ ինչքան ապրի, այնքան կսովորի, ճիշտ չէ:

— Լավ, — համաձայնեց Խլուրդը, — իսկ եթե ուժեղ լույսից իմ աչքերը ցավեն, ձեր բանը վատ կլինի:

Մի քանի րոպե հետո ձայները ավելի մոտիկից լսվեցին:

Չիպուլինոն պարզ լսեց, թե ինչպես է քավոր Դդումը ծանր հառաչում:

— Օ՛հ, այս բոլորի համար ես եմ մեղավոր... Ես... ախ, եթե Չիպուլինոն գար և մեզ այս նեղությունից ազատեր...

— Եթե չեմ սխալվում, — ասաց Խլուրդը, այնտեղ ձեր անունը տվեցին:

— Իմ անհունը, կարծես ոչինչ չհասկանալով՝ հարցրեց Չիպուլինոն, — չի կարող պատահել, ես չեմ լսում, թե ինչ են խոսում: Բայց այդ ժամանակ հնչեց վարպետ Խաղողի ձայնը.

Չիպուլինոն խոստացավ, որ մեզ կազատի, ուրեմն անպայման կգա: Ես բուրոբովին չեմ կասկածում:

— Լսում եք: Ձեր մասին են խոսում, — պնդեց Խլուրդը, — ձեր մասին: Ո՛չ, ո՛չ. ինձ մի հավատացրեք, թե չեք լսում: Ավելի լավ է ասեք, թե ի՞նչ մտադրությամբ դուք ստիպեցիք, որ այստեղ գամ:

— Սիւյոր Խլուրդ, — խոստովանեց Չիպուլինոն, — գուցե իրոք ավելի լավ կլիներ, որ ես ձեզ սկզբից ճշմարտությունն ասեի: Բայց թույլ տվեք գոնե հիմա ասել, թե բանն ինչ է: Այս ձայները, որ դուք լսում եք, գալիս են կոմսուլիներ Բալերի գնդանից: Այնտեղ տառապում են իմ բարեկամները, որոնց ես խոստացել եմ ազատել:

— Եվ դուք այդ որոշել եք իմ օգնությամբ անել:

— Իհարկե՛, սիւյոր Խլուրդ, դուք այնքան բարի եղաք, որ արդեն այսքան երկար միջանցք փորեցիք: Չէի՞ք ուզենա մի քիչ էլ աշխատել, որպեսզի ազատեիք իմ բարեկամներին:

Խլուրդը մի քիչ մտածեց ու ասաց.

— Լավ, համաձայն եմ: Ինձ համար, ճիշտն ասած, միևնույն է թե որ կողմն եմ հող փորում: Ոչինչ, ձեր ընկերների համար ստորանցք կբացեմ:

Չիպուլինոն հաճույքով կհամբուրեր ծեր Խլուրդին, բայց տղայի դեմքը այնպես էր հողոտվել, որ նա ինքն էլ չգիտեր, թե որտեղ է գտնվում իր բերանը:

— Ամբողջ սրտով շնորհակալ եմ ձեզնից, սիւյոր Խլուրդ: Մինչև մահ ձեզ պարտական կլինեմ:

— Դե լավ..., փնթփնթաց հուզված Խլուրդը: — Ավելի լավ է ժամանակ չկորցնենք շաղակրատելով և շուտ հասնենք ձեր բարեկամներին:

Նա նորից սկսեց իր աշխատանքը և մի քանի վայրկյանում նկուղի պատը ծակեց: Սակայն, դժբախտաբար այն պահից, երբ Խլուրդը մտավ նկուղ, վարպետ Խաղողը լուցկի վառեց, որ տեսնի, թե ժամը քանիսն է:

Խեղճ Խլուրդի վրա լուցկու բոցն այնպես ազդեց, որ նա անմիջապես ետ-ետ գնաց ու կորավ խավարի մեջ:

— Տոտսություն, սինյոր Չիպուլինո, — հեռանալով ձայն տվեց նա, — դուք լավ տղա եք, և ես անկեղծորեն ուզում էի ձեզ օգնել: Բայց դուք պարտավոր էիք նախազգուշացնել ինձ, որ մեզ այդպիսի կուրացուցիչ լույսով կդիմավորեն: Դուք չպետք է ինձ խաբեիք:

Նա այնքան արագ էր վազում, որ հետևից փլվեց հենց նոր փորած ստորանցքի առաստաղը, պատերը նստեցին, և ամբողջ ստորուղին հողով լցվեց: Շուտով Չիպուլինոն Խլուրդի ձայնն այլևս չէր լսում: Նա ինքն իրեն փնթփնթալով տխրությամբ հրաժեշտ տվեց Խլուրդին... «Տոտսություն, բարի ծերուկ Խլուրդ: Աշխարհը նեղ է, և գուցե մենք դեռ հանդիպենք երբևէ, ու ես ձեզ խաբելու համար ներողություն կիսնդեմ:

Այսպես բաժանվելով իր ճանապարհորդության ընկերոջից, Չիպուլինոն ինչքան հնարավոր էր թաշկինակով դեմքը մաքրեց և վազեց իր բարեկամների մոտ այնքան ուրախ և անհոգ, կարծես տոնի էր եկել:

— Բարի օր, բարեկամներս, — զրնգուն ձայնով գոչեց նա:

Պատկերացրե՞ք ձերբակալվածների ուրախությունը: Նրանք նետվեցին Չիպուլինոյի գիրկը և համբույրի անձրև տեղացին նրա գլխին: Մի վայրկյանում նրա վրա նստած կեղտը մաքրվեց: Ոմանք գրկում էին նրան, ոմանք բարեկամաբար կամօում, ոմանք խփում ուսին:

— Հանգիստ, հանգիստ, — համոզում էր Չիպուլինոն, — դուք ինձ կտոր-կտոր կանեք:

Նրանք շատ չհանգստացան, բայց նրանց ուրախությունը փոխվեց հուսահատության, երբ Չիպուլինոն պատմեց իր չարաբաստիկ արկածների մասին:

— Ուրեմն, ախպերս, դու էլ մեզ նման գերի ես, — հարցրեց վարպետ Խաղողը:

— Այդպես է դուրս գալիս, — պատասխանեց Չիպուլինոն:

— Բայց եթե պահակները գան, քեզ կտեսնեն:

— Այդ արդեն պարտադիր չէ, — ասաց Չիպուլինոն: — Ես միշտ էլ կարող եմ թաքնվել պրոֆեսոր Տանձի ջութակի մեջ: Բարեբախտաբար ես այնքան էլ մեծ չեմ:

— Օ՛յ, իսկ ի՞նչ մեզ այստեղից կհանի, — շնչաց Դդումը:

— Եվ այս բոլորը իմ մեղքով, — ծանր հառաչեց Դդումը: — Այս բոլորն իմ պատճառով եղավ...

Չիպուլինոն ուզում էր ընկերներին աշխուժացնել, բայց նրա բոլոր ջանքերը իզուր անցան: Դե, ասենք, նրա տրամադրությունն էլ բանի նման չէր:

Գլուխ տասնմեկերորդ

Որտեղ հայտնի է դառնում, որ ասպետ Պոմիդորը գուլպաներով քնելու սովորություն ունի

Չասկանալի է, որ Պոմիդորը բոլորից թաքցրեց Չիպուլինոյի փախուստը: Նկուղում իր հետ եղած Լիմոնուկներին նա կարգադրեց, որ լռեն, և եթե մեկն ու մեկը հարցնի, ասեն թե հանցագործին ընդհանուր խուց են տեղափոխել: Եվ որպեսզի ոչ ոք չտեսնի նրա քթի ուռուցքը, նա անկողնուց չէր ելնում, ոչ ոքի չէր ընդունում: Մորին ուշադիր հետևում էր նրան, բայց այդպես էլ չէր հաջողվում իմանալ, թե Պոմիդորը նկուղների բանալին որտեղ է պահում: Վերջապես նա որոշեց խորհուրդ հարցնել Բալուկից, որը, ինչպես ձեզ հայտնի է, դեռ հիվանդ էր և անընդհատ լաց էր լինում: Բայց Մորին դեռ ամբողջ եղածը չէր պատմել, երբ Բալուկն արցունքները սրբեց և ոտքի թռավ:

— Չիպուլինոն բանտումն է: Նա ճիշտ մի րոպե չպետք է մնա այնտեղ... Շուտ այստեղ տուր ակնոցս:

— Ի՞նչ ես ուզում անել:

— Ես նրան կազատեմ, — վճռականորեն ասաց Բալուկը, — Չիպուլինոյին և մնացած բոլորին:

— Բայց ինչպե՞ս Պոմիդորի մոտից բանալիները կվերցնես:

— Կթռցնեմ: Միայն դու պատրաստիր շոկոլադի լավ տորտ և վրան քնելու դեղ ցանիր: Իմ հորաքույրների մոտ այդ փոշուց կա: Սինյոր Պոմիդորը շոկոլադ շատ է սիրում, և հենց որ քնի, ինձ իմաց տուր: Իսկ առայժմ ես գնամ տեսնեմ՝ գործերը ոնց են ընթանում:

Մորին իր աչքերին չէր հավատում: Փխրուն ու քնքուշ Բալուկը որտեղից էր այդքան համարձակություն ու վճռականություն ձեռք բերել:

— Ինչպե՞ս է փոխվել, աստված իմ, ինչպե՞ս է փոխվել, — շշնջում էր Մորին:

Այդ օրը ով տեսնում էր Բալուկին, նույն բանն էր ասում: Կոմսուհիները, սինյոր Մադդանոսը և հերցոգ Մանդարինը զարմացած նայում էին տղային:

— Նա բոլորովին առողջացել է, — տեսնելով, թե ինչպես են փայլում տղայի աչքերն ու ինչպես են այտերը վառվում, բացականչեց սինյորա կոմսուհի Ավագը:

— Ես ձեզ ասում էի, չէ՞, որ նա բոլորովին էլ հիվանդ չէ, — հայտարարեց հերցոգը: — Նա ուղղակի ձևացնում էր:

Կոմսուհի Կրտսերն իսկույն համաձայնեց իր կամակոր ազգականի հետ, թե չէ, ռվ գիտե, նա կարող էր նորից բարձրանալ պահարանի վրա և սպառնալ, թե իր կյանքին վերջ կտա, եթե նրան որևէ նվիրաբերումով չգթան:

Իսկ այդ ժամանակ Բալուկը Լիմոնուկներից մեկից իմացավ, որ Չիպուլինոն բանտից փախել է: Նրան այդ շատ ուրախացրեց: Սակայն նա որոշեց, ինչ գնով էլ լինի, մյուս գերիներին էլ ազատել:

— Չիպուլինոյի բարեկամները նաև իմ բարեկամներն են, — ասաց նա և անմիջապես գործի անցավ:

Բանտապանների հետ խոսելով, նա իմացավ, որ սինյոր Պոմիդորը նկուղի բանալիները պահում է գուլպայի ներսի կողմում կարած հատուկ գրպանում:

«Գործերը վատ են, — մտածեց Բալուկը: Բոլորին հայտնի է, որ Պոմիդորը միշտ գուլպաներով է քնում: Ուրեմն հարկավոր է նրան այնպես քնեցնել, որ գուլպաները հանելիս չզարթնի»:

Եվ նա Մորուն խնդրեց, որ տորտի մեջ քնելու փաշի շատ լցնի:

Երբ գիշերը եկավ, աղախինը ասպետին մի հրաշալի շոկոլադե տորտ բերեց: Սինյոր Պոմիդորն ուրախությունից ամբողջ տորտը միանգամից կերավ:

— Դու չպետք է քո տիրոջից բողոքես, — ասաց նա Մորին, — երբ ես առողջանամ, անպայման քեզ կնվիրեմ անցյալ տարվա իմ կերած շոկոլադի թուղթը, շատ բուրավետ ու քաղցր է այդ թուղթը:

Մորին ի նշան շնորհակալության ասպետին խոր գլուխ տվեց, և երբ մեջքն ուղղեց, Պոմիդորն արդեն խռմփացնում էր, կարծես կոնտրաբասից և սրնգից կազմված մի ամբողջ նվագախումբ էր նվագում:

Մորին վազեց Բալուկին կանչելու: Ձեռք ձեռքի տված նրանք ոտների թաթերի վրա ամրոցի միջանցքներով վազեցին դեպի ասպետի ննջարանը:

Նրանք անցան Մանդարինի սենյակի մոտով. հերցոգը մինչև ուշ գիշեր թռիչքի վարժություններ էր անում: Որպեսզի կարողանար սինյորա կոմսուհի Կրտսերից որևէ բան պոկել, նա թռիչքների համար պետք է վարժվեր:

Իրար հետևից բանալու անցքից նայելով, Մորին ու Բալուկը տեսան, թե ինչպես հերցոգը երես տված կատվի նման պահարանից թռչում է ջահի վրա, մահճակալի գլխից՝ հայելու գլխին, և զարմանալիորեն արագ մագլցում է դռան վարագույրներն ի վեր: Կարճ ժամանակում նա իսկական լարախաղաց էր դարձել:

Ահնյոր Պոմիդորի սենյակը բավական լուսավոր էր: Մորին դիտմամբ պատուհանները բաց էր թողել, այնպես որ լուսամուտից լուսնի առատ լույս էր թափանցում:

Ասպետն առաջվա նման ուժեղ խռմփում էր: Այդ րոպեին նա երագում տեսնում էր, թե ինչպես Մորին նրա համար հեծանիվի անվի մեծության մի ուրիշ տորտ է բերում: Բայց հենց որ ուզեց ուտել, սենյակ մտավ բարոն Նարինջը և պահանջեց, որ Պոմիդորը տորտի կեսը իրեն տա: Ասպետը սուրը հանեց, որ իր իրավունքները պաշտպանի: Վերջ ի վերջո բարոնը նահանջեց՝ անխնա մտրակելով ձորձահավաքին, որը սայլակի ծանրությունից քրտնքի մեջ կորել էր: Սինյոր Պոմիդորը դեռ չէր սկսել ուտել, երբ այս անգամ հայտնվեց հերցոգ Մանդարինը, որը բարձրանալով բարձր բարդու կատարը,

ճչաց. «Տվե՛ք, տվե՛ք ինձ տորտի կեսը, թե չէ ես այստեղից ինձ գլխիվայր ցած կզգեմ»:

Մի խոսքով Պոմիդորի քունը շատ անհանգիստ էր. ծանոթ թե անծանոթ ուզում էր նրանից չարաբաստիկ տորտը խլել. հետո այդ տորտը ասպետին դառնորեն հիասթափեցրեց: Չգիտես ինչու, նա շոկոլադից ստվարաթղթի վերածվեց:

Սիկյոր Պոմիդորը ոչինչ չկասկածելով, ատամները խրեց տորտի մեջ, և նրա բերանը լցվեց ստվարաթղթով, կոշտ, կպչուն և անհամ ստվարաթղթով:

Այն ժամանակ, երբ սիկյոր Պոմիդորը հաղթահարում էր այդ ծանր երազները, Մորին զգուշությամբ նրա ոտքից գուլպան հանեց, իսկ Բալուկը գուլպայի միջից հանեց բանալիները:

— Ամեն ինչ արված է, — շնչաց նա Մորուն:

Աղջիկը նայեց իր քնած տիրոջն ու ասաց.

— Ա՛յ թե կկատաղի Պոմիդորը, երբ արթնանա ու տեսնի թե ինչ են արել իր հետ:

— Փախչենք, քանի չի արթնացել:

— Չ՛է, վախենալու բան չկա. ես այնքան քնափոշի եմ ցանել, որ ամենաքիչը մի տասը մարդու կբավականացներ:

Նրանք կամաց դուրս եկան սենյակից, դուռը ծածկեցին և աստիճաններով շնչակտուր ցած իջան:

Յանկարծ Բալուկը կանգ առավ և կամացուկ ասաց.

— Իսկ պահակները:

Իսկապես, նրանք այդ մասին չէին մտածել:

Մորին մատը դրեց բերանը. դժվար պահերին նա միշտ այդպես էր անում: Մատը ծծում էր, և գլխում միշտ լավ մտքեր էին ծագում:

— Գտա, — վերջապես ասաց նա, — ես կգնամ տան հետևը և կսկսեմ օգնություն կանչել, իբր թե ավազակներ են հարձակվել վրաս: Իսկ դու բանտի պահակներին կանչիր և ուղարկիր ինձ օգնության: Յենց որ մենակ մնաս, երկու անգամ պտտեցրու. այ այս բանալին, և խցի դուռը կբացվի:

Այդպես էլ արեցին: Մորին այնպես էր «օգնեցէք» կանչում, որ քիչ էր մնում ծառերն էլ օգնության հասնելու համար արմատներից պոկվեին: Բանտապաններն իրար անցան և, ինչպես բարակներն են գազանի հետևից վազում, նետվեցին աղմուկի կողմը:

— Շտապէք, աստված կսիրեք, շտապեք, բանդիտներ են, բանդիտներ, — նրանց հետևից կանչում էր Բալուկը:

Մենակ մնալով, նա բանալին անցքի մեջ մտցրեց, բաց արեց ծանր դուռը և մտավ նկուղ: Ինչքան նա զարմացավ, երբ բանտարկյալների մեջ տեսավ իր բարեկամ Չիպուլինոյին:

— Դու այստեղ ես, Չիպուլինո, ուրեմն չէն փախել:

— Բալուկ, քեզ հետո ամեն ինչ կպատմեմ: Իսկ հիմա պետք չէ ժամանակ կորցնել:

Եվ իսկապես, փախստականները պետք է շտապեին:

— Այստեղ, այստեղ, — բարեկամներին ցույց տալով դեպի անտառ տանող շավիղը, շնչահատվելով ասում էր Բալուկը: — Մի անհանգստացեք, բանտապանները ձեզ չեն տեսնի, նրանք վազեցին հակառակ կողմը:

Սանամեր Դդումին, որը չափից դուրս հաստ էր և չէր կարող արագ վազել, իսկական դդումի նման ճանապարհով գլորեցին:

Չիպուլինոն մի թուփով ընկերներից ետ ընկավ և շերմորեն շնորհակալություն հայտնեց Բալուկին, որի աչքերը արցունքից փայլում էին:

— Ապրեն, — ասաց Չիպուլինոն, — ես չեի հավատում, թե դու իսկականից հիվանդ ես: Եվ քանի դեռ ազատ էի, միշտ ուզում էի քեզ մոտ գալ:

— Փախիր, շուտ փախիր, թե չէ կբռնեն:

— Լավ, փախչում եմ, բայց շուտով կտեսնվենք: Խոսք եմ տալիս քեզ, որ դեռ Պոմիդորի հախից կգանք:

Նա շտապ հասավ իր բարեկամներին և օգնեց, որ սանամեր Դդումին գլորեն: Իսկ Բալուկը շտապեց ամրոց, որ բանալիները տեղը դնի, այսինքն՝ սիւյոր Պոմիդորի աջ գուլպայի մեջ:

Բայց ինչ եղավ պահակների հետ, որոնք վազեցին Մորուն բանդիտներից ազատելու:

Բանտապանները հասան Մորուն և տեսան, որ նա լաց է լինում: Մինչև նրանց գալը, Մորին գոգնոցը պատառոտեց և դեմքը ճանկոտեց, որպեսզի պահակները հավատային, թե իրոք նրա վրա բանդիտներ են հարձակվել:

— Ո՞ր կողմը փախան, — արագ վազելուց շնչահատվելով հարցրին Լիմոնուկները:

— Ահա՛, այն կողմը, — գյուղի կողմը ցույց տալով, պատասխանեց Մորին:

Բանտապանները սլացան այդ ուղղությամբ: Երկու թե երեք անգամ պտտվեցին գյուղում և, փողոցներում ոչ ոքի չգտնելով, նրանք ձերբակալեցին միայն գյուղական Կատվին, թեև սա վճռական կերպով բողոքում էր:

— Չեմ հասկանում, — զայրույթով մլավում էր Կատուն, — կարծեմ մենք ապրում ենք ազատ երկրում, և դուք ինձ ձերբակալելու ոչ մի իրավունք չունեք: Բացի այդ, դուք վրա հասաք հենց այն ժամանակ, երբ երկու ժամ անընդհատ ինձ սպասեցնող մուկը, վերջապես, իր բնից պիտի դուրս գար:

— Բանտում դուք ինչքան ասես մուկ կգտնեք, — պատասխանեց պահակապետը:

Կես ժամ հետո Լիմոնուկները ամրոց վերադարձան: Պատկերացնում էք, թե ինչ արեցին նրանք, երբ բանտը դատարկ գտան: Նրանք Կատվին շտապ փակեցին խցում, և Պոմիդորի զայրույթից վախենալով՝ հրացաններն ու սրերը այս ու այն կողմ նետեցին, փախան:

Ասպետն առավոտյան արթնացավ և առաջին հերթին նայեց հայելու մեջ:

«Բիթս լավացել է, — ինքն իրեն ասաց նա, — կարելի է լաթը պոկել և գնալ նկուղ բանտարկյալներին հարցաքննելու»:

Ճանապարհին նա հետը տարավ սինյոր Սիսեռիկին, որպես իշխանական քրեական օրենքները լավ իմացողի, և սինյոր Մադդանոսին, որպեսզի բանտարկյալների ցուցմունքները գրի առնի:

Երեքն էլ օրենքի ներկայացուցիչներին վայել հպարտ կեցվածքով խմբով իջան նկուղ: Պոմիդորն աջ գուլպայի միջից

բանալիները հանեց, բաց արեց ծանր դուռը, բայց այնքան արագ ետ ընկրկեց, որ իր ետևում կանգնած սինյոր Մադդանուսին ցած գլորեց: Խցից խղճալի տնքոց էր լսվում՝ — «Մյանու, մյանու», — անտանելի տանջանքներից կծկվելով մլավում էր գյուղական Կատուն:

— Դուք ի՞նչ եք անում այստեղ, — վախից դողալով հարցրեց Պոմիդորը Կատվին:

— Ա՛խ, փորս ցավում է, — դառնորեն բողոքեց Կատուն, — ինդրում եմ ինձ ամբու-լա-տորիա տանեք, կամ բժիշկ ուղարկեք այստեղ:

Բանից պարզվեց, որ Կատուն ամբողջ գիշեր մուկ է բռնել ու այնքան է կերել, որ նրա բերանից ոչ պակաս երկու հարյուր մկան պոչ էր դուրս ցցվել:

Ասպետը կատվին դուրս թողեց և թույլատրեց մեկ-մեկ մկներ բռնելու համար բանտ գալ: Հրաժեշտ տալով, նա Կատվին ասաց.

— Եթե դուք այնքան սիրալիր կլինեք, որ իբրև իրեղեն ապացույց ձեր օգտակար գործունեության՝ պահեք ձեր կերած մկների պոչերը, ապա ամրոցի ղեկավարությունը որոշ քանակությամբ պոչի համար ձեզ մի փոքրիկ թոշակ կնշանակի:

Դրանից հետո Պոմիդորն անմիջապես հեռագիր տվեց թագավորության տեր ու տիրական իշխան Լիմոնին, որտեղ ասում էր.

«Կոմսուհիներ Բալերի ամրոցում անկարգություն է տիրում, բարեհաճեցեք Լիմոնուկների մի գումարտակ գործուղել: Ցանկալի է ձերդ մեծության անձնական ներկայությունը: Պոմիդոր»:

Գլուխ տասներկուերորդ

Որտեղ սոխ Պրասը պարգևատրվում է և պատժվում

Հենց այդ օրը իշխան Լիմոնը քառասուն պալատական Լիմոնների և մի ամբողջ գումարտակ Լիմոնուկների գլուխ անցած, մտավ գյուղ: Ինչպես արդեն գիտեք, իշխան Լիմոնի պալատում բոլորը գլխարկների վրա զանգակներ էին կրում: Երբ պալատական

գորքերն անցան ճանապարհով, այնպիսի երաժշտություն
բարձրացավ, որ կովերը դադարեցին արածելուց, մտածելով, թե նոր
նախիր են քշում բերում:

Չնագնագոցը լսելով, Սոխ Պրասը, որ այդ թուպեին հայելու առաջ
կանգնած բեղերն էր սանրում, գործն ընդհատելով գլուխը
պատուհանից դուրս հանեց: Յենց այդտեղ էլ նրան նկատեցին:
Լիմոնուկները խուժեցին տուն, ձերբակալեցին նրան ու բանտ
տարան: Նրա բեղերից մեկը ցցված էր վեր, մյուսը ցած էր կախված:

— Թույլ տվեք գոնե ձախ բեղս էլ սանրեմ, — խնդրում էր Սոխ
Պրասը պահակներին:

— Լռել, թե չէ մենք կկտրենք քո բեղերը, առաջ կկտրենք ձախը,
հետո՝ աջը և դրանով էլ քեզ կազատենք սանրելու հոգսից:

Սող Պրասը իր միակ հարստությունը կորցնելուց վախենալով,
լռեց:

Փաստաբան Սիսեռիկն էլ բանտարկվեց: Նա երկար ժամանակ
ճչում էր, փորձում էր ազատվել, խոսքեր էր թափում սիսեռի պես,
բայց իզուր:

— Սա թյուրիմացությունն է: Ես այստեղի փաստաբանն եմ և
ծառայում եմ ասպետ Պոմիդորի մոտ: Սա պարզապես
թյուրիմացությունն է: Անմիջապես ինձ ազատ արձակեք:

Բայց նրա խոսքերը իզուր էին անցնում. ոնց որ պատի վրա
սիսեռ ցանես:

Չինվոր Լիմոնուկները տեղավորվեցին այգում: Միառժամանակ
նրանք զբաղվում էին նրանով, որ կարդում էին սիևյոր Մադդանոսի
հայտարարությունները, իսկ հետո, որպեսզի չձանձրանան, սկսեցին
տրորել կանաչն ու ծաղիկները, որսալ ավազանների ոսկե ձկները,
ծաղկանոցների ապակիներին նշան բռնել և նման այլ
զվարճություններ հնարել:

Կոմսուհիները մազերը փետելով, մի պետից մյուսի մոտ էին
վազում:

— Խնդրում ենք ձեզ, սիևյորներ, հրամայեցեք ձեր մարդկանց, որ
հանգստանան: Նրանք մեր ամբողջ այգին կոչնչացնեն:

Բայց պետերը լսել անգամ չէր ուզում:

— Մեր քաջերին, — հայտարարում էին նրանք, — ռազմական սիրագործություններից հետո զվարճություն է հարկավոր: Դուք պետք է շնորհակալ լինեք, որ նրանք պահպանում են ձեր հանգիստը:

Կոմսուհիներն ուզում էին ասել, թե Սոխ Պրասին և սինյոր Սիսեռիկին ձերբակալելն այնքան մեծ խիզախություն է, բայց սպաները սպառնացին:

— Շատ լավ: Այդ դեպքում մենք կկարգադրենք, որ ձեզ էլ ձերբակալեն: Նրանք հենց ռոճիկ են ստանում, որպեսզի բոլոր դժգոհներին ձերբակալեն:

Կոմսուհիները ստիպված էին հեռանալ և բողոքել իշխան Լիմոնին:

Իշխանն իր քառասուն պալատականների հետ տեղավորվել էր ամրոցում, գրավելով, ինչպես պետք էր սպասել, ամենալավ սենյակները: Նրանք դուրս էին մղել սինյոր Պոմիդորին, բարոնին, հերցոգին, սինյոր Մադդանոսին և նույնիսկ կոմսուհիներին:

Բարոն Նարինջը շատ էր մտահոգված:

— Ա՛յ, կտեսնեք, — շշուկով ասում էր նա, — այդ Լիմոններն ու Լիմոնուկները մեր ուտելեղենի ամբողջ պաշարը կխժռեն, և մենք սովից կմեռնենք: Քանի դեռ ամրոցում ուտելիքի պաշար կա, նրանք այստեղ կմնան, իսկ հետո, մեզ թողնելով բախտի քմահաճույթին, կգնան: Ա՛խ, սա մի այնպիսի դժբախտություն է, իսկական կործանում:

Իշխանն հրամայեց Սոխ Պրասին բերել և հարցաքննել:

Քիթը վանդակավոր թաշկինակով լավ մաքրելուց հետո, սինյոր Մադդանոսը պատրաստվեց գրի առնելու մեղադրյալի պատասխանները, իսկ ասպետ Պոմիդորը նստեց իշխանի կողքին, որպեսզի նրան թելադրի, թե ինչպես հարցաքննել:

Բանն այն է, որ իշխան Լիմոնը, թեև գլխին ոսկե զանգակ էր կրում, այնքան էլ խելոք մարդ չէր, բացի այդ, աչքի էր ընկնում ցրվածությամբ:

Եվ ահա հիմա էլ դեռ գերուն ներս չէին բերել, երբ նա բացականչեց.

— Ա՛խ, ի՛նչ հոյակապ բեղեր ունի: Երդվում եմ, որ ինձ ենթակա երկրներում ես երբեք այդքան գեղեցիկ, երկար ու լավ սանրված բեղեր չեմ տեսել:

Պետք է ասել, որ սոխ Պրասը բանտում անընդհատ հարդարում ու սանրում էր իր բեղերը:

— Շնորհակալ եմ, ձերդ մեծություն, — համեստ ու քաղաքավարի ասաց նա:

— Դրա համար էլ, — շարունակեց իշխան Լիմոնը, — ես ուզում եմ նրան պարգևատրել Արծաթե Բեղի շքանշանով: Այստեղ եկեք, իմ Լիմոններ:

Պալատականներն անմիջապես հայտնվեցին:

— Այստեղ բերեք Արծաթե Բեղի ասպետի թագը:

Բերեցին թագը, որն իրենից գլխի շուրջը պսակի նման ոլորած բեղ էր ներկայացնում: Յասկանալի է, որ բեղը շինված էր մաքուր արծաթից:

Սոխ Պրասն իրեն կորցրեց: Նա կարծում էր, թե իրեն հարցաքննության են բերել, մինչդեռ նման պատվի են արժանացնում:

Նա հարգանքով խոնարհվեց իշխանի առաջ, որն անձամբ թագը դրեց նրա գլխին, գրկեց և համբուրեց բեղերը, նախ աջ, հետո ձախ բեղը: Ապա իշխանը վեր կացավ և ցրվածության պատճառով մտածելով, թե ինչ որ պետքն է արեց, ուզում էր գնալ:

Այստեղ ասպետ Պոմիդորը կռացավ և նրա ականջին շշնջաց.

— Ձերդ մեծություն, հարգանքով հիշեցնում եմ ձեզ, որ դուք ասպետական կոչում տվեցիք մի հայտնի հանցագործի:

— Այն բռաբեկ, երբ ես նրան ասպետ դարձրի, — գոռոզաբար ասաց իշխանը, — նա այլևս հանցագործ չէ: Չնայած դրան, եկեք հարցաքննենք:

Եվ վերադառնալով սոխ Պրասի մոտ, իշխանը հարցրեց, թե հայտնի՞ է նրան ուր են փախել ձերբակալվածները: Սոխ Պրասն ասաց, որ ոչինչ չգիտի: Յետո նրան հարցրին, թե գիտի՞ որտեղ է թաքցրած Դդումի տունը, Սոխ Պրասը նորից պատասխանեց, որ իրեն ոչինչ հայտնի չէ:

Սինյոր Պոմիդորը կատաղեց

— Ձերդ մեծություն, այս մարդը խաբում է: Ես առաջարկում եմ նրան կալանքի ենթարկել և բաց չթողնել՝ մինչև ճշմարտությունը չասի մեզ: Ամբողջ ճշմարտությունը, և միայն ու միայն ճշմարտությունը:

— Շանտ լավ, շանտ լավ, — ձեռքերը շփելով հաստատեց իշխան Լիմոնը:

Նա բոլորովին մոռացել էր, որ մի քանի րոպե առաջ Սոխ Պրասին պարզևատրել էր շքանշանով և ուրախացավ, որ մարդ տանջելու առիթ է լինում: Նա շատ էր սիրում ներկա լինել ամենադաժան խոշտանգումներին:

— Ինչպիսի կտտանքի ենթարկենք հիմա, — հարցրեց դահիճը, որ իշխանին ներկայացավ իր բոլոր գործիքներով՝ եղանով, կացնով, ունելիով, ինչպես նաև լուցկու տուփով:

Լուցկին խարույկ վառելու համար էր:

— Պոկեցե՞ք դրա բեղերը: Երևի նրա համար աշխարհում ամենաթանկ բանը բեղերն են:

Դահիճն սկսեց Սոխ Պրասի բեղերը քաշել, բայց նրանք այնքան ամուր էին, սպիտակեղենի ծանրությունից այնպես էին կոփվել, որ դահիճն իզուր էր չարչարվում ու քրտինք թափում: Բեղերը չէին պոկվում, և Սոխ Պրասը ոչ մի ցավ չէր զգում:

Վերջ ի վերջո դահիճն այնպես հոգնեց, որ ուշաթափ ընկավ: Սոխ Պրասին մի գաղտնի խուց տարան և նրա գոյության մասին մոռացան: Նա ստիպված կերակրվում էր հում մկներով, և նրա բեղերն այնքան երկարեցին, որ երեք անգամ պտտվում էին գլխի շուրջը:

Սոխ Պրասից հետո հարցաքննության կանչեցին սինյոր Սիսեռիկին:

Փաստաբանը ընկավ իշխանի առաջ և սկսեց համբուրել նրա ոտներն ու աղաչել.

— Ներեցե՞ք ինձ, ձերդ մեծություն, ես մեղավոր չեմ:

— Վանո է, շանտ վատ է, սինյոր փաստաբան, եթե դուք մեղավոր լինեիք, ես ձեզ անմիջապես կազատեի: Բայց եթե դուք ոչնչով

մեղավոր չեք, ապա ձեր գործը շատ վատ ընթացք կստանա:
Սպասե՛ք, սպասե՛ք... Իսկ դուք կարո՞ղ եք մեզ ասել, թե որտեղ են
փախել գերիները:

— Ո՛չ, ձերո՞ւ մեծություն, — ամբողջովին դողալով
պատասխանեց սինյոր Սիստեռիկը: Նա իրոք չգիտեր:

— Ա՛յ, տեսնո՞ւմ եք, — բացականչեց իշխան Լիմոնը, — էլ ինչպե՞ս
ձեզ ազատենք, երբ ոչինչ չգիտեք:

Սինյոր Սիստեռիկը մի աղաչական հայացք գցեց Պոմիդորի վրա,
բայց ասպետը ձևացավ, թե շատ տարված է իր մտքերով և աչքերն
ուղղեց առաստաղին:

— Սինյոր Սիստեռիկը հասկացավ, որ ամեն ինչ կորած է: Բայց
Նրա հուսահատությունն իսկական կատաղության փոխվեց, երբ
տեսավ, որ իր տերն ու խնամատարը, որին նա ջերմեռանդությամբ
ծառայում էր, իրեն այդքան նենգորեն լքեց:

— Իսկ դուք գոնե կարո՞ղ եք ասել, թե որտեղ է պահված
չարագործ Դդումի տնակը:

Փաստաբանն այդ գիտեր, որովհետև ժամանակին նա ականջ էր
դրել Չիպոլինոյի և իր համագյուղացիների խոսակցությանը:

«Եթե ես գաղտնիքը բացեմ, — մտածեց նա, — ինձ բաց
կթողնեն: Բայց ի՞նչ օգուտ: Ես հիմա տեսնում եմ, թե իմ նախկին
բարեկամներն ու հովանավորներն ովքեր են: Երբ պետք էր իմ
գիտելիքներն ու ընդունակություններն օգտագործել ուրիշների
խաբելու համար, Նրանք ինձ ճաշի ու ընթրիքի էին հրավիրում, իսկ
հիմա, դժբախտության մեջ, լքեցին: Ո՛չ, այլևս չեմ ուզում սրանց
օգնել: Ինչ ուզում է լինի, սրանք ինձանից ոչինչ չեն իմանա»:

Եվ նա բարձրաձայն հայտարարեց.

— Ո՛չ, իշխան, ոչինչ չգիտեմ:

— Խաբում ես, — աղաղակեց Պոմիդորը, — դու լավ գիտես,
բայց չես ուզում ասել:

Այստեղ սինյոր Սիստեռիկն ազատություն տվեց իր գայրույթին:
Նա, որպեսզի ավելի բոյով երևա, բարձրացավ թաթերի վրա, մի
արհամարհական հայացք նետեց Պոմիդորին և ճչաց.

— Այր, գիտեմ, հիանալի գիտեմ, թե որտեղ է տնակը պահված, բայց ձեզ երբեք չեմ ասի:

Իշխան Լիմոնը մռայլվեց:

— Լավ մտածեք, — ասաց նա, — եթե գաղտնիքը չասեք, ես ձեզ ստիպված կախել կտամ:

Սիւյոր Սիստեռիկի ծնկները սարսափից սկսեցին դողալ: Նա երկու ձեռքով բռնեց իր պարանոցը, կարծես թե ուզում էր օղակից ազատվել, բայց նրա վճիռն անդրդվելի էր:

— Կախեցե՞ք ինձ, — ասաց նա հպարտ, — անմիջապես կախեցե՞ք:

Այս խոսքերն ասելով, կանաչ Սիստեռիկն ամբողջովին սպիտակեց և հնձած խոտի պես ընկավ գետնին:

Սիւյոր Մադդանոսն արձանագրության մեջ գրեց.

«Մեղադրյալը ամոթից և խղճի խայթից գիտակցությունը կորցրեց»:

Հետո իր վանդակավոր թաշկինակով մաքրեց քիթը և մատյանը փակեց: Հարցաքննությունն ավարտված էր:

Գլուխ տասներեքերորդ

Այն մասին, թե ինչպես սիւյոր Սիստեռիկը հակառակ իր ցանկության փրկեց ասպետի կյանքը

Երբ սիւյոր Սիստեռիկն ուշքի եկավ, շուրջը անթափանց խավար էր տիրում: Փաստաբանը մտածեց, թե իրեն երևի արդեն կախել են:

«Ես մեռել եմ, — մտածեց նա, — և ի՞նչ խոսք, ընկել եմ դժոխք: Ինձ միայն մի բան է զարմացնում՝ ինչո՞ւ այստեղ կրակն այսքան քիչ է: Ծիշտն ասած, իսկի էլ չկա: Շատ զարմանալի է: Դժոխք՝ առանց դժոխքի կրակի»:

Այդ ժամանակ նա լսեց, թե ինչպես է խցի փականի մեջ բանալին ճռռում: Սիստեռիկը, քանի որ փախչելու տեղ չունեւր, կուչ եկավ

անկյունում և սարսափած սկսեց նայել բացվող դռանը: Նա կարծում էր, թե հիմա կտեսնի Լիմոնուկ-պահակներին և դահճին:

Լիմոնուկներն իսկապես որ հայտնվեցին, բայց նրանց հետ եկավ... ձեր կարծիքով ռվ. ինքը՝ ասպետ Պոմիդորը իր սեփական անձով՝ ձեռքերն ու ոտները կապած:

Սիկյոր Սիսեռիկն ուզում էր բռունցքներով հարձակվել նրա վրա, բայց հետո իրեն զսպեց: «Այս ի՞նչ ես անում, չէ՞ որ նա էլ ինձ նման կալանավոր է»:

Եվ թեև Սիսեռիկն իր նախկին տիրոջը բուլորովին չէր խղճում, այնուամենայնիվ հարցրեց.

— Ուրեմն ձե՞զ էլ են ձերբակալել:

— Ձերբակալե՞լ: Ավելի լավ է ասեք, որ ես մահվան եմ դատապարտված: Վաղը առավոտյան ինձ կկախեն ձեզանից անմիջապես հետո: Դուք երևի չգիտեք, որ մենք գտնվում ենք կախաղանի դատապարտվածների խցում:

Փաստաբանը զարմանքից չէր կարողանում ուշքի գալ: Նա գիտեր, որ իրեն մահապատիժ է սպասում, բայց երբեք չէր հավատա, որ իր հետ կկախեն նաև ասպետին:

— Իշխան Լիմոնը շատ էր զայրացել, — շարունակեց Պոմիդորը, — որ իրեն չի հաջողվում մեղավորներին բռնել: Եվ գիտե՞ք, թե վերջ ի վերջո նա ինչ հնարեց: Կոմսուհիների, հյուրերի ու ծառաների ներկայությամբ ինձ մեղադրեց այն բանի մեջ, թե ես՝ ասպետ Պոմիդորս դավադրության գլխավոր կազմակերպիչն եմ: Դրա համար էլ հենց նա ինձ կախաղանի դատապարտեց: Այո՛, այո՛, կախաղանի:

Սիկյոր Սիսեռիկը չգիտեր ուրախանա՞մ, որ ասպետին այդքան ծանր պատիժ է սպասում, թե՞ խղճա նրան: Վերջապես նա ասաց.

— Դե եթե այդպես է, արիացեք, ասպետ: Կմեռնենք միասին:

— Այնքան էլ միսիթարական չէ, — նկատեց սիկյոր Պոմիդորը: — Ինչևէ, թույլ տվեք ներողություն խնդրել ձեզանից՝ հարցաքննության ժամանակ ձեր նկատմամբ ցուցաբերած անտարբերության համար: Դուք պիտի հասկանաք, այդ ժամանակ իմ բախտն էլ էր վճռվում:

— Դե այդ արդեն անցած-գնացած բան է... եղածի մասին չխոսենք, — սիրալիր առարկեց սինյոր Սիստեռիկը, — մենք դժբախտության ընկերներ ենք: Աշխատենք իրար օգնել:

— Ես էլ եմ այդպես կարծում, — մի փոքր աշխուժանալով համաձայնեց սինյոր Պոմիդորը: — Շատ ուրախ եմ, որ դուք հիշաչար չեք:

Նա գրպանից մի կտոր տորտ հանեց և եղբոր պես կիսվեց փաստաբանի հետ: Փաստաբանն իր աչքերին չէր հավատում: Նա ասպետից այդքան բարություն ու առատաձեռնություն չէր սպասում:

— Դժբախտաբար նրանք ինձ սրանից ավելի ոչինչ չթողեցին, — տխրությամբ գլուխն օրորելով, ասաց Պոմիդորը:

— Այո, այսպես է մեր մեղավոր աշխարհը: Դեռ երեկ դուք ամրոցի լիակատար տերն ու տնօրենն էիք, իսկ այսօր գերի եք միայն:

Ասպետ Պոմիդորը ոչինչ չէր պատասխանում և շարունակում էր տորտ ուտել:

— Գիտե՞ք, — վերջապես ասաց նա, — ինձ նույնիսկ մի փոքր դուր է գալիս այդ չարածճի Չիպուլինոյի արարքը: Ճիշտն ասած, նա շատ ճարպիկ տղա է և ինչ որ անում էր՝ աղքատներին օգնելու համար էր, նրան իր բարի սիրտն էր այդպես թելադրում:

— Ես էլ եմ այդպես կարծում, — համաձայնեց սինյոր Սիստեռիկը:

— Ո՞վ գիտե, — շարունակեց Պոմիդորը, — ո՞վ գիտե, թե որտեղ են նրանք հիմա, այդ բանտից փախածները: Չավատացեք, ես հաճույքով նրանց համար որևէ լավ բան կանեի:

— Եվ ի՞նչ կարող եք դուք նրանց համար անել այս վիճակում:

— Ա՛խ, դուք իրավացի եք, ես հիմա նրանց օգնելու համար շատ անզոր եմ: Բացի այդ, ո՞վ գիտե, թե որտեղ են նրանք:

— Ես էլ չգիտեմ, — սինյոր Պոմիդորի վարմունքից շոյված անկեղծորեն ասաց սինյոր Սիստեռիկը: — Ինձ միայն հայտնի է, թե որտեղ է թաքցրած քավոր Դոմինի տնակը:

Այդ լսելով ասպետը լեզուն կծեց:

«Պոմիդոր, — ասաց նա ինքն իրեն, — ուշադիր լսիր, թե ինչ կասի այս հիմարը. գուցե դեռ փրկության հույս ունենաս»:

— Դուք իսկապէս գիտեք, — հարցրեց նա:

— Իհարկե գիտեմ, բայց երբեք ոչ ոքի չեմ ասի: Ես այլևս այդ աղքատ մարդկանց վնաս տալու միտք չունեմ:

— Դա ձեզ պատիվ է բերում, սինյոր փաստաբան: Ես էլ գաղտնիքը չէի ասի. ես չէի ուզէնա, որ իմ պատճառով այդ աղքատների գլխին նոր փորձանք գար:

— Որ այդպես է, — ասաց սինյոր Սիսեռիկը, — ես ուրախությամբ կսեղմեմ ձեր ձեռքը:

Սինյոր Պոմփոյորը ձեռքը մեկնեց նրան, և սինյոր Սիսեռիկը պինդ սեղմեց այն: Վերջ ի վերջո փաստաբանն այնքան հուզվեց, որ ցանկացավ իր դժբախտության ընկերոջ հետ մի քիչ անկեղծորեն զրուցել:

— Դուք միայն պատկերացրեք, — խորհրդավոր շշուկով ասաց նա, — նրանք տնակը թաքցրել են ամրոցի մոտերքում, իսկ մենք այնքան հիմար էինք, որ իսկի չէինք էլ կասկածում:

— Իսկ որտե՞ղ էին նրանք թաքցրել, — անտարբերությամբ հարցրեց սինյոր Պոմփոյորը:

— Հիմա արդէն կարող եմ ձեզ ասել, — դառնորեն ժպտաց սինյոր Սիսեռիկը: — Չէ որ վաղը մենք երկուսս էլ կմեռնենք և գաղտնիքը մեզ հետ կտանենք գերեզման:

— Դե իհարկե: Դուք լավ գիտեք, որ վաղը մեզ մահապատժի կենթարկեն և մեր աճյունը քամուն կտան:

Այստեղ փաստաբան Սիսեռիկն ավելի մոտեցավ իր խոսակցին և նրա ականջին կամաց ասաց, որ քավոր Դոմինի տնակը գտնվում է անտառում, և նրան պահպանում է քավոր Հավամրգին:

Ասպետն այդ բոլորը լսեց, ջերմորեն գրկեց փաստաբանին և բացականչեց.

— Իմ թանկագին բարեկամ, ես այնքան շնորհակալ եմ, որ ինձ հայտնեցիք այդ կարևոր լուրը: Դուք փրկում եք իմ կյանքը:

— Ես փրկում եմ ձեր կյանքը: Կատանկ եք անում, ինչ է:

— Բոլորովին էլ ոչ, — տեղից վեր թռչելով ասաց Պոմփոյորը:

Նա նետվեց դեպի դուռը և ինչքան ուժ ուներ սկսեց բռունցքներով ծեծել, մինչև բանտապահ Լիմոնուկները բաց արեցին այն:

— Այս րոպեիս ինձ տարեք նորին մեծությունն իշխան Լիմոնի մոտ, — հրամայեց սինյոր Պոմիդորը, — ես նրան շատ կարևոր բան ունեմ հաղորդելու:

Ասպետին անմիջապես ամրոց տարան: Նա իշխանին պատմեց ամեն ինչ, որ լսել էր սինյոր Սիսեռիկից և ներումն ստացավ:

Իշխան Լիմոնը շատ գոհ մնաց և հրամայեց իր Լիմոնուկներին հաջորդ օրը սինյոր Սիսեռիկի մահապատժից հետո գնալ անտառ և բավոր Դդումի տնակը բերել:

Գլուխ տասնչորսերորդ

Որտեղ պատմվում է, թե ինչպես սինյոր Սիսեռիկը կառավարան գնաց

Գյուղական հրապարակում կախաղան պատրաստեցին: Դատապարտվածը պետք է բարձրանար տախտակամածը, որի մեջտեղում, ուղիղ կախաղանի տակ, մի փոքրիկ դռնակ կար: Սինյոր Սիսեռիկն օղակը վզին այդտեղ պետք է ընկներ:

Երբ եկան դատապարտվածին հրապարակ տանելու, սինյոր Սիսեռիկը որպես փորձված փաստաբան, ամեն ինչ արեց, որ ժամանակը երկարի: Օրենքի գանազան հոդվածներ վկայակոչելով, նա պահանջեց, որ նախ իրեն սափրվելու ժամանակ տան, հետո ցանկացավ գլուխը լվանալ, ապա հայտնաբերեց, որ ոտքերի եղունգները երկարել են, և ուզում է մահապատժից առաջ եղունգները կտրել:

Դահիճը, որ ժամանակ չէր ուզում կորցնել, սկսեց վիճել, բայց վերջ ի վերջո զիջեց: Հին սովորության համաձայն, մահվան դատապարտվածի վերջին ցանկությունը պետք է կատարվեր: Դրա համար էլ մի ամանով տաք ջուր, տաշտ, մկրատ և ածելի բերեցին բանտ: Փաստաբան Սիսեռիկն առանց շտապելու սկսեց իր գործը: Երկար ժամանակ նա կարգի էր բերում իրեն՝ սափրվում էր,

լվացվում և համարյա երկու ժամ անընդհատ զբաղված էր եղունգները կտրելով: Չնայած դրան, նա վաղ թե ուշ ստիպված էր գնալ մահապատժի վայրը:

Երբ Սիսեռիկը բարձրանում էր տախտակամածը, սարսափը պատեց նրան: Այստեղ, կառափնարանի աստիճանների վրա նա առաջին անգամ պարզորոշ կերպով զգաց, որ պետք է մեռնի: Այդքան փոքրիկ, այդքան չաղլիկ, այդքան կանաչ, մաքուր լվացված գլխով ու կտրված եղունգներով, նա այնուամենայնիվ պետք է մեռեր:

Թմբուկները չարագուշակ կերպով թնդացին: Դահիճն օղակը հագցրեց փաստաբանի վզին, մինչև տասներեք հաշվեց և կոճակը սեղմեց: Ոտների տակի դռնակը բացվեց, և սինյոր Սիսեռիկն օղակը ձգելով ընկավ խավարի մեջ: Դրանից առաջ նա կարողացավ մտածել. «Այս անգամ, թվում է, թե իսկականից մեռա»:

Հանկարծ նա մի խուլ ձայն լսեց.

— Կտրեցե՛ք, շուտ կտրեցե՛ք, սինյոր Չիպոլինո: Այստեղ այնքան լույս է, որ ես ոչինչ չեմ տեսնում:

— Ինչ-որ մեկը կտրեց փաստաբանի պարանոցը խեղդող պարանը և նորից լսվեց նույն ձայնը.

— Մեր կարտոֆիլի հիանալի հյուրից մի կում տվե՛ք դրան: Մենք, իլուրդներս, երբեք չենք բաժանվում այդ հրաշալի դեղից:

Իսկ ի՞նչ պատահեց. ի՞նչ զարմանալի դիպվածով փրկվեց փաստաբան Սիսեռիկի կյանքը:

Գլուխ տասնհինգերորդ

Որ բացատրում է նախորդ գլուխը

Իսկ ահա թե ինչ էր պատահել: Մորին, որ գիտեր ամրոցում տեղի ունեցող ամեն մի իրադարձություն, վազեց անտառ և Բողկին պատմեց սինյոր Սիսեռիկին սպառնացող վտանգի մասին: Իսկ Բողկը դա անմիջապես հայտնեց իր բարեկամ Չիպոլինոյին: Նա Չիպոլինոյին գտավ քավոր Դոլոմի տնակից ոչ այնքան հեռու ընկած

մի անձավում, որտեղ տղան թաքնվում էր մնացած փախստականների հետ:

Չիպուլինոն ուշադիր լսեց, իսկ հետո վարպետ Խաղողից բիզը ինդրեց, որ ծոծրակը քորի, քանի որ հարցը շատ լուրջ էր, և որևէ ելք գտնելու համար անհրաժեշտ էր մի լավ քորվել:

Մի քիչ մտածելով Չիպուլինոն բիզը վերադարձրեց վարպետ Խաղողին և կարճ ասաց.

— Շնորհակալություն, գիտեմ, թե ինչ պիտի անել:

Եվ անմիջապես վազելով ինչ-որ տեղ գնաց: Ոչ ոք չկարողացավ հարցնել, թե ինչ է նա մտածել:

Քավոր Դդումը խորը հառաչելով, ասաց.

— Ախր եթե Չիպուլինոն ասում է, որ մի բան հնարել է, հանգիստ մնացեք, նա շուտով ամեն ինչ կկարգավորի:

Սակայն Չիպուլինոն շատ թափառեց դաշտերում ու մարգագետնում՝ մինչև գտավ իր փնտրածը: Վերջապես հասավ ամբողջովին փխրուն հողաթմբերով ծածկված մի մարգագետին: Ամեն բույս այստեղ սուկի նման մի նոր փխրուն հողաթումբ էր բարձրանում:

— Չիպուլինոն որոշեց սպասել: Եվ ահա, երբ մի թումբ բարձրացավ համարյա թե նրա ոտների մոտ, նա ծունկի իջավ և կանչեց.

— Սինյոր Խլուրդ, սինյոր Խլուրդ, այդ ես եմ, Չիպուլինոն:

— Յ՛րմ, այդ դ՛րև էք, — պատասխանեց Խլուրդը չորությամբ, — ճիշտն ասած, մեր առաջին հանդիպումից հետո ես միայն կիսով չափ կուրացա: Երևի դուք մի նոր ստորերկրյա ճանապարհորդություն եք առաջարկում, որն ինձ լրիվ կզրկի տեսողությունից:

— Այդպես մի՛ ասեք, սինյոր Խլուրդ, ես երբեք չեմ մոռանա ձեր լավությունը: Ձեր շնորհիվ ես հանդիպեցի իմ բարեկամներին: Մեզ հաջողվեց ազատվել, ու մենք մեզ համար ժամանակավոր ապաստարան ճարեցինք մոտակա անձավում:

— Շնորհակալ եմ նորության համար, բայց այդ ինձ բոլորովին չի հետաքրքրում, ցտեսություն:

— Սիւնոր Խլուրդ, լսեցեք ինձ, սիւնոր Խլուրդ, — ձայն տվեց Չիպուլինոն:

— Ինչ արած, խոսեցեք, միայն մի կարծեք, թե ես ձեզ առաջվա պես կօգնեմ:

— Գործը ոչ թե ինձ է վերաբերում, այլ մեր գյուղական փաստաբանին, որին Սիսեռիկ են ասում: Նրան վաղը առավոտյան կախելու են:

— Շատ էլ լավ կանեն, — բարկացած պատասխանեց Խլուրդը, — ես հաճույքով կօգնեի, որ պարանը գցեն նրա վիզը: Տանել չեմ կարողանում փաստաբաններին, իսկ սիսեռ բուրրովին չեմ սիրում:

Խեղճ Չիպուլինոն քիչ չհարչարվեց, որպեսզի համառ Խլուրդին համոզի: Բայց նա հավատացած էր, որ չնայած իր կոպտությանը Խլուրդը ոսկի սիրտ ունի և երբեք չի հրաժարվի արդար գործին օգնելուց:

Այդպես էլ եղավ: Վերջ ի վերջո Խլուրդը մի քիչ մեղմացավ և հատ-հատ, հեզությամբ ասաց.

— Բավական է շաղակրատենք, սիւնոր Չիպուլինո: Ինչպես երևում է, դուք ճարպիկ լեզու ունեք: Ավելի լավ է ցույց տվեք, թե ճիշտ կողմը փորեմ:

— Հյուսիս-հյուսիս-արևելքի ուղղությամբ, — ուրախությամբ և վեր-վեր թռչելով պատասխանեց Չիպուլինոն:

Կարճ ժամանակում Խլուրդը մի լայն ու երկար միջանցք փորեց մինչև կառափնարանի տակը: Այստեղ նա ու Չիպուլինոն նստեցին ու սպասեցին, թե ինչ կլինի: Երբ փոքրիկ դռնակը բացվեց, և սիւնոր Սիսեռիկը պարանը վզին ընկավ ցած, նա մի ակնթարթում պարանը կտրեց և փաստաբանին կարտոֆիլի բուժիչ հյութ տվեց խմելու, որ Խլուրդը միշտ հետը ման էր ածում: Բացի այդ, Չիպուլինոն կամաց սկսեց խփել փաստաբանի այտերին: Կարտոֆիլի հյութը և ապտակները փաստաբանին ուշքի բերեցին: Սիւնոր Սիսեռիկն աչքերը բացեց, բայց դե գիտե՞ք, այնքան շշմած էր, որ իր փրկությանը չէր հավատում:

— Օ՛, սիւնոր Չիպուլինո, — բացականչեց նա, — ուրեմն դուք էլ ինձ նման մեռել եք: Ինչ երջանկություն է, որ մենք հանդիպեցինք դրախտում:

— Ուշքի եկ, փաստաբան, — միջամտեց Խլուրդը: — Այստեղ ոչ դրախտ կա, ոչ էլ դժոխք: Ես էլ ոչ սուրբ Պետրոսն եմ, ոչ էլ սատանա, այլ ծեր Խլուրդն եմ և պետք է գնամ գործիս: Դրա համար էլ եկեք ինչքան կարելի է այստեղից շուտ դուրս գանք, և աշխատեցեք իմ աչքին քիչ երևալ: Ամեն անգամ, երբ ես հանդիպում եմ Չիպուլինոյին, արևահարվում եմ:

Իրականում կառափնարանի տակ կատարյալ խավար էր տիրում, բայց այդ նկուղն էլ այնքան լուսավոր էր թվում, որ նրա աչքերն ու գլուխը ցավեցին:

Վերջապես սինյոր Սիսեռիկը գլխի ընկավ, որ Չիպուլինոյի ու Խլուրդի շնորհիվ փրկվել է մահից: Փաստաբանն անընդհատ շնորհակալություն էր հայտնում իր փրկիչներին: Սկզբում նա առանձին-առանձին գրկեց նրանց, հետո ուզեց երկուսին միասին գրկել, բայց դա չհաջողվեց, քանի որ ձեռները շատ կարճ էին:

Երբ վերջապես Սիսեռիկը հանգստացավ, երեքով ճամփա ընկան արդեն պատրաստի ստորանցքով: Հասնելով ստորանցքի ծայրին, Խլուրդը մի միջանցք էլ փորեց մինչև այն անձավը, որտեղ թաքնվում էին վարպետ Խաղողը, քավոր Դդումը, պրոֆեսոր Տանձը և մյուս փախստականները:

Փաստաբանին և նրա փրկարարներին նրանք դիմավորեցին ուրախ բացականչություններով: Բոլորն էլ մոռացան, որ դեռ վերջերս սինյոր Սիսեռիկն իրենց թշնամին էր:

Իր նոր բարեկամներին հրաժեշտ տալով, Խլուրդը չկարողացավ արցունքները պահել:

— Սինյորներ, — ասաց նա, — եթե դուք գոնե մի կաթիլ առողջ դատողություն ունենայիք, դուք ինձ հետ կբնակվեիք հողի տակ: Այնտեղ ոչ կախաղան կա, ոչ ասպետ Պոմիդոր, ոչ իշխան Լիմոն, ոչ էլ նրա Լիմոնուկները: Հանգստություն և մթություն, ահա թե ինչն է կարևոր այս աշխարհում: Բոլոր դեպքերում, եթե ես ձեզ պետք գամ, ահա այս անցքի մեջ մի գրություն գցեք: Ես երբեմն կգամ այստեղ, որպեսզի տեսնեմ, թե ինչպես են գնում ձեր գործերը: Իսկ այժմ՝ հաջողություն ձեզ:

Նրանք ջերմորեն հրաժեշտ տվին ծեր Խլուրդին, և դեռ բոլորը չէին ողջագուրվել, երբ սինյոր Սիսեռիկն այնպես խփեց իր ճակատին, որ չկարողացավ ոտքին մնալ և ընկավ մեջքի վրա:

— Ինչ թափթփվածն եմ ես, ինչ բերանբացը: Իմ ցրվածությունը վերջ ի վերջո ինձ կկործանի:

— Դուք որևէ բան եք մոռացել, — փաստաբանին գետնից բարձրացնելով և նրա շորերից փոշին թափ տալով, քաղաքավարությամբ հարցրեց սամաներ Դդումը:

Այստեղ սինյոր Սիստեռիկը փախստականներին պատմեց Պոմիդորի հետ ունեցած իր խոսակցության և ասպետի նոր դավաճանության մասին:

Նա իր ճառն ավարտեց հետևյալ խոսքերով.

— Սինյորներ, գիտե՞ք, որ հենց այս րոպեին, երբ մենք այստեղ գրուցում ենք, Լիմոնուկները քրքրում են ամբողջ անտառը: Նրանց հրամայված է գտնել ձեր տնակը և տանել ամբողջ դարբասի մոտ:

Առանց մի խոսք ասելու Չիպոլինոն նետվեց անտառի խորքը և շուտով հայտնվեց կաղնու տակ քավոր Չավամրգու մոտ: Բայց տնակն արդեն այնտեղ չէր...

Քավոր Չավամրգին կաղնու արմատների մոտ կուչ եկած հոնգուր-հոնգուր լար էր լինում:

— Ա՛խ, իմ սիրուն տնակ, իմ լավ, հարմարավետ տնակ:

— Լիմոնուկներն այստեղ եղել են, — հարցրեց Չիպոլինոն:

— Այո՛, այո՛, նրանք ամեն ինչ տարան, և՛ տնակը, և՛ մկրատի կեսը, և՛ ածելին, և՛ հայտարարությունը, և՛ նույնիսկ զան-գա-կը:

Չիպոլինոն ծոծորակը քորեց: Այս անգամ նրան երկու բիզ էր հարկավոր, որ կարողանար մի բան հնարել, բայց նա նույնիսկ մեկը չունեց: Քնքշորեն շոյելով քավոր Չավամրգու ուսերը, Չիպոլինոն նրան տարավ քարանձավ, իր բարեկամների մոտ:

Ո՛չ ոք նրանց հարց չտվեց: Առանց խոսքի էլ բոլորը հասկացան, որ տնակն անհայտացել է, և որ այդ իրենց երդվյալ թշնամու՝ ասպետ Պոմիդորի արածն է:

Գլուխ տասնվեցերորդ

Միստր Գազարոյի և Չասիր Բռնիր շան արկածները

Միստր Գազարոն...

Սպասեցեք մի րոպե. իսկ ղ՛վ է միստր Գազարոն: Այդ անձնավորության մասին դեռ խոսք չի եղել: Որտեղի՞ց նա հայտնվեց: Ի՞նչ է պետք նրան: Մե՞ծ է նա թե փոքր, հա՞ստ է թե բարակ:

Հիմա ձեզ ամեն ինչ կբացատրեմ:

Համոզվելով, որ փախստականների հետքն անգամ չկա, իշխան Լիմոնը հրամայեց ամբողջ շրջապատը փոցխել: Լիմոնուկները զինվեցին փոցխերով և սկսեցին դաշտերն ու անտառները, մարգագետիններն ու պուրակները փոցխել, որպեսզի մեր բարեկամներին գտնեն: Չինվորներն աշխատում էին օր ու գիշեր, նրանք մի ամբողջ կուլտ թուղթ, ցախ և օձի չորացած կաշի հավաքեցին, բայց Չիպուլինոյի և նրա բարեկամների հետքն էլ չգտան:

— Անգործներ, — կատաղեց իշխանը, — միայն կարողացաք փոցխերը ջարդել և բոլոր մատները թողնել անտառում: Դրա համար արժեք ձեր մատները մեկ-մեկ ջարդել:

Չինվորները դողում էին և վախից ատամները խփում իրար: Մի քանի րոպե անընդհատ լսվում էր. «չը՛խկ-չը՛խկ-չը՛խկ», կարծես կարկուտ էր գալիս:

— Ես կարծում եմ, որ պետք է հետախուզության մասնագետի դիմել, — խորհուրդ տվեց պալատական Լիմոններից մեկը:

— Իսկ դա ի՞նչ բան է:

— Պարզ ասած՝ խուզարկու: Ասենք դուք, ձերդ մեծություն, ճանապարհին կորցնում եք ձեր կոճակը, խնդրեմ, դիմեցեք խուզարկության բյուրոյին, և խուզարկուն իսկույն կգտնի կտա: Նույն բանը կլինի, եթե ձերդ մեծության զինվորներից մի գումարտակ կորչի, կամ բանտից փախչեն ձերբակալվածները: Խուզարկուն հերիք է, որ դնի իր հատուկ ակնոցը, իսկույն կգտնի ինչ որ կորել է:

— Որ այդպես է, խուզարկու կանչեցեք:

— Ես ճանաչում եմ շատ հարմար մի արտասահմանյան մասնագետի, որն այդ գործով է զբաղվում, — առաջարկեց պալատականը, — նրան միստր Գազարոն են ասում:

— Միստր Գազարոն... Ահա թե ով է այդ միստր Գազարոն: Քանի դեռ ամբողջ չի ընկել, ես ձեզ պատմեմ, թե նա ինչպես է հազնված և ինչ գույնի բեղեր ունի: Ասենք, բեղերի մասին ես ձեզ ոչինչ չեմ կարող ասել, այն պարզ պատճառով, որ նիհար, կարմրաշեկ Գազարոն բեղեր չունի: Դրա փոխարեն նա խուզարկու շուն ունի, որի անունն է Յասիր Բռնիր: Նա օգնում է միստր Գազարոյին գործիքները տեղափոխելիս: Միստր Գազարոն երբեք ճանապարհ չի ընկնի առանց իր հետ տասնյակ դիտախողովակներ ու հեռադիտակներ, հարյուրավոր կողմնացույցներ ու տասնյակ ֆոտոապարատներ վերցնելու: Բացի այդ, նա ամեն տեղ գնալիս իր հետ մանրադիտակ, թիթեռ բռնելու ցանց և մի տոպրակ աղ է վերցնում:

— Իսկ ինչի՞նչ է պետք աղը, — հարցրեց նրան Իշխանը:

— Ձերո՞ գերազանցության թույլտվությամբ՝ ես աղը լցնում եմ հետապնդվող որսի պոչին և հետո նրան բռնում այս գործիքով, որը թիթեռ բռնելու հսկայական ցանցի է նման:

Իշխան Լիմոնը հառաչեց.

— Վախենում եմ, թե այս անգամ ձեզ աղ պետք չգա: Ինչքան ինձ հայտնի է, փախած կալանավորները պոչ չեն ունեցել:

— Շատ լուրջ բան է դա, — խստորեն նկատեց միստր Գազարոն: — Եթե նրանք պոչ չունեն, էլ ինչպե՞ս պիտի բռնեմ նրանց պոչից, որտեղ պիտի աղ լցնեմ: Ձերո՞ մեծության թույլտվությամբ պետք է ասեմ, որ դուք ընդհանրապես պետք է կալանավորներին արգելեիք բանտից փախչել: Կամ, ծայրահեղ դեպքում, հարկավոր էր նախքան փախչելը բանտարկյալներին պոչ կպցնել, որպեսզի իմ շունը կարողանար նրանց բռնել:

— Ես կինոյում տեսել եմ, որ երբեմն փախստականներին բռնում են առանց աղի, — նորից միջամտեց նույն պալատականը, որը խորհուրդ էր տվել խուզարկու բերել:

— Դա հնացած սիստեմ է, — արհամարհանքով առարկեց միստր Գազարոն:

— Փնայտ է, փաստ: Շ-շանո հնացած սիստեմ է, — կրկնեց նրա շունը:

Այդ շունը մի առանձնահատկություն ուներ. նա հաճախ էր կրկնում իր տիրոջ խոսքերը, ավելացնելով իր անձնական դատողությունները, որոնք սովորաբար արտահայտվում էին «Շ-շանտ, շ-շանտ», «անշնշտ, անշնշտ», կամ «փանստ է, փանստ» խոսքերով:

— Ի միջի այլոց, փախստականներին բռնելու մի ուրիշ միջոց էլ գիտեմ, — ասաց միստր Գազարոն:

— Փանստ է, փանստ: Մենք շ-շանտ, շ-շանտ միջոցներ ունենք, — հպարտորեն պոչը շարժելով հաստատեց շունը:

— Կարելի է աղի փոխարեն պղպեղ օգտագործել:

— Ճիշտ է, ճիշտ, — հրճվանքով հավանություն տվեց իշխան Լիմոնը, — պղպեղը ցանեք նրանց աչքերի մեջ, և նրանք անմիջապես կհանձնվեն, ես նույնիսկ չեմ կասկածում, որ այդպես կլինի:

— Ես էլ եմ այդպես կարծում, — զգուշորեն նկատեց ասպետ Պոմիդորը, — բայց նախքան պղպեղն օգտագործելը, ըստ երևույթին, անհրաժեշտ կլինի փախստականներին գտնել, այդպես չէ:

— Դա մի քիչ դժվար է, — ասաց միստր Գազարոն, — բայց իմ գործիքների օգնությամբ ես կփորձեմ:

Միստր Գազարոն կրթված խուզարկու էր. նա առանց իր գործիքների ոչինչ չէր անում: Նույնիսկ, երբ քնելու էր գնում, զինվում էր երեք կողմնացույցով: Դրանցից մեկը՝ ամենամեծը, նրա համար, որպեսզի կարողանար աստիճանները գտնել, մյուսը՝ մի քիչ ավելի փոքրը, նրա համար էր, որպեսզի գտներ ննջարանի դուռը, իսկ ամենափոքրը՝ ննջարանում մահճակալը գտնելու համար էր:

Բալուկը իբր թե պատահմամբ անցավ միջանցքով, որպեսզի տեսնի նշանավոր խուզարկուին և նրա շանը: Եվ ինչքան զարմացավ, երբ տեսավ թե ինչպես միստր Գազարոն և շունը հատակին պառկած նայում էին մի կողմնացույցի:

— Ներեցեք, հարգելի սիկյորներ, — հետաքրքրվեց Բալուկը, — ես կուզեի իմանալ, թե դուք ի՞նչ եք անում հատակին պառկած: Գուցե դուք ուզում եք գորգի վրա գտնել փախստականների հետքերը և կողմնացույցով որոշել, թե նրանք ի՞ր կողմն են փախել:

— Ոչ, սիւնոր, ես ուղղակի իմ մահճակալն եմ փնտրում:
Հասարակ աչքով ամեն մարդ կարող է մահճակալը տեսնել, բայց խուզարկու մասնագետը պետք է որոնումները գիտական ձևով կատարի, համապատասխան տեխնիկայի միջոցով: Ինչպես ձեզ հայտնի է, կողմնացույցի մագնիսացված սլաքը միշտ թեքվում է դեպի հյուսիս: Նրա այդ հատկությունն ինձ իմ մահճակալը անսխալ կերպով գտնելու հնարավորություն է տալիս:

Սակայն, հետևելով իր կողմնացույցի սլաքին, նա շուտով գլուխը խփեց հայելուն, և քանի որ նա պնդածակատների ցեղից էր՝ հայելին հազար կտոր եղավ: Ըստ որում ամենից շատ տուժեց նրա շունը: Հայելու կտորներից մեկը կտրեց նրա պոչի կեսից ավելին, թողնելով ընդամենը մի խղճուկ կտոր:

— Մեր հաշվումները, ինչպես երևում է, սխալ էին, — ասաց միստր Գազարոն:

— Փանտ է, փանտ: Շ-շանտ, շ-շանտ սխալ էին, — կտրված պոչը լիզելով համաձայնեց շունը:

— Ուրեմն հարկավոր է ուրիշ ճանապարհ փնտրել, — ասաց խուզարկուն:

— Ուրիշ ճանապարհ փնտրել, — նորից հաչեց շունը: — Գուցե մյուս ճանապարհները հայելիով չվերջանան:

Կոմնացույցը մի կողմ դնելով, միստր Գազարոն զինվեց իր ծովային հզոր դիտախողովակներից մեկով, որը դրեց աչքին և սկսեց աջ ու ձախ դառնալ:

— Ինչ եք տեսնում, տեր իմ, — հարցրեց շունը:

— Պատուհան եմ տեսնում, որը փակ է, վրան կարմիր վարագույրներ կան, և ամեն մի շրջանակում տասնչորս գունավոր ապակի:

— Շանտ, շանտ կարևոր հայտնագործում է, — բացականչեց շունը, — տասնչորս և տասնչորս կանի քսանութ: Եթե մենք գնանք այդ ուղղությամբ, մեր գլխին ամենաթիչը հիսունվեց կտոր կընկնի: Ինչ վերաբերում է ինձ, ապա չգիտեմ, թե իմ պոչից ինչ կմնա:

Միստր Գազարոն դիտախողովակն ուրիշ կողմ ուղղեց:

— Իսկ հիմա՞ ինչ եք տեսնում, — մտահոգված հարցրեց շունը:

— Մետաղէ ինչ-որ կառուցվածք եմ տեսնում: Շատ հետաքրքիր կոնստրուկցիա ունի: Պատկերացրե՛ք՝ երեք ոտ, որոնք վերևում մետաղէ օղակով միացված են իրար, իսկ կառուցվածքի գագաթին սպիտակ կտոր կա, ըստ երևույթին էմալապատված է:

Շունն իր տիրոջ հայտնագործություններից ցնցված էր:

— Սիւյր, — ասաց նա, — եթե ես չեմ սխալվում, մեզանից առաջ ոչ ոք էմալապատ կտուր չի գտել: Այդպես չէ՞:

— Այո, — պատասխանեց միսոր Գազարոն հպարտությամբ: Իսկական խուզարկուն ամենասովորական պայմաններում կարող է շատ անսովոր իրեր հայտնաբերել:

Տերն ու շունը սողալով մոտեցան սպիտակ կտորով մետաղէ կառուցվածքին: Տասը քայլ անելով, նրանք մոտեցան կախարդական կառուցվածքին և այնքան անշնորհք կերպով մտան նրա տակ, որ սպիտակ կտուրը շուռ եկավ:

Դեռ ուշքի չէին եկել և դեռ գլխի չէին ընկել, թե ինչ է կատարվում, երբ նրանց վրա հանկարծ սառը անձրև տեղաց:

Խուզարկուն և շունը կուչ եկան իրենց տեղում, վախենալով, թե մի նոր անսպասելի բան կարող է պատահել: Նրանք վախենում էին շարժվել, մինչդեռ սառը ջուրը հոսում էր միսոր Գազարոյի դեմքի և նրա շան մոռթի, իսկ հետո էլ երկուսի մեջքի, կողերի ու փորի վրայով:

— Ես ենթադրում եմ, որ մենք պարզապես շուռ ենք տվել լվացարանի վրայի էմալապատ տաշտակը, — մռթմռթաց միսոր Գազարոն:

— Ես կարծում եմ, — ավելացրեց շունը, — որ այդ տաշտակի մեջ առավոտյան լվացվելու համար 2-շանտ, 2-շանտ ջուր կար:

Այստեղ միսոր Գազարոն ոտքի ելավ և անսպասելի դուշից հետո սկսեց իրեն թափ տալ: Նրա հավատարիմ ուղեկիցը հետևեց Գազարոյի օրինակին:

Դրանից հետո խուզարկուն առանց դժվարության մահճակալը գտավ, որից ընդամենը երկու քայլ էր հեռու, և հանդիսավոր կերպով մոտենալով նրան, շարունակեց այս կարգի խորիմաստ բաներ ասել.

— Ինչ կարող ես անել, մեր մասնագիտությունը ռիսկի հետ է կապված: Ճիշտ է, մեր գլխին սառը ջրի հեղեղ տեղաց, բայց մենք գտանք մեր փնտրածը՝ մահճակալը:

— Փանստ է, փանստ, շատ ջուր թափվեց, — իր հերթին ավելացրեց շունը: Նրա բախտն այդ օրը ինչ-որ չէր բերում: Թրջված, մրսած, կտրված պոչով նա քնեց հատակին, գլուխը դնելով իր տիրոջ թաց կոշիկներին:

Միստր Գազարոն ամբողջ գիշերը խռմփացրեց և արևի առաջին շողերի հետ արթնացավ:

— Հասիր Բռնիր, աշխատանքն սկսում ենք, — ձայն տվեց նա:

— Տեր իմ, ես պատրաստ եմ, — վեր թռչելով և իր կտրված պոչին նստելով, պատասխանեց շունը:

Այդ առավոտ միստր Գազարոն լվացվել չկարողացավ, քանի որ լվացվելու համար նախատեսված ամբողջ ջուրը թափել էին: Շունը բավարարվեց նրանով, որ լիզեց բեղերը, իսկ հետո էլ տիրոջ դեմքը: Այսպես թարմանալով նրանք գնացին պարկ և սկսեցին որոնումները:

Նշանավոր խուզարկուն սկսեց այն բանից, որ պայուսակից հանեց մի փոքրիկ տոպրակ՝ մեջը համարակալված իննսուն տակառիկ, որոնցով լոտո են խաղում:

Նա շանը խնդրեց որևէ համար հանել: Շունը թաթը մտցրեց տոպրակի մեջ և հանեց համար յոթը:

— Ուրեմն մենք պետք է յոթ մետր աջ գնանք, — որոշեց միստր Գազարոն:

Նրանք յոթ քայլ գնացին դեպի աջ և ընկան եղինջի մեջ:

Շան կտրված պոչն այնպես դաղվեց, որ կարծես կրակով այրեցին, իսկ միստր Գազարոյի քիթը թուրքական պղպեղի նման կարմրեց:

Ըստ երևույթին մենք նորից սխալվեցինք, — ենթադրեց ուսումնական խուզարկուն:

— Փանստ է, փանստ, — տխրությամբ հաստատեց շունը:

— Մի ուրիշ համար փորձենք:

— Փորձենք, — համաձայնեց շունը:

Այս անգամ դուրս եկավ համար քսանութը, և միստր Գազարոն վճռեց, որ պետք քսանութ քայլ դեպի ձախ գնալ:

Քսանութ քայլ դեպի ձախ գնացին և ընկան ոսկի ձկնիկների ավազանը:

— Օգնեցե՛ք, խեղդվում եմ, — ջրի մեջ թաքտալով և ոսկի ձկնիկներին վախեցնելով աղաղակեց միստր Գազարոն:

Գուցե և նա իսկապես խեղդվեր, բայց հավատարիմ շունը ժամանակին ատամներով բռնեց նրա օձիքից և դուրս քաշեց:

Նրանք նստեցին ավազանի ափին: Մեկը շորերն էր չորացնում, մյուսը՝ բուրդը:

— Ես ավազանում շատ կարևոր հայտնագործություն արեցի, — առանց քաշվելու ասաց միստր Գազարոն:

— Շ-շանտ, շ-շանտ կարևոր, — հաստատեց շունը, — մենք հայտնագործեցինք, որ ջուրը շ-շանտ, շ-շանտ թաց է:

— ՉԷ՛, այդ չէ: Ես եկա այն եզրակացության, որ մեր փնտրած գերիները սուզվել են այս ավազանի տակ, հատակին ստորանցք են փորել և այդպիսով խուսափել հետապնդողներից:

Միստր Գազարոն կանչեց ասպետ Պոմփոդրին և առաջարկեց նրան ստորանցքը գտնելու համար ավազանի ջուրը ցամաքեցնել: Բայց սինյոր Պոմփոդրը կտրականապես հրաժարվեց այդ առաջարկությունից: Նա հայտարարեց, թե իր կարծիքով փախստականներն ավելի հեշտ ու հասարակ ուղի ընտրած կլինեն, ու միստր Գազարոյին առաջարկեց, որ իր որոնումներն այլ ուղղությամբ շարունակի:

— Ահա թե մարդիկ ինչպես են շնորհակալ լինում, ասաց նա, — ես քրտինքը դեմքիս չարչարվում եմ, մի սառը վաննան մյուսի հետևից եմ ընդունում, իսկ տեղական իշխանությունները փոխանակ ինձ օգնելու, ամեն քայլափոխում խանգարում են:

Բարեբախտաբար, կարծես թե պատահմամբ, այդտեղով անցնում էր Բալուկը: Խուզարկուն կանգնեցրեց նրան և հարցրեց, թե ոսկի ձկնիկների ավազանի հատակին փախստականների փորած ստորանցքից բացի նա այգում ուրիշ ելք գիտե՞ թե չէ:

— Դե իհարկե գիտեմ, — պատասխանեց Բալուկը, — մի վանդակադուռ էլ կա:

Միստր Գազարոն ջերմ շնորհակալություն հայտնեց տղային և շան ուղեկցությամբ, որ դեռ սառը վաննայից հետո փնջացնում էր ու իրեն թափ տալիս, գնաց վանդակավոր դուռը փնտրելու, ինչ խոսք, կողմնացույցի օգնությամբ, որից նա երբեք չէր բաժանվում:

Բալուկը, իբր թե հենց այնպես, հետաքրքրության համար, հետևեց նրան: Երբ խուզարկուն վերջապես այգուց դուրս եկավ և գնաց անտառի կողմը, տղան երկու մատը բերանը դնելով ուժեղ սուլեց:

Միստր Գազարոն արագ շուռ եկավ նրա կողմը.

— Այդ ղմն եք կանչում, երիտասարդ, երևի իմ շանը:

— Ո՛չ, ո՛չ, միստր Գազարո, ես մի ծանոթ ճնճղուկի իմաց տվեցի, որ իր համար լուսամուտի գոգին հացի փշրանք եմ թափել:

— Դուք շատ բարի հոգի ունեք, — սիկյոր, — այս խոսքերն ասելով միստր Գազարոն Բալուկին գլուխ տվեց և շարունակեց իր ճամփան:

Դուք, իհարկե, գլխի ընկաք, որ Բալուկի սուլոցին ինչ-որ մեկը շուտով նույնպես պատասխանեց, միայն ավելի ցածր ու խուլ: Դրանից հետո անտառի ծայրին, խուզարկուի աջ կողմում շարժվեցին թփուտի ճյուղերը: Բալուկը ժպտաց. նրա բարեկամներն իրենց տեղումն էին, և նա ժամանակին զգուշացրեց միստր Գազարոյի և նրա շան մասին:

Բայց խուզարկուն էլ նկատեց, որ թփուտները շարժվեցին: Նա ընկավ գետնին ու անշարժացավ: Շունը հետևեց նրա օրինակին:

— Մեզ շրջապատել են, — բերանն ու քիթը լցված փոշին մաքրելով, շնչաց խուզարկուն:

— Փանստ է, փանստ, մեզ շրջապատել են:

— Մեր խնդիրը քանի գնում ավելի դժվար ու վտանգավոր է դառնում, — շշուկով շարունակեց միստր Գազարոն: — Բայց ինչ էլ լինի, մենք պետք է փախստականներին բռնենք:

— Բռնենք, բռնենք, — կամաց արձագանքեց շունը:

Խուզարկուն իր լեռնային հեռադիտակն ուղղեց թփուտների վրա և սկսեց ուշադիր նայել:

— Կարծես թե թփուտներում ոչ ոք չկա, չարագործները նահանջել են:

— Ինչ չարագործներ, — հարցրեց շունը:

— Նրանք, որ պահվել էին թփուտներում և օրորում էին ճյուղերը: Մենք պետք է գնանք նրանց հետքերով, իսկ այդ հետքերը մեզ կտանեն դեպի նրանց բունը:

Շունը հիանում էր տիրոջ հնարամտությամբ:

Այդ ժամանակ թփուտներում թաքնվածները բավական եռանդուն ճեղքելով մացառները, իրոք նահանջում էին: Ճիշտն ասած, ոչ ոք չէր երևում, միայն այնտեղ, որտեղից անցնում էին նրանք, թեթևակի շարժվում էին թփերի ճյուղերը: Բայց միստր Գազարոն բուրբուրովին չէր կասկածում, թե փախստականները թաքնված են թփուտներում և հաստատ որոշել էր հետևել նրանց: Մոտ հարյուր մետր գնալով խուզարկուն ու շունը հասան անտառ: Միստր Գազարոն ու Յասիր Բռնիրը մի քանի քայլ էլ արեցին և կանգ առան կաղնու ստվերում, որպեսզի հանգստանան ու որոշեն իրենց անելիքները:

Խուզարկուն պառկեց մանրադիտակը հանեց և սկսեց ուշադիր դիտել արահետի փոշին:

— Ոչ մի հետք չկա՞մ, տեր իմ, — անհամբեր հարցրեց շունը:

— Ոչ մի:

Այդ վայրկյանին նորից մի երկար սուլոց լսվեց, իսկ հետո լսվեցին խուլ բացականջություններ.

— Է, հեյ, հե՛, հեյ...

Միստր Գազարոն և շունը նորից ընկան գետին: Ոչ մի կասկած չկար, որ խորհրդավոր մարդիկ ինչ-որ ազդանշան էին տալիս:

— Մենք վտանգի մեջ ենք, — հանգիստ արտասանեց միստր Գազարոն, պարկից հանելով մի գործիք, որ թիթեռ որսալու ցանցի էր նման:

— Փնստ է, փնստ, — արձագանքեց շունը:

— Ոճրագործները կտրել են մեր նահանջի ճանապարհը և ուզում են մեզ վրա հարձակվել թիկունքից: Պղպեղի ամանը պատրաստ պահիր: Յենց որ նրանք երևան, մենք նրանց աչքերին պղպեղ կցանենք և ցանցով կծածկենք:

— Շատ համարձակ պլան է, — հաչեց շունը, — բայց ես լսել եմ, որ չարագործները երբեմն հրացաններ են ունենում... Ի՞նչ կլինի, եթե նրանք գերի ընկնելիս սկսեն կրակել:

— Անե՛ծք, — ասաց միստր Գազարոն, — ճիշտն ասած, ես այդ մասին չեի մտածել:

Այդ պահին դեռևս գետնին կպած խուզարկուն և շունը իրենցից ոչ այնքան հեռու մի խեղդված ձայն լսեցին.

— Միստր Գազարո՛ւ, միստր Գազարո՛ւ:

— Կանացի ձայն է, — շուրջը նայելով ասաց խուզարկուն:

— Այստե՛ղ, միստր Գազարո՛ւ, ինձ մոտ եկեք, — շարունակում էր նույն ձայնը:

Շունը համարձակվեց իր ենթադրությունն ասել:

— Իմ կարծիքով, — ասաց նա, — այստեղ մի ինչ-որ շատ հանելուկային բան է կատարվում: Այդ կնոջը լուրջ վտանգ է սպառնում: Գուցե նա բանդիտների ձեռքն է ընկել, որոնք ուզում են նրան իրենց պատանդը դարձնել: Ես կարծում եմ, որ ինչ էլ լինի, հարկավոր է այդ կնոջն ազատել:

— Մենք չենք կարող զբաղվել կողմնակի բաներով, — իր ճարպիկ օգնականի անտեղի միջամտությունից նեղացած, ասաց միստր Գազարոն: — Մենք այստեղ եկել ենք բռնելու, բանտարկելու համար և ոչ թե ինչ-որ մեկին ազատելու: Մեր նպատակը պարզ է ու հասկանալի: Մենք չենք կարող անել ճիշտ հակառակն այն բանի, ինչի համար մեզ վճարում են: Յիշեցեք, որ ձեր անունը Յասիր Բռնիր է, և ձեր գործն արեք:

Թփերի միջից նորից լսվեց կանացի խղճալի, աղեկտուր ձայնը.

— Միստր Գազարո՛ւ, աստված կսիրեք, օգնեցե՛ք, օգնեցե՛ք վերջապես...

Այդ ձայնն այնքան հուսահատական էր, որ նշանավոր խուզարկուն չդիմացավ:

«Մի կին իմ օգնությունն է խնդրում, — մտածեց նա, — և ես պիտի հրաժարվեմ նրան օգնելուց, սիրտ չունեմ, ինչ է»:

Նա բաճկոնի տակ մտահոգ շոշափեց իր կրծքի ձախ կողմը և թեթևացած շունչ քաշեց: Պարզվեց, որ սիրտն իր տեղումն էր և սովորականից ավելի ուժգին էր բաբախում:

Իսկ ձայնն աստիճանաբար հեռանում էր դեպի հյուսիս, որտեղից ոտնաձայներ և պայթարի խուլ աղմուկ էր լսվում:

Միստր Գազարոն ոտքի թռավ և աչքը կողմնացույցից չկտրելով, շան ուղեկցությամբ վազեց դեպի հյուսիս:

Հանկարծ նրա հետևից մի գսաված ծիծաղի ձայն լսվեց:

Խուզարկուն ցատկոտ կանգ առավ և սկսեց փնտրել իր թիկունքում հանդգնորեն ծիծաղողին: Թփուտների մեջ ոչ ոքի չգտնելով, միստր Գազարոն աչքերը փայլեցրեց և ազնիվ վրդովմունքից ամբողջովին դողալով, ճչաց.

— Ծիծաղիր, ծիծաղիր, ստոր ոճրագործ, լավ է ծիծաղում նա, որ ծիծաղում է վերջում:

«Ոճրագործը նորից փռթկաց, իսկ հետո հազի հանկարծակի նոպայից շնչահեղձ եղավ:

Բանն այն է, որ Բողկն այդ րոպեին ուժեղ խփեց նրա մեջքին, որպեսզի նա այլևս չծիծաղի: Այդ ծիծաղկոտ տղան հենց փոքրիկ Լոբին էր, ձորձահավաք Լոբու տղան: Երբ հազն անցավ, նա թաշկինակը կոխեց բերանն ու իր համար շարունակեց ծիծաղել, առանց լռությունը խախտելու:

— Դու ուզում ես ամեն ինչ փչացնել, — բարկացած շնչաց Բողկիկը, — անմիջապես վերջ տուր փռթկոցիդ:

— Դե ինչպե՞ս դրանց վրա չծիծաղես, — հազիվ ծիծաղը գսպելով՝ ասաց Լոբիկը:

— Ծիծաղելու ժամանակ կունենաս, իսկ առայժմ գնանք, որ խուզարկուն աչքիցս չկորչի:

Միստր Գազարոն և նրա շունն առաջվա նման վազում էին դեպի հյուսիս, այն կողմը, որտեղից հեռացող ոտնաձայների և կռվի աղմուկ էր լսվում: Նրանք կարծում էին, թե չարագործների մի ամբողջ խմբի են հետապնդում, իսկ իրականում վազում էին երկու

երեխաների հետևից: Դրանք Կարտոֆիլիկն ու Տոմատիկն էին, որ ցույց էին տալիս, թե կռվում են իրար հետ: Երբեմն աղջիկը կանգ էր առնում և բարակ ձայնով կանչում.

— Օգնեցե՞ք, օգնեցե՞ք, սիւնյոր խուզարկու, ինձ բանդիտները փախցրել են: Աղաչում եմ ձեզ, ազատեցե՞ք ինձ:

Դուք երևի գլխի ընկաք, որ թփուտների միջով գնացող երեխաները մի նպատակ ունեին՝ խուզարկուին և նրա շանն ինչքան հնարավոր է հեռացնել այն անձավից, որտեղ թաքնված էին Չիպուլինոն և նրա բարեկամները: Բայց այդ դեռ բոլորը չէ:

Այն րոպեին, երբ խուզարկուի շունն արդեն հասնում էր փախստականներին և պատրաստվում էր բռնել նրանցից մեկի ոտքը, նրա հետ շատ տարօրինակ բան կատարվեց:

— Օ՛, երկինք, ես թռչում եմ, մնաք բարով, իմ թանկագին տեր,
— հազիվ կարողացավ վնգստալ նա:

— Եվ նա, իսկապես, արագ վեր թռավ, պարանի օղակը սարսափահար շանը մինչև կաղնու կատարը բարձրացրեց և ամուր կապեց մի հաստ ոստի:

Երբ խուզարկուն, որ ընդամենը նրանից մի երկու քայլ էր ետ ընկել, թփուտների միջից դուրս եկավ, շան հետքն անգամ չկար:

— Հասիր-Բռնիր, Հասիր-Բռնիր, — կանչեց նա:

Պատասխան չկար:

— Երևի այդ ստոր շունը նորից նապաստակի հետևից է ընկել: Տասը տարվա մեջ ես չկարողացա նրա միջից այս հին սովորությունը հանել:

Եվ ոչ մի պատասխան չլսելով, նա նորից կանչեց.

— Հասիր-Բռնիր:

— Ես այստեղ եմ, տեր իմ, այստեղ, — հազիվ լսվեց շան խեղդված ձայնը վերևից:

Խուզարկուն նայեց վեր և կաղնու տերևների միջից վերևի ճյուղերի վրա տեսավ իր շանը:

— Ի՞նչ ես անում այդտեղ, — հարցրեց նա խստությամբ, — ծառերի վրա ելնելու լավ ժամանակ ես գտել, խոսք չկա: Ի՞նչ է,

կարծում ես, թե խա՞նդ ենք անում: Յա՛նձ իջիր անմիջապես:
Ավազակները մեզ չեն սպասի: Եթե նրանց հետքերը կորցնենք, էլ ո՞վ
պիտի խեղճ կնոջը փրկի:

— Տեր իմ, մի՛ նեղացե՛ք, ես հիմա ամեն ինչ կբացատրեմ... —
վնգստաց շունը, որ աշխատում էր մի կերպ ծուղակից ազատվել:

— Ես բացատրության կարիք չեմ զգում, — զայրացած
շարունակեց միստր Գազարոն: — Առանց քո փչոցի էլ շատ լավ
հասկանում եմ, որ դու չես ուզում ավազակներին հետապնդել և
գերադասում ես ընկնել սկյուռների հետևից: Մենակ թե դա քեզ վրա
էժան չի նստի: Ես Եվրոպայի և Ամերիկայի ամենանշանավոր
խուզարկուն եմ և չեմ կարող ինձ մոտ ծառայության պահել անբանի
մեկին, որը ոչ մի ծառ բաց չի թողնի, առանց վրան բարձրանալու:
Խոսք չկա, շատ հարմար է իմ օգնականի տեղը: Մնաս բարով, դու
հեռացված ես:

— Տեր իմ, տեր իմ, թույլ տվե՛ք գոնե մի խոսք ասեմ:

— Ինչ ուզում ես ասա, միայն թե ես քեզ լսելու մտադրություն
չունեմ: Ես ավելի կարևոր գործ ունեմ: Ես պարտավոր եմ իմ
պարտքը կատարել, և ոչինչ ինձ չի կանգնեցնի կես ճանապարհին:
Իսկ դու ինչքան ուզում ես վազիր սկյուռների հետևից: Ցանկանում
եմ, որ ճարես ավելի ուրախ պաշտոն և ոչ խստապահանջ տեր: Իսկ
ես ինձ համար մի ավելի լուրջ օգնական կգտնեմ: Դեռ երեկ այգում
Մաստինո անունով մի հիանալի շուն տեսա: Նա հենց իմ ուզածն է,
ազնիվ, համեստ և արժանավոր շուն է: Նրա մտքով անգամ չի
անցնի կաղնիների վրա որդեր փնտրել... Այսպես, ուրեմն, մնաս
բարով, թեթևսուլիկ և անհավատարիմ շուն: Մենք այլևս իրար չենք
տեսնի:

Նման հանդիմանություններ ու վիրավորանքներ լսելով, խեղճ
շունն սկսեց աղի արտասուք թափել:

— Տեր իմ, ճանապարհին զգույշ եղե՛ք, թե չէ ձեզ հետ էլ նույնը
կպատահի, ինչ ինձ պատահեց:

— Թողե՛ք ձեր հիմար կատակները, պառավ լուսնահաչ: Ես դեռ
իմ ամբողջ կյանքում ոչ մի ծառ չեմ բարձրացել: Եվ, ի՛նչ խոսք,
մտադրություն չունեմ թողնել իմ պարտականություններն ու հետևել
քո օրինակին...

Բայց հենց այն ժամանակ, երբ միստր Գազարոն վրդովված արտասանում էր իր ճառը, հանկարծ զգաց՝ մի բան այնպես ուժգին գրկեց իր մարմինը, որ շունչը կտրվեց: Նա լսեց, թե ինչպես զսպանակը չիկաց և զգաց, որ նույն կաղնու տերևների միջով թռչում է վերև: Երբ այդ կարճատև թռիչքն ավարտվեց, խուզարկուն իր առջև տեսավ շան կտրված պոչը: Իր շան նման միստր Գազարոն էլ ամուր պարանով կապվեց կաղնու ճյուղերից:

— Ես ասում էի, ախր ասում էի ձեզ, — լալազին կրկնում էր շունը, — իսկ դուք ինձ չուզեցիք լսել...

Միստր Գազարոն շատ մեծ ջանքեր էր թափում, որպեսզի այդքան անհարմար դիրքում կարողանար պահպանել իր արժանապատվությունը:

— Դու ինձ ոչինչ, ոչ մի բան չասացիր, — ատամները կրճտացնելով ասաց նա, — քո պարտքն այն էր, որ ինձ ժամանակին ծուղակի մասին զգուշացնեիր և ոչ թե դատարկ խոսակցությամբ ժամանակ կորցնեիր:

Շունը լեզուն կծեց, որ անարդար հանդիմանությանը հանկարծ չպատասխանի: Նա լավ էր զգում, թե ինչ դրության մեջ է իր տերը, և չէր ուզում նրա հետ վեճի բռնվել:

— Այսպես ուրեմն, ծուղակի մեջ եսք, — մտահոգ ասաց Գազարոն: — Հիմա պետք է մտածենք, թե ինչպե՞ս այստեղից դուրս պրճենք:

— Այդ ձեզ համար այդքան էլ հեշտ չի լինի, — լսվեց մի բարակ ձայն ներքևից:

«Ինչ ծանոթ ձայն է, — մտածեց միստր Գազարոն, — հա՛, դա նա է, այն գերի կինը, որ ինձ օգնության էր կանչում»:

Նա ներքև նայեց, կարծելով թե կտեսնի դանակները ատամների մեջ պահած սարսափելի ավազակների, իսկ նրանց մեջտեղում գերի դշխուհուն, բայց դրա փոխարեն նա տեսավ մի խումբ երեխաների, որոնք ծիծաղից թավալվում էին ծառի տակ:

Դրանք Բողկը, Կարտոֆիլը, Լոբիկն ու Տոմատիկն էին: Նրանք կաղնու ճյուղերի տակ ծիծաղում էին, գրկախառնվում և պար գալիս, երգելով հենց նոր հնարած մի երգ:

Դ՛րՆ-դ՛րՆ, դ՛րՆ-դ՛րՆ, դ՛րՆ-դ՛րՆ,
Ա՛յ քեզ ուրախ բան.
Կաղնու վրա երկու շուն,
Երկուսն էլ կծան:

— Սիւյորներ, — հոնքերը կիտելով ասաց նշանավոր
խուզարկուն, — եղեք բարի, ասացեք, թե ովքեր եք դուք և ինչի՛
համար եք այդպես ուրախանում:

— Մենք սիւյորներ չենք, մենք ավազակներ ենք, —
պատասխանեց Լոբիկը:

— Իսկ ես խեղճ գերի եմ:

— Անմիջապես օգնեցեք ինձ, որ ցած իջնեմ, թե չէ ստիպված
ամենախիստ միջոցների կդիմեմ: Լսո՞ւմ եք:

— Փանստ է, փանստ, 2-շատ խիստ միջոցների կդիմենք, — իր
կտրված պոչը կատաղորեն շարժելով, կաղկանձեց շունը:

— Ես կարծում եմ, քանի դեռ դուք այդ վիճակումն եք, դժվար
թե կարողանաք խիստ միջոցների դիմել, — ասաց Բողկը:

— Իսկ մենք կաշխատենք, որ դուք երկար մնաք այդպես
կախված, — ավելացրեց Տոմատիկը:

Միստր Գազարոն չիմանալով, թե ինչ պատասխանել, լռեց: Նա
հասկացավ, որ բանը քանի գնում լրջանում է:

— Դրությունը պարզ է, բայց շատ անելանելի, — շշնջաց նա իր
շան ականջին:

— Փանստ է, փանստ է: Շ-շատ պարզ է, բայց միանգամայն
անելանելի, — տխրությամբ հաստատեց շունը:

— Մենք գերի ենք ընկել երեխաների ավազակախմբի ձեռքը,
ինչպիսի՛ խայտառակություն ինձ համար: Եվ, ըստ էության, այդ
երեխաները խոսքերը մեկ են արել փախստականների հետ՝ մեզ
ծուղակը գցելու համար, որպեսզի կորցնենք նրանց հետքը:

— Փանստ է, փանստ, խոսքերը մեկ են արել, — հաստատեց
շունը, — ես միայն զարմանում եմ, թե ինչպե՞ս էին այսքան հաջող
ծուղակ սարքել նրանք:

Խուզարկուի հավատարիմ օգնականը, իհարկե, ավելի
կզարմանար, եթե իմանար, որ ծուղակը սարքել է Բալուկը իր

սեփական ձեռքերով: Նա արկածային շատ գրքեր էր կարդացել և որսորդական շատ հնարքներ գիտեր: Եվ ահա նա էլ գտել էր, թե ինչպես ծուղակի մեջ գցի խուզարկուին և նրա շանը՝ այս անգամ առանց Չիպոլինոյի օգնության:

Ինչպես տեսնում եք, նրա մտադրությունը շատ լավ իրագործվեց: Թփուտների արանքից նայում էր նա ծուղակի մեջ ընկած երկու գիշատիչներին և իր հնարածից շատ գոհ էր:

«Ահա և մենք երկու վտանգավոր թշնամու ժամանակավորապես շարքից դուրս բերեցինք», — մտածեց նա և, ձեռքերն ուրախ շփելով, գնաց տուն:

Բողկն ու մյուս երեխաները գնացին անձավ, որ ամեն ինչ պատմեն Չիպոլինոյին: Բայց անձավը դատարկ էր, և այնտեղ ոչ ոք չկար, իսկ խարույկի կրակը հանգել էր արդեն: Հավանաբար արդեն երկու օր խարույկ չէին վառել:

Գլուխ տասնյոթերորդ

Չիպոլինոն բարեկամանում է մի շատ սիրունիկ Արջի հետ

Ինչպես գրքերումն են ասում, մի քիչ ետ դառնանք, այլապես մեզ չի հաջողվի իմանալ, թե ինչ է պատահել անձավում:

Քավոր Դդումն ու քավոր Հավամրգին ոչ մի կերպ չէին կարողանում հաշտվել տնակը կորցնելու մտքի հետ: Նրանք այնպես էին կապվել այդ հարյուր տասնութ աղյուսի հետ, որ կարծես հարյուր տասնութ որդի են կորցրել: Դժբախտությունը նրանց մտերմացրել էր, և նրանք սրտակից բարեկամներ էին դարձել:

— Եթե մեզ հաջողվի տնակն ազատել, այնտեղ միասին կապրենք, — վերջ ի վերջո խոստացավ քավոր Դդումը:

Քավոր Հավամրգին այդ խոսքերը լսելով նույնիսկ արտասվեց: Ինչպես տեսնում եք, քավոր Դդումն արդեն ասում էր ոչ թե «իմ տնակը», այլ «մեր տնակը»: Քավոր Հավամրգին էլ էր այդպես ասում, թեև այդ տնակի պատճառով նա կորցրեց իր թանկագին մկրատի կեսը, իր ապուպապից ժառանգած ժանգոտ ածելին և մյուս գանձերը:

— Մի անգամ նրանք սկսեցին վիճել, թե ով է տնակն ավելի շատ սիրում, և քիչ մնաց կռվեին: Քավոր Դդումը պնդում էր, թե Յավամրգին տնակը չի կարող իր չափ սիրել:

— Ես իմ ամբողջ կյանքում աշխատեցի, որ կարողանամ այդ տնակը շինել: Աղյուսները մեկ-մեկ հավաքել:

— Ճիշտ է, բայց դուք այնքան քիչ ապրեցիք այդ տնակում: Իսկ ես այնտեղ գրեթե մի շաբաթ ապրեցի:

Բայց նման վեճերը շուտ էին վերջանում: Վրա էր հասնում երեկոն, իսկ երեկոյան ավելի կարևոր էր անձավը գայլերից պաշտպանել, քան թե կռվել:

Այդ անտառում գայլեր, արջեր և այլ վայրի գազաններ էին ապրում: Դրա համար էլ ամեն գիշեր անձավի շուրջը պետք է խարույկ վառեին, որպեսզի գազանները չմոտենային: Իհարկե, վտանգ կար, որ ամբողջ կրակը կնկատեն, բայց ի՞նչ կարող էին անել, հոր չէր կարելի գայլերի կեր դառնալ:

Գայլերը անձավին շատ էին մոտենում և ազահորեն նայում սանամեր Դդումի կլորիկ ու չաղլիկ մարմնին: Երևի կարծում էին, թե նա առանձնապես համեղ կլինի:

— Իզուր եք ինձ այդպես նայում, մատիս կեսն էլ չեք տեսնի, — գոռում էր սանամեր Դդումը:

Գայլերն այնքան քաղցած էին, որ սկսում էին աղիողորմ ոռնալ:

— Սանամեր Դդում, — ձայն էին տալիս նրանք և աշխատում խարույկից հեռու մնալ, որպեսզի չվառվեին, — գոնե մեզ ձեր մի մատը տվեք: Ի՞նչ մեծ բան է ձեզ համար. ախր դուք տասը մատ ունեք ձեր ձեռքերին, տասն էլ ոտքերին, այսինքն՝ ընդամենը քսան մատ:

— Որպես վայրի գազաններ, դուք կարգին թվաբանություն գիտեք, — պատասխանում էր սանամեր Դդումը, — բայց ձեզ այդ էլ չի օգնի:

Գայլերը մի քիչ ոռնացին, հետո հեռացան: Որպեսզի գոնե մի քիչ միսիթարվեն, նրանք սկսեցին հոշոտել անտառի նապաստակներին:

Յետո հայտնվեց մի Արջ և էլի սկսեց նայել սանամեր Դդումին:

— Դուք ինձ շատ եք դուր գալիս, սինյորա Դդում, — ասաց նա:

— Դուք էլ ինձ եք դուր գալիս, սիւնոր Արջ, բայց ինձ ավելի շատ դուր կգար ձեր ազդրը:

— Ինչ եք ասում, սիւնորա Դիում, իսկ ես ձեզ մեծ հաճույթով ամբողջովին կուտեի:

Չիպուլինոն անկոչ հյուրի վրա մի հում կարտոֆիլ նետեց:

— Փորձեցեք սրանով բավարարվել, — ասաց նա:

— Ես միշտ էլ ձեր ամբողջ ընտանիքը ատել եմ, Չիպուլինո, — կատաղած պատասխանեց Արջը, — ձեր ներկայությունից արցունք է թափվում, ես զարմանում եմ, թե ինչպես են ոմանք սոխ սիրում:

— Լսեցեք, սիւնոր Արջ, — շարունակեց Չիպուլինոն, — իզուր եք ամեն օր դարան մտնում: Ախր շատ լավ գիտեք, որ դրանից բան դուրս չի գա:

Մենք լուցկի ինչքան ասես ունենք, իսկ անտառում ցախն այնքան շատ է, որ մենք ամեն օր կարող ենք խարույկ վառել և ձեզ հեռու բռնել անձավից: Փոխանակ թշնամիներ լինելու, չփորձե՞նք բարեկամներ դառնալ:

— Լսվա՞ծ բան է, — մռթմռթաց Արջը, — որ արջը բարեկամանա Չիպուլինոյի, այսինքն սոխի գլխի հետ:

— Իսկ ի՞նչ կա որ, — առարկեց Չիպուլինոն, — այս աշխարհում միանգամայն հնարավոր է խաղաղ ապրել: Բոլորի համար էլ աշխարհում տեղ կա՝ թե՛ արջերի համար, թե՛ սոխերի:

— Տեղ, իհարկե, բոլորի համար կա, դա ճիշտ է: Բայց ինչո՞ւ են մարդիկ մեզ բռնում, զցում վանդակները: Պետք է ձեզ ասեմ, որ իմ հայրն ու մայրը հիմա գերի են իշխանի կենդանաբանական այգում:

— Ուրեմն ես ու դու դժբախտության ընկերներ ենք, իմ հայրը նույնպես իշխանի գերին է:

Արջը երբ լսեց, որ Չիպուլինոյի հայրը բանտարկված է, մեղմացավ.

— Վաղո՞ւց է նստած, — հարցրեց նա:

— Արդեն շատ ամիսներ են անցել: Նա դատապարտված է ցմահ բանտարկության, բայց մահից հետո էլ չի կարող այնտեղից դուրս գալ, քանի որ իշխանի բանտերում գերեզմանոցներ կան:

— Իմ ծնողներին ել վիճակված է ամբողջ կյանքում նստել վանդակի մեջ: Եվ, ինչպես երևում է, նրանք ել կալանքից չեն ազատվի նույնիսկ մահից հետո, որովհետև կթաղվեն իշխանի այգում... — Արջը մի խոր հոգոց քաշեց: — Ի՞նչ կա որ, եթե ուզում եք, իսկապես բարեկամներ կլինենք: Ճիշտն ասած, մենք թշնամիներ լինելու ոչ մի պատճառ չունենք: Իմ ապուլապալը՝ նշանավոր Թուխ Արջը, պատմում էր, որ ծերունիներից լսել է, թե ինչպես մի ժամանակ անտառում բոլորը հաշտ ու խաղաղ են ապրել: Մարդիկ և արջերը բարեկամներ են եղել, և մեկը մյուսին վատ բան չի արել:

— Այդ ժամանակները կարող են վերադառնալ, — ասաց Չիպուլինոն, — կգա մի օր, երբ բոլորս բարեկամներ կլինենք: Մարդիկ և արջերը իրար հետ կսկսեն քաղաքավարի վարվել և իրար հանդիպելիս գլխարկները կհանեն: Արջը կարծես թե դժվար դրության մեջ ընկավ:

— Ուրեմն, ես պիտի գլխարկ գնեմ ինձ համար, — ասաց նա, — գլխարկ չունեմ:

Չիպուլինոն ծիծաղեց:

— Դե այդ հենց այնպես ասում են: Դուք կարող եք բարևել ինչպես կարող եք՝ գլուխ կտաք կամ սիրալիր կթափահարեք ձեր թաթը:

Արջը խոնարհվեց և թաթը թափահարեց:

Վարպետ Խաղողն այնքան զարմացավ դրանից, որ բիզն առավ ու ծոծրակը քորեց:

— Կյանքումս այսքան բարեկիրթ արջ չեմ տեսել, — շփոթված ասաց նա:

Սինյոր Սիսեռիկն իր փաստաբանական սովորության համաձայն այդ ամենին շատ կասկածամտությամբ էր վերաբերվում:

— Ես այնքան ել չեմ վստահում արջի բարեկամությանը, — նախազգուշացրեց նա, — արջը կարող է նաև այդպես ձևացնել: Շատ նենգ կենդանի է:

Բայց Չիպուլինոն փաստաբանի հետ չհամաձայնեց: Նա խարույկի արանքում ճանապարհ բացեց և հնարավորություն տվեց, որ Արջը առանց մորթին խանձելու մտնի անձավ: Արջը մի անգամ ել

թաթը թափահարեց, իսկ Չիպուլինոն նրան որպես լավ ծանոթի ներկայացրեց իր բոլոր բարեկամներին:

Պրոֆեսոր Տանձը, որ հենց այդ ժամանակ ավարտել էր իր ջուրթակի վերանորոգումը, Արջի պատվին համերգ տվեց:

Արջը իր նոր բարեկամների համար հաճույթով սկսեց պարել, և այսպիսով անտառից եկած հյուրն ու անձավի բնակիչները հիանալի երեկո անցկացրին:

Երբ Արջը հրաժեշտ տվեց, որ գնա քնելու, Չիպուլինոն ցանկություն հայտնեց նրան մի քիչ ուղեկցելու:

Գիտե՞ք ինչ, Չիպուլինոն չէր սիրում իր ցավերի մասին խոսել, բայց նրա հոգին ճմլվում էր: Այդ երեկո նորից հիշեց իր ծեր հորը, որ տանջվում էր բանտում, և ուզեց իր վիշտը կիսել Արջի հետ:

Երբ նրանք անձավից դուրս եկան, Չիպուլինոն իր բրդոտ բարեկամին ասաց.

— Տեսես ի՞նչ են անում հիմա մեր ծնողները:

— Իմ ծնողների մասին ես որոշ բաներ լսել եմ, — պատասխանեց Արջը. — ճիշտ է, երբեք քաղաքում չեմ եղել, բայց իմ բարեկամ Սարյակը հաճախ է լուր բերում հորս ու մորս մասին: Ասում է, նրանք երբեք աչք չեն փակում և գիշեր-ցերեկ ազատություն են երազում: Իսկ ես կարգին չգիտեմ էլ, թե ինչ բան է ազատությունը: Ես կգերադասեի, որ նրանք իմ մասին մտածեին. չէ՞ որ իրենց տղան եմ:

— Ազատ լինել, այդ նշանակում է տիրոջ ստրուկը չլինել, — պատասխանեց Չիպուլինոն:

— Բայց իշխանն այնքան էլ վատ մարդ չէ: Սարյակը պատմում է, որ իմ հայրիկին ու մայրիկին կուշտ կերակրում են, և նրանք երբեմն նայում են իրենց վանդակների մոտով անցնող մարդկանց ու զվարճանում: Իշխանը նրանց այնպիսի տեղ է հատկացրել, որ տոն օրերին շատ մարդիկ են այցելում: Բայց էլի նրանք շատ են ուզում անտառ վերադառնալ: Միայն թե Սարյակն ասում է, այդ անհնար է, վանդակը շատ ամուր է, երկաթից է պատրաստած:

— Այո, կալանքից ազատվելն այնքան էլ հեշտ չէ, — իր հերթին հառաչեց Չիպուլինոն, — երբ ես հորս այցելելի, ուշադիր նայեցի բանտի պատերին: Այդ պատերը քանդել կամ դրանց մեջ անցք

բացելն անհնար է: Բայց չնայած դրան, հորս խոսք տվեցի, որ իրեն կազատեմ, և երբ էլ լինի, խոսքս կկատարեմ:

— Դու, երևում է, քաջ տղա ես, — ասաց Արջը, — ես էլ կուզենայի իմ ծնողներին ազատել, բայց քաղաքի ճամփան չգիտեմ և վախենում եմ կորչեմ:

— Լսիր, — հանկարծ ասաց Չիպուլինոն, — մենք մի ամբողջ գիշեր ունենք մեր տրամադրության տակ: Նստեցրու ինձ ուսիդ, և կես-գիշերից առաջ կհասնենք քաղաք:

— Ինչ ես ուզում անել, — դողացող ձայնով ասաց Արջը:

— Գնանք ծնողներիդ տեսնելու: Նրանց տեսնելն ավելի հեշտ է, քան իմ հորը:

Արջը չստիպեց, որ իրեն խնդրեն. մի թեթև կռացավ, Չիպուլինոն արագ մագլցեց նրա մեջքի վրա, և նրանք սլացան դեպի քաղաք: Չիպուլինոն ճանապարհ էր ցույց տալիս:

— Դեպի աջ, — հրահանգ էր տալիս Արջին: — Դեպի ձախ: Ուղիղ: Նորից դեպի ձախ... Ահա, մենք արդեն քաղաքի դարբասների մոտ ենք: Կենդանաբանական այգին, այն, այն կողմն է: Արագ գնանք, որ պատահական անցորդները մեզ չտեսնեն, և աշխատիր չմոռնալ:

Գլուխ տասնութերորդ

Փոկ, որի լեզուն չափից դուրս երկար էր

Կենդանաբանական այգում խոր լռություն էր տիրում: Պահակը բարձի տեղ փղի կնճիթը գլխի տակ դրած, քնել էր փղանոցում: Նա շատ խորն էր քնել, դրա համար էլ, երբ Չիպուլինոն ու Արջը փղանոցի դուռը կամաց բացեցին, չարթնացավ:

Փիղը պահակի գլուխն զգուշորեն դրեց ծղոտի վրա, առանց տեղից շարժվելու կնճիթը երկարացրեց և դուռը բացեց:

— Ներս մտեք, — փնթփնթաց նա:

Մեր երկու բարեկամները շուրջը նայելով ներս մտան:

— Բարի երեկո, սիւնոր Փիղ, — ասաց Չիպուլինոն, — ներեցեք, որ մենք ձեզ այս ուշ ժամին անհանգստացրինք:

— Օ՛, ոչինչ, ոչինչ, — պատասխանեց Փիղը: — Ես դեռ չէի քնել: Փորձում էի գուշակել, թե իմ պահակն ինչ է տեսնում երազում: Երազների միջոցով կարելի է իմանալ մարդը վատն է, թե լավը:

Փիղը հնդկական ծեր փիլիսոփա էր, և միշտ նրա գլխում տարօրինակ մտքեր էին ծագում:

— Մենք գիտենք, թե դուք ինչքան իմաստուն եք, — շարունակեց Չիպուլինոն, — դրա համար էլ ձեզանից օգնություն ենք խնդրում: Չէիք կարող խորհուրդ տալ, թե ինչպես գերությունից ազատենք իմ բարեկամ Արջի ծնողներին:

— Ինչ կա որ, — մտածկոտ մռթմռթաց ծեր փիղը, — երևակայեցեք, ես կարող էի ձեզ խորհուրդ տալ, բայց ինչի՞ համար: Անտառը ավելի լավ չէ վանդակից, վանդակն էլ ավելի լավ չէ անտառից... Չգիտեմ, իրավացի եմ թե չեմ, միայն ինձ թվում է, որ ամեն ոք պետք է մնա իր տեղում... Ասենք, եթե շատ եք ուզում, — անսպասելիորեն ավելացրեց նա, — կարող եմ ասել, որ արջանոցի բանալին գտնվում է, այ՛, այս քնած մարդու, իմ պահակի գրպանում: Կաշխատեմ առանց արթնացնելու բանալին հանել: Նա շատ խորն է քնում, կարծում եմ, որ ոչինչ չի զգա:

Ճիշտն ասած, Չիպուլինոն և Արջը շատ էին կասկածում, թե այդ բարդ գործը գլուխ կգա, բայց փիղն իր ճկուն ու հնազանդ կնճիթով այնքան զգույշ ու ճարակորեն էր գործում, որ պահակն իրոք ոչինչ չզգաց:

— Ահա ձեզ բանալիները, — կնճիթի ծայրը պահակի գրպանից հանելով, ասաց փիղը, — միայն թե չմոռանաք վերադարձնել:

— Հանգիստ եղեք, — ասաց Չիպուլինոն, — և ընդունեցեք մեր անկեղծ շնորհակալությունը: Իսկ դուք չէիք ուզենա մեզ հետ փախչել:

— Եթե ես երբևիցե ուզենայի փախչել, ապա չէի սպասի ձեզ և ձեր օգնությանը: Դե, հաջողություն եմ ցանկանում:

Եվ պահակի գլուխը նորից դնելով կնճիթի վրա սկսեց նրան օրորել, որպեսզի իր բանտապետը ավելի խորը քնի և ժամանակից շուտ չարթնանա:

Չհպուլիսուն և Արջը փղանոցից դուրս սողացին ու գնացին դեպի այն վանդակը, որտեղ արջերն էին ապրում: Նրանք աշխատում էին որքան կարելի է զգուշ քայլել, բայց դեռ մի քանի քայլ չէին արել, երբ ինչ-որ մեկը նրանց կանչեց.

— Էյ, էյ, սիւյր:

— Ս-ս'-ս'... վախեցած շնչաց Չհպուլիսուն, — այդ ղվ է ինձ կանչում:

— Ս-ս'-ս'... այդ ղվ է ինձ կանչում, — կրկնեց անծանոթ խզված ձայնը:

— Դո աղմուկ մի բարձրացնի, պահակը կարթնանա:

Ձայնը կրկնեց.

— Պահակ մի բարձրացնի, աղմուկը կարթնանա... Ա՛խ, ես հիմար եմ, հիմար, ամեն ինչ խառնեցի:

— Սա հո թուրթակն է, — շնչաց Չհպուլիսուն Արջին: — Նա ինչ որ լսում է, կրկնում է: Բայց քանի որ լսածը չի հասկանում, դրա համար էլ հաճախ շուռ տված է խոսում: Բայց բարի տղա է և ոչ ոքի վատը չի ցանկանում:

Արջը քաղաքավարի գլուխ տվեց թուրթակին ու հարցրեց.

— Սիւյր թուրթակ, չէիք ասի, թե որտեղ է գտնվում արջերի վանդակը:

Թուրթակը կրկնեց.

Սիւյր Արջ, չէիք ասի, թե որտեղ է գտնվում թուրթակների վանդակը: Ա՛խ, ես հիմար եմ, հիմար, նորից խառնեցի:

Տեսնելով, որ թուրթակից կարգին բան չեն լսի, Չհպուլիսուն ու Արջը սուս ու փուս հեռացան: Ճաղերի հետևից նրանց ձայն տվեց մի կապիկ.

— Լսեցե՞ք, սիւյր, լսեցե՞ք...

— Մենք ժամանակ չունենք, — ասաց Արջը, — շատ ենք շտապում:

— Մի րոպե միայն ինձ լսեցե՞ք. ահա արդեն երկու օր է, որ ուզում եմ այս ընկույզը ջարդել, բայց չի հաջողվում: Խնդրում եմ, օգնեցե՞ք ինձ:

— Մի քիչ սպասեցեք, ետ դառնալիս կօգնենք ձեզ, — ասաց Չիպուլինոն:

— Էիս, դուք այդպես ասում եք միայն, — գլուխը շարժելով ասաց Կապիկը, — ասենք ես հենց այնպես, խոսքի համար ասացի. ինչի՞ն է պետք այս ընկույզը, և ընդհանրապես աշխարհի բոլոր ընկույզները: Ես կուզեմայի նորից իմ հարազատ անտառում լինել, թռչել ծառից ծառ և կոկոսի ընկույզով խփել մի որևէ անբան ճանապարհորդի գլխին: Ել ինչի՞ համար են կոկոսի ընկույզներն աճում, որ նրանցով մարդու գլխին չխփես: Ես ձեզ եմ հարցնում, Ել ինչի՞ համար են ճանապարհորդները, եթե մեկը չկա, որ նրանց գլխին կոկոսի ընկույզով խփի: Ես արդեն չեմ հիշում, թե վերջին անգամ այն էրք էր, որ կոկոսի ընկույզով հասցրի մի անծանոթ եկվորի սափրված կարմիր գլխին... Այնքան հաճելի էր նրան մերկ գազաթին նշան բռնելը: Ես հիշում եմ, թե...

Բայց Չիպուլինոն և Արջը հեռացել էին և նրա շաղակրատանքը չէին լսում:

— Կապիկները, — ասաց Չիպուլինոն, — շատ թեթևամիտ և հիմար արարածներ են: Սկսում են խոսել մեկ այս մասին, մեկ այն, և երբեք չես կարող ասել, թե ինչով կվերջանա նրանց շաղակրատանքը: Չնայած դրան, ես անկեղծորեն ցավում եմ այդ խեղճի համար: Ինչո՞ւ չի քնում, կարծում ես այն պատճառով, որ չի՞ կարողանում ընկույզը ջարդել: Ո՛չ, չի քնում, որովհետև կարոտել է իր հեռավոր հարավին, տաք արևին, կոկոսի ծառերին և բանաններին:

Առյուծը նույնպես քնած չէր: Նա աչքի տակով նայեց Չիպուլինոյին ու Արջին, բայց գլուխն էլ չշարժեց, որ տեսնի, թե ուր են գնում: Նա շատ ազնիվ ու հպարտ գազան էր, և նրան բոլորովին չէր հետաքրքրում, թե ով ինչ գործով է անցնում իր վանդակի մոտով:

Վերջապես Չիպուլինոն և Արջը հասան արջերի վանդակին:

Խեղճ պառավներն իսկույն ճանաչեցին իրենց բրդոտ տղային և թաթերը մեկնելով, սկսեցին ճաղերի արանքից համբուրել նրան:

Մինչ նրանք համբուրվում էին, Չիպուլինոն վանդակի դուռը բացեց և ասաց.

— Յերիք է լաց լինեք: Ձեր վանդակի դուռը բաց է, եթե հիմա չօգտվեք այդ հնարավորությունից, պահակը կարթնանա, և ազատություն այլևս չեք տեսնի:

Երբ վերջապես, գերիները դուրս եկան վանդակից, նորից նետվեցին իրենց ծուռթաթ տղայի կողմը և գրկեցին նրան, որից իրենց այլևս չէին բաժանում վանդակի երկաթե ճաղերը: Նրանց բրդոտ այտերի վրայով արցունքի խոշոր կաթիլներ էին հոսում:

Չիպուլինոն մինչև հոգու խորքը հուզվեց:

«Խեղճ հայրիկ, — մտածում էր նա, — այն օրը, երբ ինձ հաջողվի քա բանտի դռները բացել, ես էլ քեզ անվերջ կհամբուրեմ»:

— Ժամանակն է, գնալու ժամանակն է, — ցածր, բայց լսելի ձայնով ասաց նա արջերին: — Ուշանալ չի կարելի:

Բայց պառավներն ուզում էին հրաժեշտ տալ սպիտակ արջերի ընտանիքին, որ ապրում էին ավազանի մոտ: Յետո ուզեցին տեսնել ընծուխտին, որը այդ ժամանակ պինդ քնած էր: Մյուս գազաններն էլ էին քնած, բայց արջերի գնալը շուտով իմացավ կենդանաբանական ամբողջ այգին և արթնացրեց նրա բնակիչներին: Արջերին շատ էին սիրում: Ասենք, նրանք էլ թշնամիներ ունեին: Օրինակ, նրանց տանել չէր կարողանում Փոկը, որն արջերին սպիտակ արջերի մոտիկ ազգակիցներ էր համարում:

Իմանալով, որ արջերը վանդակից փախել են, Փոկն այնքան բարձր սկսեց ճչալ, որ արթնացրեց խոր քնած պահակին:

— Ի՞նչ է պատահել, — հորանջելով հարցրեց նա Փոկին:

— Ճիշտն ասած չգիտեմ, — մտածկոտ պատասխանեց ծեր իմաստունը: — Եվ ի՞նչ կարող է պատահել: Աշխարհում այլևս ոչ մի նոր բան տեղի չի ունենում, ուրեմն այս գիշեր ևս ոչ մի նոր բան չի պատահել: Միայն կինոյումն է ամեն տասը րոպեին մի նոր բան պատահում:

— Գուցե և դու իրավացի ես, — համաձայնեց պահակը, — բայց էլի պետք է նայել:

Յենց որ նա փղանցից դուրս եկավ, հանդիպեց փախստականներին:

— Օգնեց՞եք, օգնեց՞եք, — ճչաց նա:

Նրա բոլոր օգնականներն արթնացան և մի քանի րոպեում կենդանաբանական ամբողջ այգին շրջապատեցին: Փախուստն անհնարին դարձավ:

Չիպոլինոն և երեք արջերը նետվեցին ավազանի մեջ և, գլուխները դուրս հանելով ջրից, թաթնվեցին այնտեղ: Դժբախտաբար, ընկել էին այն ավազանը, որտեղ ապրում էր Փոկը:

— Յի, հի, հի, — նրանց հետևից լսվեց ինչ-որ մեկի չարագուշակ ծիծաղը:

Դա հենց ինքը՝ Փոկն էր:

— Յույս ունեմ, որ սինյորներն ինձ թույլ կտան մի փոքր ծիծաղել. այսօր շատ լավ է տրամադրությունս:

— Սինյոր Փոկ, — ցրտից դողալով՝ խնդրեց Չիպոլինոն, — ես հասկանում եմ ձեզ, բայց միթե դուք կարող եք ծիծաղել մեզ վրա այն ժամանակ, երբ մեզ փնտրում են:

— Ա՛յ, հենց այդ էլ ինձ ուրախացնում է: Ես հիմա կկանչեմ պահակին և կխնդրեմ, որ ձեզ ավազանից դուրս քաշեն: Չե՞ որ դուք ջրային կենդանիներ չեք:

Եվ Փոկն իրոք գնաց ավազանի մյուս ափը՝ պահակին ու նրա օգնականներին կանչելու:

Արջերին իսկույն դուրս հանեցին և այն էլ ոչ թե երկուսին, այլ երեքին: Դա պահակին շատ զարմացրեց: Բայց նա ավելի շատ զարմացավ, երբ արջերի մեջ նկատեց անհայտ ցեղի ինչ-որ մի արարած, որը, սակայն, մարդկային լեզվով սկսեց խոսել:

— Սինյոր պահակ, ինչպես տեսնում եք, սա բացարձակ թյուրիմացություն է: Ես արջ չեմ:

— Ես էլ եմ տեսնում, բայց դու ի՞նչ էիր անում ավազանում:

— Լողանում էի:

— Այդ դեպքում քեզ կտուգանեմ, որովհետև հասարակական վայրերում լողանալը խստիվ արգելվում է:

— Ինձ մոտ փող չկա, բայց եթե այնքան սիրալիր կլինեք...

— Ես բոլորովին էլ սիրալիր չեմ, և քանի դեռ տուգանքը չես վճարել, կապիկների հետ կնստես վանդակում: Գիշերն այնտեղ

կանցկացնես, իսկ առավոտյան կտեսնենք, թե ինչ անենք:

Կապիկը հյուրին հրճվանքով ընդունեց և, դեռ Չիպուլինոն ուշքի չէր եկել, նա սկսեց առաջվա նման անկապ ու խառնաշփոթ շաղակրատել:

— Ես ձեզ պատմում էի կարմիր և սափրված գլխով ճանապարհորդի մասին: — Վանդակի տանիքի ճաղերից պոչով կախված, օրորվելով սկսեց խոսել նա, — եթե ես ասում եմ, որ նրա գլուխը կարմիր էր և սափրված, ուրեմն այդպես էլ եղել է: Ես երբեք չեմ ստում, ավելի ճիշտ՝ ստում եմ միայն ծայրահեղ դեպքում: Սակայն, գիտե՞ք, երբեմն սիրում եմ սուտ ասել: Այո՛, այո՛... ստելու մեջ ինչ-որ հատուկ հաճելի համ կա... երբեմն...

— Լսեցե՞ք, — խնդրեց Չիպուլինոն, — չէի՞ք կարող ձեր խոստովանությունը հետաձգել մինչև առավոտ: Ես շատ եմ ուզում քնել:

— Գուցե ձեզ օրհր ասեմ, — առաջարկեց կապիկը, — նանի՛, նանի՛:

— Ո՛չ, շնորհակալ եմ: Առանց դրա էլ կքնեմ:

— Ուզո՞ւմ ես վերմակով ծածկեմ:

— Բայց այստեղ վերմակ չկա:

— Իհարկե չկա, — փնթփնթաց կապիկը: — Ես քաղաքավարության համար առաջարկեցի, բայց եթե ուզում եք, որ անքաղաքավարի լինեմ, խնդրեմ, դեմ չեմ:

Այս ասելով վիրավորված կապիկը երեսը շուռ տվեց և լռեց:

Չիպուլինոն ի՛նչ խոսք, լռությունից օգտվեց ու քնեց: Կապիկն իզուր էր սպասում, թե Չիպուլինոն կխնդրի իր կողմը նայել: Տեսնելով, որ բան դուրս չի գալիս, նա որոշեց զայրանալու փոխարեն, ներողամիտ լինել և նորից խոսել տղայի հետ: Սակայն երբ ետ դարձավ, Չիպուլինոն պինդ քնած էր:

Կապիկն ավելի վիրավորվեց և մի անկյունում կուչ գալով, սկսեց նայել քնածին:

Կապիկի վանդակում Չիպուլինոն ամբողջ երկու օր մնաց: Մայրերի ու դայակների հետ կենդանաբանական այգի եկած

երեխաները հիանում էին: Նրանք դեռևս չէին տեսել, որ կապիկը իրենց նման հագնվի:

Միայն երրորդ օրը կապիկի ձեռքին տանջված Չիպուլինոյին հաջողվեց Բալուկին գրություն ուղարկել: Սա հենց առաջին գնացքով քաղաք եկավ, Չիպուլինոյի համար տուգանք վճարեց և գերությունից ազատեց նրան:

Փողերը հաշվելով, պահակը ջերմորեն հրաժեշտ տվեց իր բանտարկյալին և նույնիսկ առաջարկեց, որ սա հաճախ գա կենդանաբանական այգի:

— Լավ, լավ, — պատասխանեց Չիպուլինոն և շտապեց, որ գնացքին հասնի:

Ճանապարհին նա Բալուկին նախ հարցուփորձ արեց իր բարեկամների մասին և, նրանց անհայտացումն իմանալով, շատ անհանգստացավ:

— Չեմ հասկանում, — ուները թոթվելով ասաց նա, — այդ ապաստարանում նրանք լիակատար անվտանգության մեջ էին: Ի՞նչն է ստիպել, որ անձավից հեռանան:

Գլուխ տասնիններորդ

Ճանապարհորդություն ուրախ գնացքով

Կենդանաբանական այգուց դուրս գալով, Չիպուլինոն և Բալուկը նստեցին գնացք:

Այդ գնացքի մասին ես դեռ ոչինչ չեմ պատմել ձեզ: Դա շատ զարմանալի գնացք էր: Միայն մի վագոն ուներ, և այդ վագոնում նստելու բոլոր տեղերը պատուհանների մոտ էին, այնպես որ բոլոր կողմերից լավ երևում էին դաշտերն ու անտառները, լեռները, կայարաններն ու հանդիպակաց գնացքները:

Դե գիտեք, թե այդ ինչքան կարևոր է գնացքով ճանապարհորդող երեխաների համար: Նստիր քեզ համար պատուհանի մոտ, և ինչքան սիրտդ ուզում է, նայիր դուրս:

Գնացքում գեր ուղևորների համար հատուկ սարքավորում կար: Դրանք փոս ընկած թարեքներ էին, որոնց վրա հաստ մարդիկ իրենց փորն էին դնում: Այդպես շատ հարմար էր գնալը, և նրանք ոչ ոքի չէին խանգարում:

Երբ Չիպուլինոն և Բալուկը գնացք էին նստում, հանկարծ լսեցին ձորձահավաք Լոբու ձայնը:

— Մի՛ վախեցեք, սիւյոր Բարոն, ուժ տվեք, մի քիչ էլ որ հուփ տաք, մենք արդեն վագոնում կլինենք:

Պարզվեց, որ գնացք էր նստում բարոն Նարինջը: Դե հասկանալի է, որ հաստ փորի պատճառով գնացք նստելը նրա համար այնքան էլ հեշտ բան չէր: Խեղճ ձորձահավաքը ոչ մի կերպ չէր կարողանում բարոնին վագոն հրել: Երկու բեռնակիր օգնության հասան, բայց երեքով էլ չկարողացան բարոնին ներս տանել վագոնի դռնով: Վերջապես վագելով եկավ կայարանապետը և սկսեց բարոնի մեջքից հրել: Դժբախտաբար կայարանապետը մոռացել էր, որ սուլիչը բերանին է, և պատահաբար սուլեց:

Մեքենավարը կարծեց, թե դա մեկնելու ազդանշան է, և բռնակը քաշեց: Գնացքը շարժվեց:

— Կանգնիր, կանգնիր, — ամբողջ ձայնով գոռաց կայարանապետը:

— Օգնեցե՛ք, — վախից շառագունելով ճչաց Բարոն Նարինջը:

Բայց նրա բախտը բանեց: Երբ գնացքը շարժվեց, այնքան ուժեղ ցնցում առաջացավ, որ Բարոնը վերջապես ներս խցկվեց: Հաստափորը թեթևացած շունչ քաշեց և, փորը դնելով թարեքի փոսի մեջ, անմիջապես բաց արեց իր կապոցը, որի մեջ տապակած մի ամբողջ գառ կար:

Այս բոլոր խառնաշփոթությունից օգտվելով, Չիպուլինոն և Բալուկը աննկատելի խցկվեցին վագոն:

Ուղևորության ժամանակ Բարոնն այնքան էր զբաղված ուտելով, որ տղաների վրա ուշադրություն չէր դարձնում: Ճիշտ է, Լոբին իսկույն նկատեց նրանց, բայց Բալուկը մատը շրթունքների մոտեցնելով հասկացրեց, որ վերջինս լռի: Ձորձահավաքը նշաններով իմաց տվեց, որ ամեն ինչ հասկացել է և բերանը չի բացի:

Բայց առայժմ թողնենք մեր երկու բարեկամներին, որոնք բավական հարմար տեղավորվեցին վագոնում՝ տապակած գառան հոտից հարբած բարոն Նարինջի քթի տակ, և տեսնենք, թե մուս տեղերում ինչ է կատարվում:

— — — — —

Չենց այն ժամանակ, երբ գնացքն անցնում էր մեզ ծանոթ անտառի մոտով, մի ինչ-որ փայտահատ օգնության հասավ խուզարկուհին ու շանը, իջեցրեց նրանց այն կաղնուց, որից սրանք համարյա երկու օր կախված էին մնացել: Խուզարկուն և նրա շունը մի փոքր վազվզեցին, որ ոտները բացվեն, և սլացան որոնումները շարունակելու:

Փայտահատը զարմանքով նրանց ճանապարհ դրեց, և արդեն պատրաստվում էր կաղնին կտրել, երբ Լիմոն սպայի գլխավորությամբ հայտնվեց Լիմոնուկների մի ամբողջ դասակ:

— Չգնատ, — հրամայեց սպան, — ձեռքերը ցած պահել:

Փայտահատը կացինը գցելով ցած, ձեռքերը հպած կողերին մնաց կանգնած:

— Այստեղ մի շուն իր տիրոջ հետ չէս տեսել:

Բանն այն է, որ ամբողջում շատ անհանգստացած էին միսոր Գազարոյի ու նրա շան անհայտացման պատճառով և որոշել էին ոստիկանների մի ամբողջ դասակ ուղարկել նրանց փնտրելու: Փայտահատը բոլոր աղբատների նման ոստիկաններին այնքան էլ չէր վստահում: Այն մարդն ու շունը, որոնց նա ազատեց, շատ տարօրինակ էին իրենց պահում: Դեռ ծառից չիջած նրանք պառկեցին, ականջները կացրին գետնին և հետո վեր կենալով՝ խելագարների պես սկսեցին վազել: Փայտահատին իսկապես թվաց, թե դրանք խելագարներ են, և ոչ մի գնով նա դրանց չէր հանձնի ոստիկանների ձեռքը, որոնք հավանաբար ուզում էին ձերբակալել ում փնտրում էին:

— Մի մարդ ու մի շուն քիչ առաջ այստեղ էին և գնացին, այ՛, այնտեղ, — ասաց նա և հակառակ կողմը ցույց տվեց:

— Այ, հրաշալի է, — բացականչեց Լիմոն-սպան: Ուրեմն հիմա կհասնենք: Չգանատ:

Փայտահատը նորից ձեռքերը կպցրեց կողերին, իսկ հետո ճակատի քրտինքը սրբելով՝ սկսեց իր կաղնին կտրել, առանց աչքը կտրելու Լիմոնից ու Լիմոնուկներից, որոնք ավելի ու ավելի էին հեռանում նրանցից, ում փնտրում էին:

Քառորդ ժամ էլ չէր անցել, երբ փայտահատը նորից ոտնաձայներ լսեց: Նրա առաջ դուրս եկան հոգնած ու քրտնած վարպետ Խաղողը, քավոր Դդումը, քավոր Յավամրգին, փաստաբան Սիսեռիկը, ջութակահար Տանձը և սանամեր Դդումը: Մի փոքր շունչ քաշելով, նրանք հարցրին, թե փայտահատը չի՞ տեսել Չիպուլինո անունով մի տղայի:

— Ես ձեր Չիպուլինոյին չեմ ճանաչում, — ասաց փայտահատը, — բայց այստեղից ոչ մի տղա չի անցել:

— Եթե Չիպուլինոն այստեղ երևա, խնդրում եմ հայտնեք, որ մենք արդեն երկու օր է իրեն ենք փնտրում, — ասաց վարպետ Խաղողը, որն, ըստ երևույթին, արշավախմբի պետն էր:

Այս խումբն էլ հեռացավ այնպես արագ, ինչպես նախորդը:

Անցավ մոտ մի ժամ, և համարյա կտրած ծառն արդեն ցած էր ընկնում, երբ ծառերի միջից դուրս եկան Չիպուլինոն և Բալուկը: Բալուկը որոշել էր տուն չվերադառնալ, քանի դեռ Չիպուլինոն կորած ընկերներին չէր գտել: Փայտահատն իմանալով, որ տղաներից մեկի անունը Չիպուլինո է, վարպետ Խաղողի ասածը ճշտորեն հաղորդեց նրան: Այստեղ միայն տղաները հասկացան, որ փախստականներն անձավից հեռացել են կորած Չիպուլինոյին գտնելու համար:

Այսպիսով նրանց անհայտացման գաղտնիքը բացվեց:

Տղաները հրաժեշտ տվեցին փայտահատին, և սա նորից մենակ մնաց: Բայց մինչև երեկո նրան վիճակված էր դեռ շատ հանդիպումներ ու արկածներ ունենալ:

Նախ՝ նրա մոտ եկան Բողկն ու մյուս երեխաները, որ նույնպես Չիպուլինոյին էին փնտրում: Յետո հայտնվեց ոչ այլ ոք, եթե ոչ սիևյոր Մադդանոսի ուղեկցությամբ՝ ինքը ասպետ Պոմիդորը իր սեփական անձով: Նրանք Բալուկին էին փնտրում և հավատացած էին, որ նրան անտառում թաքնված փախստականներն են տարել:

Վերջապես, արևը մտնելուց առաջ, փայտահատը զանգակներից կազմված մի ամբողջ նվագախմբի ձայն լսեց: Սկզբում կարծեց, թե այդ առավոտյան իրեն հարցաքննող ոստիկաններն են վերադառնում: Բայց այս անգամ անտառ էր եկել ինքը իշխան Լիմոնը:

Մտահոգված այն բանից, որ իր հավատարիմ պահակախումբն այդքան երկար ժամանակ չէր վերադարձել, ինքն էլ դուրս եկել ընդառաջ: Միևնույն կառքով իշխանի հետ գնում էին նաև կոմսուհիները: Շոյված այն բանից, որ իշխանին ուղեկցելու հնարավորություն են ստացել, նրանք ամբողջ ճանապարհին ուրախ շաղակրատում էին, կարծես որսի էին գնում:

Փայտահատն աշխատեց թաքնվել ծառերի հետևում. նա գիտեր, որ աղբատները չպետք է իշխանի աչքին երևան, որովհետև այդ վնասակար է նորին մեծության ստամոքսին ու լյարդին, բայց պալատականներից մեկը, ծերացած, կնճռոտված մի Լիմոն, որ նստած էր նորին մեծության կողքին, նկատեց փայտահատին ու կանչեց.

— Յեյ, գջլո՛տ:

— Ի՛նչ եք կամենում, ձերդ ողորմածություն, — թոթովեց փայտահատը:

— Այստեղով ոստիկանների մի դասակ չի՞ անցել:

Փայտահատը, ինչպես գիտեք, այդ օրը ոչ միայն ոստիկանների, այլև ուրիշ շատ մարդկանց էր տեսել: Սակայն, երբ իշխանի հետ ես խոսում, ավելի լավ է ասել, թե ոչինչ և ոչ ոքի չես տեսել:

Փայտահատն այդպես էլ պատասխանեց, «Ոչ մարդ եմ տեսել, ոչ էլ որևէ բան գիտեմ»: Եթե ասեր. «Այո, տեսել եմ», իհարկե, ուրիշ շատ հարցեր կտային, և գուցե վերջ ի վերջո անմեղ տեղը բանտ նստեցնեին: Իսկ «չէ» ասաց՝ պրծավ:

Իշխանը և նրա շքախումբը գնացին այն կողմը, որ կողմը ոստիկաններն էին գնացել:

Երեկոն վրա հասավ: Որպեսզի չերկարացնենք և պատմությունն ավելի հետաքրքրական լինի, ուղղակի ասենք, մութն ընկավ: Մթության մեջ ավելի հետաքրքիր արկածներ են լինում,

մանավանդ, երբ խոսքը վերաբերում է փախուստներին, որոնումներին ու հետապնդումներին:

ՉԷ որ հենց այն ժամանակ, երբ անտառի վրա իջնում է խավարը, մեր վիպակի հերոսները հենց որոնումներով ու հետապնդումներով են զբաղված: Խուզարկուն և նրա շունը փախստականներին են փնտրում, ոստիկանները՝ խուզարկուին, Իշխանը՝ ոստիկաններին: Վարպետ Խաղողը և նրա բարեկամները գնացել են Չիպուլինոյին որոնելու, Չիպուլինոն և Բալուկը որոնում են վարպետ Խաղողին, Բողկը Չիպուլինոյին, ասպետ Պոմիդորն ու սինյոր Մադդանոսն էլ՝ Բալուկին:

Իսկ գետնի տակ (դուբ երևի այդ մասին իսկի չեք էլ մտածել) ծերուկ Խլուրդը բուլորին էլ փնտրում է: Նախօրյակին նա այցելեց փախստականների անձավը և այնտեղ այսպիսի մի գրություն գտավ. «Չիպուլինոն անհայտացել է: Գնում ենք նրան որոնելու: Եթե որևէ բան իմանաք, հայտնեցեք մեզ»:

Խլուրդն հենց որ այս խոսքերը կարդաց, եռանդով սկսեց բուլոր կողմերի վրա գետնուղիներ փորել: Աշխատելիս լսում էր, թե ինչպես վերևում, գետնի վրա անընդհատ քայլում էին մարդիկ կամ մեկ-մեկ, կամ ամբողջ ջոկատներով: Բայց նրանք այնքան արագ էին գնում, որ Խլուրդը երբ գետնի երես էր դուրս գալիս, ոչ ոքի չէր գտնում: Միայն գայլերի ձայնը այդ երեկո չէր լսվում: Գայլերը կարծում էին, թե մարդիկ իրենց են շրջապատում և թաքնվել էին անտառի խորքում:

Գլուխ քսաներորդ

Յերցոգ Մանդարինը և դեղին շիշը

Երբ կոմսուհիները իշխանի հետ արդեն գնացել էին, բարոն Նարիջն ու հերցոգ Մանդարինը դարձան ամբողջ լիիրավ տերերը: Այդ միանգամայն հարգելի անձնավորություններից բացի, սենյակներում ոչ մի շունչ արարած չկար, չհաշված, իհարկե, ծառաներին:

Յերցոգն առաջինը նկատեց, որ ամբողջ բուլոր բնակիչները լքել են իրենց: Նա, իր սովորության համաձայն, բարձրացավ

պատուհանի գոգը և սկսեց սպառնալ, թե իրեն ցած կլետի, ջարդ ու փշուր կլինի, եթե... Բայց ոչ ոք չկար, որ նրա սպառնալիքները լսեր:

«Տարօրինակ է, — մատը ճակատին դնելով մտածեց հերցոգը, — երկու կոմսուհին էլ վաղուց պետք է ձայնս լսած լինեին և վազեին օգնության: Ինչո՞ւ ոչ ոք չի գալիս: Գուցե այնքան էլ բարձր չե՞մ ճշում:

Չերցոգը մի քանի անգամ էլ ճղճղաց, հետո զգուշությամբ լուսամուտի գոգից իջնելով, գնաց բարոնի մոտ:

— Թանկագին ազգակից... — ներս մտնելով ասաց նա:

— Բը-ը-ը... կոկորդին դեմ առած հավի ճոխի թևը բերանից դուրս հանելով, բառաչեց բարոնը:

— Նորություն գիտե՞ք:

— Չավանոցը նոր հավեր են բերել, — հարցրեց բարոն Նարինջը, նա միայն այդ օրը համոզվեց, որ ամրոցի և գյուղի բոլոր թևավորներին արդեն ոչնչացրել է և ահա վերջին սիհար ճուտն էր ուտում:

— Է, ի՞նչ հավեր, — պատասխանեց հերցոգը, — մենք մենակ ենք մնացել, մենակ... մեզ լքել են. ամրոցից բոլորը հեռացել են:

Բարոնն անհանգստացավ:

— Իսկ ո՞վ մեզ համար ընթրիք կպատրաստի:

— Դուք հենց միայն ընթրիքի համար եք անհանգստանում: Իսկ ի՞նչ կլինի, եթե մենք օգտվենք մեր թանկագին տանտիրուհիների բացակայությունից և ուտումնասիրենք ամրոցի նկուղները: Ես լսել եմ, որ այնտեղ շատ ընտիր գինիներ կան:

— Չի՞ կարող պատահել, — բացականչեց բարոնը, ճաշին միշտ մեզ մատուցում են անպետք գինիներ, որոնցից կոկորդս միշտ կսկծում է, ստամոքսս խանգարվում:

— Բանն էլ հենց այդ է, — ասաց հերցոգը, — նրանք վատ գինին մեզ են տալիս, իսկ լավը թաքցնում են իրենց նկուղներում: Չենց որ այստեղից գնանք, լավ գինին մենակ կիսմեն:

Ճիշտն ասած, հերցոգի համար գինին այնքան էլ կարևոր չէր: Նա ուզում էր, քանի մարդ չկար, նկուղները մի լավ ուտումնասիրել. լսել էր, որ նկուղի պատերից մեկի մեջ կոմսուհիները թաքցրել են ծերունի կոմս Բալից ժառանգությունն ստացած գանձերը:

— Եթե բանն այնպես է, ինչպես դուք հավատացնում եք, — վճռեց բարոնը, — մնում է, որ իջնենք նկուղ և համոզվելու համար սեփական աչքերով ստուգենք: Մեր ազգականուհիները լավ գինին մեզանից թաքցնելով ծանր մեղք են գործում: Մեր պարտքն է՝ գինու տակառները բացել, որպեսզի նրանց հոգիները փրկվեն:

— Բայց, — բարոնի ականջին շշնջաց հերցոգը, — լավ կլինի այսօր ձեր այդ... ինչպե՞ս էր անունը, Լորի է, ինչ է... ավելի լավ է նկուղ իջնենք առանց նրա: Ես ինքս քո սայլակը կքաշեմ:

Բարոնն անմիջապես համաձայնեց, և Լորին մի ամբողջ երեկո արձակուրդ ստացավ:

Բայց դուք կհարցնեք, թե ինչո՞ւ հերցոգը մենակ չէր գնում նկուղ, եթե ուզում էր գտնել այնտեղ թաքցրած գանձերը: Պատճառն այն էր, որ եթե հանկարծ վրա հասնեին, ամբողջ մեղքը կզցեր բարոնի վրա: Նա իսկույն նախապես արդեն պատասխան էր հնարել. «Ես իմ կամքից անկախ ստիպված էի բարոնին ուղեկցել: Նա իր ծարավն հագեցնելու համար ուզում էր մի շիշ գինի ճարել»:

Այս բոլորը հերցոգը նախապես մտածել էր, բայց նկուղ իջնել այնքան էլ հեշտ չէր ոչ իր, ոչ էլ բարոնի համար: Բարոնը ծանր էր շնչում, իսկ հերցոգը քրտինքի մեջ կորած հրում էր սայլակը, որի վրա դրված էր բարոնի փորը: Սայլակը ծանր էր. դեռ լավ էր, որ պիտի իջնեին ցած, ոչ թե վեր բարձրանային, և աստիճաններն էլ այնքան շատ չէին: Իսկ նկուղից վերադառնալու մասին առայժմ հերցոգը չէր մտածում: «Մի կերպ դուրս կգամ», — մտածում էր նա:

Բարոնի փորի ծանրությունից սայլակն աստիճաններով այնպես արագ սլացավ ցած, որ եթե նկուղի պղնձապատ դուռը փակ լիներ, բարոնն ու հերցոգը հարվածից լավաշի նման կտափակեին: Բայց նրանց բախտից ներսի դուռը բաց էր: Սայլակը ցած քաշեց հերցոգին ու բարոնին, որոնք սանդուղքից դուրս թռան և շարունակեցին առաջ մղվել լայն միջանցքով, երկշարք դրված հսկայական տակառների արանքով, որոնց վրա փոշոտ պիտակներով հազարավոր շշեր կային:

— Սպասեցե՛ք, սպասեցե՛ք, — ճչում էր բարոնը, — տեսե՛ք թե այստեղ ինչքան կա այդ աստվածային շնորհից:

— Առա՛ջ, առա՛ջ, գնանք, — պատասխանում էր հերցոգը, — ներսի գինին ավելի լավն է:

Բարոնը տեսնելով թե ինչպես են իր կողքով տակառների ամբողջ բանակներ, տակառիկների, շշերի, տափաշշերի ամբողջ գումարտակներ սլանում, անցնում, ծանր հառաչում էր:

— Մնաք բարով, մնաք բարով, խեղճեր, — շշերին աչքերով ուղեկցելով ասում էր նա, — մնաք բարով, ինձ վիճակված չէ ձեր խցանները հանել:

Վերջապես հերցոգն զգաց, որ սայլակն ավելի դանդաղ է գլորվում, և վերջապես կարելի է կանգ առնել: Յենց այդ րոպեին էլ նա տակառների ձախ շարքի մեջ մի նեղ անցք տեսավ, իսկ այդ անցքի խորքում՝ մի փոքրիկ դռնակ:

Բարոնը գետնին հարմար նստած, ձեռքը մեկ աջ, մեկ ձախ էր մեկնում, և ոչ մի րոպե իզուր չկորցնելով, երկուական, երեքական շիշ էր վերցնում ու մարզված, երկաթից էլ ամուր դարձած ատամներով հանում էր խցաններն ու շշերի պարունակությունը լցնում բերանը: Նա այդ զբաղմունքն ընդհատում էր միայն նրա համար, որպեսզի բավականության ու հաճույքի ձայներ արձակի: Յերցոգը երկար նայում էր նրան, իսկ հետո ձեռքը թափահարեց և անցքի խորքը մտավ:

Թանկագին ազգականս, ո՞ր եք գնում, ինչո՞ւ դուք էլ չեք օգտվում այս աստվածային շնորհից:

— Ես մի հազվագյուտ տեսակի գինի եմ փնտրում, կարծես թե այնտեղ՝ խորքում տեսնում եմ այդ գինու շիշը:

— Երկինքը ձեր հոգատարության համար ձեզ կվարձատրի, — խմելը չընդհատելով ու բխկացնելով ասում էր բարոնը, — դուք հագեցրիք մի ծարավածի, դրա համար էլ ինքներդ երբեք ծարավից չեք մեռնի:

Բայց հերցոգը նրա խոսելը չէր լսում, շատ անհանգիստ էր:

Դռան վրա ոչ փական կար, ոչ սողնակ և ոչ էլ բանալու անցք:

— Տարօրինակ է... — քթի տակ փնթփնթում էր հերցոգը: — Գուցե այստեղ մի գաղտնի զսպանակ կա:

Նա գաղտնի փականը գտնելու հույսով սկսեց մատներով շոշափել դռան յուրաքանչյուր սանտիմետրը: Բայց ինչքան էլ շոշափում էր, ինչքան էլ սեղմում էր, դռնակը մնում էր փակ:

Այդ ժամանակ բարոնը մոտերքում եղած շշերի հետ հաշիվը մաքրելով, մտավ տակառների միջանցը և հայտնվեց հերցոգի կողքին, որը եղունգներով մեկ ճանկոռտում էր դռնակը, մեկ բռունցքներով հարվածում՝ ավելի ու ավելի կատաղելով:

— Այդ ի՞նչ եք անում, ամենաթանկագին ազգականս:

— Ուզում եմ այս դռնակը բացել, ինձ թվում է, թե սրա հետևում ամենաթանկագին գինիներն են պահված: Այդ գինիները եթե խմեք, շատ գոհ կմնաք:

— Արժե՞ արդյոք անհանգստանալ, — պատասխանեց հարբած բարոնը: — Ավելի լավ է ինձ տվեք այդ դեղին պիտակով շիշը: Դա երևի չինական գինի է, որից ես երբեք չեմ խմել:

Հերցոգն սկսեց շուրջը նայել, որպեսզի բարոնի ցույց տված շիշը գտնի: Վերջապես տեսավ: Դա մի սովորական չափի շիշ էր և մյուսներից տարբերվում էր միայն պիտակով: Մնացած շշերի պիտակները կարմիր էին, իսկ այդ մեկինը՝ դեղին: Հերցոգը բարոնի ազահուլթյունն անիծելով, անփութորեն ձեռքը մեկնեց, որպեսզի շիշը վերցնի:

Այ քեզ զարմանք, շիշը կարծես թե կպել էր թարեքին. հերցոգը ոչ մի կերպ չէր կարողանում այն տեղից շարժել:

— Կարծես թե մեջը արճիճ է լցված, — զարմացած ասաց նա և ամբողջ ուժով շիշը ձգեց:

Բայց նա նոր էր շիշը տեղից պոկել, երբ խորհրդավոր դռնակն սկսեց կամաց ու անաղմուկ բացվել: Բարոնն ապշած նայում էր դռնակին:

— Ազգականս, թանկագին ազգականս, — ճչաց նա, — այդ շիշ չէ, դա բանալի է, նայեցեք, դուք դռնակը բացեցիք:

«Ահա թե որտեղ էր փականի գաղտնիքը, իսկ ես չէի էլ գլխի ընկնում», — ինքն իրեն հանդիմանում էր հերցոգը:

Բայց նա դեռ այդքանը չէր մտածել, երբ դռնակը կրկնակի վրա բացվեց, շեմքին հայտնվեց մի տղա, որը քաղաքավարի գլուխ տվեց հերցոգին ու բարոնին և բարակ, արծաթահունչ ձայնով բացականչեց.

— Բարի օր, սինյորներ: Ես շատ շնորհակալ եմ ձեզանից, որ այս լավությունն արեցիք: Արդեն երեք ժամ է ինչ չարչարվում էի դռնակը բացելու համար: Այդ ինչպե՞ս գլխի ընկաք, որ ես հենց այստեղից կգամ:

— Բալուկ, — միաբերան բացականչեցին հերցոգն ու բարոնը:

— Իմ թանկագին Բալուկ... ավելացրեց բարոնը, որ գինուց շատ բարի ու քնքուշ էր դարձել, — արի ինձ մոտ, ես ուզում եմ քեզ համբուրել:

Չերցոզը հրճվանքի ոչ մի նշան ցույց չէր տալիս:

«Ինչ է անում այստեղ այս փոքրիկ դատարկապորտը» — տհաճությամբ մտածում էր նա: Բայց չուզենալով ցույց տալ, թե դժգոհ է հանդիպման համար, բարձրաձայն ասաց.

— Թանկագին Բալուկ, մեզ համար մեծ ուրախություն է քո բոլոր ցանկությունները:

Բայց Բալուկն հանկարծ հոնքերը կիսեց և սառն ու կտրուկ ասաց.

— Զանի որ, թանկագին ազգականներ, ես ձեզ չեի զգուշացրել, թե այս գաղտնի դռնով պիտի գամ, և ամբողջում հիմա բացի ձեզանից ուրիշ մարդ չկա, ես կարծում եմ, որ դուք այստեղ լավ մտադրությամբ չեք եկել: Ուղղակի ասած, ինչ-որ խարդախ բան եք մտածել: Բայց այդ մասին մենք հետո կխոսենք... Իսկ առայժմ թույլ տվեք ձեզ ներկայացնել իմ բարեկամներին:

Եվ մի կողմ քաշվելով, Բալուկը ճանապարհ տվեց իր բոլոր բարեկամներին՝ Չիպոլինոյին, Բողկին, վարպետ Խաղողին, քավոր Դդումին, փաստաբանին և մյուս բոլորին:

— Բայց սա իսկական ներխուժում է, — շվարած բացականչեց հերցոզը:

Եվ իսկապես դա ներխուժում էր, որ կազմակերպել էր Բալուկը: Անտառում թափառելով, Չիպոլինոն և Բալուկը վերջապես հանդիպեցին իրենց բարեկամներին և շուտով իմացան, որ իրենց բոլոր հակառակորդները՝ բացառությամբ բարոնի և հերցոգի, ամբողջից հեռացել են: Բալուկը գիտեր անտառից նկուղ տանող գաղտնի մուտքի տեղը և առաջարկեց այդ ճանապարհով գրավել թշնամու ամրոցը:

Ինչպես տեսաք, այդ բանը փայլուն կերպով հաջողվեց:
Չերցոգին փակեցին իր սենյակում, ձորձահավաք Լոբուն էլ պահակ
կանգնեցրին ցռանը:

Իսկ բարոնին թողեցին նկուղում, որովհետև ոչ ոք նրա ծանր
մարմինը սանդուղքով վեր հանելու ցանկություն չունեի:

Գլուխ քսանմեկերորդ

Միստր Գազարոն արտասահմանյան զինվորական
խորհրդատու է նշանակվում

Երբ վրա հասավ երեկոն, և ամրոցը թաղվեց խավարի մեջ,
բարեկամներից ոմանք սկսեցին անհանգստանալ:

— Չետո՞ր ինչ անենք մենք, — հարցնում էր սանամեր Դդումը: —
Մենք հո չէ՞նք կարող ընդմիշտ մնալ այստեղ: Սա մեր տունը չէ: Մենք
տուն ու տեղ ունենք, մեր աշխատանքն ու հոգսերը:

— Մենք միտք էլ չունենք ընդմիշտ մնալու այստեղ, —
պատասխանեց Չիպուլինոն: — Թշնամիների հետ
բանակցություններ կսկսենք և միայն կպահանջենք, որ մեզ բոլորիս
ազատություն տան: Երբ համոզվենք, որ մեզանից ոչ ոքի վնաս չեն
պատճառի, անմիջապես կգնանք այստեղից:

— Իսկ ինչպե՞ս կպաշտպանվենք, — միջամտեց սինյոր
Սիսեռիկը, — չէ՞ որ ամրոցի պաշտպանությունը ռազմական
բավականին բարդ գործողություն է: Չարկավոր է ստրատեգիա,
տակտիկա և բալլիստիկա իմանալ:

— Իսկ ի՞նչ բան է բալլիստիկան, — հարցրեց սանամեր Դդումը:
— Խնդրում եմ, սինյոր փաստաբան, անձանոթ բառերով մեզ
չզարմացնեք:

— Ես ուզում եմ միայն հիշեցնել, — կարմրելով բացատրեց
Սիսեռիկը, — որ մեր մեջ ոչ մի գեներալ չկա: Իսկ ինչպե՞ս կռվել, երբ
բանակի գլխին գեներալ չի կանգնած:

— Անտառում հիմա ամենաթիչը քառասուն գեներալ կա, —
ասաց Չիպուլինոն, — չնայած դրան, նրանք մեզ բռնել չկարողացան:

— Կապրենք կտեսնենք, — ծանր հառաչելով քրթմնջքաց Սիսեռիկը:

Նա այլևս չէր ուզում վիճել, բայց չէր էլ հավատում, թե հնարավոր կլինի երկար ժամանակ ամրոցը պաշտպանել առանց ստրատեգիա, տակտիկա և բալլիստիկա իմացող գեներալի:

— Թնդանոթ չունենք, — երկչոտությամբ միջամտեց սանամեր Դդումը:

— Գնդացիր չունենք, — փնթփնթաց սոխ Պրասը:

— Հրացաններ չունենք, — ավելացրեց վարպետ Խաղողը:

— Ամեն ինչ էլ կունենանք, մի՛ անհանգստացեք: — Իսկ հիմա հարկավոր է քնել:

Բոլորը գնացին քնելու:

Յոթ հոգի պառկեցին բարոն Նարնջի լայն մահճակալին և դեռ ութերորդի համար էլ տեղ կար: Իսկ քավոր Դդումն ու քավոր Հավամրգին գնացին այգում գտնվող իրենց տնակը:

Մաստիսոն, որին դրանից մի քանի օր առաջ նորից տեղավորել էին այդ տնակում, այնքան էլ սիրալիր չընդունեց նրանց:

Բարեբախտաբար այդ կատաղած շունը միշտ էլ օրենքը հարգում էր: Ներկայացրած փաստաթղթերին նայելով, նա համոզվեց, որ իրոք տնակն իրեն չի պատկանում և գնաց իր հին բույնը:

Քավոր Դդումը հարմար նստեց տնակում և գլուխը պատուհանից դուրս հանեց, իսկ քավոր Հավամրգին պառկեց նրա ոտների մոտ:

— Ինչ հրաշալի գիշեր է, — ասում էր քավոր Հավամրգին, — ի՛նչ պայծառ երկինք է: Տեսե՛ք, այն ի՛նչ է այնտեղ թռչում վեր... մի՞թե հրթիռներ են:

— Իրոք, իշխան Լիմոնն անտառում հրավառություն էր սարքել, որպեսզի կոմսուհիներին զվարճացնի: Նա իր զինվոր Լիմոնուկներին զույգ-զույգ կապում էր և հրթիռի փոխարեն թնդանոթից կրակում: Դա նրան զվարճալի տեսարան էր թվում:

Վերջ ի վերջո սիւյոր Պոմիդորը մոտեցավ իշխանին և ականջին շշնջաց.

— Ձերդ մեծություն, ներեցե՛ք, բայց դուք այդպես ձեր ամբողջ բանակը կկոտորե՛ք:

— Ափս՛ս, — հառաչելով ասաց իշխանը և կարգադրեց զվարճությունը դադարեցնել:

— Ահա, հրավառությունը վերջացավ, — պատուհանից դուրս նայելով ասաց քավոր Դդումը:

Իշխանն սկսեց հաշվել կենդանի մնացած զինվորներին, որ տեսնի կարելի՞ է շարունակել փախստականներին հետապնդելը թե ոչ: Պարզվեց, որ այդ նպատակի համար դեռ բավականաչափ զինվոր կա: Չնայած դրան, որոշեցին հետապնդումը թողնել առավոտյան:

Առայժմ իշխանը հրամայեց անտառում կոմսուհիների համար մի շքեղ վրան խփել: Նրանց տեղավորեցին շատ փափուկ անկողնում, բայց հուզմունքից ու հետաքրքրասիրությունից նրանք երկար ժամանակ չէին կարողանում քնել:

Կես-գիշերը մոտ էր, երբ ասպետ Պոմիդորը գնաց անտառում զբոսնելու, որ նյարդերը հանգստանան: (Հա՛, ես ձեզ չեմ ասել, որ հրավառությունից հետո բարկությունից ու չարությունից նրա մոտ ջղաձգություն սկսվեց):

«Ինիպիսի՛ հիմարություն, — մտածում էր ասպետը, — հրթիռների պատճառով այդքան առողջ զինվոր փչացնել»:

Նա մի բարձր բլուր եկավ, այն հույսով, որ եթե փախստականները խարույկ վառած լինեն, տեսնի: Բայց դրա փոխարեն նա զարմանքով տեսավ, որ ամբողջ պատուհանները ուժեղ լուսավորված են:

«Երևի բարոնն ու հերցոգը առանց մեզ զվարճանում են, — վրդովմունքով մտածեց նա, — լավ, հենց որ փախստականներին բռնենք ու Չիպոլինոյի հախիցը գանք, հարկ կլինի այդ երկու ձրիակերներից էլ ազատվել»:

Նա շարունակում էր ամբողջին նայել, և նրա չարությունը քանի գնում աճում էր:

«Դատարկապորտներ, — զայրացած մտածում էր նա, — ավազակներ, նրանք այս պառավ, հիմար կոմսուհիներին

կանակացնեն, իսկ ինձ միայն դատարկ շշեր և հորթի ու ճտի ոսկորների կույտեր կմնան»:

Աստիճանաբար ամրոցի բոլոր լույսերը հանգան և միայն մի պատուհանից էր լույս երևում:

— Ասացե՛ք ինդրեմ, հերցոգ Մանդարինն առանց լույսի չի՞ կարող քնել, — ատամների արանքից ֆշշում էր սինյոր Պոմփոթորը: — Մի դրան տեսե՛ք, վախենում է մթության մեջ մնալ: Բայց այդ ի՞նչ է անում: Բոլորովին ցնդել է: Չվարձանում է լույսը հանգցնելով ու վառելով: Այդպես անջատիչը կփչացնի, կարճ միացում կտա, և ամրոցը կայրվի: Թո՛ղ, թո՛ղ անմիջապես, լսո՛ւմ ես, թե ինչ եմ ասում:

Սինյոր Պոմփոթորը ինքն էլ չնկատեց, թե ինչպես է ամբողջ ձայնով մեկ գոռում:

«Իսկ եթե սա մի որևէ գաղտնի ազդանշան է, — հանկարծ մտածեց նա, տեսնելով, որ այդ հիմար խաղը համառորեն կրկնվում է, — ազդանշան: Բայց ի՞նչ ազդանշան, ի՞նչ նպատակով, ո՞ւմն է ուղղված: Ես մի ոսկի կտայի, եթե իմանայի, թե դա ի՞նչ է նշանակում: Երեք կարճ բռնկում.. երկու երկար... Նորից երեք կարճ: Մթություն: Բայց ահա ամեն ինչ նորից է կրկնվում: Յերցոգը երևի ռադիոյով երաժշտություն է լսում և լույսը հանգցնելով-վառելով ձայնակցում է ռադիոյին: Գրագ կգամ, որ այդպես է: Ա՛յ, թե ինչով է զբաղված անբանը»:

Սինյոր Պոմփոթորը վերադարձավ ճամբար և, հանդիպելով պալատականներից մեկին, որին հասկացող մարդ էր համարում, հարցրեց, թե սա ազդանշանային այբուբեն գիտե՞արդյոք:

— Իհարկե, — պատասխանեց Լիմոնը, — ես ազդանշանային դոկտոր-պրոֆեսոր եմ, նույնիսկ հատուկ ֆակուլտետ եմ ավարտել:

— Որ այդպես է, չէի՞ք ասի ինձ, թե ինչ է նշանակում ահա այս ազդանշանը:

Եվ սինյոր Պոմփոթորը պրոֆեսորին հայտնեց, թե ինչպիսի ազդանշաններ էր հաղորդում հերցոգը ամրոցից:

— Ս... Օ... Ս... Այդ հո դժբախտության ազդանշան է, օգնության կանչ:

«Օգնությամբ, — տազնապով մտածեց սինյոր Պոմփոթորը: — Ուրեմն դա խաղ չէ: Յերցոգն ազդանշանի միջոցով ուզում է ինչ-որ

բանի մասին մեզ տեղյակ պահել: Նշանակում է նա վտանգի մեջ է, եթե այդպիսի ազդանշան է տալիս»:

Եվ առանց երկար մտածելու, ասպետը շտապեց ամրոց:

Այգի մտնելով, նա սուլեց, որ Մաստինոյին իր մոտ կանչի: Սինյոր Պոմիդորն սպասում էր, թե շունը դուրս կթռչի իր բարեհարմար տնակից, բայց զարմանքով տեսավ, որ Մաստինոն դուրս է սողում իր հին բնից:

— Ինչ է պատահել, — հարցրեց ասպետ Պոմիդորը:

— Ես օրենք չեմ սիրում, — տհաճությամբ պատասխանեց շունը: — Իսկական տերերն ինձ ներկայացրին միանգամայն անվիճելի փաստաթղթեր, և ես ստիպված՝ տնակը նրանց գիշեցի:

— Այդ ինչ իսկական տերերն են:

— Ոմն Դդում և ոմն Յավամբգի:

— Իսկ նրանք որտե՞ղ են հիմա:

— Զնած են իրենց տանը: Գոնե այդպես եմ ենթադրում, թեև չեմ հասկանում, թե ինչպես կարելի է այդքան անհարմար դիրքով քնել: Բայց, ըստ երևույթին, ամրոցում նրանց համար տեղ չի եղել:

— Իսկ ո՞վ է գիշերում ամրոցում:

— Օ՛, շատ եկվորներ: Ամենաստորին կարգի ժողովուրդ, ինչպես օրինակ, կոշկակարներ, երաժիշտներ, բողկեր, սոխեր և այլ խաժամուժ:

— Ուրեմն Չիպուլինոն էլ այնտեղ է:

— Այո՛, ինձ թվում է, թե նրանցից մեկի անունն այդպես էր: Ինչքան ես հասկացա, հերցոգը շատ վիրավորվել էր այդ կարգի հասարակության ներկայությունից: Նա փակվեց իր սենյակում և ամբողջ օրը չերևաց:

«Նշանակում է նա գերության մեջ է, — վճռեց Պոմիդորը: — Զանի գնում, գործերը վատանում են»:

— Ինչ վերաբերում է բարոն Նարնջին, — շարունակեց շունը, — ապա նա էլ է փակվել, միայն թե ոչ թե իր սենյակում, այլ չգիտես ինչու, մառանում: Արդեն մի բանի ժամ է, ինչ լսում եմ, թե ինչպես են այնտեղ խցանները կրակում:

— Ո՛ր, ո՛ր, անիծված հարբեցող, — ինքն իրեն քրթմնջաց սինյոր Պոմփոթորը:

— Բայց ես չեմ կարող հասկանալ, թե ինչպես մեր Բալուկը մոռանալով իր կոմսական տիտղոսը, շփվում է այդքան ստոր ծագում ունեցող մարդկանց հետ:

Սինյոր Պոմփոթորն անմիջապես սլացավ անտառ, արթնացրեց իշխանին ու կոմսուհիներին և պատմեց սոսկալի նորությունները: Կոմսուհիներն ուզում էին իսկույն վերադառնալ ամրոց, բայց իշխանը խորհուրդ տվեց չշտապել:

— Մեր երեկոյան զվարճալիքից հետո մենք բավական քանակությամբ զինվորներ չունենք, որպեսզի գրոհն սկսենք գիշերը: Սպասենք լուսաբացին, դա ավելի խելացի կլինի:

Նա կանչեց սինյոր Մադդանոսին, որը թվաբանությունից ուժեղ էր, և կարգադրեց նորից հաշվել նորին մեծության տրամադրության տակ մնացած ուժերը:

Սինյոր Մադդանոսը զինվելով մի կտոր կավճով ու քարե տախտակով, շրջեց բոլոր վրանները և ամեն մի զինվորի դիմաց տախտակի վրա մի խաչ քաշեց, իսկ գեներալների դիմաց՝ երկուական խաչ: Պարզվեց, որ իշխանը դեռևս տասնութ Լիմոնուկ-զինվոր և քառասուն Լիմոն-գեներալ ունի: Ընդամենը հիսուն մարդ, չհաշված սինյոր Պոմփոթորին, սինյոր Մադդանոսին, իրեն՝ իշխանին, կոմսուհիներին, խուզարկուին, նրա շանն ու մի քանի ձիերի:

Ասպետ Պոմփոթորը ձիերից օգուտ չէր սպասում, բայց սինյոր Մադդանոսը եռանդով սկսեց ապացուցել, որ ամրոցներ գրավելիս հեծելազոր ունենալը շատ օգտակար է, երբեմն նույնիսկ անհրաժեշտ: Ստրատեգիական երկար վիճաբանություն սկսվեց, և վերջ ի վերջո իշխան Լիմոնը համաձայնեց սինյոր Մադդանոսի բերած փաստերի հետ ու նրան նշանակեց հեծյալ ջոկատի հրամանատար:

Ճակատամարտի պլանը մշակվեց միստր Գազարոյի մասնակցությամբ, որին այդ առիթով արտասահմանյան զինվորական խորհրդատուի կոչում շնորհեցին:

Չինվորական խորհրդատուն անմիջապես անցավ իր պարտականությունների կատարմանը: Առաջին հերթին բոլոր

գինվորներին ու գեներալներին խորհուրդ տվեց, որ սրանք իրենց դեմքերին ածուխ կամ մուր քսեն՝ պաշարման մեջ գտնվողներին վախեցնելու նպատակով: Իշխանին այդ միտքը շատ դուր եկավ: Նա հրամայեց մի քանի շիշ գինի բացել և, իր գեներալներին շարք կանգնեցնելով, սկսեց վառած խցանով անձամբ ներկել նրանց դեմքերը:

Այն գեներալները, որ արժանացել էին այդ պատվին, իրենց շատ շոյված էին զգում:

Մինչև արևածագ բոլոր գեներալների դեմքերն արդեն սևացել էին: Բայց իշխանը դրանով չբավարարվեց: Նրա մոտ դեռ շատ այրված խցան կար և պահանջեց, որ կոմսուհիներն ու սինյոր Պոմփոյուն էլ դեմքերը սևացնեն:

— Կոմսուհիները չհամարձակվեցին իշխանին առարկել և արցունքներն աչքերին՝ ենթարկվեցին հրամանին:

Ուղիղ ժամը յոթին հարձակումն սկսվեց:

Գլուխ քսաներկուերորդ

Այն մասին, թե ինչպես բարոնը անկախ իր կամքից քսան գեներալ սպանեց

Ստրատեգիական պլանի առաջին մասը հետևյալն էր ասում, խուզարկուի շունն օգտվելով կոմսուհիների շան հետ ունեցած իր բարեկամությունից, պետք է համոզեր նրան, որ սա այգու դարբասները բացեր: Այստեղից պետք է այգի ներխուժեր սինյոր Մադդանուսի հեծյալ եսկադրոնը:

Սակայն պլանի այդ մասը ձախողվեց, քանի որ այգու դարբասը բնավ էլ փակ չէր: Դարբասի մոտ ձգված կանգնել էր Մաստինոն և պոչով պատվի էր առնում:

Խուզարկուի շունը վախեցած ետ դարձավ և զեկուցեց այդ տարօրինակ իրադրության մասին:

— Չենց այստեղ է թաղված շան գլուխը, — ասաց միստր Գազարոն, օգտագործելով արտասահմանյան գինվորական

խորհրդատուների մեջ շատ տարածված այս արտահայտությունը:

— Փանստ է, փանստ: Յենց այստեղ է թաղված, — իր տիրոջ ասածը հաստատեց շունը:

— Այդ ինչ շան գլուխ է և որտեղ է թաղված, — հարցրեց իշխանը:

— Ձերդ մեծություն, այստեղ շունը գործ չունի: Եթե խռովարարները դարբասը բաց են թողել, նշանակում է մեզ համար ինչ-որ ծուղակ են պատրաստել:

— Այդ դեպքում եկեք այգի մտնենք հետևի դռնով, — առաջարկեց իշխանը:

— Բայց հետևի դռնն էլ բաց է:

Լիմոնի բանակի զինվորները լուրջ մտատանջության մեջ ընկան: Ավելի ճիշտ՝ չգիտեին, թե ինչ մտածեն: Իսկ իշխանին այս պատերազմն արդեն սկսեց ձանձրացնել:

— Ինչ-որ շատ է երկարում, — գանգատվեց նա ասպետ Պոմիդորին: — Այսքան էլ ձգձգվող ու դժվար պատերազմ: Եթե սկզբից իմանայի, թե այսպես կլիներ, այս պատերազմը չէի էլ սկսի:

Գործն արագացնելու համար իշխանը որոշեց անձամբ մասնակցել գործողություններին: Նա իր քառասուն գեներալներին շարք կանգնեցրեց և հրամայեց.

— Չգանստ...

Քառասուն գեներալներն էլ տեղում քարացան:

— Քայլով-մարշ: Մեկ, երկու, մեկ-երկու:

Յերոսական ջոկատը այգու դարբասից մտավ ներս և քայլեց դեպի ամրոցը, որը, ինչպես գիտեք, գտնվում էր փոքրիկ բլրի գագաթին: Վերելքը իշխանին շատ դժվար թվաց: Նա սկսեց շնչահատվել, քրտնել և որոշեց հրամանատարությունը հանձնել առաջին կարգի մի Լիմոնի ու ետ դառնալ:

— Շարունակեցեք հարձակվել, — ասաց նա, — ես գնում եմ ընդհանուր գրոհի պլանը մշակելու. իմ անձնական մասնակցության շնորհիվ պաշտպանության առաջին գիծը գրավված է: Ձեզ եմ հանձնարարում ամրոցի գրավումը:

Առաջին կարգի Լիմոնը պատիվ տվեց իշխանին և հրամանատարությունը ստանձնեց: Հինգ մետր գնալով, նա հինգ րոպեով հանգիստ տվեց ջոկատին: Այնտեղից մինչև ամրոց ընդամենը մի հարյուր քայլ էր մնում, և հրամանատարն արդեն պատրաստվում էր տալ վերջին գրոհի հրամանը, երբ հանկարծ մի սարսափելի թնդյուն լսվեց, և բլրի գագաթից դեպի իշխանները սլացավ մի չտեսնված մեծությամբ արկ: Քառասուն գեներալն էլ, չսպասելով առաջին կարգի Լիմոնի հրամանին, միանգամից շուռ եկան և ինչքան կարող էին՝ արագ նետվեցին ցած: Սակայն արագությամբ նրանք չէին կարող համեմատվել խորհրդավոր արկի հետ, որը մի քանի վայրկյանում հասավ նրանց և մի երկու տասնյակ գեներալ հասած սալորի նման ճզմելով, գլորվեց մինչև դարբասն ու դուրս եկավ: Ճանապարհին նա ջնջեց սինյոր Մադոանոսի հեծելազորն ու շուռ տվեց կոմսուհիներ Բալերի կառքը:

Երբ արկը վերջապես կանգ առավ, բոլորը տեսան, որ դա ոչ մագնիսային ական է, ոչ էլ դինամիտով լցված տակառ, այլ դժբախտ բարոն Նարինջը:

— Թանկագին ազգականս, այդ դո՛ւք եք, — շուռ եկած կառքից դուրս գալով, ճչաց կոմսուհի Ավագը:

Կոմսուհին ամբողջովին փոշոտված էր, մազերը գզգզված էին և երեսին թանձր մուր էր քսված:

— Ես պատիվ չունեմ ձեզ ճանաչելու, սինյորա: Ես Աֆրիկայում երբեք չեմ եղել, — քրթմնջաց բարոնը:

— Բայց այդ էս եմ, կոմսուհի Ավագը:

— Օ՛, երկինք, ի՛նչ է փչել ձեր խելքին, որ այդպես մրոտվել եք:

— Սա ստրատեգիական նշանակություն ունի... ավելի լավ է ասեք, թե այդ ինչպես փուլ եկաք մեզ վրա:

Ես եկա ձեզ օգնության: Ճիշտ է, մի քիչ տարօրինակ ձևով, բայց ուրիշ ճար չունեի: Ես ամբողջ գիշեր աշխատում էի դուրս պրծնել գինու մառանից, որտեղ այդ ավազակները փակել էին ինձ: Կարո՞ղ եք պատկերացնել, ստիպված էի մառանի դուռը ատամներով կրծել:

— Օ՛, այո՛, դուք կարող եք կրծել նույնիսկ կես տասնյակ տակառների տախտակները, — փնթփնթաց սինյոր Պոմփոթը, որը դեռ սարսափից դողում էր:

— Մառանից դուրս գալով, բլրից ուղղակի ցած գլորվեցի և կարծեմ ճանապարհին ճզմեցի նեգրերի մի ամբողջ ջոկատ, որն, անշուշտ, օգնության էր գնում այն ավազակներին, որոնք խլել են ձեր ամբողջը:

Երբ կոմսուհի Ավագը ազգականին բացատրեց, որ դրանք բոլորովին էլ նեգրեր չեն եղել, այլ քառասուն լիմոն գեներալ, խեղճ բարոնը շատ հուզվեց, բայց էլի հոգու խորքում հպարտանում էր իր ծանրությամբ և ուժով: Իշխան Լիմոնն այդ րոպեին իր վրանում լոգանք էր ընդունում: Իմանալով իր առաջապահ զորամասերի կործանման մասին, նա սկզբում կարծեց, թե թշնամին անսպասելիորեն դուրս է եկել ամբողջից և գրոհով ցրել ջոկատը: Երբ նորին մեծությանը զեկուցեցին, թե մեղավորը եղել է ամենաբարի մտադրություններ ունեցող իր դաշնակիցը, նա կատաղեց:

— Ես ոչ մի դաշնակից էլ չունեմ: Ես պատերազմներ մղում եմ ինքս ինձ և իմ խելքով, — ասաց նա վրդովմունքով: Եվ հավաքելով մնացած զորքը՝ գեներալներին, զինվորներին և օժանդակ կազմին, ընդամենը երեսուն մարդ, նա մի ճառ արտասանեց, որ ավարտեց հետևյալ խոսքերով.

— Աստված, փրկիր ինձ իմ բարեկամներից, իսկ թշնամիներից ես ինքս մի կերպ կազատվեմ:

Իշխան Լիմոնը փաստորեն իրավացի էր: Իշխանների բարեկամները միշտ էլ թշնամիներից վտանգավոր են լինում, և իշխաններին մնում է միայն միսիթարվել հնացած, մաշված ու բավական անհաջող առածներով:

Ուղիղ քառորդ ժամ հետո, Լիմոնը ոտքի ելավ ու հրամայեց նոր գրոհ սկսել: Տասը հոգի վայրենի աղաղակներով վազեցին դեպի բլրի գագաթը, որպեսզի գոնե պաշարման մեջ գտնվողների երեխաներին ու կանանց փախցնեն: Գրոհողներին սիրալիր ընդունեցին: Ես կասեի՝ շատ սիրալիր ընդունեցին: Զիպոլինոն հրշեջ պոմպեր էր հարմարեցրել զինու ամենամեծ տակառներին: Յենց որ Լիմոնները բավականաչափ մոտեցան, նա հրամայեց.

— Գինով՝ թշնամուն խփիր:

(Օրենքով պիտի հրամայեր «կրակ», բայց նրա տրամադրության տակ միայն պոմպեր կային, որոնցով կրակը հանգցնում են և ոչ թե վառում):

Բուրավետ, հարբեցնող կարմիր հեղուկով ողողեցին պաշարողներին: Գինին լցվում էր նրանց աչքերը, բերանը, քիթը և ականջները: Լիմոնուկները անպայման կիսեղդվեին կամ ուշագնաց լինելու չափ կհարբեին, եթե ժամանակին չնահանջեին: Ոմանք սողալով, ոմանք վազելով, փախչում էին գինու հետապնդող շիթերից:

Երբ հասան բլրի ստորոտը, նրանց մեջ ոչ մի զգաստ Լիմոն չկար: Այս բանը շատ զայրացրեց կոմսուհիներին:

Կարող եք պատկերացնել, թե ինչպես էր իշխան Լիմոնը կատաղել:

— Խայտառակություն է, ձեզ բուլորիդ հարկավոր է փայտով ծեծել: Մի՞թե կարելի է սոված փորով կարմիր գինի խմել: Կարգին մարդիկ այդպես չեն վարվում: Տեսնո՞ւմ եք, էլի տասը հոգի շարքից դուրս եկան:

Եվ իրոք, Լիմոնի բանակից տասը ռազմիկ մեկը մյուսի հետևից ընկան նորին մեծության ոտների մոտ և իսկույն, ասես ըստ հրամանի, խռմփացրին:

Դրությունը քանի գնում տագնապալից ու վտանգավոր էր դառնում:

Սինյոր Պոմիդորը մազերն էր փետում և խնդրում միստր Գազարոյին:

— Դե մի խորհուրդ տվե՞ք վերջապես, չէ՞ որ արտասահմանյան գինվորական խորհրդատու եք, սատանան ձեզ տանի:

Իսկ ամրոցում, հասկանալի է, այդ թույլին ցնծություն էր տիրում:

Թշնամու կեսը շարքից հանված էր: Շուտով, շուտով այնտեղ, ցածում, դարբասի երկու կարմիր սյուների մեջտեղում սպիտակ դրոշակ կծածանվի:

Գլուխ քսաներեքերորդ

Զիպուլինոն ծանոթանում է փոստատար Սարդի հետ

Ոչ, ես ձեզ չեմ խաբի, դարբասի սյուների միջև ոչ մի դրոշակ էլ չծածանվեց: Դրա փոխարեն կռվի դաշտ ժամանեց Լիմոնուկների մի ամբողջ դիվիզիա, որոնց շտապ ուղարկել էին մայրաքաղաքից, և մեր բարեկամներին մնում էր կամ հանձնվել, կամ փախչել:

Չիպուլինոն փորձեց մառանի դռնակով փախչել, բայց ընդհատակյա անցքը թշնամին գրավել էր:

Իսկ ղվ գաղտնի անցքի մասին հայտնեց Լիմոնուկներին, որոնք այդ մասին գաղափար չունեին:

Այդ էլ ձեզնից չեմ թաքցնի: Պարզվեց, որ դավաճանը սինյոր Սիստեռիկն էր:

Երբ Չիպուլինոյի ու նրա կողմնակիցների գործերը վատացան, փաստաբանը վախենալով, թե իրեն երկրորդ անգամ կկախեն, իսկույն անցավ թշնամու կողմը:

Սինյոր Պոմիդորը Չիպուլինոյին բռնելով այնքան ուրախացավ, որ մնացած գերիներին ազատ արձակեց: Միայն Բալուկին, որպես պատիժ, փակեցին ձեղնահարկում:

Իսկ Չիպուլինոյին մի ամբողջ վաշտ Լիմոնուկների ուղեկցությամբ տարան բանտ և փակեցին նկուղային խցում:

Օրական երկու անգամ բանտապահ Լիմոնուկը պղնձե չեչոտ ամանով նրան հացից ու ջրից պատրաստած ապուր էր բերում: Չիպուլինոն ուտում էր առանց նայելու, նախ այն պատճառով, որ սաստիկ քաղցած էր, և ապա այն պատճառով, որ նրա խցում երբեք լույս չէր լինում:

Մնացած ժամանակ Չիպուլինոն պառկում էր մահճակալին ու մտածում. «Միայն թե հաջողվեր հորս տեսնել: Գոնե կարողանայի նրան իմաց տալ, որ ես էլ իր հետ եմ, միևնույն բանտում»:

Գիշեր-ցերեկ Լիմոնուկ ժամապահը ծանր կրունկներով թխկացնելով, անց ու դարձ էր անում խցի դռան մոտ:

— Գոնե ռետինե կրունկներ խփեք, — գոռում էր Չիպուլինոն, որին Լիմոնուկի ոտնաձայները չէին թողնում քնի:

Բայց բանտապահները նույնիսկ շուռ չէին գալիս նրա կողմը:

Մի շաբաթ հետո եկան նրան տանելու:

— Ո՞ր եք ինձ տանում, — հարցրեց Չիպուլինոն:

Նա կարծում էր, թե իրեն տանում են կախաղան հանելու: Բայց ընդամենը բակ էին դուրս բերում՝ զբոսանքի: Երկար միջանցքով դեպի դուռը գնալով, Չիպուլինոն զայրանում էր իր ոտքերի վրա, որոնց համար քայլելն անսովոր էր դարձել, աչքերի վրա, որոնք արդեն լույսի սովոր չէին և արցունքոտվում էին:

Բակը կլոր էր: Կալանավորները, որոնք բանտարկյալի միատեսակ, սպիտակ ու սև զուլերով շորեր էին հագել, իրար հետևից քայլում էին շրջանաձև:

Խոսելը խստիվ արգելված էր: Շրջանի կենտրոնում մի Լիմոնուկ էր կանգնած և թմբուկին խփելով չափ էր տալիս:

— Մեկ, երկու, մեկ, երկու...

Չիպուլինոն մտավ շրջանի մեջ: Նրա առջևից մի ծեր, կորամեջք ու ավեհեր կալանավոր էր քայլում: Երբեմն նա խուլ հագում էր, և դրանից նրա ուսերը ցնցվում էին:

«Խեղճ ծերուկ, — մտածեց Չիպուլինոն, — եթե այսօր ծեր չլինեիր, նման կլինեիր իմ հորը»:

Էլի մի քիչ քայլելով ծերուկն այնպես հազաց, որ ստիպված դուրս եկավ շարքից և հենվեց սյանը, որ վայր չընկնի: Չիպուլինոն նետվեց օգնելու և միայն այստեղ տեսավ նրա դեմքը, որի վրա խոր կնճիռներ էին ակոսված: Կալանավորը հանգած աչքերով նայեց տղային և հանկարծ բռնեց նրա ուսերից.

— Չիպուլի՛նո, որդի՛ս:

— Յայրի՛կ, այս ինչօրն ես ծերացել...

Յայր ու որդի լալով գրկախառնվեցին:

— Լաց մի լինի, սիրելիս, — փնթփնթաց ծերուկը: — Բաջ եղիր, Չիպուլի՛նո:

— Ես չեմ լալիս, հայրի՛կ: Միայն թե ինձ համար շատ ցավալի է քեզ այդպես հիվանդ ու թույլ տեսնել: Իսկ ես դեռ խոստանում էի քեզ ազատել բանտից:

— Դարդ մի՛ անի, մեզ համար էլ երջանիկ օրեր կգան:

Այդ րոպեին թմբկահար Լիմոնուկը ուժեղ խփեց թմբուկին:

— Էյ, միթե չե՞ք տեսնում, որ ամբողջ շարքը խառնեցիք: Առաջ եկեք:

Ճեր Չիպուլունեն շտապ բաժանվեց տղայից և կալանավորների շարքում գրավեց իր տեղը: Նրանք էլի մի քանի պտույտ կատարեցին բակում, իսկ հետո նույն կարգով շարժվեցին դեպի խցերը տանող երկար միջանցքը:

— Ես քեզ լուր կուղարկեմ, — շնչաց ծեր Չիպուլունեն հրաժեշտ տալիս:

Բայց ինչպե՞ս:

— Կտեսնես: Պի՛նդ կաց, Չիպուլի՛նո:

— Գնաս բարով, հայրի՛կ:

Ճերուկը մտավ իր խուցը: Չիպուլինոյի խուցը երկու հարկով ցածր էր, նկուղում: Հիմա, երբ Չիպուլինոն հանդիպեց հորը, խուցը այլևս նրան այնքան մութ չէր թվում: Վերջին հաշվով մի քիչ լույս թափանցում էր միջանցքի վրա բացվող փոքրիկ պատուհանից: Բայց լույսը այնքան քիչ էր, որ միայն կարելի էր տեսնել Լիմոնուկի աննկատելիորեն փայլատակող սուսերը, որ ետ ու առաջ էր դառնում միջանցքում:

Հաջորդ օրը, երբ Չիպուլինոն ժամանակն սպանելու համար հաշվում էր, թե ժամապահի սուսերը քանի անգամ կփայլատակի պատուհանի հետևում, հանկարծ լսեց, որ ինչ-որ մի տարօրինակ, հազիվ լսելի ձայն կանչում է իրեն:

— Ո՞վ է ինձ կանչում, — զարմացած հարցրեց նա:

— Նայիր պատին:

— Նայում եմ աչքերս լայն բացած, բայց պատն էլ չեմ տեսնում:

— Իսկ ես, այ՛, այստեղ եմ, պատուհանի մոտ:

— Ա՛, հիմա տեսնում եմ, դու Սարդ ես: Իսկ ի՞նչ ես անում այստեղ, չե՞ որ այստեղ ճանճեր էլ չկան:

— Ես կաղիկ Սարդն եմ: Իմ սարդոստայնը վերին հարկի խցումն է: Երբ ես ուտել եմ ուզում, իմ ցանցի մեջ միշտ էլ ուտելու բան ճարվում է:

Ինչ որ Լիմոնուկ կոպտորեն խփեց դռանը:

— Էյ, ձայնդ կտրիր, ղում հետ ես այդտեղ խոսում:

— Ես աղոթք եմ կարդում, որ ինձ մայրս է սովորեցրել, — պատասխանեց Չիպուլինոն:

— Մի քիչ կամաց աղոթիր, մեզ շփոթության մեջ ես գցում: Լիմոնուկներն այնքան բուրբ էին, որ ամենաթեթև աղմուկի դեպքում քայլերը խառնում էին:

Կաղիկ Սարդն ավելի ցած իջավ և իր սարդոստայնի նման բարակ ձայնով շնչաց.

— Հորիցդ քեզ նամակ եմ բերել:

Եվ իրոք, նա մեկնեց մի գրություն, որին սարդոստայնի բարակ թելեր էին կպած: Չիպուլինոն երկտողը խլեց և անմիջապես սկսեց կարդալ: Այնտեղ ասված էր.

«Սիրելի Չիպուլինո, ես քո բոլոր արկածների մասին գիտեմ: Մի մտածիր, որ գործերդ ավելի վատ գնացին, քան դու սպասում էիր: Զո տեղը որ ես լինեի, ես էլ քեզ նման կվարվեի: Ի՞նչ խոսք, բանտ նստելը շատ տհաճ բան է, բայց կարծում եմ, որ այստեղ շատ բան կսովորես և ժամանակ կունենաս մտածելու այն մասին, ինչ որ գլխովդ անցավ: Նա, որ կբերի քեզ այս նամակը, մեր բանտի փոստատարն է: Նրան ամեն բան կարող ես վստահել: Նրա միջոցով ինձ մի լուր ուղարկիր: Ջերմորեն գրկում եմ քեզ: Զո հայր՝ Չիպուլոնե»:

— Մինչե վերջը կարդացիր, — հարցրեց Կաղիկը:

— Այո, կարդացի:

— Լավ, իսկ հիմա նամակը դիր բերանդ, ծամիր ու կուլ տուր, որ պահակի ձեռքը չընկնի:

— Եղավ, — ասաց Չիպուլինոն նամակը ծամելով:

— Առայժմ ցտեսություն, — ասաց Կաղիկը:

— Ո՞ր ես գնում:

— Նամակներ բաժանելու:

Չիպուլինոն միայն հիմա նկատեց, որ սարդի վզից սարդոստայնից հյուսած մի պայուսակ կա, որ լեփ-լեցուն է նամակներով:

— Դու այս նամակները խցե՞րն ես տանում:

— Արդեն հինգ տարի է, ինչ այս գործով եմ զբաղվում: Ամեն առավոտ խցից խուց եմ անցնում և նամակներ հավաքում, իսկ հետո բաժանում եմ: Պահակները դեռ ոչ մի անգամ ինձ չեն բռնել և ոչ մի նամակ չեն գտել: Այսպիսով կալանավորները առանց վախենալու, թե իրենց նամակները կբռնեն, կարողանում են միմյանց հետ կապ պաշտպանել:

— Իսկ որտեղից են նրանք թուղթ ճարում:

— Նրանք բոլորովին ել թղթի վրա չեն գրում, այլ շապիկներից կտրած լաթերի վրա:

— Հիմա ես հասկանում եմ, թե ինչու նամակն այդքան տարօրինակ համ ուներ, — ասաց Չիպուլինոն:

— Իսկ թանաք շինում են բանտային ապուրից, որի մեջ մանրած աղյուս են լցնում:

— Իսկ աղյուսը որտեղից են վերցնում:

— ՉԷ՞ որ բանտի պատերն աղյուսից են:

— Հասկանալի է, — ասաց Չիպուլինոն, — վաղն արի իմ խուցը, ես քեզ նամակ կտամ:

— Անպայման կգամ, — խոստացավ փոստատարը և մի փոքր կաղալով շարունակեց իր ճամփան:

— Այդ ի՞նչ է, ոտքդ քարի՞ ես կպցրել:

— ՉԷ, հողացավ ունեմ: Հասկանո՞ւմ ես, ինձ խոնավ տեղում ապրել չի կարելի: Ես ծեր եմ, ինձ հարկավոր է գյուղ տեղափոխվել: Այնտեղ մի եղբայր ունեմ, որ եգիպտացորենի դաշտումն է ապրում: Ամեն օր նա իր ոստայնը գցում է եգիպտացորենի ցողուններին և ամբողջ օրը մաքուր օդ ու արև է վայելում: Նա շատ անգամ է ինձ իր մոտ հրավիրել, բայց ես հո չեմ կարող իմ աշխատանքը թողնել: Եթե մի գործ սկսում ես, ապա պետք է վերջացնես: Բացի այդ, իշխան Լիմոնի հետ ես իմ հաշիվներն ունեմ: Նրա պալատական ծառան սպանել է իմ հորը: Խեղճ ծերուկին խփեց ուղղակի խոհանոցում: Այնտեղ պատի վրա մինչև հիմա հազիվ նկատելի մի բիծ է մնում: Երբեմն գնում եմ ինձ համար թանկ այդ հետքը տեսնելու և ինքս ինձ

ասում եմ. «Կգա ժամանակ, երբ իշխան Լիմոնին էլ կխփեն, բայց այնպես, որ իսկի հետքն էլ չի մնա»: Ճիշտ եմ ասում:

— Ես երբեք թեզ նման ազնիվ սարդ չեմ տեսել, — հիացմունքով ասաց Չիպուլինոն:

— Ամեն մարդ իր ուժի չափով է գործ բռնում, — համեստորեն պատասխանեց փոստատարը:

Կաղալով նա հասավ լուսամուտին և ինչ-որ Լիմոնուկի հենց քթի տակով սողաց դեպի միջանցք: Իսկ Լիմոնուկն այդ բոլորին դռան կլոր անցքից նայում էր ներս, որ տեսնի ամեն ինչ կարգի՞ է թե ոչ:

Խցից դուրս գալով, Կաղալիկը սարդոստայնով իջավ ցած և գնաց իր գործին:

Գլուխ քսանչորսերորդ

Չիպուլինոն հույսը բոլորովին կտրում է

Յենց նույն օրը Չիպուլինոն իր շապկից մի կտոր կտրեց և բաժանեց մի քանի մասի:

«Ահա նամակի թուղթ, — հաճույքով մտածեց նա — Սպասենք մինչև թանաք բերեն»:

Երբ Լիմոնուկը նրան ընթրիքի համար ապուր բերեց, Չիպուլինոն չկերավ: Գդալով նա պատի աղյուսից մի քիչ քերեց և, լցնելով ապուրի մեջ, լավ խառնեց: Յետո գդալի պոչով մի քանի նամակ գրեց:

«Թանկագին հայրիկ, — ասվում էր առաջին նամակում, — դու հիշում ես, թե ես ինչ եմ խոստացել թեզ: Ահա՛, այդ բոլորն մոտենում է: Ես ամեն ինչ լավ մտածել եմ: Յամբույրներով քո՝ Չիպուլինո»:

Երկրորդ նամակում, որ հասցեագրված էր Խլուրդին, ասվում էր.

«Սիրելի ծերուկ Խլուրդ, չկարծես, թե ես թեզ մոռացել եմ: Բանտում անելիք չունեմ և անընդհատ մտածում եմ իմ հին բարեկամների մասին: Շատ մտածեցի, մտածեցի և տեսա, որ դու

երևի կկարողանաս ինձ ու իմ հորը օգնել: Գիտեմ, որ դա այնքան էլ հեշտ չէ: Բայց եթե քեզ հաջողվի մի հարյուր խլուրդ հավաքել, ապա ընդհանուր ուժերով հնարավոր կլինի բոլոր դժվարություններն հաղթահարել: Սպասում եմ քո պատասխանին, ավելի ճիշտ՝ սպասում եմ քեզ իմ խցում: Այսպես, ուրեմն, ցտեսություն: Քո վաղեմի բարեկամ՝ Չիպուլինո»:

Յետգրություն. «Այստեղ քո աչքերն այլևս չեն ցավի: Իմ նկուղում ավելի մութ է, քան թանաքամանի մեջ»:

Երրորդ նամակում ասվում էր.

«Թանկագին Բալուկ, քո մասին ոչինչ չգիտեմ, բայց հավատացած եմ, որ դու մեր անհաջողությունից չես վհատվել: Խոսք եմ տալիս քեզ, որ մենք շուտով ասպետ Պոմիդորի հաշիվը լրիվ կմաքրենք: Այստեղ ես շատ բաների մասին խորհեցի, որոնց մասին դրսում մտածելու ժամանակ չկար: Սպասում եմ քո օգնությանը: Մի նամակ էլ ուղարկում եմ քեզ՝ խլուրդի համար: Դիր պայմանավորված տեղը: Շուտով էլի կգրեմ: Բարևիր բոլորին. Չիպուլինո»:

Նամակները նա պահեց բարձի տակ, մնացած թանաքը թափեց մահճակալի տակի փոսը, դատարկ ամանը տվեց Լիմոնուկին և պառկեց քնելու:

Յետևյալ օրը նույն փոստատարը Չիպուլինոյի հորից մի ուրիշ նամակ բերեց: Ծեր Չիպուլոնեն գրում էր, որ շատ ուրախ է տղայից լուր ստանալու համար և խորհուրդ էր տալիս շապիկը ինայոդաբար օգտագործել:

Չիպուլինոն գրեթե ամբողջ շապիկ կեսը կտրեց, փռեց հատակին, մատը թաթախեց թանաքի մեջ և սկսեց գրել:

— Այդ ի՞նչ ես անում, — ընդհատեց նրան փոստատարը, — եթե դու ամեն մի նամակի վրա այդքան մեծ կտոր օգտագործես, մի շաբաթ հետո էլ ինչի՞ վրա պիտի գրես:

— Մի՛ վախեցիր, — պատասխանեց Չիպուլինոն, — մի շաբաթ հետո ես այլևս այստեղ չեմ լինի:

— Տղան, վախենում եմ սխալվես:

— Ջնարավոր է: Բայց ինձ դիտողություն անելու փոխարեն, չէի՞ր կարող արդյոք օգնել ինձ:

— Իմ ութ ոտներն էլ քո տրամադրության տակ են: Ի՞նչ ես ուզում անել:

— Ես ուզում եմ մանրամասն գծագրել բանտի հատակագիծը: Ճշտությամբ նշել բոլոր հարկերը, արտաքին պատը, բակը և այլն:

— Այդ արդեն դժվար չէ. ես բանտի ամեն մի սանտիմետրը գիտեմ:

Կաղ սարդի օգնությամբ Չիպուլինոն գծագրեց բանտի հատակագիծը և բակի տեղը մի խաչ դրեց:

— Ինչո՞ւ ես այստեղ խաչ դնում, — հարցրեց Սարդը:

— Մի ուրիշ անգամ կբացատրեմ, — խուսափելով պատասխանեց Չիպուլինոն, — իսկ առայժմ քեզ երեք նամակ կտամ: Մեկը կտաս հորս, իսկ այս երկուսը և հատակագիծը հարկավոր է տանել ընկերոջս:

— Բանտից դ՞ուրս:

— Այո՛, երիտասարդ կոմս Բալուկին:

— Իսկ հեռո՞ւ է ապրում նա:

— Կոմսի ամրոցում, բլրի վրա:

— Հա՛, գիտեմ որտեղ: Հորեղբորս տղան ծառայում է այդ ամրոցի ձեղնահարկում: Ինչքան է ինձ իր մոր հրավիրել, բայց այդպես էլ ազատ ժամանակ չունեցա: Ասում են, այնտեղ շատ գեղեցիկ է: Ի՞նչ կա որ, կգնամ, միայն ռ՛վ պիտի իմ փոխարեն փոստը բաժանի:

— Թեև դու մի ոտքով կաղում ես, բայց գնալ-գալու համար քեզ երկու օր է պետք: Ես կարծում եմ, որ երկու օր կարելի է առանց նամակի յուրա գնալ:

— Ես ոչ մի օր էլ չե՛ի ուզենա բացակայել, բայց եթե հարկավոր է այդ նամակները շտապ տեղ հասցնել...

— Շանտ շտապ, — ընդհատեց Չիպուլինոն, — խոսքը վերաբերում է չափազանց կարևոր մի գործի, որից կախված է կալանավորների ազատագրությունը:

— Բոլոր կալանավորների:

— Այո՛, բոլոր, — պատասխանեց Չիպուլինոն:

— Այդ դեպքում, հենց որ այսօրվա փոստը բաժանեմ, ճանապարհ կընկնեմ:

— Սիրելի բարեկամ, չգիտեմ, թե ինչպես շնորհակալ լինեմ քեզանից:

— Սա շնորհակալության համար չեմ անում, — պատասխանեց կաղ փոստատարը, — եթե բանտը դատարկվի, և վերջապես կկարողանամ բնակվել գյուղում:

Նամակները նա դրեց պայուսակի մեջ և կաղալով գնաց դեպի պատուհանը:

— Ցտեսություն, հաջողություն քեզ, — շնչաց Չիպուլինոն, հայացքով ուղեկցելով փոստատարին, որն այս անգամ անվտանգության համար մագլցում էր առաստաղով:

Այն վայրկյանից, երբ Սարդը կորավ պատուհանի հետևում, Չիպուլինոն սկսեց հաշվել ժամերն ու րոպեները: Ժամանակը շատ դանդաղ էր անցնում:

Երբ մի օր անցավ, Չիպուլինոն մտածեց. «Յիմա նա ամբողջ մոտերքում կլինի: Բայց ճանապարհը կգտնի՞: Ինչ խոսք, որ կգտնի. ամբողջ մոտերքում շատ սարդեր կան և եթե իմանան, որ փոստատարը կոմսի ձեռնահարկում ապրող նշանավոր սարդի բարեկամն է, մեկն ու մեկը երևի կուղեկցի նրան»:

Եվ Չիպուլինոն պատկերացրեց, թե ինչպես է փոքրիկ, պառաված ու սպիտակած սարդիկը կաղալով մագլցում ձեռնահարկ, ինչպես է իր հորեղբոր տղայից իմանում Բալուկի սենյակի տեղը, ապա իջնում նրա մոտ և, կամաց արթնացնելով՝ նամակները տալիս նրան:

Չիպուլինոն ուղղակի չգիտեր, թե ինչ անի. ամեն ժամ, ամեն րոպե սպասում էր փոստատարի վերադարձին: Սակայն երկրորդ, երրորդ օրն էլ անցավ, բայց Կաղլիկ Սարդն այնպես էլ չէր երևում: Կալանավորները նամակ չստանալով, շատ անհանգստանում էին: Գնալիս փոստատարը ոչ ոքի չէր հայտնել իր գաղտնի հանձնարարության մասին, միայն ասել էր, թե երկու օրով արձակուրդ է վերցնում: Իսկ ինչո՞ւ չէր վերադառնում: Չլինի՞ որոշել էր այլևս բանտ չվերադառնալ և գնալ գյուղ, որի մասին նա այնքան

երագում էր: Կալանավորները չգիտեին, թե ինչ ենթադրեն: Սակայն ամենից շատ Չիպոլինոն էր անհանգստացել:

Չորրորդ օրը կալանավորներին զբոսանքի հանեցին: Չիպոլինոն սկսեց աչքերով փնտրել հորը: Բայց սա բակում չէր, և ոչ ոք չէր կարողանում ասել, թե ինչ է պատահել: Մի քանի անգամ շրջանցելով բակը, Չիպոլինոն վերադարձավ իր խուցը և հուսահատված նետվեց մահճակալի վրա: Նա գրեթե իր ամբողջ հույսը կորցրել էր:

Գլուխ քսանհինգերորդ

Կառլիկ Սարդի ու Յոթ ու կեսի արկածները

Իսկ ի՞նչ եղավ փոստատար սարդը: Հիմա ձեզ կպատմեմ:

Բանտից դուրս գալով, նա գնաց փողոցով, աշխատելով որքան կարելի է մոտ լինել մայթին, որպեսզի սայլերի, սայլակների ու կառքերի տակ չընկնի: Բայց քիչ էր մնացել ընկներ հեծանվի տակ: Եթե ժամանակին մի կողմ չփախչեր, տեղն ու տեղը կճզմվեր:

«Աստված իմ, — մտածեց նա, — իմ ճանապարհորդությունը քիչ մնաց վերջանար առանց սկսվելու»:

Բարեբախտաբար իրենից քիչ հեռու նկատեց անձրևաջրի խողովակի բաց անցքը և ներս մտավ: Նոր էր մտել, երբ մեկը նրան ձայն տվեց: Իր անունը լսելով, Կառլիկը շուռ եկավ և տեսավ իր հեռավոր ազգականներից մեկին: Այդ ազգականը մի ժամանակ ապրում էր կոմսի խոհանոցում: Սրա անունը Յոթ ու կես էր, որովհետև յոթ ու կես ոտք ուներ միայն: Ութերորդ ոտքի կեսը կորցրել էր մի դժբախտ դեպքի հետևանքով, երբ անհաջող ընդհարում էր ունեցել ավելի հետ:

Կառլիկը քաղաքավարի բարևեց իր հին բարեկամին, և Յոթ ու կեսն ուրախ շաղակրատելով ամեն ինչի մասին, իսկ ամենից շատ այն մասին, թե ինչպես կորցրեց իր ուրթերորդ ոտքի կեսը, քայլեց նրա հետ:

Յոթ ու կեսը հաճախ կանգ էր առնում, որպեսզի ավելի մանրամասն պատմի չարաբաստիկ ավելի հետ ունեցած իր ճակատագրական հանդիպման մասին, բայց Կադլիկը կանգ չէր առնում և, Յոթ ու կեսին հետևից գցած, առաջ էր գնում, վախենալով, թե կարող է գայթակղվել և իր ուղեկցի հետ երկար ու սրտառուչ զրույցի բռնվել:

— Ո՛ր ես այդպես շտապում, — վերջապես հարցրեց Յոթ ու կեսը:

— Գնում եմ հորեղբորս տղայի մոտ, — խուսափելով պատասխանեց Կադլիկը:

Բանտում նա գաղտնապահության էր սովորել, դրա համար էլ լռեց այն մասին, թե Չիպոլինոյից Բալուկին ու Խլուրդին նամակ է տանում:

— Յորեղբորդ տղայի՞, — հարցրեց Յոթ ու կեսը, — նա, որ ապրում է ամրոցում: Նա ինձ վաղուց է կանչում իր ձեղնահարկը: Գիտե՞ս ինչ, ես կգամ քեզ հետ, մանավանդ որ հիմա ոչ մի շտապ գործ չունեմ:

— Կադլիկը նույնիսկ չգիտեր դրա համար ուրախանա՞ր թե տխրեր: Բայց հետո որոշեց, որ երկուսով ավելի ուրախ կլինի. բացի այդ, եթե ճանապարհին իր հետ մի բան պատահեր, սա կարող էր իրեն օգնել:

— Ի՞նչ կա որ, գնանք, — սիրալիր ասաց նա, — միայն թե չէ՞իր կարող մի քիչ արագ քայլել: Բանն այն է, որ ես շտապ հանձնարարություն ունեմ, և չէի ուզե՞նա ուշանալ:

— Դու դեռ բանտում փոստատա՞ր ես, — հարցրեց Յոթ ու կեսը:

— Ոչ, ազատվել եմ, — պատասխանեց Կադլիկը:

Թեև Յոթ ու կեսը նրա բարեկամն էր և նույնիսկ ազգականը, բայց որոշ բաներ կան, որոնց մասին պետք չէ ասել նույնիսկ ամենամոտիկներին:

Հանգիստ զրուցելով, նրանք քայլեցին, մինչև քաղաքը վերջացավ: Այստեղ որոշեցին անձրևաջրի խողովակից դուրս գալ: Կադլիկը թեթևացած շունչ քաշեց, որովհետև խողովակի մեջ օդը շատ ծանր էր, և նրա գլուխը պտտվում էր:

Շուտով դաշտ դուրս եկան: Հրաշալի օր էր, քամին օրորում էր բուրավետ խոտը: Յոթ ու կեսը այնպես ագահորեն էր բերանը բացել, կարծես ուզում էր ամբողջ օդը կուլ տալ:

— Ինչքան լավ է այստեղ, — բացականչեց նա: — Ահա արդեն երեք տարի է, որ իմ անձրևաչրի խողովակից քիթս դուրս չեմ հանել: Իսկ հիմա արդեն ինձ թվում է, թե ես ոչ մի գնով այնտեղ չեմ վերադառնա: Չտեղափոխվե՞մ այս խաղաղ ու անմարդաբնակ գյուղական վայրը:

— Կարծեմ այստեղ շատ խիտ է բնակչությունը, — առարկեց Կադլիկը, ցույց տալով մրջյունների երկար շարքը, որոնք մի թրթուր էին քարշ տալիս մրջնաբուն:

— Զաղաքացի սինյորներին երևի դուր չեն գալիս մեր գյուղական վայրերը, — չարությամբ ասաց իր բնի շեմին նստած ծղրիդը:

Յոթ ու կեսը որոշեց ինչ գնով էլ լինի կանգել և բացատրել ծղրիդին, թե ինքը ի՛նչ կարծիք ունի գյուղական հասարակության մասին: Ծղրիդը պատասխանեց: Յոթ ու կեսն առարկեց: Ծղրիդն ինչ-որ բան ծղրտաց: Յոթ ու կեսը չհամաձայնեց նրա հետ:

Մի խոսքով՝ խոսակցությունը երկարեց, իսկ ժամանակը առաջ էր գնում ու ոչ մի րոպե կանգ չէր առնում:

Վիճաբանողների շուրջը մեծ բազմություն հավաքվեց՝ ծղրիդներ, բզեզներ, գատիկներ ու նույնիսկ մի քանի մժղուկ, որոնք զրույցին մասնակցում էին որոշ հեռավորությունից:

Ճնճղուկը, որ մինչ այդ ցույց էր տալիս, թե կարգավորում է փողոցային երթևեկությունը, ուշադրություն դարձրեց հավաքվածների վրա և թռավ եկավ, որպեսզի ցրի նրանց: Այստեղ նա անմիջապես նկատեց Յոթ ու կեսին: Ծի՛վ-ծիրիրի՛: Վատ պատահ չի իմ ծիտիկների համար, — ծվծվաց նա:

Լավ էր, որ մժղուկը ժամանակին տագնապ բարձրացրեց.

— Փախե՛ք, փախե՛ք, ոստիկանը:

Մի ակնթարթում բոլոր բզեզներն ու գատիկները չքվեցին, կարծես գետնի տակ անցան: Յոթ ու կեսը և Կադլիկը թաքնվեցին ծղրիդի բնում, որը դուռն շտապ փակեց ու շեմքին պահակ կանգնեց:

Յոթ ու կեսը սարսափից ամբողջովին դողում էր, իսկ Կաղիկը սկսեց արդեն զոջալ, որ իր հետ վերցրել է մի շատախոսի, որն առաջին պատահածի հետ վեճի բռնվեց և գրավեց ոստիկանության ուշադրությունը:

«Ահա և ինձ նկատի ունեցան, — մտածում էր ծեր փոստատարը: — Ճնճողուկը անպայման իր մատյանում գրեց իմ մասին: Իսկ ով ընկնի այդ մատյանը, ոչ մի լավ բան թող չսպասի»:

Նա դարձավ Յոթ ու կեսին և ասաց.

— Լսիր, քավոր, ինչպես տեսնում եմ, մեր ճանապարհորդությունը քանի գնում վտանգավոր է դառնում: Գուցե կբաժանվե՞նք իրարից:

— Ճիշտն ասած, դու ինձ զարմացնում ես, — բացականչեց Յոթ ու կեսը, — սկզբում ինքդ համոզեցիր, որ հետո գամ, իսկ հիմա լքում ես դժբախտության մեջ: Խոսք չկա, լավ ընկեր ես:

— Բայց դու ինձ առաջարկեցիր միասին գնալ: Ասենք, ոչինչ, այդ չէ կարևորը: Ես ամրոց եմ գնում կարևոր հանձնարարությամբ և այստեղ նստելու ժամանակ չունեմ, թեև հյուրասիրության համար շատ շնորհակալ եմ ծղրիդից:

— Լավ, ես քեզ հետ կգամ, — համաձայնեց Յոթ ու կեսը, — հորեղբորդ տղային խոստացել եմ այցելել իրեն և խոսքիս տերը կլինեմ:

— Դե ուրեմն գնանք, — ասաց Կաղիկը:

— Սիկյորներ, մի բռնե՛ք սպասեցե՛ք, ես նայեմ դուրս, տեսեմ ոստիկանը որտեղ է, — առաջարկեց զգույշ ծղրիդը:

Պարզվեց, որ ճնճողուկը դեռ իր պոստումն է: Նա ցածր թռչելով, ուշադիր նայում էր խոտերին:

Յոթ ու կեսը մտահոգ հառաչեց և ասաց, որ նման պայմաններում ոչ մի քայլ չի անի:

— Որ այդպես է, ես մենակ կգնամ, — վճռականորեն ասաց Կաղ Սարդը:

— Ի՞նչ ես ասում, ես ոչ մի կերպ քեզ թույլ չեմ տա, որ կյանքդ վտանգի ենթարկես, — զայրացավ Յոթ ու կեսը, — ես ճանաչում էի

հանգուցյալ հորդ և ի սեր նրա հիշատակի պարտավոր եմ թույլ
չտալ, որ դու գնաս դեպի անխուսափելի կործանում:

Մտում էր նստել ու սպասել: Եվ քանի որ ճնճուկը չէր հոգնում
և միտք չուներ գնալ հանգստանալու, ամբողջ օրը անցավ
սպասողական ծանր դրության մեջ: Մայրամուտին ոստիկանը
վերջապես գնաց իր գորանոցը՝ գերեզմանոցի մոտակա սոսիները, և
մեր ճանապարհորդները սիրտ արեցին նորից ճանապարհ ընկնել:

Կաղիկը շատ էր վշտացած, որ մի ամբողջ օր կորցրեց:

Գիշերը նրանք կարող էին ցերեկվա տեղը հանել և
բավականաչափ հեռու գնալ, բայց Յոթ ու կեսը հանկարծ
հայտարարեց, թե շատ հոգնել է և ուզում է հանգստանալ:

— Դա հնարավոր չէ, — բողոքեց Կաղիկը, — միանգամայն
անհնարին է: Ես այլևս չեմ կարող կանգ առնել:

— Ուրեմն ուզում ես ինձ գիշերը թողնել կես ճանապարհին:
Այդպէս ես վարվում քո հոր հին ընկերոջ հետ: Շատ կուզենայի, որ
խեղճ ծերուկը հիմա կենդանի լիներ և բարեկամների հետ այնքան
անգուլթ վարվելու համար մի լավ հախիցդ գար:

Կաղիկը ստիպված էր այս անգամ էլ հնազանդվել:
Ճամփորդները ինչ-որ մի եկեղեցու ջրհորդանի հետևում
հանգստանալու համար տեղ գտան:

Կարիք չկա ասելու, որ Կաղիկն ամբողջ գիշերը աչք չկպցրեց և
կատաղությամբ նայում էր իր ճամփորդության ընկերոջը, որը
փառահեղ կերպով խռմփացնում էր:

«Եթե այս վախկոտն ու շատախոսը չլիներ, ես հիմա տեղ
հասած կլինեի, գուցե նույնիսկ լինեի վերադարձի ճանապարհին»,
— մտածում էր նա:

Լույսը բացվելուն պես նա առանց երկար-բարակ մտածելու Յոթ
ու կեսին արթնացրեց:

— Գնանք, — հրամայեց նա:

Բայց Կաղիկը դեռ ստիպված էր սպասել, մինչև Յոթ ու կեսն
իրեն կարգի բերեր: Անպիտան ծերուկը յոթ ու կես ոտները խնամքով
մաքրեց, վերջացրեց և միայն դրանից հետո ասաց, որ պատրաստ է
ճանապարհը շարունակել:

Առավոտն անցավ առանց որևէ արկածի:

Կեսօրվա մոտ ճամփորդներն ընկան մի բաց տեղ, ուր բազմաթիվ անհասկանալի հետքեր կային:

— Տարօրինակ տեղ է, — ասաց Յոթ ու կեսը, — կարելի է կարծել, թե այստեղից մի ամբողջ բանակ է անցել:

Չեռվում մի ցածրիկ շինություն էր երևում, որտեղից ինչ-որ բարձր, տազնապալից ձայներ էին գալիս:

— Ես հետաքրքրասեր չեմ, — նորից քրթմնջաց Յոթ ու կեսը, — բայց իմ ութերորդ թաթի երկրորդ կեսն էլ կտայի, որպեսզի իմանայի, թե որտեղ ենք, և ովքեր են բնակվում այնտեղ:

Բայց Կաղիկն առանց շուրջը նայելու, արագ-արագ առաջ էր գնում: Նա սարսափելի հոգնել էր, որովհետև ամբողջ գիշեր չէր քնել: Բացի այդ, գլուխն էլ շոգից ցավում էր: Նրան թվում էր, թե երբեք չի հասնի ամրոցին, և թվում էր ինչքան գնում են, ամրոցն այնքան հեռանում է: Ո՞վ գիտե, ճանապարհը չի՞ շփոթել: Չէ՞ որ ամրոցի բարձր աշտարակները արդեն պետք է երևային... Դե, իհարկե, նրանք ճանապարհը կորցրել են: Չէ՞ որ երկուսն էլ ծերացած են և ակնոցներ չունեն (որովհետև ոչ ոք դեռ ակնոցավոր սարդ չի տեսել): Գուցե անցել էին ամրոցի մոտով և չէին նկատել:

Կաղիկն ամբողջովին տարված էր իր տխուր մտքերով, երբ մի փոքրիկ կանաչ որդուկ ճչալով սլացավ նրա մոտով.

— Ով կարող է թող ազատվի, հավերժ...

— Կորանք, — սարսափահար ծվաց Յոթ ու կեսը, որը շատ էր լսել այդ մեծ ու ազահ թռչունների մասին:

Իրեն կորցրած, նա արագ փոխելով իր իր յոթ բարակ ու երկար ոտները և կախ գցելով ութերորդ խեղված ոտքը, դիմեց փախուստի:

Նրա կաղ ուղեկիցն այնքան ճարպիկ չէր. նախ այն պատճառով, որ նա շատ էր զբաղված իր մտքերով, երկրորդ՝ երբեք դեռ հավերժ չէր հանդիպել և նույնիսկ չէր լսել նրանց մասին: Բայց երբ այդ սարսափելի թռչուններից մեկը կտուցը բարձրացրեց, որ խփի, նա այնքան սիրտ ունեցավ, որ նամակների պայուսակն նետեց ընկերոջն ու ճչաց.

— Տար...

Բայց նա այլևս ժամանակ չունեի ասելու, թե ումն են ուղղված այդ նամակները: Մի ակնթարթում հավը կուլ տվեց նրան:

Խեղճ փոստատար: Նա այլևս նամակներ չի տանի խցից խուց և կալանավորների հետ չի շաղակրատի: Ո՛չ ոք այլևս չի տեսնի թե ինչպես է նա կաղալով բարձրանում բանտի խոնավ ու մռայլ պատերն ի վեր:

Ընկերոջ կործանումը Յոթ ու կեսին փրկեց: Նա կարողացավ անցնել հավանոցը հարթակից բաժանող ցանցի հետևը և դեռ հավը չէր դարձել նրա կողմը, երբ նա արդեն անվտանգ տեղումն էր: Դրանից հետո նա երկար ժամանակ գիտակցությունը կորցրեց:

Երբ Յոթ ու կեսն ուշքի եկավ, ոչ մի կերպ գլխի չէր ընկնում, թե որտեղ է գտնվում: Արևն արդեն մայր էր մտնում. ուրեմն՝ նա մի բանի ժամ ուշաթափված է եղել:

Իրենից մի երկու քայլ հեռու նա տեսավ սարսափելի հավին, որն ամբողջ ժամանակ աչքը նրանից չէր կտրում և աշխատում էր երկաթալարի ցանցի միջով կտցել նրան:

Այդ սարսափելի կտուցը սարդին հիշեցրեց Կառլիկի տխուր վախճանը: Յոթ ու կեսը ծանր հառաչեց իր մեռած ընկերոջ համար և փորձեց տեղից շարժվել: Եվ միայն այստեղ նկատեց, որ իր խեղված ութերորդ ոտքի վրա ինչ-որ ծանրություն է ընկած: Դա այն փոստային պայուսակն է, որ Կառլիկը մեռնելուց առաջ նետեց իր կողմը:

«Իմ քաջ ընկերը կտակեց՝ նամակները տանել ինչ-որ մեկին տալ, — մտածեց Յոթ ու կեսը, — բայց ո՞ւմ, ո՞ւմ... Լավ չի՞ լինի այս պայուսակը նետել առաջին պատահած առուն և վերադառնալ անձրևաջրի խողովակը: Այնտեղ ոչ ճնճղուկ կա, ոչ էլ հավ: Ճիշտ է, խողովակի մեջ օդը շատ հեղձուցիչ է, բայց անվտանգությունը լիակատար է: Բայց թե աչքի անցկացնեմ պայուսակը, միայն հետաքրքրության համար»:

Նա սկսեց նամակները կարդալ: Կարդում ու արցունքները չէր կարողանում զսպել: Մի բանի անգամ արցունքները սրբեց, որ կարողանա ընթերցանությունը շարունակել:

— Եվ ինձ ոչի՛նչ չասաց իր հանձնարարության մասին: Ես էլ ոչինչ չիմանալով, անընդհատ իմ շատախոսությամբ նրան ետ էի

զգում, այն ժամանակ, երբ նա պետք է շտապեր: Ո՛չ, ո՛չ, հիմա ինձ ամեն ինչ պարզ է, Կադլիկն իմ մեղքով զոհվեց, և ես պարտավոր եմ կատարել նրա վերջին կամքը: Թեկուզ և մեռնեմ, գոնե հավատարիմ ընկերոջս հիշատակը հարգելու համար մի բան արած կլինեմ:

Յոթ ու կեսը ճանապարհ ընկավ նույնիսկ առանց քնելու և լուսաբացին բարեհաջող հասավ ամրոց: Նա հեշտությամբ գտավ ձեղնահարկը, և նրան ջերմորեն ընդունեց ազգական սարդը: Եղածի մասին մի փոքր զրուցելուց հետո, նրանք նամակները տվեցին Բալուկին, որը խռովությանը մասնակցելու համար պատժված լինելով, դեռևս նստած էր ձեղնահարկում: Յետո ամրոցում ապրող սարդը Յոթ ու կեսին առաջարկեց ամբողջ ամառն անցկացնել իր մոտ, և ծեր շաղակրատը սիրով համաձայնեց: Նրա համար շատ սարսափելի էր վերադառնալը:

Գլուխ քսանվեցերորդ

Որտեղ պատմվում է թվաբանությունն չիմացող մի Լիմոնուկի մասին

Մի անգամ առավոտյան Չիպոլինոյին ապուր բերող Լիմոնուկը ամանը գետին դնելով, խստությամբ ասաց.

— Զո ծերուկը վատ է զգում իրեն: Նա շատ հիվանդ է:

Չիպոլինոն ուզում էր հոր մասին ավելի շատ բան իմանալ, բայց Լիմոնուկը խուսափելով միայն ասաց, որ ծեր Չիպոլոնեն խցից դուրս գալ չի կարող:

— Նայի՛ր, մարդու բան չասես, թե ես քեզ հետ խոսել եմ, — ավելացրեց Լիմոնուկը, — թե չէ ինձ դուրս կանեն այստեղից, իսկ ես ընտանիք եմ պահում:

Չիպոլինոն խոստացավ լռել: Ասնեք, առանց խոսք տալու էլ նա չէր ուզենա վտանգի ենթարկել այդ հասակն առած, ընտանիքավոր մարդուն, որը Լիմոնի զգեստ էր հագել: Պարզ էր, նա բանտում ծառայում էր միայն այն պատճառով, որ երեխաներին կերակրելու համար ուրիշ աշխատանք չէր ճարել:

Չքոսանքի օր էր: Կալանավորները դուրս եկան բակ և շրջան կազմած սկսեցին պտտվել: Լիմոնուկը տակտով թմբկահարում էր.

— Մէկ, երկու, մէկ, երկու:

«Մէկ, երկու», — ինքն իրեն կրկնում էր Չիպուլինոն: — Իմ փոստատարն անհետ կորավ, կարծես գետնի տակն անցավ: Արդէն տասն օր է ինչ գնացել է, իսկ վերադարձի ոչ մի հույս չկա: Նա իմ նամակները ոչ ոքի չի տվել, այլապես խլուրդն հիմա այստեղ կլիներ: Մէկ, երկու... Հայրս հիվանդ է, ուրեմն՝ փախչելու մասին չարժե մտածել: Հիվանդին ինչպէս կարելի է բանտից դուրս տանել, ինչպէս բուժել: Ո՞վ գիտե, թե ինչքան պիտի թաքնվենք անտառում կամ ճահճում՝ առանց օթևանի, առանց բժշկի ու դեղերի... Ա՛խ, Չիպուլինո, ազատության մասին մտածելդ թո՛ղ և պատրաստվիր երկար տարիներ, գուցե և ամբողջ կյանքդ, բանտում անցկացնելու... Եվ մահից հետո էլ մնալու այստեղ», — մտովի ավելացրեց նա, նայելով բանտի գերեզմանոցին, որ երևում էր բակը շրջապատող պարսպի փոքրիկ պատուհանից:

Այդ օրը զբոսանքը սովորականից ավելի տխուր էր անցնում: Կալանավորներն իրենց զուլավոր բաճկոններով ու վարտիքներով կուչ եկած շրջում էին բակում: Ոչ ոք չէր փորձում ամեն անգամվա նման գոնե մի քանի խոսք փոխանակել ընկերոջ հետ:

Բոլորը ազատություն էին երագում, բայց այդ օրը ազատությունը այնքան հեռու էր թվում: Ավելի հեռու, քան արևը, երբ նա անձրևոտ օրերին թաքնվում է ամպերի հետևում: Եվ կարծես նրանց ջգրու, սկսեց բարակ սառը անձրև մաղել: Կալանավորները ցրտից ուսերը ցնցելով, շարունակում էին իրենց զբոսանքը, որը բանտի օրենքներով, ինչ եղանակ էլ լիներ, պետք է տեղի ունենար:

Հանկարծ Չիպուլինոն լսեց, կամ գուցե նրան թվաց, թե մեկը կանչում է իրեն:

— Չիպուլի՛նո, — ավելի պարզ կրկնվեց ծանոթ ձայնը, — հետևյալ շրջանը կատարելիս այստեղ մի քիչ կանգ առ:

«խլուրդն է, — մտածեց Չիպուլինոն, և ուրախությունից ամբողջ արյունը խփեց երեսին, — նա եկավ, նա այստե՛ղ է»:

Բայց ինչպէս վարվի հոր հետ, որը փակված է խցում:

Չիպուլինոն այնքան էր ուզում շուտ հասնել այնտեղ, որտեղից լսեց ծանոթ ձայնը, որ տրորեց առջևից գնացող բանտարկյալի

կրունկը: Սա ետ դարձավ և փնթփնթաց.

— Նայիր, թե ոտքդ ուր ես դնում:

— Մի՛ նեղացիր, շշնջաց Չիպուլինոն, — հաղորդիր բոլորին, որ քառորդ ժամից բոլորս բանտից դուրս կգանք:

— Խելքդ թռցրե՛լ ես, — զարմացավ բանտարկյալը:

— Արա, ինչ քեզ ասում են, հաղորդիր, որ բոլորը պատրաստ լինեն: Մենք զբոսանքը չվերջացրած՝ կփախչենք:

Բանտարկյալը մտածեց, եթե հաղորդի էլ, ոչ մի վատ բան չի լինի:

Մարդիկ դեռ մի պտույտ չէին կատարել, երբ զգացվեց, որ նրանց քայլերն ավելի առույգ ու հաստատ դարձան: Մեջքներն ուղղվեցին: Նույնիսկ թմբուկ խփող Լիմոնուկն այդ նկատեց և որոշեց այդ առթիվ գովել կալանավորներին:

— Ա՛յ, այդպես լավ է, — գոռաց նա, — այդ-պէս, այդ-պէս, կուրծքների դուրս, փորների ներս: Ուսներդ ետ... մե՛կ, երկու, մե՛կ, երկու...

Այդ արդեն ոչ թե կալանավորների զբոսանքի էր նման, այլ ռազմական վարժության:

Երբ Չիպուլինոն հասավ այն տեղը, որտեղից Խլուրդը նրան կանչում էր, նա քայլերը դանդաղեցրեց և ականջ դրեց.

— Ընդհատակյա անցքը պատրաստ է, — գետնի տակից լսեց նա, — քեզ միայն պետք է մի քայլ դեպի ձախ թռչել և հողը քո ոտների տակ փուլ կգա: Մենք վերևում միայն մի բարակ շերտ ենք թողել...

— Լավ, բայց արի սպասենք մինչև մյուս պտույտը, — կամաց ասաց Չիպուլինոն:

Խլուրդն էլի ինչ-որ բան ասաց, բայց Չիպուլինոն արդեն անցել էր:

Նա նորից տրորեց առջևից գնացող կալանավորի ոտքը և շշնջաց.

Չաջորդ պտույտին, երբ ես կխփեմ քո ոտքին, դու մի քայլ գնա դեպի ձախ և թռիր: Միայն թե ուժեղ կթռչես:

Կալանավորն ինչ-որ բան էր ուզում հարցնել, բայց այդ թույլին թմբկահարը նայեց նրանց կողմը:

Հարկավոր էր մի կերպ նրա ուշադրությունը շեղել: Ամբողջ շրջանով մեկ շշուկներ պտտվեցին, և բանտարկյալներից մեկը բարձր ճչաց.

Ա՛յ...

— Ի՞նչ պատահեց, — նրա կողմը շուռ գալով, գոռաց Լիմոնուկը:

— Կոշտուկս տրորեցին, — լացակումաց պատասխանեց կալանավորը:

Այն ժամանակ, երբ Լիմոնուկը սպառնագին նայում էր հակառակ կողմը, Չիպուլինոն մոտենում էր այն տեղին, որտեղ գտնվում էր խլուրդների ստորանցքի մուտքը: Նա ոտքի թաթը կպցրեց առջևից գնացող ընկերոջ ոտքին: Սա թռավ ձախ ու տեղն ու տեղը անհայտացավ: Գետնին մնաց մի բավականաչափ լայն անցք, այնպես որ մարդ հանգիստ կարող էր ընկնել այնտեղ: Չիպուլինոն շրջանով մեկ կարգադրություն հաղորդեց: Յուրաքանչյուր պտույտին կթռչի նա, որին ես ոտքով կխփեմ:

Այդպես էլ գնաց: Յուրաքանչյուր պտույտը կատարելիս, մեկն ու մեկը թռչում էր դեպի ձախ և անհետ կորչում: Որպեսզի Լիմոնուկն այդ չնկատի, կալանավորներից որևէ մեկը հակառակ կողմից ճչում էր.

— Ա՛յ, ա՛յ...

— Ի՞նչ պատահեց, — խստորեն հարցնում էր Լիմոնուկը:

— Կոշտուկս տրորեցին, — լսվում էր միշտ միևնույն պատասխանը:

— Այսօր ձեր արածը միայն այդ է, անընդհատ իրար ոտք եք տրորում: Ուշադիր եղեք:

Հինգ-վեց պտույտից հետո, Լիմոնուկն սկսեց մտահոգված նայել իր շուրջը պտտվող կալանավորներին:

«Տարօրինակ է, — մտածում էր նա, — ես կարող եմ երդվել, որ մարդիկ քչացան»:

Բայց հետո մտածեց, որ միայն այդպես թվում է իրեն: Ո՞ր կարող էին նրանք գնալ: Դարբասը փակ է, պատերը բարձր:

— Բայց էլի ինձ թվում է, թե քչացան, — մռթմռթաց նա:

Ցանկանալով համոզվել, որ սխալվել է, Լիմոնուկը սկսեց կալանավորներին հաշվել, բայց նրանց թիվը մեկ ավելանում էր, մեկ պակասում: Վերջապես նա թողեց այդ գործը, որպեսզի վերջնականապես ամեն ինչ չխառնի: Եվ այստեղ նա նայեց շրջանին ու սարսափահար սկսեց աչքերը տրորել: Մի՞թե այդ հնարավոր բան է: Կալանավորները համարյա երկու անգամ պակասել էին:

Նա աչքերը հառեց երկինք, որպեսզի տեսնի, թե կալանավորներից որևէ մեկը այնտեղ չի՞ թռել, բայց հենց այդ ժամանակ մեկն էլ թռավ ստորանցքի մեջ և մի ակնթարթում անհետացավ:

Հիմա ընդամենը քսանութ հոգի էր մնացել: Նրանց մեջ էր նաև Չիպուլինոն, որը չէր դադարում հոր մասին մտածելուց: Ամեն անգամ, երբ նրա աչքի առաջ մի կալանավոր էր անհայտանում փոսի մեջ, նրա սիրտը ճմլվում էր. «Ա՛խ, եթե սա իմ հայրը լիներ»:

Բայց ծեր Չիպուլինոն փակված էր իր խցում, նրան ազատելու մասին մտածելն անգամ ավելորդ էր:

Վերջապես Չիպուլինոն որոշեց այնպես անել, որ բոլոր կալանավորները փախչեն, իսկ ինքը հոր հետ մնա բանտում: Ազատություն պետք չէ իրեն, եթե չպետք է կարողանա ազատությունից օգտվել ծեր Չիպուլինեի հետ միասին:

Արդեն ընդամենը տասնհինգ բանտարկյալ էր մնացել... տասը... ինը, ութ, յոթ...

Ապշած Լիմոնուկը շարունակում էր թմբուկը խփել:

«Այս ի՞նչ սատանայական խաղ է, — վախեցած մտածում էր նա, — ամեն պտույտին մի հոգի կորչում է: Ի՞նչ պիտի անեմ: Մինչև զբոսանքի վերջը դեռ յոթ թույն կա: Կարգը կարգ, իսկ եթե մինչև զբոսանքի վերջը բոլորն անհետանան... քանի՞սն են մնացել... մեկ, երկու, երեք, չորս, հինգ, վեց... ի՞նչ եմ ասում, միայն հինգն են մնացել»:

Չիպուլինոն շատ հուզված էր: Նա փորձեց խլուրդին կանչել, բայց պատասխան չլսեց: Իսկ նա այնպես էր ուզում իր բարի ընկերոջը բացատրել, թե ինչու չի կարող փախչել...

Յենց այդ րոպէին Լիմոնուկը որոշեց վերջ տալ այդ կախարդանքին, որի պատճառով այդքան խորհրդավոր կերպով անհայտանում էին կալանավորները:

Նա ճցաց.

— Կանգնի՛ր, ո՛չ մի քայլ...

Չիպուլինոն և Էլի չորս կալանավորներ կանգնեցին և նայեցին իրար:

— Շուտ փախե՛ք, քանի դեռ Լիմոնուկը տագնապ չի բարձրացրել, — բացականչեց Չիպուլինոն:

Կալանավորներն էլ չսպասեցին, որ իրենց նորից ասեն, և մեկը մյուսի հետևից թռան փոսի մեջ:

Չիպուլինոն տխուր նայեց նրանց հետևից, բայց հանկարծ զգաց, որ իր ոտքերից բռնում են: Ընկերները գլխի ընկան, որ նա ուզում է մնալ, և առանց երկար-բարակ մտածելու, քարշ տվեցին ստորանցքի մեջ:

— Յիմար մի՛ եղիր, — ասում էին նրանք, — եթե ազատ լինես, ավելի շուտ կօգնես հորդ: Փախչէ՛նք, փախչէ՛նք, քանի ուշ չէ:

— Սպասե՛ք, ես էլ եմ գալիս, — անսպասելի կերպով ձայն տվեց Լիմոնուկը, որը վերջապես հասկացավ ամեն ինչ:

— Ես էլ ձեզ հետ կգամ: Ինձ մի թողե՛ք, թե չէ իշխանը ձեր պատճառով ինձ կկախի:

— Լավ, նրան էլ մեզ հետ վերցնենք, — համաձայնեց Չիպուլինոն: — Չէ՞ որ մենք այս Լիմոնուկին էլ ենք պարտական, որ մեզ այսքան հեշտ հաջողվեց փախչել:

— Շտապեցե՛ք, — լսվեց մի խուլ ձայն նրա հետևում, — այստեղ անտանելի լույս է, և ես բոլորովին չեմ ուզում կուրանալ կամ արեվահար լինել:

— Իմ բարի ծերուկ, Խլուրդ, — ասաց Չիպուլինոն, — մի ինքդ մտածիր, մի՞թե ես կարող եմ փախչել: Յայրս հիվանդ է, իր խցում փակված:

Խլուրդը ծոծրակը քորեց:

Ես գիտեմ նրա խուցը. — ասաց նա, — ես լավ ուսումնասիրել եմ բանտի հատակագիծը, որ դու ուղարկել էիր ինձ: Բայց մենք մի՞թե ժամանակ ունենք. դու պիտի այդ մասին ինձ նախազգուշացնեիր:

Նա ազդանշան տվեց, և անմիջապես մոտ հարյուր խլուրդ հավաքվեց:

— Տղերք, մենք պիտի մի անցք էլ փորենք, այ, մինչև բանտի այն անկյունը, — ասաց ծեր խլուրդը, — հը, փորենք թե չէ:

— Ինչ հարց է դա, քառորդ ժամից պատրաստ կլինի:

Հազիվ էին նրանք ծերունուն ստորանցքով դուրս տարել, երբ Լիմոնուկները ներս մտան: Նրանք ոտքի տակ էին տալիս ամբողջ բանտը, փնտրում կալանավորներին ու չէին հասկանում, թե ինչպես կարող էին նրանք անհայտանալ:

Երբ վերջապես բանտապահները գլխի ընկան, թե ինչ է տեղի ունեցել, այնպես վախեցան իշխանի կողմից պատժվելուց, որ իրենց հերթին գենքերը թափելով նետվեցին խլուրդների փորած ստորանցքի մեջ:

Դաշտ դուրս գալով, նրանք թաքնվեցին գյուղացիների տներում, դեն գցեցին լիմոնական համազգեստը և բանվորական շորեր հագան:

Ասում են, թե նրանք իրենց գլխարկների վրայի զանգակներն էլ դեն գցեցին: Եկեք հավաքենք այդ զանգակներն ու փոքրիկներին տանք: Թող ինչքան կուզեն զնգզնգացնեն:

Իսկ Չիպուլինոն: Հետո ինչ եղավ նա:

Ծեր խլուրդը և Չիպուլինոն, կարծելով, թե բանտից փախած Լիմոնուկները իրենց հետևից են ընկել, ուրիշ անցք փորեցին: Ահա թե ինչու Լիմոնուկներն այնպես էլ չհասան նրանց:

Հապա որտե՞ղ են նրանք հիմա:

Սպասեցե՛ք՝ կիմանաք:

Գլուխ քսանյոթերորդ

Մրցութուն արգելակներով

Իշխանը մեծ տոնախմբություն կազմակերպեց:

— Իմ հպատակներին զվարճալիքներ են պետք, — վճռեց իշխան Լիմոնը, — այդ դեպքում նրանք իրենց կարիքների և դժբախտությունների մասին մտածելու ժամանակ չեն ունենա:

Նա որոշեց ձիարշավ կազմակերպել, որին պետք է մասնակցեին բոլոր առաջին, երկրորդ և երրորդ կարգի պալատական Լիմոնները: Հասկանալի է, որպես հեծյալներ և ոչ թե ձիեր:

Դրանք առանձնահատուկ մրցումներ էին: Ձիերը պետք է քաշեին արգելակված անիվներով կառքեր:

Մրցությունից առաջ ինքը իշխանը ստուգեց բոլոր արգելակները, որպեսզի տեսնի, գործում են դրանք թե չէ:

Արգելակները այնքան լավ էին գործում, որ անիվները բոլորովին չէին պտտվում: Այդ իսկ պատճառով կառք քաշելը ձիերի համար հարյուրապատիկ դժվարանում էր:

Երբ իշխանն ազդանշան տվեց, ձիերը սմբակները խփեցին գետնին, սանձերից փրփուր թափելով, բոլոր մկանները լարեցին, բայց կառքերը նույնիսկ տեղից չջարժվեցին: Այդ ժամանակ հեծյալ-Լիմոններն սկսեցին ձիերին հարվածել իրենց երկար խարազաններով: Դա օգնեց: Կառքերը մի քանի սանտիմետր առաջ գնացին, և իշխանը սկսեց ուրախ ծափահարել: Հետո ինքը դուրս եկավ հրապարակ ու սկսեց ձիերին ամբողջ ուժով խփել: Ըստ երևույթին այդ զբաղմունքը նրան մեծ հաճույք էր պատճառում:

Նրան հաճույք պատճառելու համար, Լիմոնները գոչում էին.

— Ձերդ մեծություն, բարի եղեք իմ ձիերին էլ խփել:

Իշխան Լիմոնը ինչքան ուժ ուներ խարազանը շրխկացնում էր: Կառքերի վրա կանգնած հեծյալները նույնպես սկսեցին հարվածներ տեղալ: Խարազանի ամեն մի հարված ձիու մեջքին սպիտակ, երկար շերտ էր բացում, բայց դա իշխանին բոլորովին չէր անհանգստացնում: Նա շատ հպարտ էր, որ այդքան զվարճալի բան է հնարել:

— Ամեն մի ձի, եթե նրան ոչինչ չի խանգարում, կարող է վազել, — ասում էր նա, — իսկ ես ուզում եմ տեսնել, կարո՞ղ են արդյոք վազել, եթե նրանց խանգարում են:

Խեղճ ձիերը, որ ցավից ու լարումից կատաղել էին, քիչ էր մնում ցած ընկնելին:

Հանդիսականները զայրանում էին, բայց ստիպված էին նայել այդ վայրենի մրցությանը, ավելի ճիշտ՝ տանջանքին, որովհետև եթե իշխանը որոշել էր, որ նրանք պետք է զվարճանային, ապա նրանց բռնությամբ էին զվարճացնում:

Բայց հանկարծ իշխանը՝ հարվածելու համար բարձրացրած խարազանը ձեռքին՝ քարացավ և աչքերն այնպես չռեց, որ քիչ էր մնացել տեղից դուրս թռչելին: Նրա ոտքերն սկսեցին դողալ, դեմքն ավելի դեղնեց, և դեղին գլխարկի տակ մազերը բիզ-բիզ կանգնեցին, այնպես որ ոսկե զանգակիկն սկսեց հուսահատ զնգզնգալ:

Իշխանը տեսավ, թե ինչպես ուղիղ իր ոտների մոտ հողը սկսեց քանդվել: Այո՛, այո՛, հողը քանդվեց:

Ակզբում մի ճեղք երևաց, հետո էլի ճեղքեր երևացին, ապա մի փոքրիկ բլրակ բարձրացավ՝ նրանցից, որ խլուրդներն են դաշտում շինում: Հետո բլրակի գագաթին մի անցք բացվեց: Այդ անցքը լայնացավ և այնտեղ սկսեց երևալ մի գլուխ, հետո ուտեր և ինչ-որ կենդանի էակ արմունկների ու ծնկների օգնությամբ հողի երես բարձրացավ: Դա Չիպուլինոն էր:

Անցքի միջից լսվեց խլուրդի անհանգստացած ձայնը.

— Ե՛տ դարձիր, Չիպուլինո, մենք սխալվել ենք, սիրելիս, Ե՛տ դարձիր:

Բայց Չիպուլինոն արդեն ոչինչ չէր լսում: Ուղիղ իր դիմաց տեսնելով խարազանը ձեռքին քարացած, աղե արձան դարձած իշխանի գունատ, քրտնակալած դեմքը, Չիպուլինոն կատաղությունից սկսեց դողալ:

Բոլորովին չմտածելով, թե ինչ է անում, տղան նետվեց իշխանի վրա և նրա ձեռքից խարազանը խլեց: Իշխանը դեռ ուշքի չէր եկել, երբ Չիպուլինոն, խարազանը օդում թափահարելով, ինչքան ուժ ուներ խփեց նրա մեջքին: Իշխանն այնպես էր ապշել, որ փախչելու փորձ չէր անում:

— Օ՛, օ՛, օ՛, — ոռնաց նա:

Չիպուլինոն նորից խարազանը քաշեց և այս անգամ ավելի ուժգին հարվածեց:

Միայն դրանից հետո իշխանը շուռ եկավ և պո՛ւկ, փախավ:

Դա ազդանշան էր: Չիպուլինոյից հետո բանտից փախած մյուս կալանավորներն էլ գետնի տակից դուրս եկան:

Ժողովուրդը նրանց դիմավորեց ուրախության ճիչերով: Հայրերը տեսան որդիներին, կանայք տեսան ամուսիններին:

Մի ակնթարթում ոստիկանության շղթան կտրվեց, և ժողովուրդը լցվելով մրցահրապարակ, ազատագրված գերիներին ձեռքերի վրա առաջ տարավ:

Պալատական հեծյալները ուզում էին իրենց կառքերով փախչել, բայց ինչքան էլ մտրակում էին ձիերին, անիվները տեղից չէին շարժվում: Պալատականներին բռնեցին և ձեռքերն ու ոտները կապեցին:

Սակայն իշխանն այնուամենայնիվ կարողացավ բարձրանալ իր կառքը, որը մրցումներին չէր մասնակցում և արգելակներ չուներ: Նա կարողացավ ժամանակին փախչել: Բայց վախեցավ իր պալատում թաքնվել և մուլեգին ճիչերով ձիերին քշելով, սլացավ դաշտ: Հնազանդ ձիերը այնպես քառատրոփ սլացան, որ կառքը վերջ ի վերջո շուռ եկավ, և իշխանը գլխիվայր ընկավ մի փխրուն կույտի մեջ, որը դաշտերը պարարտացնելու համար էր նախատեսված:

— Ամենահարմար տեղն է նրա համար, — կասեր Չիպուլինոն, եթե տեսներ, թե ի՛նչ պատահեց իշխանի հետ:

Գլուխ քսանութերորդ

Սինյոր Պոմփոթը եղանակի հարկ է նշանակում

Այն ժամանակ, երբ քաղաքում տեղի էին ունենում այս դեպքերը, կոմսուհի Բալերի Պոմփոթը հավաքել էր գյուղի բոլոր բնակիչներին, որպեսզի նրանց մի շատ կարևոր որոշում հայտնի:

Դատարանի նախագահը, իհարկե, էլի նույն ասպետ Պոմփոթին էր, փաստաբանը՝ Սիսեռիկը, իսկ քարտուղարը՝ սինյոր Մադդանոսը: Ձախ ձեռքով նա արձանագրում էր կողմերի ճառերը և դատարանի

վճիռը, իսկ աջ ձեռքում բռնել էր իր վանդակավոր թաշկինակը, որը նա գործածում էր գրեթե ամեն րոպե: Ժողովուրդը լրջորեն անհանգստացած էր, որովհետև ամեն մի դատական նիստի միայն տհաճություններ էին հաջորդում:

Անցյալ նիստին տրիբունալը որոշել էր, որ գյուղում ոչ միայն հողը, այլև օդը պատկանում է կոմսուլիի Բալերին, դրա համար էլ բոլոր նրանք, ովքեր շնչում էին, պետք է օդի վարձակալության համար փող վճարեին: Ամիսը մեկ անգամ ասպետ Պոմփոորը շրջում էր գյուղի տներն ու գյուղացիներին ստիպում, որ իր ներկայությամբ խոր շնչեին: Շնչելիս և արտաշնչելիս նա հերթով չափում էր նրանց կրծքի ծավալը, հետո հաշվում էր և որոշում, թե ամեն մի սպառող ինչքան պիտի վճարի: Քավոր Դդումը, ինչպես հայտնի է, շատ էր հառաչում, դրա համար էլ բոլորից շատ էր վճարում:

Իսկ հիմա տեսնես ամրոցի տերերը ի՞նչ են պահանջելու գյուղացիներից:

Ասպետ Պոմփոորն առաջինը խոսք վերցրեց և խոր լռության մեջ արտասանեց.

— Վերջին ժամանակներս ամրոցի եկամուտները նկատելիորեն պակասել են: Իսկ դուք գիտեք, որ մեր խեղճ կոմսուլիները, որ այրի են և լրիվ որբեր, ապրում էին միայն իրենց պատկանող հողերի եկամուտով ու, բացի իրենցից, ստիպված են պահել նաև իրենց ազգականներին՝ հերցոգ Մանդարինին և Բարոն Նարնջին, որպեսզի նրանք սովից չմեռնեն...

Վարպետ Խաղողը թափուն նայեց բարոնին, որն անկյունում նստած, աչքերը համեստորեն խոնարհած՝ իր քաղցը հագեցնում էր տապակած նապաստակով ու ճնճողուկների խավարտով:

— Այս ու այն կողմ նայելու կարիք չկա, — խստությամբ գոռաց ասպետ Պոմփոորը: — Եթե դուք պիտի գլուխների շարժեք, ես կհրամայեմ շենքն ազատել:

Վարպետ Խաղողն շտապեց հայացքն ուղղել սեփական կոշիկների քթերին:

— Մեր ազնիվ կոմսուլիները, մեր մեծապատիվ տիրուհիները, դատարանին մի խնդրանք են ներկայացրել, գրված, ինչպես օրենքն է պահանջում, դրոշմաթղթի վրա, որպեսզի պահանջեն ճանաչել

իրենց անկապտելի իրավունքներից մեկը... Փաստաբան,
փաստաթուղթը կարդացեք:

Սինյոր Սիստեռիկը ոտքի ելավ, հազաց, թոքերը լցրեց օդով և
դանդաղ ու ազդեցիկ տոնով սկսեց կարդալ.

— «Ներքո ստորագրյալ կոմսուհի Ավագը և կոմսուհի Կրտսերը,
որոնք սերում են Բալերի հարգելի տոհմից, հաստատում են, որ
լինելով իրենց դաստակերտի օրի տերերը, նրանք պետք է
ճանաչվեն նաև տարվա ընթացքում տեղացող մթնոլորտային
տեղումների տերերը: Այս պատճառով էլ նրանք դատարանից
պահանջում են հաստատել, որ գյուղի ամեն մի բնակիչ պարտավոր
է վճարել հասարակ անձրևի համար՝ հարյուր լիր, ամպրոպախառն
ու կայծակնախառն տեղատարափ անձրևի համար՝ երկու հարյուր
լիր, երեք հարյուր լիր՝ ձյան և չորս հարյուր լիր կարկուտի համար»:
Ստորագրություններ՝ «կոմսուհի Բալ Ավագ, կոմսուհի Բալ կրտսեր»:

Սինյոր Սիստեռիկը նստեց.

Նախագահը հարցրեց.

— Դուք ասում եք, որ խնդրագիրը գրված է դրոշմաթղթի վրա՞:

— Այո, սինյոր նախագահ, — նորից ոտքի թռչելով
պատասխանեց սինյոր Սիստեռիկը, — դրոշմաթղթի:

— Երկու կոմսուհիների ստորագրությունների իսկությունը
հաստատված է:

— Հաստատված է:

— Հրաշալի է, — հայտարարեց սինյոր Պոմիդորը, — եթե
խնդրագիրը գրված է դրոշմանիշի վրա և ստորագրություններն
իսկական են, ապա ամեն ինչ պարզ է:

Դատարանը գնում է խորհրդակցելու:

Ասպետը ոտքի ելավ, փաթաթվեց սև թիկնոցի մեջ, որն
անընդհատ ընկնում էր նրա ուսերից, և գնաց հարևան սենյակը
վճիռ կայացնելու:

Ջութակահար Տանձը հրեց իր հարևան Սոխ Պրասին և շշուկով
հարցրեց.

— Զո կարծիքով արդարացի է, որ մենք կարկտի համար էլ
պետք է վճարենք: Դե անձրևի, ձյան համար հասկանում եմ, դրանք

ցանքերին օգուտ են բերում: Բայց կարկուտն առանց այն էլ մեծ դժբախտություն է, իսկ դրա համար ամենից շատ են պահանջում:

Սոխ Պրասը չպատասխանեց, ևս մտախոհ հարդարում էր իր երկար բեղերը:

Վարպետ Խաղողը շփոթված՝ գրպաններն էր քրքրում: Նա բիզն էր փնտրում, որպեսզի ծոծրակը քորի, բայց հանկարծ հիշեց, որ Նախքան դահլիճ մտնելը գյուղի բնակիչները պետք է հրազենը և սառը զենքը հանձնեին: Հրազեն նրանց մոտ չկար, բայց բիզը սառը զենք համարեցին:

Սպասելով դատավճռին, սինյոր Մադդանոսը աչքը չէր կտրում ներկա եղողներից և մատյանում գրում էր.

«Տանձը փսփսում էր: Սոխ Պրասը բեղերն էր հարդարում: Սանամեր Դդումը անընդհատ շարժվում էր: Քավոր Դդումը երկու անգամ խոր հառաչեց»:

Այդպես իր ընկերների անուններն է գրում այն դպրոցականը, որին ուսուցչուհին հանձնարարել է մինչև իր գալը հսկել դասարանին:

«Կարգապահները» սյունակում սինյոր Մադդանոսը գրեց.

«Հերցոգ Մ. իրեն հիանալի է պահում: Բարոն Ն. շատ լավ: Նա տեղից չի շարժվում, ձայն չի հանում և երեսունչորսերորդ ճնճուկն է ուտում»:

«Է՛իս, — բիզ չունենալու պատճառով եղունգներով ծոծրակը քորում ու մտածում էր վարպետ Խաղողը, — եթե մեր Չիպոլինոն այստեղ լիներ, այս ամբողջ այլանդակությունը չէր լինի: Այն օրվանից, ինչ Չիպոլինոն բանտում է, մեզ հետ վարվում են ինչպես ստրուկների: Մենք չենք կարող շարժվել առանց սինյոր Մադդանոսի մատյանն ընկնելու»:

Բանն այն է, որ բոլորը, ովքեր ընկնում էին սինյոր Մադդանոսի «մեղանչածները» սյունակը, պիտի տուգանք վճարեին: Վարպետ Խաղողը գրեթե ամեն օր տուգանք էր վճարում, իսկ երբեմն էլ օրական երկու տուգանք:

Վերջապես դատարանը, այսինքն՝ ասպետ Պոմիդորը, վերադարձավ նիստերի դահլիճ:

— Ուոքի, — հրամայեց սինյոր Մադդանոսը, բայց ինքը մնաց նստած:

— Ուշադրություն, հիմա կհայտնեմ դատավճիռը, — ասաց ասպետը, — լսելով կոմսուհի Բալերի ինդրանքը, դատարանը որոշեց հաստատել, որ վերոհիշյալ կոմսուհիները անձրևի, ձյան և կարկուտի, ինչպես նաև երկնքի կողմից ուղարկված ամեն տեսակ լավ ու վատ եղանակների համար հարկ հավաքելու իրավունք ունեն: Այդ պատճառով էլ դատարանը հաստատում է հետևյալը. Բալերին պատկանող գյուղի ամեն մի բնակիչ պարտավոր է եղանակի համար վճարել կոմսուհիների պահանջած գումարից երկու անգամ ավելի...:

Դահլիճում տրտունջներ լսցեցին:

— Լռել, — ճչաց ասպետ Պոմիդորը, — եթե չէ անմիջապես կհրամայեմ շենքը ազատել: Ես դեռ չեմ ավարտել. «Դատարանը վճռեց, որ վերոհիշյալ քաղաքացիները պարտավոր են նաև հարկ վճարել ցողի, եղյամի, մառախուղի և խոնավության մյուս տեսակների համար: Վճիռը ուժի մեջ է մտնում այսօրվանից»:

Բոլորը վախեցած նայեցին պատուհաններին, հույս ունենալով, թե պարզ երկինք կտեսնեն: Սակայն պարզվեց, որ երկինքը սև, ամպրոպային ամպերով է պատած: Պատուհանների ապակիներին մի քանի կարկուտ կպավ:

«Աստված իմ», — ծոծրակը քորելով մտածեց վարպետ Խաղողը, — արի և ութ հարյուր լիր վճարիր: Անիծված ամպեր»:

Սինյոր Պոմիդորն էլ պատուհանից դուրս նայեց, և նրա կարմիր ու լայն դեմքը ուրախությունից փայլատակեց:

— Ձերդ ողորմածություն, — ասաց սինյոր Սիսեռիկը, — շնորհավորում եմ ձեզ: Ձեր բախտը բերեց, բարոմետրը իջնում է, ուժեղ անձրև է լինելու:

Բոլորը ատելությամբ նայեցին փաստաբանին: Սինյոր Մադդանոսը արագ նայեց ներկաներին և մատյանում գրանցեց նրանց, ում աչքերում կարելի էր հանդիմանություն կարդալ:

Երբ իրոք կայծակով, ամպրոպով և կարկուտով անձրևն սկսվեց, սինյոր Սիսեռիկը սինյոր Մադդանոսին ուրախացած աչքով արեց, իսկ վարպետ Խաղողը կատաղությունից հազիվ էր շնչում և

ստիպված էր ավելի սևեռուն նայել իր կոշիկներին, որպեսզի տուգանքի չենթարկվի:

Գյուղի բնակիչները նայում էին տեղատարափին, ինչպես մի կատարյալ դժբախտության: Նրանց թվում էր, թե որոտն ավելի սարսափելի է, քան թնդանոթաձգությունը, իսկ կայծակները կարծես խփում էին ուղիղ նրանց սրտին:

Սինյոր Մադոնանը քիմիական մատիտը թքոտելով, սկսեց արագ հաշվել, թե այդ աստվածային ողորմությունից ամրոցի տերերն ինչքան կշահեն: Բավական ազդեցիկ թիվ ստացվեց, իսկ տուգանքների հետ հաշված՝ ավելի ազդեցիկ:

Սանամեր Դոլումը լաց եղավ: Սոխ Պրասի կինը ընկնելով ամուսնու ուսին և նրա բեղերով արցունքները սրբելով, հետևեց սանամեր Դոլումի օրինակին:

Ասպետ Պոմիդորը սարսափելի կատաղեց և ոտները հատակին խփելով, բոլորին դահլիճից դուրս արեց:

Գյուղացիները դուրս եկան կարկտախառն անձրևի տակ և դանդաղ գնացին գյուղ: Չէին էլ շտապում: Կարկուտը զարնվում էր դեմքերին, անձրևի շիթերը հոսում էին շորերի տակ, բայց նրանք կարծես դա չէին էլ զգում: Երբ մարդ մեծ վիշտ է ունենում, մանր բաներն արդեն չի տեսնում:

Գյուղ հասնելու համար հարկավոր էր կտրել անցնել երկաթուղին: Գյուղացիները ուղեփակոցի մոտ կանգ առան, քանի որ մի րոպեից հետո գնացք պիտի անցներ: Ուղեփակոցի մոտ գնացքին նայելը միշտ էլ հետաքրքիր է: Տեսնում ես, թե ինչպես է փնջալով ու ծուխ արձակելով անցնում շոգեքարշը, որի պատուհանից նայում են ուղևորները՝ թիկնոցավոր գյուղացիներ, կանայք, երեխաներ, որոնք տոնավաճառից են վերադառնում...

Ահա և սև շալով մի գյուղացի կին, իսկ վերջին վագոնում...

— Օ՛, երկինք, — բացականչեց սանամեր Դոլումը, — հլա նայեք վերջին վագոնին:

— Կարծես թե, — երկչոտ ասաց քավոր Դոլումը, — կարծես թե արջեր են այնտեղ...

Եվ իրոք, վագոնի պատուհանի մոտ երեք արջ էին կանգնած և հետաքրքրությամբ նայում էին դուրս:

— Չտեսնված բան, — ծոր տվեց Սոխ Պրասը: Չարմանքից նրա բեղերը ցցվել էին:

Հանկարծ երեք արջերից մեկը գլխով ու թաթով արեց, կարծես ողջունում էր ուղեփակոցի մոտ կանգնած անձրևի տակ թրջվող մարդկանց:

— Ինչ է ատմաները ցցում, — փնթփնթաց վարպետ Խաղողը, — մի սրան տես, արջ է, բայց էլի ձեռ է առնում մեզ:

Բայց արջը շարունակում էր գլխով անել, և երբ գնացքն անցավ, նա գլուխը դուրս հանեց և թաթն այնպես թափահարեց, որ քիչ էր մնում ցած ընկնի: Լավ էր, որ մյուս արջերը ժամանակին բռնեցին ու ետ քաշեցին նրան:

Մեր բարեկամները կայարան հասան հենց այն ժամանակ, երբ գնացքը կանգ առավ: Արջերն առանց շտապելու վագոնից դուրս եկան, և երեքից ամենամեծը տոմսերը ցույց տվեց հսկիչին:

— Սրանք երևի կրկեսի ակրոբատ արջեր են, — ասաց վարպետ Խաղողը, — երևի ներկայացում պիտի տան: Հիմա փայտե սուլիչը ձեռքին՝ կերևա նրանց սանձահարող ծերուկը:

Սանձահարողն իսկապես հայտնվեց, բայց ոչ թե ծերուկ, այլ կանաչ գլխարկով, ծունկը կարկատած կապույտ շավվարով մի տղա: Նրա դեմքը աշխույժ էր, ուրախ և կարծես գյուղի բնակիչներին բոլորին էլ շատ ծանոթ:

— Չհպուլի՛նո, — նրա կողմը նետվելով, բացականչեց Խաղողը:

Այո, դա իրոք Չհպուլինոն էր: Գյուղ վերադառնալուց առաջ նա կենդանաբանական այգի գնաց և արջերին ազատեց: Այս անգամ պահակն այնքան խորն էր քնել, որ կարելի էր ոչ միայն արջերին, այլև Փղին տանել, եթե նա համաձայներ կենդանաբանական այգուց փախչել:

Բակց ծեր Փիղը չէր հավատում, թե հասել է ազատության ժամը, և մնաց փղանոցում՝ իր հուշերը գրելու...

Ինչքան գրկախառնություն, համբույրներ, հարցուփորձ ու պատմություններ եղան: Եվ այս բոլորը տեղատարափ անձրևի տակ: Չէ որ երբ ուրախանում ես, մանր բաները չես նկատում, նույնիսկ մրսելուց չես վախենում:

Ջուրթակահար Տանձը անընդհատ սեղմում էր ջահել արջի թաթը:

— Հիշում եք, ինչպես էիք պարում իմ նվագի տակ, — ուրախ աչքով անելով հարցնում էր նա:

Արջը շատ լավ էր հիշում և անմիջապես, չսպասելով երաժշտության, նորից սկսեց պարել. երեխաները ուրախացած ծափ տվին:

Պարզ է, Չիպուլինոյի վերադարձի մասին անմիջապես հայտնեցին Բալուկին: Պատկերացրեք, թե հանդիպելիս ինչպիսի ջերմությամբ նրանք գրկախառնվեցին:

— Դե՛, իսկ հիմա գործից խոսենք, — ասաց Չիպուլինոն, — ես պետք է ձեզ հայտնեմ, թե ի՛նչ եմ մտադիր անել:

Քանի դեռ Չիպուլինոն բարեկամներին պատմում է, թե ինչ է մտադիր անել, գնանք տեսնենք, ի՛նչ է անում իշխան Լիմոնը:

Գլուխ քսանիններորդ

Ամարոպ, որ ոչ մի կերպ չի վերջանում

Մենք իշխանին գոմաղբի կուլտի մեջ այսքան երկար պահեցինք, որովհետև այդ ապաստարանում նա իրեն ավելի անվտանգ էր զգում, քան իր մայրաքաղաքում:

«Այստեղ խաղաղ է, տաք և հանգիստ, — թթոտելով մտածում էր նա, — ես այստեղ այնքան կմնամ, մինչև իմ զորքերը քաղաքում կարգ ու կանոն ստեղծեն»:

Ախր այդ գոռոզ, դաժան, բայց վախկոտ իշխանը մարտադաշտից ճողոպրեց առանց ետ նայելու և չգիտեր, որ իր զորքերը անցել են ժողովրդի կողմը, որ պալատականները բանտ են ընկել, և որ երկրում ազատ ռեսպուբլիկա է ստեղծվել:

Բայց երբ ուժեղ անձրև սկսվեց, և նրա սառը շիթերը ներծծվեցին գոմաղբի մեջ, իշխանը միտքը փոխեց:

«Այստեղ խոնավ է, — վճռեց նա, — հարկավոր է չոր տեղ փնտրել»:

Նա շուռ ու մուռ եկավ, թափ տվեց ոտքերը և վերջապես կարողացավ գոմաղբի միջից դուրս գալ:

Այստեղ միայն նա նկատեց, որ կոմսուհի Բալերի ամրոցի մոտերքումն է գտնվում:

«Ի՛նչ հիմարն եմ ես, — ցեխտոված աչքերը տրորելով մտածեց նա, — պառկել եմ այս անիծված գոմաղբի մեջ և չեմ էլ իմացել, որ այստեղից երկու քայլ է մինչև կոմսի ամրոցը, որտեղ այնքան տաք է ու հարմար»:

Իշխանը թափ տվեց շորերը և գնաց դեպի դարբասը, բայց հանկարծ խոսակցության ձայներ լսեց: Նա թաքնվեց խոտի դեզի հետևը, որի կողքից աղմկելով մի խումբ մարդիկ անցան: (Դուրս գիտեք, թե ովքեր էին նրանք): Յետո իշխանը բարձրացավ ամրոցի աստիճաններով և զանգահարեց: Դուռը բաց արեց Մորին:

— Ներեցե՛ք, պարոն, մեր տանտիրուհիները աղքատներին ոչինչ չեն տալիս, — ասաց աղջիկը և դուռը ծածկեց ուղիղ նրա երեսին:

Իշխանը բռունցքներով խփեց դռանը:

— Բաց արա, ես ի՛նչ աղքատ եմ: Ես իշխանն եմ, իշխան Լիմոնը:

Մորին նորից դուռը բաց արեց և կարեկցանքով նայեց նրան:

— Խեղճ մարդ, հառաչելով ասաց նա, — դու երևի կարիքից խելքդ թռցրել ես:

— Ի՛նչ կարիք, ես հարուստ եմ, շատ հարուստ:

— Նայելով քեզ, այդ չի կարելի ասել, — գլուխն օրորելով ասաց Մորին:

— Ավել-պակաս մի՛ խոսիր, գնա իմ մասին կոմսուհիներին զեկուցիր:

— Ի՛նչ է կատարվում այստեղ, — հարցրեց սինյոր Մադդանոսը, որն իր վանդակավոր թաշկինակով կատաղաբար մաքրելով քիթը, անցնում էր այդտեղից:

— Ի՛նչ պետք է լինի, այս աղքատը հավատացնում է, թե ինքը իշխան է: Երևի խելագար է:

Սինյոր Մադդանոսը անմիջապես իշխանին ճանաչեց, թեև նրան ճանաչելն այնքան էլ հեշտ բան չէր:

— Ես դիտմամբ եմ շորերս փոխել, որ ավելի մոտիկից ճանաչեմ իմ ժողովրդին, — երևի իր անսովոր տեսքն արդարացնելու համար, ասաց իշխան Լիմոնը:

— Խնդրեմ, ինչո՞ւ, ձերո՞ւ մեծություն, մենք այնքան էրջանիկ ենք, որ տեսնում ենք ձեզ, — բացականչեց սինյոր Մադդանոսը և փորձեց իշխանի կեղտոտ ձեռքը համբուրել:

Մի ահեղ հայացք նետելով Մորու վրա, իշխանը մտավ ներս: Կոմսուհիները տարօրինակ հյուրին տեսնելով, սարսափեցին, բայց երբ իմացան նրա ով լինելը, իրար խանգարելով սկսեցին գովել նրան իր հպատակների նկատմամբ ունեցած հոգատարության համար:

— Օ՛, ձերո՞ւ մեծություն, դուք բուլորովին թրջվել եք: Աշխարհում ո՞չ մի իշխան այսպիսի եղանակին փողոց դուրս չէր գա:

Ես ուզում էի իմանալ, թե ինչպես է իմ ժողովուրդն ապրում, — պատասխանեց իշխանն առանց կարմրելու. չէ՞ որ Լիմոնները երբեք չեն կարմրում:

— Ձերո՞ւ մեծություն, իսկ ի՞նչ տպավորություն ստացաք, — հարցրեց կոմսուհի Ավագը:

— Իմ ժողովուրդը միանգամայն էրջանիկ է ու գոհ, — հայտարարեց իշխանը, — իմ ժողովրդից էրջանիկ ժողովուրդ չկա: Ա՛յ, քիչ առաջ իմ մոտով մի շատ ուրախ խումբ անցավ... նրանց համար նույնիսկ անձրևը դատարկ բան էր:

Իշխանը չէր էլ իմանում, որ իսկական ճշմարտություն է ասում. այդ օրն իսկապես նրա -ժողովուրդն էրջանիկ էր, որովհետև իշխանից ազատվել էր:

— Ձերո՞ւ մեծությունը չի՞ ուզում ձիեր պահանջել, որպեսզի պալատ վերադառնա, — հարցրեց սինյոր Պոմիդորը:

— Ո՛չ, ո՞չ, ոչ մի դեպքում, — տազնապով պատասխանեց իշխանը, — ես կսպասեմ մինչև այդ սարսափելի ամպրոպը վերջանա:

— Ես թույլ եմ տալիս ինձ խոր հարգանքով նշել, — մի փոքր մտահոգված ասաց սինյոր Պոմիդորը, — որ ամպրոպը վաղուց արդեն անցել է, և դրսում նորից արև է:

— Արև՞, — ցասկոտ հարցրեց իշխանը, — դուք համարձակվում եք ինձ հակաճառել:

— Ես ուղղակի չեմ հասկանում, թե դուք ինչպե՞ս եք հանդգնում, — միջամտեց բարոն Նարինջը: — Եթե նորին մեծությունը գտնում է որ ամպրոպ է, ուրեմն այդպես էլ կա: Մի՞թե անձրևի ձայնը չեք լսում:

Բոլորն շտապեցին բարոնի հետ համաձայնել:

— Ա՛խ, այդ ամպրոպը վերջ չունի, — ասաց կոմսուհի Ավագը և նայեց պատուհանից դուրս, որտեղ արևից անձրևի կաթիլները շողշողում էին ծաղկաբաժակներում:

— Սարսափելի տեղատարափ է, նայե՛ք, ուղղակի խշշում է, — նայելով, թե ինչպես են ոսկի ձկնիկները ավազանում խաղում ամպի տակից դուրս եկած արևի շողի հետ, հաստատեց կոմսուհի Կրտսերը:

— Լսում եք, թե ինչպես է որոտը ճայթում, — կեղծ սարսափով ծածկելով ականջները և աչքերը փակելով, մեջ մտավ հերցոգ Մանդարինը:

— Մորի՛, Մորի՛, որտե՞ղ ես, — նվաղած ձայնով կանչեց կոմսուհի Ավագը, անմիջապես բոլոր տախտակափեղկերը ծածկիր, բոլորը:

Մորին տախտակափեղկերը ծածկեց, և սենյակը նկուղի նման մթնեց:

Շուտով մոմերը վառվեցին, և պատերի վրա սկսեցին թրթռալ հսկայական ստվերները:

Սինյորա կոմսուհի Ավագը հառաչեց.

— Ա՛խ, ի՛նչ սարսափելի գիշերային ամպրոպ է:

Իշխան Լիմոնը իսկապես սարսափեց:

Սարսափելի գիշեր է, — ատամները կափկափելով ասաց նա:

Մնացած բոլորը քաղաքավարության համար սկսեցին դողալ, կարծես տենդի մեջ լինեին:

Սինյոր Պոմիդորը գաղտնի մոտեցավ պատուհանին և, տախտակափեղկերը փոքր-ինչ բացելով, համարձակվեց զեկուցել.

— Ներողություն եմ խնդրում ձերդ մեծությունից, բայց ինձ թվում է, թե ամպրոպը վերջանում է:

Ո՛չ, ո՛չ, ի՛նչ եք ասում, — նկատելով արևի թեք ճառագայթը, որ փորձում էր թափանցել սենյակ, ճչաց իշխանը:

Ասպետ Պոմիդորը տախտակափեղկերն շտապով փակեց և հաստատեց, որ իրոք առաջվա նման տեղատարափ անձրև է գալիս:

— Ձերդ մեծություն, — երկչոտ առաջարկեց բարոն Նարինջը, որն ուզում էր որքան կարելի է շուտ սեղան նստել, — չէի՞ք ուզենա ճաշել... այսինքն, ներողություն, ընթերել:

Բայց նորին մեծությունը ոչ ճաշել էր ուզում և ոչ էլ ընթերել:

Բարոնը չէր կարողանում հասկանալ, թե եղանակը ի՛նչ գործ ունի ախորժակի հետ, բայց քանի որ բոլորը իշխանի հետ համաձայնեցին, ինքն էլ համաձայնեց:

— Ձերդ մեծություն, ես հենց այնպես առաջարկեցի: Ի՛նչ ուտելու ժամանակ է: Կայծակից ու որոտից կոկորդս այնպես է խեղդվում, որ հավի ճուտն էլ հիմա չեմ կարող կուլ տալ:

Բայց իրականում նա այնքան քաղցած էր, որ եթե նորին մեծությունից չվախենար, հաճույթով երկու աթոռ կկրծեր:

Վերջապես իշխանն այդ օրվա տանջանքներից ու հուզումներից հոգնած, հենց աթոռի վրա էլ պինդ քնեց: Մնացածները նրան վերմակով ծածկեցին և գնացին ճաշասենյակ ընթերելու: Այդ ժամանակ արդեն իսկապես սկսել էր մթնել:

Ընթերելիս ասպետ Պոմիդորը շատ քիչ կերավ, իսկ հետո քանի որ քունը տանում էր, կոմսուհիներից թույլտվություն խնդրեց հեռանալու:

Բայց սինյոր Պոմիդորը քնելու չգնաց. նա թաթուն մտավ այգի և այնտեղից գնաց գյուղ:

«Ի՛նչ է պատահել, քայլելով մտածում էր նա, — իշխանը կարծես անհանգստացած է: Դա շատ կասկածելի է: Ես իսկի չեմ զարմանա, եթե պարզվի, որ ռևոլյուցիա է տեղի ունեցել»:

Այդ բառից նա ամբողջովին փշաքաղվեց: Նա իրենից այդ միտքը վանեց, բայց նորից ու նորից սկսեց վերադառնալ այդ անհանգստացնող մտքին: Այդ ահեղ բառը ուղղակի թռչկոտում էր նրա աչքի առաջ, իր ամեն մի տառով վախեցնում Պոմիդորին: Ռ-Ե-Վ-Ո-Լ-Յ-ՈՒ-Ց-Ի-Ա: Ռ-Ռուր, Ե-Եվրոպա, Վ-Վենետիկ... և այլն... Ռևոյուցիա...

Հանկարծ նրան թվաց, թե ինչ-որ մեկը գալիս է իր հետևից: Նա թաքնվեց ցանկապատի հետևը և սկսեց սպասել: Մի րոպեից հետո, հեռվում երևաց սինյոր Սիստեռիկը, որ այնքան զգույշ էր քայլում, կարծես ոտքերը դնում էր հում ձվերի վրա:

Ասպետ Պոմիդորի վարմունքը դեռևս ճաշասենյակում փաստաբանին տարօրինակ թվաց: Տեսնելով, որ Պոմիդորը սենյակից դուրս է գալիս, Սիստեռիկը շտապ հետևեց նրան:

«Այստեղ ինչ-որ բան կա, — մտածում էր նա, — հարկավոր է ասպետին աչքից չկորցնել»:

Սինյոր Պոմիդորն ուզում էր արդեն թաքստոցից դուրս գալ, երբ հեռվում մի ուրիշ ստվեր երևաց:

Ասպետը նորից թաքնվեց ցանկապատի հետևը, որ սա էլ անցնի:

Սինյոր Սիստեռիկի հետևից գնացող մարդը սինյոր Մադդանոսն էր: Նա նկատել էր, թե ինչպես փաստաբանը ճաշասենյակից ծլկեց, և որոշեց գնալ նրա հետևից: Բալուկի դաստիարակը իր անսահման մեծ ու զգոն քթով հոտոտեց, որ ինչ-որ լուրջ բան է կատարվում, և չուզեց անտեղյակ մնալ:

Բայց սինյոր Մադդանոսի մտքովն էլ չէր անցնում, որ իրեն նույնպես հետևում են: Նրան կրնկակոխ հետևում էր հերցոգ Մանդարինը:

— Ես իսկի չեմ զարմանա, եթե հիմա բարոն Նարինջն էլ հայտնվի, — ինքն իրեն ասաց սինյոր Պոմիդորըն ու իրեն չմատնելու համար շունչը պահեց:

Իրոք, շուտով լսվեց սայլակի ձայնը, և բարոնը երևաց: Տեսնելով, որ հերցոգը տեղ է գնում, բարոնը ենթադրեց, թե իր մեծազարմ ազգականը որևէ հրավերքի է շտապում և, ինչ խոսք, որոշեց միանալ նրան: Խեղճ ձորձահավաքը սայլակը քաշելով՝

ծանրությունից փնջում էր և մթության մեջ ոչ ճանապարհի փոսերն էր տեսնում, ոչ էլ քարերը: Ճռճռան սայլակը, որի վրա դրված էր բարոնի փորը, մեկ վեր էր թռչում, մեկ անդունդն ընկնում: Յուրաքանչյուր թռիչքի ժամանակ կամ ընկնելիս բարոնի շունչը կտրվում էր, բայց նա ատամները սեղմում էր, որ պատահական ճիչով ու տնթոցով հանկարծ իրեն չմատնի:

Պարզվեց, որ բարոնը այդ տարօրինակ թափոթում վերջինս է:

«Յետաքրքիր է իմանալ, թե ո՞ր են սրանք գնում», — մտածեց սինյոր Պոմիդորն ու թաքստոցից դուրս եկավ:

Այդպես էլ ամբողջ գիշերը նրանք գնում էին իրար հետևից. սինյոր Սիսեռիկը իզուր տեղը մթության մեջ փնտրում էր սինյոր Պոմիդորին, որ իրականում ամենքից վերջումն էր: Սինյոր Մադդանոսը կրնկակոխ հետևում էր փաստաբանին, հերցոգը գնում էր սինյոր Մադդանոսի հետևից, բարոնը աչքը չէր կտրում հերցոգից, իսկ Պոմիդորը գնում էր բարոնի հետքերով: Բոլորն էլ ուշադիր հետևում էին առջևից գնացողի շարժումներին, չկասկածելով, որ իրենց էլ են լրտեսում:

Մի քանի անգամ Սիսեռիկն ու Մադդանոսը տեղերը փոխեցին: Մերթ սինյոր Մադդանոսն էր ճարակորեն շրջանցելով ընկնում Սիսեռիկից առաջ, մերթ Սիսեռիկն էր անցնում Մադդանոսից: Այդպես իրար հետևից պտտվելով, նրաք, հասկանալի է, որ ոչինչ էլ չիմացան, այլ միայն հալից ընկան:

Առավոտյան դեմ, այդ բոլոր պարոններն էլ որոշեցին վերադառնալ ամրոց: Այգու ծառուղում հանդիպելով, նրանք քաղաքավարի գլուխ էին տալիս իրար և հարցնում միմյանց առողջությունը: Իրենց գիշերային արկածների մասին նրանք որոշեցին լռել և անամոթաբար խաբում էին իրար:

— Որտե՞ղ էիք, — սինյոր Սիսեռիկին հարցրեց սինյոր Պոմիդորը:

— Եղբորս կնունքն էր, գնացել էի այնտեղ:

— Ա՛յ քեզ զարմանալի բան. մի՞թե գիշերը կնունք է լինում:

— Եղբայրս ցերեկը ավելի կարևոր գործ ուներ, — պատասխանեց փաստաբանը:

Ասպետ Պոմիդորը քմծիծաղ տվեց: Բանն այն է, որ սինյոր Սիսեռիկը ոչ մի եղբայր էլ չուներ և երբեք չէր ունեցել:

Մաղդանոսն ասաց, թե գնացել էր փոստ՝ վաղուց արդեն գոյություն չունեցող իր ծնողներին նամակ ուղարկելու: Հերցոգն ու բարոնը առանց միմյանց հետ պայմանավորվելու ասացին, որ գնացել էին կարթով ձուկ բռնելու, թեև ոչ մեկի և ոչ էլ մյուսի մոտ կարթ չկար:

— Այդ ինչպե՞ս է, որ մենք ափին չհանդիպեցինք, — հարցրեց բարոնը:

— Չարմանալի է, — ասաց հերցոգը:

Բոլորն այնքան էին հոգնած, որ քայլում էին փակ աչքերով, դրա համար էլ նրանցից միայն մեկը նկատեց, որ ամրոցի աշտարակին ծածանվում է ազատության դրոշը: Դրոշը Բալուկն ու Չիպուլինոն էին գիշերը կախել և հիմա, աշտարակին նստած, նրանք սպասում էին, թե ինչ կլինի հետո:

Վերջաբան

Որտեղ Պոմիդորը երկրորդ անգամն է լալիս

Նա, ով աշտարակի վրա առաջինը տեսավ ազատության դրոշը, սկզբում կարծեց, թե դա Բալուկի սարքած խաղը կլինի: Նա կատաղած որոշեց անմիջապես պոկել այդ սարսափելի դրոշը, իսկ հետո ինչպես հարկն է դնքսել պատանի կոմսին, որն այս անգամ արդեն «ամեն չափ ու սահման անցավ»:

Եվ ահա այդ սինյորը զայրույթից շնչահատվելով վազում է աստիճաններն ի վեր: Նա փնջում է, հագիվ է շնջում, ամեն մի քայլն անելիս չարությունից ավելի է կարմրում ու սառչում: Ես վախենում եմ, թե վերև հասնելով, այլևս չկարողանա անցնել հարթակ տանող դռնակից: Ահա լսում եմ նրա ոտնաձայները, որոնք լռության մեջ կարծես մուրճի հարվածներ լինեն: Շուտով նա կլինի ամենաբարձր տեղում: Կկարողանա՞ դռնակից անցնել թե չի կարողանա: Դուք ի՞նչ եք կարծում:

Ահա նա հասավ հարթակին... Դե ձեզնից ո՞վ ճիշտ գուշակեց:

— Լավ, ես ձեզ կասեմ՝ ճիշտ գուշակեցին նրանք, ովքեր կարծում են, թե չի անցնի: Եվ իսկապես, ասպետ Պոմիդորը (չէ՞ որ նա էր աստիճաններով բարձրացողը, միթե չճանաչեցիք) չարությունից այնպես էր ուռել, որ դռնակը նրա մարմնից երկու անգամ նեղ էր:

Եվ ահա նա կանգնած է վերևում, քամուց ծածանվող սարսափելի դրոշից միայն երկու քայլ հեռու ու չի կարողանում պոկել այն, նույնիսկ ձեռքը չի հասնում: Իսկ դրոշի կոթի մոտ, Բալուկի կողքին, որ այդ րոպեին շտապ-շտապ ակնոցն էր սրբում, էլի մի հոգի կար...

Էլ ո՞վ կլինի դա, եթե ոչ Չիպուլինոն, ասպետի ասելի, երդվյալ թշնամին, որ մի անգամ արդեն նրան, սինյոր Պոմիդորին լացացրել էր:

— Բարի օր, սինյոր ասպետ, — քաղաքավարությամբ գլուխ տալով, ասաց Չիպուլինոն:

— Չգրկշ, Չիպուլինո, քո այդ անտանելի քաղաքավարությամբ դու գլուխդ վտանգի տակ ես դնում: Այն րոպեին, երբ դու ասպետ Պոմիդորին գլուխ ես տալիս, բավական է, որ նա ձեռքը մեկնի, որպեսզի բռնի քո մազերից, ինչպես մի անգամ գյուղում արեց...

Սինյոր Պոմիդորն այնպես է կատաղած, որ չի մտածում, թե ինչ է իրեն սպառնում: Ահա նա բռնեց Չիպուլինոյի մազերից և այնպիսի ուժով ձգեց, որ Սոխի մազերից մի փունջ նորից մնաց նրա ձեռքին:

Նա դեռ ուշքի չէր եկել, երբ աչքերը կսկծացին, և ընկույզի մեծությամբ արտասուքները աչքերից գլորվեցին ու չփչփալով ընկան քարե հատակին:

Բայց այս անգամ ասպետ Պոմիդորի լալու պատճառը միայն Չիպուլինոյից պոկված մազափունջը չէր: Նա լալիս էր կատաղությունից, որովհետև զգում էր իր ամբողջ անզորությունը...

«Այս ի՞նչ է, վերջ, միթե վերջն է սա», — կատաղությունից ու արցունքներից խեղդվելով, մտածում էր նա:

Ես հաճույքով նրան թույլ կտայի, որ արցունքներից խեղդվեր, կամ աստիճաններից թեթև հրումով գլորվեր ցած, բայց Չիպուլինոն այնքան մեծահոգի էր, որ ինչայեց, և սարսափահար սինյոր Պոմիդորն ինքը աշտարակից փախավ: Նա ներքև էր վազում

չորսական, երբեմն էլ վեցական աստիճան թռչելով, իսկ ներքև հասնելով, ծլկեց իր սենյակը, որտեղ նրան ոչ ոք չէր խանգարի, որ մի կուշտ լա:

Իսկ ի՞նչ եղավ հետո, երեխաներ: Ա՛խ, ի՞նչ եղավ...

Իշխանը վերջապես արթնացավ, մի քիչ թափառեց ամրոցի սենյակներում և դուրս եկավ մաքուր օդ շնչելու: Եվ հանկարծ նա էլ աշտարակի դրոշը տեսավ: Սարսափից աչքերը փակելով, ինչքան ուժ ուներ ոտքերում՝ փախավ: Այս կողմ այն կողմ վազելուց հետո, նորից դարբասից դուրս եկավ, մտավ իր հուսալի ապաստարանը՝ փափուկ գոմաղբի մեջ, մտածելով, որ այնտեղ իրեն ոչ ոք չի գտնի:

Բարոն Նարինջն էլ արթնացավ: Նա նույնպես ցանկացավ մաքուր օդ շնչել և հրեց սայլակի մոտ քնած ծառային: Առանց աչքերը բացելու, քնած Լոբին ծանր սայլակը քաշեց դուրս:

Ամրոցի բակում արևի կուրացուցիչ ճառագայթներն արթնացրին նրան: Բայց միայն արևի կուրացուցիչ շողերը չէին կարևորը: Լոբին աչքերը բարձրացրեց և տեսավ ամրոցի վրա ծածանվող դրոշը: Կարծես թե նրա մատների միջով էլեկտրական հոսանք անցավ...

— Բռնիր, բռնիր սայլակը, — ճչաց սարսափահար բարոն Նարինջը:

Բայց ճիշտ... Լոբին մատները բացեց, թողեց իր հին սայլակի բռնակը, և բարոնը մեջքի վրա ընկնելով, այնպես ուժեղ գլորվեց, ինչպես այն անգամ, երբ նա մի երկու տասնյակ գեներալ ճգմեց: Վերջապես նա շրմփաց ոսկի ձկնիկներով ավազանի մեջ և մինչև կոկորդը թաղվեց ջրի մեջ: Քիչ աշխատանք չթափեցին նրան այնտեղից հանելու համար:

Բակից բարոնի մոլեգին ճիչերը լսելով, հերցոգ Մանդարինը նետվեց դեպի ավազանը, թռավ մարմարե հրեշտակիկի վրա, որի բերանից շատրվան էր ցայտում, և օտարոտի ձայնով գոռաց.

— Է՛յ, հեռացրե՛ք աշտարակի դրոշը, թե չէ ես ինձ ջուրը կնետեմ:

— Տեսնե՛նք, — ասաց Լոբին և նրան հրեց ջրի մեջ:

Երբ հերցոգին ջրից հանեցին, նրա բերանում մի ոսկի ձկնիկ կար: Խեղճ ձուկ. երևի կարծում էր, թե ինչ-որ քարայրի մեջ է

մտնում, այնինչ սոված բերան էր ընկել... Խաղաղությունն նրա ոսկե լողակներին:

Այդ օրվանից իրադրությունները փոխվում էին չտեսնված արագությամբ, իրար հետևից: Մենք էլ շտապենք. օրերը թռչում են օրացույցից պոկված թերթերի նման, անցնում են շաբաթները, և մենք հազիվ ենք հասցնում որևէ բան տեսնել: Այդպես երբեմն կինոյումն է լինում. մեխանիկը ժապավենը չափից դուրս արագ է պտտեցնում: Ձեր աչքերը հազիվ են նշմարում տները, մարդկանց, ձիերին, իսկ երբ ժապավենը վերջապես դանդաղում է և պտտվում սովորական արագությամբ, պարզվում է, որ շատ բան արդեն անցել է, և էկրանի վրա ամեն ինչ փոխված է...

Իշխանն ու կոմսուհիները հեռացան իրենց նախկին կալվածքներից: Ինչ վերաբերում է իշխանին, ապա այդ միանգամայն հասկանալի է: Իսկ ինչո՞ւ կոմսուհիները գնացին: Չէ՞ որ ոչ ոք միտք չունեի պառավ կանանց ձեռք տալու կամ մի կտոր հացից զրկելու, կամ նրանցից օդի վարձ պահանջելու: Բայց, վերջ ի վերջո, եթե նրանք իրենք են գնացել, ավելի լավ, բարի ճանապարհ:

Բարոնը նիհարեց, դարձավ իսկական այն մտրակը, որով նա մի ժամանակ քշում էր ծառային:

Սկզբնական շրջանում նա ստիպված էր բավական սոված մնալ: Քանի որ սայլակը քաշող չկար, տեղից չէր շարժվում: Այդ պատճառով էլ ստիպված էր սեփական ճարպի պաշարներով սնվել:

Բարոնը մոմի նման օրեցօր հալչում էր: Երկու շաբաթում կորցրեց իր քաշի կեսը, իսկ այդ կեսը սովորական մարդուց երեք անգամ ծանր էր: Երբ բարոնը կարողացավ առանց ուրիշի օգնության տեղից շարժվել, սկսեց փողոցներում ողորմություն խնդրել: Բայց անցորդները ոչինչ չէին տալիս:

— Ա՛յ-ա՛յ-ա՛յ, — ասում էին, — այդքան առողջ մարդ ես և մուրացկանությունն ես անում: Գնա աշխատիր...

— Ախր ոչինչ անել չգիտեմ:

— Գնա կայարանում իրեր կրիր:

Բարոնն այդպես էլ արեց, և ծանրություն կրելուց նիհարեց, ճաղի նման ուղղվեց: Իր հին կոստյումներից մեկից նա կես դյուժին նոր կոստյում կարել տվեց: Սակայն հին կոստյումներից մի ձեռք նա

այնուամենայնիվ պահեց: Եթե դուք երբևէ այցելեք նրան, նա ձեզ թաքուն ցույց կտա այդ կոստյումը և հառաչելով կասի.

— Տեսե՛ք, դեռ վերջերս ես այսքան հաստ էի:

— Չի կարող պատահել, — կզարմանաք դուք:

— Ի՛նչ է, չե՞ք հավատում, համ, — դառնությամբ կծիծաղի բարոնը, — հարցրե՛ք մարդկանց, նրանք ձեզ կասեն: Ա՛խ, ի՛նչ հիանալի ժամանակներ էին... Մի օրում ես այնքան էի ուտում, ինչքան ինձ հիմա երեք ամիս կբավարարի: Նայե՛ք, թե ի՛նչ կուրծք ունեի, ի՛նչ փոր, ի՛նչ քամակ: Իսկ հերցոգը: Նա իսկի մատը մատին չի տալիս, որ մի կտոր հաց վաստակի, և ապրում է բարոնի հաշվին: Ամեն անգամ, երբ ազգականը հրաժարվում է նրան ուտելիք տալուց, հերցոգը բարձրանում է լապտերի վրա և խնդրում է հայտնել կոմսուհիներին, որ նա ինքնասպանություն գործեց: Եվ բարոնը, որ դեռ սրտում չաղ ժամանակից մնացած բարություն ուներ, ճաշը կամ ընթրիքը կհսում, տալիս էր հերցոգին ու հառաչում:

— Իսկ քավոր Դդումը, այ, էլ չի հառաչում: Նա ամրոցի գլխավոր այգեպանն է դարձել, իսկ նախկին ասպետ Պոմփոթը նրա օգնականն է:

Ձեզ դուր չի՞ գալիս, որ սինյոր Պոմփոթին ազատ են թողել: Դե, նա ինչքան պետք էր՝ բանտ նստեց, հետո ազատ արձակեցին:

Հիմա Պոմփոթը կաղամբ է ցանում և խոտ հնձում: Երբեմն գանգատվում է իր բախտից, բայց միայն այն ժամանակ, երբ հանդիպում է սինյոր Մադդանոսին, որը ծառայում է ամրոցում որպես պահակ:

Ամրոցն այլևս ամրոց չէ, այլ մանուկների պալատ: Այնտեղ և՛ նկարչության սենյակ կա, և՛ Բուրատինոյի տիկնիկային թատրոն, և՛ պինգ-պոնգ, և՛ շատ ուրիշ խաղեր: Հասկանալի է, որ այնտեղ կա ամենալավ, երեխաների համար ամենաօգտակար խաղը՝ դպրոց: Չի պոլինոն ու Բալուկը իրար հետ մի նստարանի են նստում և սովորում են թվաբանություն, քերականություն, աշխարհագրություն, պատմություն և մնացած բոլոր առարկաները, որ հարկավոր է լավ իմանալ՝ ամեն տեսակի խաբեբաներից, ճնշողներից պաշտպանվելու և հայրենի երկրից նրանց հեռու պահելու համար:

— Չմոռանաս, բարեկամս, — հաճախ ծեր Չիպուլինոն ասում է իր տղային, Չիպուլինոյին, — սրիկաներ շատ կան աշխարհում, և նրանք, որոնց դու բշեցիր, դեռ կարող են վերադառնալ:

Բայց ես հավատացած եմ, որ նրանք այլևս չեն վերադառնա: Փաստաբան սինյոր Սիսեռիկն էլ չի վերադառնա, որն շտապեց թաքնվել քանի որ շատ մեղքեր ուներ:

Ասում են, թե նա ինչ-որ մի օտար երկրում նորից իր արհեստն է բանեցնում: Իհարկե, այնտեղ էլ նրա տեղը չէ, բայց լավ է, որ նա մեր այս պատմությունից հեռացավ վերջանալուց առաջ: Ճիշտն ասած, ես էլ հոգնեցի այդ կաշուն, անհանգիստ ստահակի հետ քարշ գալուց:

— Հա՛, մոռացա ձեզ ասել, որ գյուղի ավագ դարձավ վարպետ Խաղողը: Որպեսզի իր հեղինակությունը չզգցի, նա բոլորովին թողել է ծոծրակը բզով քորելու սովորությունը: Միայն երբեմն բզի փոխարեն օգտագործում է լավ սրած մատիտ, բայց այդ հազվադեպ է լինում:

Մի անգամ գյուղի բնակիչները իրենց տների վրա այսպիսի մակագրություն տեսան. «Կեցցե մեր ավագը»:

Սանամեր Դդումը գյուղում լուր տարածեց, թե իբր այդ մակագրությունները կոշկի ներկով ինքը վարպետ Խաղողն է անում:

— Լավ ավագ է, — ասում էր փնթփնթան սանամերը: — Գիշերները ման է գալիս և ինքն իր մասին «կեցցե» գրում:

Բայց դա միանգամայն իզուր էր: Տների վրայի բոլոր մակագրությունները Սոխ Պրասն էր անում, այն էլ ոչ թե ձեռքով, այլ բեղերը թանաքի մեջ թաթախելով: Այո՛, այո՛, Սոխ Պրասը: Ես առանց վախենալու ձեզ ասում եմ այս գաղտնիքը, որովհետև դուք բեղեր չունեք և նրա օրինակին չեք հետևի:

Այստեղ էլ հենց մեր պատմությունն իսկապես ավարտվեց: Ճիշտ է, աշխարհում դեռ ուրիշ ամրոցներ կան, և իշխան Լիմոնից ու սինյոր Պոմիդորից բացի ուրիշ ձրիակերներ կան, բայց այդ պարոններին էլ մի օր դուրս կանեն, ու նրանց այգիներումն էլ երեխաները կխաղան:

Թող այդպես լինի: